



Ս. Դ. Ա. Վ. Ա. Գ. Յ. Ա. Ն.

Մ  
ՅՈՒԹԵՐ  
ՂԱՐԱԲԱՂԻ

ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ  
ՄԱՄՈՒԻ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

№ 8142

90003863

ԼՂՀ Բ. Սահակյանի  
«Մերոպ Մաշտոց Համալսարան»  
Սահմանափակ  
պատասխանատվությամբ  
ընկերություն

В К Р г. Степанаверт  
Общество с ограниченной  
ответственностью  
«Университет А. Месроп Маштоц»

YKR «Stepanavert  
"Mesrop Mashtoc University"

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1969 թ. 11 20

Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից Շուշին դառնում է հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը: Յարական-ինքնակալության դաժան պայմաններում լուսավոր միտքը հետզհետե ընդ-գրկում է նոր ոլորտներ: Շուշիում տարբեր ժամանակահատվածներում լույս են տեսնում նոր հրատարակություններ, ժողովածուներ, հանդեսներ, թերթեր: Ուշագրավ է հատկապես «Քնար խոսնակ» ժողովածուի, «Հայկական աշխարհ», «Գործ», «Ծիածան» հանդեսների, «Նեցուկ», «Ղարաբաղ», «Փայլակ» և այլ թերթերի դերը:

Ղարաբաղում լույս տեսնող պարբերականները ոչ միայն լուսաբանում են երկրի ներքին և արտաքին կյանքը, գավառի հոգսերը, նպաստում նրանց մտավոր ու հոգևոր աճին, այլև բարերար ազդեցություն են թողնում ժողովուրդների համագործակցության ամրապնդման վրա, դառնում ընթերցողների խորհրդատուն, բարեկամն քս սրտակիցը:

Սակայն մինչև այժմ հրատարակի վրա չկա քրեկ աշխատություն՝ նվիրված 1820—1920 թթ. Ղարաբաղի մամուլի պատմությանը, որտեղ ցույց տրվեին հրատարակչական գործի սկզբնավորումը, տարբեր տպագիր օրգանների ստեղծումը, նրանց խաղացած դերը, հրատարակիչների ու առանձին հրատարակախոսների աշքի ընկնող գործունեությունը և այն պայքարը, որ մղվում էր դրանց գործունեությունն արգասաբեր դարձնելու համար: Առանձին հետազոտողներ ուսումնասիրել են սոսկ երկու-երեք տպագիր օրգանի և մեկ գրական ժողովածուի նյութերը:

Ա. Ս. Պուշկինի ողբերգական մահվան 100-ամյակի առթիվ ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի հոգովածների և նյութերի 1937 թ. հրատարակված ժողովածուում,

А В А К Я Н  
СМБАТ ДАРЧИНОВИЧ

1—9—2  
28ա—68

МАТЕРИАЛЫ ИЗ ИСТОРИИ ПЕЧАТИ  
КАРАБАХА ДОСОВЕТСКОГО ПЕРИОДА

(На армянском языке)

Издательство „Митк“  
Ереванского государственного университета  
Ереван—1969

ինչպես նաև հանրապետության ԳԱ հրատարակությանը 1964 թ. լույս տեսած «Հայ նոր գրականության պատմության» 3-րդ հատորում շատ սեղմ կերպով խոսվում է 1881 թ. Շուշիում տպագրված «Քնար խոսնակ»-ի մասին: Խ. Բարսեղյանը իր «Քուրճակյան հայ պարբերական մամուլի պատմությունը (1900—1920 թթ.)» աշխատության մեջ, որ հայերեն լույս է ընծայվել 1956 թ., ուսերեն՝ 1958 թ., համառոտակի անդրադարձել է «Նեցուկ» թերթի գործունեությանը: 1963 թ. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակած «Հայ պարբերական մամուլի պատմությունից» ժողովածուում տեղ է գտել Մ. Մխիթարյանի «Ս. Հախումյանի «Գործ» հանդեսը (1882—1884)» հոդվածը: «Հայ նոր գրականության պատմության» 3-րդ հատորի ներածության մեջ, խոսելով 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ հասարակական կյանքի, մշակույթի և գրականության մասին, Ս. Սարինյանը շատ հակիրճ կանգ է առել նաև «Գործ» հանդեսի խաղացած դերի և նրա խմբագիր Ս. Հախումյանի հայացքների վերլուծության վրա: Իհարկե, կան և այլ կարգի ուսումնասիրություններ, որոնք անուղղակի կերպով առնչվում են Ղարաբաղի, մասնավորապես Շուշիի նախասովետական շրջանի մամուլի պատմության հետ, պատմում տպագրական գործի սկզբնավորման և առանձին տպարանների մասին: Ինչնք բաղմաբեղուն գիտնական Լեոյի տասնյակ աշխատություններից երկուսը՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգեվոր դպրոցի» (Թիֆլիս, 1914 թ.) և «Անցյալից» (Թիֆլիս, 1925 թ.): Արժեքավոր է Արամ Բաբայանի գրքույկը՝ «Հայ դիրքը և տպագրությունը», որը Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի և հայ տպագրության 450-ամյակի առթիվ 1963 թ. հրատարակեց Հայաստանի պետական հրատարակչությունը: Հեղինակը «Հայ տպագիր գիրքը» բաժնում, կանգ առնելով հայ գրքի և տպագրության «մի քանի կարևորագույն օջախների գործունեության վրա», սեղմ տեղեկություններ է հաղորդում Շուշիի տպագրական գործի սկզբնավորման, առանձին գրքերի հրատարակման և տպարանների գոյության մասին:

1912 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված Թեոդիկի «Տիպ ու տառ» ուշագրավ ուսումնասիրությունը ևս որոշ փաս-

տեր է պարունակում Շուշիի տպագրական գործի և տպարանների մասին:

Սույն աշխատանքի նպատակն է հրապարակի վրա դնել Ղարաբաղի մի ամբողջ հարյուրամյակի (1820—1920 թթ.) մամուլի պատմության կարևոր նյութերը, ներկայացնելով մի կողմից համեմատաբար այն բարենպաստ ժամանակաշրջանը, երբ Ռուսաստանի հովանավորության ներքո Անդրկովկասում նկատելիորեն առաջ էր մղվում հոգևոր մշակույթը, մյուս կողմից՝ աչքի ընկնող այն գործիչներին, ովքեր իրենց գործունեությամբ նպաստեցին լուսավորության տարածմանը:

Մամուլի տարբեր օրգանների մասին խոսելիս շեշտը դրվում է ոչ միայն հրատարակված նյութերի վերլուծության և և լրագրա-ժանրային կողմի վրա, այլև ցույց է տրվում տվյալ պարբերականի ուղղությունը, բնորոշում թերթի խմբագրի և ակտիվ աշխատակիցների հայացքները:

Ընթերցողները որոշակի գաղափար կկազմեն առաջադիմական պարբերականների մղած պայքարի մասին՝ դաշնակցական և մյուս հակաժողովրդական կուսակցություններին պատկանող թերթերի դեմ:

Սույն աշխատության ստեղծման համար պրպտումներ ենք կատարել մասնավորապես ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական, աղբյուրական, վրացական մասնաճյուղերում, Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան կենտրոնական գրադարանում, անդրկովկասյան հանրապետությունների պետական արխիվներում ու գրադարաններում, գիտական հիմնարկների ֆոնդերում, թանգարաններում, Երևանի Մ. Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան), զրույց ենք ունեցել առանձին մարդկանց հետ, ովքեր մինչև սովետական շրջանը ակտիվ մասնակցություն են ունեցել Շուշիում հրատարակվող պարբերականներին, գրական, գիտական ժողովածուների լույս ընծայմանը, բոլշևիկյան կազմակերպությունների և առանձին հայրենագետ ընկերությունների աշխատանքին, պայքարել են Ղարաբաղում սովետական իշխանության հաղթանակի համար:

Օգտագործել ենք նաև տարբեր գործիչների հիշողություն-

ները և առանձին հեղինակների տպագիր և անտիպ ուսումնասիրութիւնները:

Երկար տարիների պրպտումներից հետո մեզ չհաջողվեց լիովին հայտնաբերել Ղարաբաղում լույս տեսած բոլոր տպագիր օրգանների կոմպլեկտները. դեռևս չկան որոշակի ճշտված տեղեկութիւններ բոլոր աչքի ընկնող լրագրողների և թղթակիցների մասին: Այդ դժվարութիւնն ամենից առաջ հարուցվել է այն պարզ պատճառով, որ նախ չի պահպանվել Շուշիի հարուստ արխիվը և երկրորդ, գործ ենք ունեցել մինչև սովետական շրջանի արխիվային փաստաթղթերի հետ, որոնցից շատերը կամ ոչնչացել են, կամ էլ գտնվում են մեզ անհայտ առանձին անձանց մոտ:

Ինչևէ, մեր ջանքերի արդյունքը դնում ենք հրապարակի վրա, և յուրաքանչյուրի անաշու խոսքը միայն օգուտ կբերի գործին:

Սույն աշխատանքի հիմնական թեզերը քննարկվել են Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնում, Հայկական ՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի հայ պարբերական մամուլի պատմութեան բաժնում, և ունկնդրել ենք առանձին մասնագետների դիտողութիւններն ու ցանկութիւնները, որի համար էլ խորին շնորհակալութիւն ենք հայտնում:

## ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

1821 թվականին Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերութիւնը» թույլտվութիւն է ստանում ռուսական իշխանութիւնից Կովկասում հիմնելու ոչ միայն դպրոց, այլև տպարան: Բազելցիները իրենց նստավայր են ընտրում գեղատեսիլ և առևտրական տեսակետից աչքի ընկած Շուշին, որը Ղարաբաղի կենտրոնն էր, ուր և գտնվում էր Ղարաբաղի հոգևոր թեմը:

Եկվորներից առավել աչքի էին ընկնում Ավգուստ Դիտրիխը և Ֆելիցիա Զարեմբան: «Ֆելիցիա Զարեմբան ի բնի լեհացի էր և ազնվական տնից, կոմսի տիտղոսով, ուսած էր Դորպատու համալսարանում և ստացած փիլիսոփայութեան դոկտորի աստիճան, հետո դարձած էր քարտուղար սենատի մեջ», գրում է Հ. Ղուկասյանը «Բողոքականութիւն Կովկասու հայոց մեջ» աշխատութեան մեջ<sup>1</sup>:

Մեծ դնահատական է տրվում նաև մյուս բողոքականներին. «Գիտնական պաշարով Զարեմբայից ետ չէին մնում նորա ընկերակիցներն ևս,—շարունակում է հայ հեղինակը,— սրունցից մեկը՝ Դիտրիխը մինչև անգամ Մոսկվայում Սալլանթեան Միք. վարդապետի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզուն»<sup>2</sup>:

Նրանք 1827 թ. գալով Շուշի նպատակ էին դրել երկար ժամանակ հաստատվել Անդրկովկասում և քրիստոնեութիւն տարածել այլադավան ժողովուրդների մեջ: Պարզ ասած, «բազելեան ընկերութիւնը քարոզիչներին տուել էր հետևեալ հրահանգները. 1. «Տարածել Աստուծոյ խօսքը նոյն կողմերի ազ-

<sup>1</sup> ՏԷՄ 1886 թ. Թիֆլիսի հրատարակութեան 4-րդ էջը:

<sup>2</sup> Նույն տեղում:

գաց և լեզուաց մեջ», առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ և Ալլախեռից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը. 2. սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խօսքը տարածելու համար կարեւոր լեզուներէից մի քանիսը — արաբերէն, պարսկերէն, թաթարերէն, թուրքերէն և նոր-յունարէն: Ձեզանից մինն, ասած է հրահանգների մեջ, գիտե սլաւոնական լեզուներն և նոր յունարէնի տարերքը. միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը. 3. հիմնել մի յարմարաւոր տեղ տպարան՝ Ս. գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»<sup>3</sup>:

Ինչ խոսք, այս ընդարձակ ծրագիրն իրագործելու համար նրանց անհրաժեշտ էին պայմաններ, հնարավորութիւններ: Եւ Շուշիում կառուցեցին երեք հարկանի մի մեծ շինութիւն՝ շրջապատված պարտեղով: Իրենց ձեռնարկումները առաջ տանելու համար Ֆ. Զարեմբան և Ա. Դիտրիխը սերտ կապեր հաստատեցին առանձին ազգեցիկ անձնավորութիւնների՝ Միրզա Ֆարուխի<sup>4</sup>, Բարսեղ և Մովսէս սարկավազների, Պողոս վարդապետի և ուրիշների հետ:

Ավելին, ժողովրդի սերն ու հարգանքը նվաճելու համար բազելցի բողոքականներից Հաազը սովորում է Ղաբաբաղի հայ բարբառը:

Եկվոր բողոքականները բարի դրացիական հարաբերութիւնների մեջ էին մետրոպոլիտ Սարգսի հետ, որի աթոռանիստն էր Գանձասարի վանքը: Նրա մահից հետո էլ (1828 թ.)

<sup>3</sup> 2. Առկասեանց, Բողոքականութիւն Կովկասու հայոց մեջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886, էջ 4:

<sup>4</sup> Ենվել է Շուշի գավառի Թաղտա գյուղում: Իսկական անունը Հարութիւն էր: 1805 թ. ռուս-պարսկական կռիւների ժամանակ, երբ նա ընդամենը 5—6 տարեկան էր, գերի է վերցվում: Պարսկական արքունիքում նա ստանում է Ֆարուխ անունը: Կարճ ժամանակաժողովում տիրապետում է մի քանի լեզուների: Քսան տարեկանում նա արդեն Քեհրանի Սարգսրի բարտուղարն էր: 1826 թ. ռուս-պարսկական պատերազմի օրերին՝ հարձակ առիթը օգտագործելով, Միրզա Ֆարուխը փախում է և գալիս Շուշի: Բազելցի բողոքականների մոտ հիմնականում նա հանդես է գալիս իբրև թարգմանիչ, օգնելով միաժամանակ գրքի տպագրութիւն գործին:

րազելցիները բարեկամաբար էին տրամադրված Բաղդասար<sup>5</sup> մետրոպոլիտի նկատմամբ:

Բազելցի բողոքականները ուշադրութիւնը կենտրոնացնում էին երկու հանգամանքի վրա. նախ՝ ավելացնել նոր բացված ուսումնարանի աշակերտների թիւը<sup>6</sup>, այն հասցնելով երկու դասարանի, ապա ծավալել հրատարակչական գործը: Իրենց հետ բերելով նորաձուլ տառեր, տպագրական սարքեր և տպագրիչ, շուտով սկսում են հրատարակել մի քանի գրքեր, գրքույկներ և էժան գներով տարածում ընթերցողների մեջ: Բազելցի միսիոներների կողմից առաջին գիրքը լույս է տեսնում 1828 թվականին: Դա «Պատմութիւն սուրբ գրոց»-ն էր:

Առանձին հեղինակների մոտ այն սխալ կարծիքն է իշխում, թե Շուշիում առաջին հայերեն գիրքը տպագրվել է 1822 թվականին: Այսպես է գտնում, օրինակ՝ Գրիգոր Վանցյանը իր «Պատմական քերականութիւն արևելահայ լեզվի» աշխատութիւնի մեջ<sup>7</sup>, որ տպագրվել է Թիֆլիսում: 112-րդ էջում նա լրիվ մեջ է բերում գրքի տիտղոսաթերթի տեքստը. «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար: Թարգմանութիւն: Ի հայրապետութեան տեառն Յովհաննու Կարբեցոյ սրբազանասուրբ կաթողիկոսի Ամենայն հայոց: Հրամանաւ տեառն Բաղտասարայ իշխանազնի Հասան-Ջալալեան սրբազան արքեպիսկոպոսի և մետրոպոլիտի Հայոց համայն Աղուանից և Շուշի յամի տեառն 1822»:

<sup>5</sup> Բաղդասար Մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը (1775—1854 թթ.) տարբեր ժամանակներում լինելով Գանձակում, Թիֆլիսում, Էջմիածնում, 1837 թվականին մշտապես փոխադրվում է Շուշի և շարունակում իր ազգօգուտ գործունեութիւնը: Նա իր նյութական միջոցներից որոշ ծախսումներ է կատարում հատկապես հայ հրատարակչական և ուսումնական գործի համար:

<sup>6</sup> Եթե սկզբում բազելցիների բացած ուսումնարանում 30—40 աշակերտ էին, ապա մի տարուց հետո նրանց թիւը հասնում է 130-ի: Երկխանների մեծ մասը զարաբաղցի հայեր էին՝ 10—18 տարեկան:

<sup>7</sup> Պրոֆ. Գուրգեն Սևակը «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»-ի (Երևան, 1955 թ.) հավելվածում մի հատված բերելով «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար...» գրքից, հիմնվելով Գր. Վանցյանի աշխատութիւնի վրա, նույնպես նշում է 1822 թ. Շուշիում լույս տեսած գիրքը:

Իհարկե, այսպիսի գիրք գոյութիւն ունի և պահւում է Թբիլիսիի արխիւաներից մեկում: Բայց նրա տիտղոսաթերթի թվականը՝ 1822-ը, թյուրիմացութիւն է, տպագրական սխալ: Այն պետք է լինի 1832 թ., որովհետև նախ՝ Հովհաննէս Կարբեցին կաթողիկոս է օծվել 1831 թվականին, իսկ Բաղդասար Հասան-Ջալալյանը մետրոպոլիտ՝ 1830 թվականին: Ուրեմն գիրքը 1829—1830 թթ. շուտ չէր կարող լույս աշխարհ գալ այդ անունների վկայութեամբ:

Աշխատութեան հրատարակութեան տարեթիւ ստույգ որոշմանը նպաստում է նաև նրա վերջին էջերում հայտարարված 1829—1832 թթ. Շուշիում լույս տեսած գրքերի ցուցակը: Հասկանալի է, որ 1822 թվականին հնարավոր չէր ընթերցողներին տեղյակ դարձնել 1829—1832 թթ. տպագրված գրքերի վաճառքի մասին<sup>8</sup>: Պարզ է, որ Շուշիում տպագրական գործը սկսել են եկվոր բողոքականները, այն էլ 1827 թվականին: Կասկածից վեր է, որ առաջին գրքերն էլ պետք է լինեին կրօնական, քարոզչական: Ահա Շուշիում 1829 թ. տպագրված գրքերից երկուսը՝ «Հաւաքումն աստուածային վկայութեանց յաղագս ամենայն ուսմանց քրիստոնէական հաւատոց», «Ըրթերցուածք ի սուրբ գրոց Հին կտակարանի»:

1832—1833 թթ. Շուշիում լույս տեսած եկեղեցական, բարոյա-խրատական գրքերը միայն թարգմանութիւններ էին: Նշենք մի քանիսը. «Ժամանակի վերջն», «Կարճառօտ աղօթագիրք», «Նոր կտակարան», «Տասն և վեց կարճառօտ բարոյներ», «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» (1832), «Աւետարանի ճշմարտութեան եւ զօրութեան համար», «Մեղքն խաղ անելոյ բան չէ», «Յորդորմունք սուտ ասօղ մարդկանց համար», «Սիրտ մարդոյ, որ է տաճար աստուծոյ կամ գործարան սատանայի...», «Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար», «Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար», «Քարոզ աւագ ուրբաթ օրին համար: Մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի շարշարանաց և մահուան վրայ» (1833 թ.) և այլն:

Որոշ գրքեր պարունակել են օգտակար մտքեր: «Ժամանա-

<sup>8</sup> Տե՛ս նաև Հայկ Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 106:

կի վերջն», որ նույնպես տպագրվել է կաթողիկոս Հովհաննէս Կարբեցու և Բաղդասար Հասան-Ջալալյան մետրոպոլիտի հրամանով, իր մեջ բովանդակում է խրատներ, խորհուրդներ:

Գրքույկի առանձին հատվածներում աշխատասիրութեան գովքը անելիս շեշտը դրվում է այն բանի վրա, որ մարդը պիտի լինի ոչ թե ծուլ, այլ ջանասեր ու գործունյա: Քննադատական խոսք է ասվում հարուստ մարդկանց մասին, որոնք իրենց ժամանակը անց են կացնում միայն խրախճանքի մեջ, ցուր ու շվայտ կյանք են վարում:

Օգտակար մտքեր կան նաև «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար» գրքում: Հեղինակը նպատակ է դրել հրապարակայնորեն ասել, որ մարդ ի ծնե չպետք է մեղք գործի, ընդհակառակն, «ամենայն աստծոյ» շնորհքով նրա վրա դրված է բարի գործ կատարելու սուրբ պարտականութիւնը:

Տխուր է «Մեղքն խաղ անելոյ բան չէ» 14 էջից բաղկացած գրքույկի տոնը: Այստեղ պարզ ասված է, որ մարդկութիւնն ապրում է մոռյլ ժամանակաշրջան, խառնիխուռն օրեր. մի տեղ ուրախութիւն է, մի այլ տեղ՝ տխրութիւն. վիշտն ու թախիծն են ուղեկցում յուրաքանչյուրին:

Աշխատութեան մեջ շատ թույլ կերպով խոսվում է նաև անհավասարութեան մասին, այն մասին, որ մարդիկ ի ծնե լինելով միատեսակ, միանման, կառուցվածքով ներդաշնակ, բայց շատ ժամանակ կյանքում դառնում են հակառակորդ, իրար թշնամի:

Շուշիում հրատարակված գրքերի մի մասն էլ մայրենի լեզվին տիրապետելու ուղեցույց, ձեռնարկ կամ բառարան էր: 1829 թվականին լույս տեսած «Համառօտութիւն հայկական բերականութեան» աշխատութիւնն ընդհանուր առմամբ բովանդակում է հայերենի բառերի հոլովումները, խոսքի մասերի բնութագրումը և առանձին բերականական սահմանումներ: Այստեղ շատ են բերված օրինակները, բերականական վարժութիւնները: Հատկապես ծավալուն են տրված բայի խոնարհումը, սեռը, խնդրառութիւնը և այլն: Գիրքը բաղկացած է

երկու գլխից: Եվ եթե նրա հեղինակը՝ Պողոս Ներսիսյան Ղարադաղցի<sup>9</sup> վարդապետը, առաջին գլխում բացատրում է գործնական թեմաներ հայոց լեզվից, ապա երկրորդ գլխում նշում է, թե բերականությունը քանի մասից է բաղկացած, նրանցից յուրաքանչյուրն ինչ է ուսումնասիրում, ինչպիսի օրինաչափություններ ունի հայոց լեզուն՝ և այլն, և այլն:

Ուշագրավ է Հովսեփ Արցախեցի վարդապետի «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառ: Ի պէտս համբակաց» աշխատությունը, որ տպագրվել է 1830 թվականին: Գրքի արժանիքն այն է, որ այնտեղ, թեև ոչ այնքան պարզ կերպով, տրված են գրաբար բառերի աշխարհաբար բացատրությունները. գրքի մեջ ընթերցողը գտնում է տվյալ բառի հոլովման ձևերը և ձևաբանական մյուս հատկությունները: Սա, իհարկե, դրական երևույթ էր և, անկասկած, ժամանակին որոշակի դեր է խաղացել հայերենի ուսումնասիրության բնագավառում: «Այս և նման գրքերի թիվը փոքր չէր...: 1830-ին նրանց ունեցած և հրատարակած հայերեն գրքերի թիվը հասնում էր 11679 օրինակի<sup>10</sup>:

Պատկառելի մի քանակ և սկսած գործն էլ խելոք հիմքերի վրա՝ սակայն նրանց ազդեցությունը հայ գրականության և լեզվի վրա հավասար էր գրեթե զրոյի, որովհետև դա չի երևում ոչ մի տեղ և ոչ մի հայ գրողի վրա: Իբրև օտար ազդյունի արդյունք, բողոքականների մշակած լեզուն, շնայած իր մաքրությանն ու կանոնավորությանը, մնաց խորթ և առանց որևէ ազդեցության մեր մտավոր շրջանների վրա...»<sup>11</sup>:

Իհարկե, բողոքականների հրատարակած գրքերը չէին կարող որոշակի ներգործություն ունենալ հայոց լեզվի ու գրա-

<sup>9</sup> Պողոս վարդապետ Ղարադաղցին 1824 թվականին Քիֆլիսում բացված Ներսիսյան դպրոցի անդրանիկ ուսուցիչներից մեկն էր: Նա դասավանդում էր այնպիսի աշակերտների, ինչպիսիք էին Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Պետրոս Մաղաթյանը և ուրիշներ: Նրա աշակերտներից շատերը դարձան նշանավոր գրողներ և գիտնականներ:

<sup>10</sup> Բազմաթիվ բողոքականները իրենց հիմնած տպարանում հրատարակում էին նաև այլ լեզուներով գրքեր. պարսկերեն լույս տեսած գրքերի թիվը 728 օրինակ էր, թուրքերեն՝ 147 օրինակ, երբայիբեն՝ 100 օրինակ:

<sup>11</sup> Գր. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Քիֆլիս, 1906, էջ 114—115:

կանություն և, ընդհանրապես, հայ մտքի զարգացման վրա: Բազմաթիվ միսիոներները կոչված չէին թարմություն մտցնել հայ մշակույթի զարգացման մեջ կամ էլ հանդես գալ լեզվաշինարարական որևէ ձգտմամբ ու դիտավորություններով:

Բայց ո՞րն է բազմաթիվ միսիոներների հրատարակած գրքերի հիմնական առավելությունը. դրանք բոլորն էլ աշխարհաբար էին, հասկանալի, խոսակցական լեզվին մոտ:

Պրոֆեսոր Գ. Սևակը պատշաճ կերպով է գնահատում Դիտրիխի և Զարեմբայի ձեռնարկումները տպագրության ասպարեզում: Նա գրում է. «...19-րդ դարի առաջին քսանամյակի կեսերին Շուշիում բազմաթիվ միսիոներներ Դիտրիխը և Զարեմբան ձեռնարկեցին միսիոներական գրականության հրատարակությանը այնպիսի աշխարհաբարով, որն իր մաքրությունով և պարզությամբ գերազանց է ո՛չ միայն մինչև 30-ական թվականները, այլև՝ մինչև 60-ական թվականները հրատարակված բոլոր գրքերի լեզվից»<sup>12</sup>:

Քննելով միսիոներների կողմից հրատարակված գրքերի լեզուն, պրոֆ. Գ. Սևակը հետաքրքիր է համարում այն, «որ այդ գրքերի մեջ արտահայտություն է գտել անցյալ դարի 20-ական թվականների խոսակցական աշխարհաբարը առանց գրաբարյան ավելորդ համեմունքների, որպիսիք հատուկ են ուղղափառ լուսավորչականների լեզվին: Այդ օտարազգիները ժողովրդից սովորեցին կենդանի լեզուն և այդ լեզվով էլ հրատարակեցին իրենց պրոպագանդիստական գրականությունը՝ առանց լեզվաշինարարական այս կամ այն նկրտումի»<sup>13</sup>:

Վերը շարադրածը հաստատելու համար բերենք մի քանի հատված 1832 թ. Շուշիում լույս տեսած «Ժամանակի վերջն» թարգմանական գրքից: Կարդում ենք. «Ապա պատշաճ է ձեռն ո՛վ մարդիկ, որ անցկացնեք ձեր կեանքն մեղքերի մեջն որ ձեռն անարգելի են անում, և ունայնութեանց մեջն որ մենակ մինքիչ ժամանակ կարող են մխիթարել ձեր սրտերըն» (էջ 4): Կամ՝ «Իրանց ազատ սահաթներըն կորցնում են միայն ունայն փուշ բաներին հետևելով և անհոգութենով և անամօթութենով

<sup>12</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 60:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 61:

փնուլ տեղն անց են կացնում իրանց պատուական ժամանակըն, որ տվաւ նորանց շնորհք և հոգոյ փրկութիւն գտնելոյ համար, և կարծում են, թե իսկի մին հարկավոր գործ չըգայ իրանց համար: Նորանք կենում են էնպես, իբր թէ անկարելի լինէր իրանց կյանքի ժամանակըն ուրիշ կերպով անցկացնել, բայց միայն միշտ խմելով, և ուտելով և ուրախութիւն անելով: Առաւօտիցն մինչև իրիկունն միշտ կըտեսնեք նորանց, որ ունայն փուլ բաներին են հետևում. կորցնում են էն ժամանակըն, որ պետք էր այն ընծայել, և էն էլ որ պետք էր իրանց գործքերին համար գործածել, կորցնում են... ծուլութենով և անհոգութենով, կամ մեղաց և յիմարուէ մէջ ման գալով» (էջ 12—13):

Պրոֆ. Ս. Ղազարյանը ևս իր աշխատություններում անդրադառնում է Շուշիի միսիոներների հրատարակած գրքերի լեզվին, նշում, որ «ժամանակի արարատյան բարբառի հիման վրա մշակվող լեզվի առանձնահատկությունները դրսևորվում են նաև թարգմանական գրականության մեջ»<sup>14</sup>, շեշտում Շուշիում 1832—1835 թթ. լույս տեսած թարգմանական աշխատությունների աշխարհաբար լեզվի հղկվածությունն ու մատչելիությունը: Այդ հաստատելու համար հեղինակը դիմում է փաստերի՝ կատարելով մի շարք մեջբերումներ: Ահա երկու օրինակ. «մի թէ քանք ես անում որ Այ շնորհքըն գտնելոյ հնարքներըն գործ ածես: Մի թէ սիրում ես և պատում ես Տէրի օրըն, և սուրբ պահում ես նորան: Մի թէ թող չե՞ս անում որ պղծվի նա ծուլութենով կամ ունայն ուրախութեան հետևելով և կամ աշխատանք անելով» («Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար», Շուշի, 1832, էջ 27): «Շատ ժամանակ է, որ մենք քրիստոնեայ անունով զարդարվում ենք և մեր հաւատքն սուրբ գրքերի վերայ հաստատված է: Եւ թէ և ժամանակից ժամանակ շատ փիլիսոփաներ քանք արին որ սուրբ աստուածաշունչ գրքերի վարդապետութիւնըն ծոեն և քանդեն, բայց մենք մինչև հիմիկ աստուծոյ շնորհքովն հաստատ դաւանեցինք և պահպանեցինք նորան» («Աւետարանի ճշմարտութեան և զօրութեան համար», Շուշի, 1833, էջ 4):

<sup>14</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 399:

Այսպիսով, Շուշիում հրատարակվող գրքերը ինչ-ինչ չափով նպաստում են արևելահայ լեզվի հղկմանն ու մշակմանը մի կողմից, մյուս կողմից՝ գրական լեզուն դարձնելու աշխատավորներին ավելի մատչելի և հասկանալի, մի բան, որի համար հետագայում սուր պայքար ծավալեցին Խաչատուր Աբովյանն ու Միքայել Նալբանդյանը:

Բողոքական միսիոներները երկար չեն մնում Շուշիում (ընդամենը 7—8 տարի): Տեղի հոգևորական ուժերը, տեսնելով, որ բազելցիների հեղինակությունը հետզհետե մեծանում է և ժողովուրդը թեքվում է նրանց կողմը, ստիպված բողոք են ուղարկում Կովկասի փոխարքայությունը՝ Շուշիից նրանց հեռացնելու համար: Բազելցիները սկզբում խնդրում են թույլ տալ Շուշիում պահպանելու իրենց տպարանը՝ հարգանք այն բանի, որ գործել են քրիստոնեության օգտին: Սրանով նրանք ձգտում էին հրատարակած գրքերը տարածել նաև Պարսկաստանում, Թուրքիայում և այլ երկրներում: Բայց այդ բանը չի հաջողվում. ստիպված Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտին առաջարկում են իրենց տպարանը՝ բոլոր սարքավորումներով: Նա չնչին գնելով գնում է տպարանը և տեղափոխում քաղաքի հայկական մասը: Այն սկսում է կոչվել «Տպարան վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան մետրոպոլիտի Բաղդասարայ», իսկ տպագրված գրքերը ունենում են այս դրոշմը. «Հրամանաւ տեսոն Բաղդասարայ իշխանազնի Զալալեան սրբազան արքեպիսկոպոսի և մետրոպոլիտի հայոց ամենայն Աղուանից»: Տպարանը գործում է մինչև 1874 թվականը:

Արդեն 1835 թվականից Շուշիում միսիոներների գրքերը չեն հրատարակվում: Սակայն բազելցի բողոքականները իրենց գործունեությունը շարունակում են Ռուսաստանում<sup>15</sup> և հրատարակում հայերեն գրքեր: Նրանց հետնորդները գործում են Մոսկվայում<sup>16</sup>, Լազարյան ճեմարանում: Օրինակ, 1840 թ.

<sup>15</sup> 1836 թվականին Շուշիում գեո կային բազելյան բողոքականներ. Կարլ Պֆանտերը, Ֆրիդրիխ Շպրիբերգը, Ավգուստ Կրիսթը, տպագրիչ Ֆրիդրիխ Իվտայը և ուրիշներ:

<sup>16</sup> Բողոքականները Շուշիում տպարան ունենալով հանդերձ գրքեր էին տպագրում նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում:

նրանք հրատարակում են «Աւետարանի զօրութիւն, կամ՝ Մին արաբ ծառայի պատմութիւն, որ քրիստոսի հաւատքովն երանելի էլաւ»: Հետաքրքիրն այն է, որ բողոքականների կողմից կաղարջան ձեւարանի տպարանում հրատարակած բոլոր գրքերը առաջվա պես աշխարհաբար էին:

Անժխտելի է, որ 1840 թվականից սկսած թուլանում է բողոքականների հրատարակչական գործը. նախ, որ սեփական տպարան չունեին, երկրորդ՝ արդեն փխրուն էր դարձել նրանց ոտքի տակի հողը: Ստիպված Մոսկվայում վերահրատարակում են Շուշիում տպագրած մի քանի գրքեր, դնելով «երկրորդ տպագրություն» տիտղոսը:

### ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆԸ

Թեև Բ. Հասան-Ջալալյանը կանոնավոր ուսում ստացած մարդ չէր, բայց ձգտում էր մշակութային որոշ ձեռնարկումներ անել՝ հիմնել կուլտուր-լուսավորական մի այնպիսի օջախ, ուր կենտրոնացված լինեին տարբեր պարբերականներ ու գրքեր, գիտական հետաքրքրություն ներկայացնող ձեռագրեր, մատյաններ: «Նա բավական նշանավոր գումար ուղարկեց Վենետիկի Մխիթարյանների վանքը և բերել տվեց մի-մի օրինակ նրանց բոլոր հրատարակություններից, և կազմեց հոգևոր դպրոցին կից մի հարուստ գրադարան, այնտեղ հավաքելով և Ղարաբաղի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները: Այդ գրքերը հետզհետե տպագրելու գիտավորություններ իր սեփական տպարանում»<sup>1</sup>: Նշենք, որ Բ. Հասան-Ջալալյանի օրոք լույս տեսնող գրքերի մեծ մասը գիտա-ուսումնական էին՝ նվիրված հայագիտությանը, մայրենի լեզվի օրինաչափությունների իմացությանը:

1836 թվականից տպագրական գործը Շուշիում անցնում է հայ եկեղեցական վարչական կազմակերպություններին, իսկ տպարանը կոչվում է «Հայոց հոգևոր տեսչության տպարան»: Այն գործում է կանոնավոր, հարստանում Մոսկվայից բերված տառատեսակներով և տպագրական պարագաներով:

<sup>1</sup> Բաֆֆի, Երկրի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 337—338:

Առաջին գիրքը, որ լույս է տեսնում այս տպարանում 1837 թվականին, Բայրոնի «Շիլլոնյան կալանավոր»-ն էր: Սա անգլիացի մեծ բանաստեղծի հայերեն առաջին գիրքն էր, որի թարգմանությունը մեծ հաջողությամբ կատարեց հայոց լեզվի հմուտ գիտակ, գրականագետ Մովսես Զոհրապյանը: Գիրքը մեծ ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում: Այն իսկույն սպառվեց և մեկ-երկու տարուց հետո դաացվում էր նրա նոր հրատարակության կարիքը:

Երկու տարի հետո՝ 1839 թվականին լույս է տեսնում Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից», այնուհետև, 1840 թ.՝ «Միսարան, որ կոչի Մաշտոց», «Տետր այբբենական», «Կրոնագիտություն» և այլ գրքերը, որոնց մեջ նշված է, թե ում հրամանով են տպագրվում դրանք:

Մեծ մասի ծախքերը հոգում էր Բաղդասար Հասան-Ջալալյանը: Դա նույնպես նշվում էր աշխատության տիտղոսաթերթի վրա: Եսայի Հասան-Ջալալյանի հրատարակած գրքում կարգում ենք. «Հրամայեցաք մուծանել ի տիպ սեպհական ծախիւք մերովք վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու և այլոց՝ Արքեպիսկոպոս և Ասպետ Մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալեանց: Ի 7 յունիսի 1839 ամի»<sup>2</sup>:

Եսայու գրած առաջաբանում նշվում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը, շարադրել հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքները՝ կանգ առնելով կոնկրետ փաստերի վրա: Հեղինակը իր պատմությունը սկսում է պարսիկների տիրապետության ժամանակաշրջանից, ներկայացնում հայոց երկրի ներքին երկպառակությունները, կատարած մական գործողությունները, թշնամիների շարժումները, նկարագրում լեզգիների բարբարոսությունները:

Աշխատությունը գնահատելի է ոչ միայն նրա համար, որ բավականին ծավալուն կերպով ամփոփում է ժամանակի գեպքերը և ունի վավերագրի արժեք, այլև նրա համար, որ Եսայի Հասան-Ջալալյանը բարեկամական տոնով է խոսում մյուս ժողովուրդների մասին, շեշտում է հայերի Եվրոպացիների հանդեպ հարգանքները: «Միսարան»-ը հայտնի էր Մոսկվայում և Մաշտոցում:

17  
Mesrop Masht. University  
No 10609  
11

գարերի խորքից եկող եղբայրությունն ու համագործակցությունը: Մեծ էր Ե. Հասան-Ջալալյանի համակրանքը Վրաստանի նկատմամբ, և պատահական չէր նրա քննադատությունըն այն խաների (Գյանջայի, Կախեթի, Ղաղախի և այլն) հասցեին, որոնք ձգտում էին կործանել Վախտանգի տիրապետությունը:

Իր թերություններով հանդերձ, գիրքը օգնում է հայոց սպանությունն ուսումնասիրողներին որոշակի դադափար կազմելու 17—18-րդ դարերի իրադարձությունների, առանձին նշանավոր մարդկանց գործունեության, հայերի և հարևան ժողովուրդների հարաբերությունների ու նրանց համագործակցության մասին:

Բաղդասար մետրոպոլիտի օրոք տպագրված գրքերի մեծ մասը եկեղեցական էր (ինչպես, օրինակ, 1838 թ. լույս տեսածները՝ «Նորհրդատետր», «Սրբազան պատարադի», Եփրեմ Նուրի Ասորիի «Գիրք աղօթից»-ը և ուրիշներ), մի մասն էլ՝ գիտական-ուսումնական:

Միքայել Սալլանթեանցի «Առաջին մասն փոքր քերականութեան գրաբառ լեզուի հայոց» գիրքը, որ առաջին անգամ լույս է տեսնում Մոսկվայում, 1827 թվականին, ապա՝ Շուշիում 1840 թվականին մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի հրամանով ու ծախքերով, իր մեջ ամփոփում է քերականական սահմանումներ և վարժություններ:

Գրքի հեղինակը առաջին մասում բացատրում է քերականության կոչումն ու նպատակը, ապա կանգ է առնում քերականության առանձին բաժինների վրա, պարզաբանում բաների էությունը, մասնիկները, տառը, պարզ և բաղադրյալ բառերը, ձայնավորներն ու բաղաձայնները: Օգտակար մտքեր են հաղորդվում խոսքի մասերի, մասնավորապես, դերանունների և բայերի վերաբերյալ: «Պատկեր հորովադասության» բաժնում տրվում են բաղմաթիվ օրինակներ բառերի եղակի և հոգնակի ձևերի մասին:

Գիրքը հարուստ է խոսքի մասերի քարտեզներով, ունի հավելված առանձին քերականական հարցերի վերաբերյալ: Կան բառերի վերլուծումներ՝ ըստ խոսքի մասերի և բառերի կազմության:

Բաղդասար մետրոպոլիտը հրատարակում էր և՛ թարգմանական, և՛ հայ հեղինակների գործեր (իհարկե բոլորն էլ հայերեն):

Առաջին հայ հեղինակներից էր Գրիգոր Տեր-Ավագյանը: Օժտված լինելով գիտական կարողությամբ և գրական աշխատանք կատարելու շնորհքով, նա հրապարակ է հանում մի քանի ուսումնասիրություններ, որոնք հայ աշակերտների համար ծառայում են իբրև դասագիրք կամ ձեռնարկ: Նա այլ լեզուներով լույս տեսած դասագրքերը հարմարեցնում էր հայ դպրոցին:

Հրատարակված գրքերի մեջ հատուկ տեղ է գրավում հայ անվանի վիպասան Պերճ Պոռչյանի «Ղարաբաղի տիրամայր սուրբ Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացումը» գիրքը, ուր, ի դեպ, հեղինակը մեծ ջերմությամբ է նկարագրում այն պահը, երբ հիմնադրվեց հայ կանանց կրթության օջախը Շուշիում:

Տպագրական-հրատարակչական գործում մեծ ջանքեր է ներդնում հաշատուր Ղարաբեկյանը, խորին ծերության հասած մի մարդ, որը բավականին մոտիկ հարաբերությունների մեջ էր Բաղդասար Հասան-Ջալալյանի հետ:

Բաղդասար մետրոպոլիտի մահից հետո տպարանը իր տնօրինության տակ է վերցնում Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը: Նոր թեմապետը նպատակ է դնում ամենից առաջ լույս ընծայել ուսումնական ձեռնարկներ և գիտական աշխատություններ, բայց դրան խոչընդոտում է դրամական միջոցների պակասը: Այս հարցով նա դիմում է Շուշիի բնակիչներին, հատկապես հարուստներին: Բայց նրանք ոչ մի օգնություն ցույց չեն տալիս:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ,  
ՆՈՐ ԳՐԲԵՐ

Հոգևոր հայրերի տպարանը շարունակում է հրապարակ հանել նոր հրատարակություններ: Նշենք 1866 թվականին լույս

տեսած «Համառոտ պատմութիւն հայոց» աշխատութիւնը, որի հեղինակը՝ Հ. Թերճիմանյանը պատկերացում է տալիս հայ երեսններին հայ ժողովրդի անցած ուղու մասին:

1870—1872 թթ. այստեղ տպագրւում են նաև «Բարեկարգութիւնք, տնօրինաւք ի վիճակաւոր առաջնորդեն հայոց բեմեն Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսեն Հասան-Ջալալեանց յաղագս կարգի կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդանաց ի նմին վիճալի», «Ավետարան» և այլ գրքեր<sup>1</sup>, առանձին գրական գործեր, մեծ մասամբ ոտանավորներ, որոնց թեման հիմնականում հայրենասիրութիւնն էր: Ամենից ուշագրաւը «Հայկական աշխարհ» գրական, մանկավարժական և կրօնական<sup>2</sup> ամսագրի 1874 թվականի ապրիլ—օգոստոս ամիսների համարների տպագրութիւնն էր Շուշիում:

Հայտնի է, որ այս ամսագիրը սկսել է լույս տեսնել 1864 թվականին, Թիֆլիսում, մինչև 1879 թվականը: Սա փաստորեն Մ. Աղաբեկյանի «Կոռնկ հայոց աշխարհի» ամսագրի շարունակութիւնն էր, որը հետագայում վերանվանւում է «Հայկական աշխարհ»:

Ամսագրի տերն ու տնօրենը խորեն Ստեփանեն<sup>3</sup> էր, դարգացած մի մարդ, որ ավարտել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ստացել զիտական աստիճան: 1873 թվականին հրավիրում են Ղարաբաղ թեմական դպրոցում ուսաց լեզու դասավանդելու: Նրա ջանքերով հիմնւում է Շուշիի բարեգործական և ուսաց օրիորդաց դպրոցը: Նա ձգտում է որոշ չափով բարելաւել մայրենի լեզվի ուղղագրութիւնը: Իր ամսագրում կիրառելով այն՝ բոլոր «Ո»-երը դարձնում է «օ», վերացնում է «յ» տառի գրութիւնը ա-ով և ո-ով վերջացող բառերի վերջում, քանի որ այն արդեն չէր լսւում:

«Հայկական աշխարհ»-ի Շուշիում տպագրւած ապրիլյան

<sup>1</sup> Փաստերը վերցւած են Լևոյի «Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգև-վոր դպրոցի» աշխատութիւն 374-րդ էջից:

<sup>2</sup> Մի քանի համարներում գրւած է միայն՝ «գրական և մանկավարժական»:

<sup>3</sup> Նա «Ստեփանէ», «Հայասեր», «Իշխան Բագրատունի», «Թիֆլիսցի Հայ» և այլ ստորագրութիւններով հաճախակի հանդես էր գալիս պարբերական մամուլի էջերում:

# ՀԱՅԿԱԿԱՆ

# ԱՇԽԱՐՀ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

ԱԳՐԻԼ № 1 ԵՕԹՆԵՄՈՐԻ ՏԱՐԻ № 2 ՄԱՍԻՍ

ԲՈՎԱՆԴԱՍՈՒԹԻՒՆ

Լրեւ.

1	Մուտքի ընթացքը ի դեմս Վեհափառ Հայրապետի	—	—
2	Հայկական Վախարհի վերանորոգումը	—	—
3	Իտալացի թիւն և շնորհք ընդ ձեզ, (քարոզ)	—	1
4	Իտալացի (Յիսուս և առեւ ես եմ լոյս, (քարոզ)	—	9
5	Սուրբ Գրքի և Տուն (Վոկտոր Նոկից)	—	12
6	Լեկեղեցի Վարկայի մէջ, Սեւի գետի Վեհ Սօնգից	—	23
7	Լրձան, (բանաստ. Պոլկինից)	—	25
8	Մեր Չայն (Հայկական դպրոցներ, Պէտերբուրգի Սինոդին մասացած տարեկան հաշի ուսացն հոգևորականների գործունեութեան մասին Վանքեր և Վանականներ, Վարդգու թիւն: Վերահէ օրը պահելու սովորութիւն Վարկայիցների մէջ: Չքաւոր յայկերուններին նպաստող ընկերութիւն)	—	28
9	Երեւոյի քաղաք	—	34
10	Վերջապահ յարեալ թեմայից, (քարոզ)	—	39
11	Լրջու խօսք Երեւոյի դպրոցի մասին (Նամակ դէպի խմբագրոշ)	—	42
12	Օւանագան լուրեր	—	45 և 20
13	Պատասխաններ խմբագրութեան կողմից, կազմի երբորդ երեսին	—	—
14	Ստեփանէ, կազմի շարորդ երեսին	—	—

(Դարձու միւս երեսը)

Ե.Ս.Ե.Լ.

1874

Երեւոյի Հոգևոր Վարդգի Տպարան.  
(Պոլկինի և Նոկիցի նստավայր)

համարում ասված է, որ ամսագիրը շարունակում է լույս տեսնել և հետապնդում է միայն լուսավորական, դաստիարակչական նպատակներ: Դրանից բացի, նշվում է, որ Շուշիում հրատարակվելիք համարը շատ բանով տարբերվելու է նախորդ համարներից և հանդես է գալու նոր ծրագրով: Այդ մասին հաղորդում է տրվում Անդրկովկասի մի շարք պարբերականներում: Ահա թե ինչ է գրված «Մշակ»-ի 1874 թ. մարտի 14-ի համարում. «Կառավարությանից թույլատրված նոր պրոգրամայով այս 1874 թվի ապրիլ ամսից պետք է հրատարակվի նոր օրագիր «Հայկական աշխարհ», որը կբովանդակի՝

1. Մանկավարժական ընտիր հոդվածներ, մանկավարժության ներկա դրության և զարգացման տեղեկություններով զանազան լուսավորված աշխարհների մեջ:

2. Օրիորդներին և պատանեկներին օգտավետ ընթերցանության համար գրվածներ պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական և այլն:

4. Աշխարհաբար լեզվի կանոնների և ոճերի քննություններ:

5. Մանկավարժական և դպրոցական գրվածների քննություն. հոգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկություններ:

Զանազան մանր լուրեր»:

Ճիշտ է, «Հայկական աշխարհ»-ի համարներում կան կրոնական բնույթի որոշ նյութեր, սակայն շատ են նաև այն նյութերը, որոնք պարունակում են հետաքրքիր տեղեկություններ առանձին ժողովուրդների նիստ ու կացի, սովորությունների, զբաղմունքի, տարբեր երկրների աշխարհագրական դիրքի, պատմական անցքերի ու կարևոր իրադարձությունների մասին, որոնք հայ բնակչությանը հաղորդակից են դարձնում գիտական արժեք ներկայացնող փաստերի, հայ և արտասահմանյան գրականության առանձին նմուշների, թատրոնի, գեղարվեստի նորությունների չհետ:

Ամսագրում տպագրվում են հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, գրվածքներ մեր հերոսական անցյալից: Նրա էջերի մեծ մասը գրավում են մանկավարժա-

կան նյութերը: Ուրախությամբ էր նշվում, որ 1860—1870-ական թվականներին գավառում որոշ չափով ավելացել են ուսումնարանները, համեմատաբար լավացել են ուսուցման մեթոդները, համալրվել ուսուցչական կոլեկտիվները:

Քննադատելով ուսուցման հին եղանակները, ամսագիրը գրում է, որ աշակերտները ուսուցիչներին հարգում էին ոչ թե սիրուց, այլ երկյուղից մղված և համարձակություն չունեին որևէ մեկից բացատրություն պահանջելու այս կամ այն մուծ հարցի վերաբերյալ:

«Հայկական աշխարհ»-ը արժարժում է նաև ուսուցիչների գիտելիքները խորացնելու հարցը: «Ուսուցիչները կարոտ են երկու բանի,—կարդում ենք այստեղ,—նոքա պիտի ունենան ուսուցանելու և ուսանելու ոգի: Նոքա ոչ միայն սովորեցնելու, այլև սովորելու հարկավորություն ունին»<sup>4</sup>:

Ավելին, ամսագիրը հաճախակի տպագրում է «Գործնական խրատներ անփորձ ուսուցչին» խորագրով հոդվածների շարք, որ խոսվում է ուսուցիչների մանկավարժական վարպետության, աշակերտների մեջ դեպի կրթությունը, ուսումը սեր պատվաստելու մասին: Շեշտվում է նաև, որ ուսուցումը հաճելի պետք է լինի ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների համար: Կրջովյալում և խոհեմությամբ կատարելով իրենց պարտականությունները, ուսուցիչները երբեք չպետք է անպատրաստ մտնեն դասարան:

Ամսագրի էջերում բազմաթիվ նյութեր են զետեղված նաև աշակերտների դաստիարակության, դպրոցներում ֆիզիկական կուլտուրայի զարգացման, մի շարք առարկաների օգտակարության, տեսության ու պրակտիկայի ժամերի խելացի դուզորդման և այլ հարցերի մասին: Ընթերցողները ծանոթանում էին առանձին դպրոցների աշակերտների քանակի, առաջադիմության, ուսումնական ծրագրերի հետ:

«Հայկական աշխարհ»-ի տեսադաշտը բավականին մեծ էր. նա հանդես էր գալիս նաև իբրև գիտության պրոպագանդիստ:

Նա բացահայտում է երիտասարդության դերը օգտակար

<sup>4</sup> Տե՛ս պարբերականի 1875 թ. № 8—9-ի 133-րդ էջը:

գործ կատարելու մեջ: Ամսագիրը գրում է. «Բայց եթե մի գիտնական և հմուտ անձ կամենա, որ իրենից հետո եկողները կամ ապրողները յուր ուսումից և գիտությունից օգուտ քաղեն, այն ժամանակ նա գործ կածե կենդանի խոսքի տեղ գրությունը: Ե՛վ գիտնական, և՛ ուսումնական մարդկանց տեղեկություններից օգուտ քաղելու համար հարկավոր է անպատճառ կարգալ կարողանալ: Ուստի կարգալը նույնպես մի միջոց է գիտություններին հասնելու համար»<sup>5</sup>:

«Հայկական աշխարհ»-ը դնում է օգտակար գրականություն ստեղծելու հարցը, շեշտում, որ վերջին հաշվով գիրքն է սերունդներին հաղորդում մարդկային բանականության պտուղները: Ամսագիրը առիթը օգտագործում է քննադատելու նրանց, ովքեր թերազնահատում են կանանց գիտության մեջ խորանալու կարողությունը. «... թե կարգալը հարկավոր է կնոջ, որպես և տղամարդուն, դա անկասկածելի է: Ով որ կարգալը սովորել է, դորանով մի ընդունակություն է ձեռք բերել, որից յուր կենդանության ժամանակ մեծ օգուտներ կարող է քաղել»<sup>6</sup>:

«Աղջիկների համար օգտավետ գիտությունները» վերնագրով հոդվածում շեշտվում է այն ճշմարտությունը, որ կանանց համար էլ պետքական են ոչ միայն հասարակական գիտությունները, արվեստը, գրականությունը, այլև մաթեմատիկան, ֆիզիկան, երկրաբանությունը, կենդանաբանությունը, բուսաբանությունը և այլն: Այս մասին կարգում ենք. «Նույնպես օգտակար գիտություններին վերաբերվում են բնական պատմություն կենդանիների, տունկերի և հանքերի գիտությունը, ֆիզիկական-բնական զորությունների ուսումնասիրումը, որպիսին են—տաքություն, լույս, էլեկտրականություն... երկրի և ուրիշ աշխարհների վերաբերյալ ուսումնասիրությունները, պատմություն կամ թե մեղանից առաջ ապրողների վերա տեղեկություն ունենալը, հայրենիքի գրականություն իմանալը...»<sup>7</sup>:

Ամսագիրը պատշաճ տեղ է հատկացնում մտքի նշանակու-

<sup>5</sup> «Հայկական աշխարհ», 1875 թ., № 1, էջ 24:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 28:

թյան պարզաբանմանը, շեշտում, որ մարդը լինելով աշխարհի բոլոր էակներից ամենազարգացածն ու կատարյալը, հնարավորություն ունի ամեն ինչ ըմբռնելու գիտակցաբար և ճանաչողաբար: «Մտավորական դաստիարակություն» նշանավոր հոդվածում նշվում է, որ «Մտքի նշանակությունը մարդու արժանավորության մեկ էական մասն է: Մեր հասկացողությունը գրված գեղեցիկ և բարի բանի ծառայության մեջ, մեզ բարձրացնում է երկրի բոլոր մյուս արարածներից:

Պարզորեն խոսելով, մարդը ստեղծված է տիրելու երկրի վրա. նրա գործողությունների մեջ չի տեսնվում մթություն. նա գործում է բոլորը գիտակցողաբար, ճանաչողաբար:

Նա կարող է մտածել պատճառը և արդյունքը, անցյալն ու ապառնին լծորդել, յուր համար կյանքի մի հիմնագիծ որոշել, նպատակներ ճանաչել և միջոցներ հաշվել»<sup>8</sup>:

Ամսագիրը առաջ է քաշում նաև գիտության տվյալները ժողովուրդների բարօրության օգտին ծառայեցնելու հարցը: Կոչ է անում աշխատավորներին ավելի սերտ դարձնելու տարբեր ժողովուրդների բարեկամական կապերը: Այդ դեպքում, ինչ խոսք «վաստակման (գիտություն ձեռք բերել) յուրաքանչյուր մի ձյուղը խորհրդածությունների և հետազոտությունների միջոցով ավելի փայլուն և թանկագին կդառնա»<sup>9</sup>, և գիտության մշակը կվայելի իր վաստակը:

Այնուհետև խոսվում է այն մասին, որ բոլոր ժամանակներում էլ գիտությամբ ղեկավարվելը պետք է դառնա մարդկային ընդհանուր դաստիարակության մի մասը, որ ֆիզիկական աշխատանքի հետ միասին մարդու առաջնահերթ արժանապատվությունը լինի իր ուժերին համապատասխան մտավոր գործերով զբաղվելը: Իրավացի է «Հայկական աշխարհ»-ը, երբ գրում է. «Միայն պիտո չէ մտավոր զարգացումը կոպարավորել մի սահմանափակ տեսության կետով, այլ նա պետք է համարվի իբրև ընդհանուր մարդկային դաստիարակության էական մաս: Միայն այս տեսության կետն է բուն մանկավարժականը և դաստիարակչին արժանին»<sup>10</sup>: Իսկ գրա համար

<sup>8</sup> «Հայկական աշխարհ», 1876 թ., № 1—2, էջ 20:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 24:

ամսագիրը առաջադրում է իր բուժամիջոցը. պետք է հիմնովին փոխել գիտելիքների ձևերը բերման մեթոդները, դնել գրանք առաջադեմ ուղղությունների վրա, թույլ տալ մարդուն ինքնուրույն մտածել ու դատել:

Պարբերականը գիտություն զարգացման կարևոր պայմաններից մեկը իրավացի կերպով համարում է անհրաժեշտ միջոցներ ունենալը, իր ուղու վրա մեծ խոչընդոտների չհանդիպելը, հալածանքի չենթարկվելը, գիտական մտքի ազատ արտահայտումը, մի բան, որ պակասում էր ցարիզմի դաժան պայմաններում:

Գիրքը մարդու համար մեծ բարիք է, նրա խորհրդատուն և բարեկամը, նրա առաջընթացի ուղենիշը: Այն ուղղակի հրաշալիք է հրաշալիքների մեջ: Եվ հաղար անգամ իրավացի է Մ. Գորկին, երբ գրում է. «Գիրքը բոլոր հրաշալիքներից առավել բարձր ու մեծ հրաշալիքն է, որ ստեղծել է մարդկությունը դեպի երջանկություն տանող իր ճանապարհին»: Ավելին, գիրքը մարդու ամենանուրբ զգացմունքների վրա ներգործող ազդակներից մեկն է. նա կարողանում է ընթերցողին հոգով ու սրտով դարձնել բարի, առաքինի, երջանիկ: «Առանց գրքի՝ մարդը թե՛ կուպիտ է, թե՛ աղքատ և թե՛ ապերջանիկ», գրել է Ն. Գ. Չերնիշևսկին: Ահա ինչու շուրջ հարյուր տարի առաջ «Հայկական աշխարհ»-ը բազմաթիվ մանկավարժական, գրական հարցերի հետ միասին նշում է գիրքը սիրելու կարևորությունը. դա առհավատ չյան էր այն բանի, որ նրա թե՛ հրատարակող-խմբագրող խորեն Ստեփանեն, թե՛ խմբագրության անդամները՝ Համբարձում Առաքելյանը և Հովհաննես Քուլուբեկյանը և թե՛ առավել աչքի ընկնող հոգվածագիրները՝ մեր մամուլի անխոնջ մշակներից Գրիգոր Արծրունին, Ներսիսյան ուսումնարանի հոգաբարձու Գրիգոր Իզմիրյանը և ուրիշներ գիրքը համարում էին մարդու հոգևոր սնունդը:

«Հայկական աշխարհ»-ն ընդգծում է մարդկանց գրքի հետ կապելու անհրաժեշտությունը: 1875 թ. № 1-ում «Հարցմունք կարդալու համար» հոդվածի մեջ ասված է. «Կարդալ գիտե՞ք. քսան տարի սորանից առաջ մեծ դժվարություն պիտի պատասխանելին երիտասարդները այս հարցին: Բայց այժմ ու-

սումնարանները ամենուրեք զարմանալի փոփոխություն են արած երիտասարդներին լուսավորելու մեջ, այժմ գրեթե ամենքն ևս գիտեն կարդալ...» (էջ 3):

«Հայկական աշխարհ»-ի մտահոգությունը միայն այս չէ: Նա շահագրգռված է, որ կարդալ իմացողները սիրեն գիրքը, օգուտ բերեն իրենց ժողովրդին, դառնան լուսավորված մարդիկ:

«Սակայն կարդում ե՞ք դուք», հարցնում է պարբերականը կարդալ իմացող երիտասարդներին և ուղղակի պատասխանում. «Քիչ օգուտ ունի իմանալ բանը և գործ չդնել նորան: Ի՞նչ օգուտ է կարդալ սովորելը և երբեք չկարդալը: Սա լուր նորաձևություն չէ, որ առանց նորան ևս հեշտ անցկենա. երեսխայի խաղալիք չէ, որ ցանկալի էր միայն նորան այդ երջանիկ հասակի մեջ, ոչ: Կարդալով, ստանում է մարդ գիտություն, լուսավորություն և մեր ամբողջ կյանքը լինում է բախտավոր և երջանիկ: Գրքերը շատ օգտակար են գիտության սովորեցնելու, մտավոր կարողությունը զարգացնելու, ամեն վատ բաներից զգուշանալու և լավերը ընտրելու համար: Առանց նոցա շատ և շատ օգտակար գյուտեր, երևելի խնդիրների լուծում և մեծամեծ հայտնագործություններ պիտի կորած լինեին» (էջ 4):

Ամսագիրը շեշտում է այն բանը, որ կարդալը ոչ միայն զարգացնում է մարդու մտավոր կարողությունը, այլև նրան օժտում է լավ բանի համար պայքարելու ձգտումով: Ավելին, «Հայկական աշխարհ»-ը բացեիբաց հայտարարում է, որ առանց գրքի շատ դժվար կլինեի գիտության զարգացումը: Չէ որ մարդ, առանց իր նախորդների գիտական աշխարհը ճանաչելու, յուրացնելու, չի կարող վիթխարի քայլերով առաջ գնալ և հասնել նոր նվաճումների. գիտության թռիչքը, ասում է «Հայկական աշխարհ»-ը, մարդկային սերունդների բանականությունն արգասիքն է: Պարբերականը աստիճանաբար զարգացնում է իր միտքը և շատ նրբորեն առաջադրում նոր հարցեր. «Ինչպես եք կարդում». ահա մի նոր հարց, որի պատասխանը ևս ստանում ենք այստեղ. «Մեծ և անասելի գանազանություն կա լավ և վատ ընթերցանություն մեջ...: Լավ է մի գիրք օրինավոր կերպով կարդալ, քան թե քսանը վատ կեր-

պով» (էջ 5): Այս միտքը հաստատելու համար նա համեմատութիւն է անում. «Այն կերակուրը, որ մտնում է ստամոքսի մեջ, բոլորովին չի կազմվում մարմին, այլ միայն նորս մի մասը, որին մարսում է ստամոքսը, նմանապես և մարդու միտքը չի լուսավորվում առհասարակ այն ամեն գրքերով, որոնց կարդում ենք մենք այստեղ բացատրված կանոնների համաձայն» (էջ 5):

«Հայկական աշխարհ»-ը լավ կարդալու համար առաջադրում է իր մեթոդը. «հարկավոր են հաստատամտութիւն, ուշադրութիւն, խորհրդածութիւն...: Գրքեր ընտրելու ժամանակ հարմարեցրեք ձեր հասկացողութիւնը, զարգացմանը, ձեր մոլորութիւնները ուղղելու և բարեգործութիւններ զարգացնելուն: Սովորեցեք կարդալով օգտակար լինել ձեզ և ձեր մերձավորներին...» (էջ 8):

Ամսագիրը երաշխավորում է առաջին հերթին կարդալ այն գրքերը, որոնք սերմանում են հայրենասիրութիւն ու ժողովրդասիրութիւն, բարձրացնում են ոգին, խիզախութիւնը, օժտում նախնիների նկատմամբ խոր սիրով ու հարգանքով: Այս նպատակով ամսագրի էջերում տպագրվում են Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից դրվագներ, Հովհաննես Քուլուբեկյանի օգտակար պատմվածքները («Անբախտ Սելիմը և յուր պատմութիւնը», «Բաղդասար մուստաֆան և իր պատմութիւնը» և այլն), գրական չափածո գործեր: Գիրքը բնավորութիւն զարգացման նպաստող գործոններից է: Երբ ընթերցողի բնավորութիւնը գծերը համընկնում են կարգացվող գրքի հերոսի բնավորութիւնը որոշ գծերին, ընթերցողի մտքը ավելի որոշակի և ավելի ընդգծված են դառնում դրանք:

Նրա մի շարք համարներում, մասնավորապես 1874 թ. № 8—9-ում, տպագրվում են այնպիսի նյութեր, որոնք վկայում են պարբերականի ուղղութիւնն ու նպատակը: Նա շեշտում է, որ ոչ միայն ուսումնարաններն ու դասատուները, այլև գիրքը պետք է կարևոր և նվիրական պաշտոն կատարի մարդու կյանքում, նրան մղի դեպի նորը, զարգացողը, առաջավորը: Իհարկե, սա չի նշանակում, նշում է «Հայկական աշխարհ»-ը, թե բոլոր գրքերը ունեն դաստիարակչական և գիտական կարողութիւն. խոսքը միայն լավ գրքերի մասին է և

ա՛յդպիսի գրքերի սիրահարները պիտի դառնան հաղարավոր ընթերցողները: Իհարկե, «Հայկական աշխարհ»-ը ամեն ինչ չի կապում գրքի հետ. նա ակտիվ գործոն է համարում նաև շրջապատը, հասարակական վիճակը, կուլտուր-լուսավորական օջախները, շեշտը դնելով կուլեկտիվ ձեռնարկումների հաջող անցկացման վրա: Նա գերադասում է ընտանիքի դերը մարդու դաստիարակութիւն ասպարեզում: Կրթութիւն և դաստիարակութիւն խնդիրները բաղդատելով, պարբերականը հանգում է այն հետևութիւն, որ երկուսն էլ զորավիճ են հասարակութիւն «առաքինի, բարոյական և օգտակար անդամներ» պատրաստելու, մարդու սիրտը և հոգին հարստացնելու, գիտական միտքը բարձրացնելու համար: «Հայկական աշխարհ»-ը մտահոգված էր տպագրի խոսքի ուժով ու ներգործութիւնը, օգտակար խորհուրդներով, ընթերցողին գրքի հետ կապելու միջոցով դաստիարակել, կրթել այնպիսի քաղաքացիներ, որոնք մտահոգվեն իրենց հայրենիքի և ժողովրդի մասին:

Բավականին հարուստ ծրագրեր ունեւ ամսագիրը. յուրաքանչյուր նոր տարվա շեմին հրապարակ հանելով դրանք, ընթերցողներին տեղյակ էր պահում արժարժիւիք հարցերի մասին:

Դժվարին պայմաններում էր գործում խմբագրութիւնը: Այն մեծ մասամբ գտնվում է Շուշիում, մասնավորապես 1874—1875 թթ.<sup>11</sup>, նյութերը մի քանի անգամ գրաքննութիւն լին ենթարկվում Թիֆլիսում, իսկ տպագրութիւնը կատարվում էր այլ քաղաքներում (Բաքվում, Գանձակում կամ այլուր): Ահա թե ինչ ենք կարդում 1875 թ. 12-րդ համարի 194-րդ էջում. «Այս 1875 տարի «Հայկական աշխարհ» օրագիրը դանազան դժվարութիւնների պատճառով չկարողացավ խմբագրութիւն փափագի համեմատ հրատարակվել: Խմբագրութիւնը ստիպված էր հրատարակելի հոդվածները նախ Թիֆլիս ուղարկել ցենզուրային, այստեղից ստանալուց հետո, Գանձակ ուղարկել տպագրելու, սրբագրութիւն համար ետ ստանալ և դարձյալ ուղարկելու, վերջը դարձյալ Թիֆլիս ուղարկել և նորեն ստանալուց հետո միայն բաժանել»: Բացի այդ, պար-

<sup>11</sup> Տե՛ս ամսագրի 1875 թ. № 12-ի 195-րդ էջը:

գերականը և առաջին հերթին նրա հրատարակիչը ենթարկվում էր դաժան հալածանքի ոչ միայն ցարական պահանջարկան մարմինների, այլև առանձին անձնավորությունների ու խմբագրությունների կողմից: 1870 թ. № 1-ում գետեղված խմբագրականում կարդում ենք. «Հայկական աշխարհ»-ը ամեն տեսակ հալածանքին ենթարկվեցավ միշտ: Ի տրամաբյուն թշնամիներին, որքան հալածանքը խիստ էր, այնքան «Հայկական աշխարհ»-ը հաստատ հողի վրա կանգնեց, ավելի մարդասեր ուղղություն բռնեց, ավելի ճշմարտություն ունեց քարոզեց, ավելի հարգողներ գտավ»: «Հայկական աշխարհ»-ին յուրահատուկ էր ոչ միայն սկզբունքայնությունը, հետևողականությունը, այլև բազմաժանր նյութերի առկայությունը: Հողվածների, ինֆորմացիաների, թղթակցությունների, հաղորդումների, նամակների կողքին գետեղվում էին բանաստեղծություններ, որոնք հագեցված էին հայրենիքի տխուր ու մոռյվ վիճակը փոխելու տրամադրություններ:

Սակայն ինչպես Թիֆլիսում, Գանձակում և Բաքվում, այնպես էլ Շուշիում լույս տեսած համարներում, «Հայկական աշխարհ»-ը որոշակի տեղ էր հատկացնում եկեղեցական, կրոնական նյութերին, տպագրում էր քարոզներ, սաղմոսներ, Աստվածաշնչից հատվածներ, պրոպագանդում հոգևոր հաղորդակցության կարևորությունը: Ավելին, առանձին համարներում տրվում էր տերունական աղոթքների համառոտ մեկնությունը, գրվատում էր աստծուն՝ համարելով նրան ամենազորեղ ու ամենափրկիչ, հրապարակում էր եկեղեցական երգեր, արարողություններ, ընթերցողներին պատմում առանձին պաշտամունքների մասին:

Դաստիարակչական նվազ նշանակություն ունեն «Մանկական» բաժնում լույս տեսնող բազմաժանր նյութերը, որոնք երեխաներին սովորեցնում են քրիստոնեությունից տարբեր ուսմունքները, աստծո պատգամները և նրա սրբազան օրենքները: Տպագրվում էին նաև խրթին, կնճռոտ պատմություններ ու զրույցներ առանձին տերությունների դատարանական կարգի, սխտեմի, ինչպես նաև բնական երևույթների մասին:

Հրապարակված բարոյական առաժների մի զգալի մասը

ավելի շուտ երգիծական բնույթ են կրում և խարազանում են կյանքի այս կամ այն կողմը:

Ամսագրի «Ջանազան լուրեր»-ը նույնպես աչքի ընկնող խորագրերից չէր, թեև այն լինում էր գրեթե յուրաքանչյուր համարում:

«Հայկական աշխարհ»-ի ուշադրությունից վրիպում էր ձեռնավորումը. համարները լղարիկ էին, թուղթը անորակ, շապիկը առանձին հանդիսավորություն չէր տալիս: Բացի մի երկու բաժնից, ամսագրի նյութերը գետեղվում էին անկանոն, առանց բովանդակությունն ու թեման հաշվի առնելու:

Ճիշտ է, բացվում է նոր՝ մասնավոր տպարան, բայց նա էլ չի փոխում վիճակը. չկային հայերեն տառատեսակներ, ձևավորման տարրեր, տպագրությունը կատարվում էր անորակ: Այս նոր տպարանում լույս տեսած գրքերը տեխնիկական արատավոր էին, ժամանակի մամուլը քննադատական խոսք էր ասում այդ առթիվ: Այստեղ լույս տեսած առաջին գիրքը Ջոն Վիլիամ Գրեյերի «Պատմություն մտավոր զարգացման Եվրոպիայի»-ն էր:

Գրքի թարգմանության (թարգմ. Ա. Վարդ Սեդրակյան) մասին գրած փոքրիկ գրախոսականում «Մշակ» թերթի գրախոսը անդրադառնում է նաև տպագրության խրակին: Նա գրում է. «Ինչ վերաբերում է տպագրության, պետք է ասել, որ արտաքին կողմից շատ լավ չէ, մանավանդ շատ տպագրական սխալներով, տեղ-տեղ անորոշ և անկանոն տառերով: Բայց այդ ամենը առաջ է եկել ոչ թե իրեն՝ թարգմանչի անուշազրույթությունից, կամ՝ խնայողությունից, այլ տպարանատիրոջ իր պարտքը անբարեխղճաբար կատարելուց... թեև այդ տպարանը Վ. Սեդ. հետ պայման է կապել օրինավոր կերպով տպագրելու, բայց գրքից երևում է, նա շատ տառեր չի ունեցել, օրինակ «փ» տառը չունենալով, նա «ի» և «լ» է գրել»<sup>12</sup>:

1880—1885 թթ. Ղարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձությունը ամեն կերպ ձգտում էր ոտքի կանգնեցնել իր տպարանը<sup>13</sup>: Այդ նպատակով Մոսկվայից բերել է տալիս տպարանը

<sup>12</sup> «Մշակ», 1880, № 69, ապրիլի 29:

<sup>13</sup> Այդ տպարանը աշխատեցնելու համար որոշ ժամանակով տալիս են շուշեցի Մելքոն Բաբաջանյանին, սակայն վերջինս հրաժարվում է դրանից և

գրական նոր մեքենաներ ու տառատեսակներ, սակայն կանոնավոր չեն օգտագործում և դրանց մեծ մասը փչանում է:

1885 թվականին վերաբացվում է անգործության մատնե-  
ված այս տպարանը և սկսում են տպագրել նոր գրքեր:  
«Մշակ»-ը 1886 թվականի հունվարի 28-ի համարում հաղոր-  
դում է, որ նորոգվել է Շուշիի հայոց հոգևոր դպրոցի տպարա-  
նը, ձեռք են բերվել հայերեն և օտար լեզուներով նոր տառա-  
տեսակներ, տպագրական թուղթ, կա մասնագետ գրաշար և  
տպագրիչ: Թերթը նշում է նաև, որ հարց է բարձրացված  
տպարանին կից բացելու փոքրիկ գրավաճառանոց ու ընթեր-  
ցարան:

\* \* \*

Շուշիում տպագրական գործի որոշ շափով էարգավորու-  
մից առաջ, առանձին մարդիկ, հատկապես կանայք, հանդես  
են գալիս իբրև գրիչներ: Նրանք ոչ միայն պատձենահանում  
էին այս կամ այն հեղինակի աշխատությունը, այլև դարձա-  
նկարում:

Նրանց մեջ աչքի ընկնողը Մարգարիտ Ալեքսանյանն էր:  
Նա ծնվել է 1858 թ. Շուշիում: Գրել, կարդալ է սովորել Աբեր-  
ճղիսաբեթի օրիորդաց դպրոցում և հենց այստեղ էլ սիրել  
վաշելազարությունը: Հետագայում Ալեքսանյանն ավելի է հրա-  
պուրվում արվեստով, գիշեր-ցերեկ թերթում է պատկերա-  
զարդ այն գրքերն ու հանդեսները, որոնք ստացվում էին Պե-  
տերբուրգից և այլ քաղաքներից: Հին գրչագրերը ևս դառնում  
են նրա ոգևորության առարկան: Նա իր սենյակը դարձնում է  
նկարչական արվեստանոց: Հավաքում է գեղեցիկ նկարներ և  
պատրաստում «Հայկական գեղանկարչություն» ալբոմը: Այն  
հրատարակում է նրա մորեղբայրը՝ Տիգրան Նազարյանը,  
որը 1881 թ. Շուշիում ստեղծել էր «Հրատարակչական գրա-  
սենյակ»: Մարգարիտն իր կազմած ձեռագրերն ուղարկում է  
Վենետիկ և խնդրում դրանք տպագրել իր միջոցներով:

Ալեքսանյանի գործերի մեջ ուրույն տեղ է գրավում էջ-  
միածնի եկեղեցու թանգարանում պահվող ձեռագիր աշխա-  
տանքը: Հինգ տարվա (1867—1872 թթ.) ընթացքում, հաճախ  
բացում է իր սեփական տպարանը, որն ուներ անհրաժեշտ սարքավորու-  
մանը ու տպագրական մեքենաներ:

աշխատելով գիշերները, Մարգարիտը բացառիկ գեղեցիկ ձե-  
ռագրով արտագրում է ծավալուն գիրքը:

Մարգարիտ Ալեքսանյանի գործունեությունը հատկապես  
բեղմնավոր էր պարբերական մամուլում: Հաճախ նա «Աղ-  
բյուր» և «Տարազ» ամսագրերում հրատարակում էր իր գեղա-  
նկարներն ու զարդանկարները: Սրանք հիմնականում ունեին  
մանկա-պատանեկան բովանդակություն, ցույց էին տալիս  
կնոջ վեհությունը, սերը երեխայի և հարազատների նկատ-  
մամբ:

Հայկական գեղանկարչության զարգացմանը մատուցած  
Մ. Ալեքսանյանի ծառայությունները բարձր է գնահատել «Աղ-  
բյուր» ամսագիրը: 1908 թ. լույս տեսած համարում լայն տեղ  
է հատկացված Մ. Ալեքսանյանի կյանքի կարևոր իրադարձու-  
թյուններին: 1891 թ. «Տարազ» ամսագրում կեն գրել է. «Տի-  
գրի Մարգարիտ Ալեքսանյանցի գործերի մեջ չպետք է որոնել  
այն, ինչ գեղարվեստի կանոններով ու ճաշակով կրթված  
մարդը որոնում է հանրուստ պատկերահանգեսներում: Պետք  
է հասկանալ նրա գծած յուրաքանչյուր գծի պատմությունը,  
պետք է իմանալ ինչպիսի հանգամանքների մեջ ձեռքն այդ-  
չափ նրբություն, ճաշակավոր դասավորության է հասել, և  
այն ժամանակ, ամենայն իրավամբ, կարող ենք գովել կամ-  
քի ուժը, համառ ու շարքաշ աշխատության պտուղը, որ, ան-  
կասկած, ստեղծագործողի բնականից բարձր ընդունակու-  
թյուններն է հայտնում»<sup>14</sup>:

Մարգարիտ Ալեքսանյանի օրինակը եզակի չէր Շուշիում:

\* \* \*

Դպրոցների համար համեմատաբար մեծ տպաքանակով  
ձեռնարկների, մայրենի լեզվով գեղարվեստական և քաղա-  
քական գրականության տպագրումը և, ընդհանրապես, հասա-  
րակական մտքի զարգացումը թեկադրում էին ունենալ տպա-  
գրական որոշ բազա, արագատիպ տպարաններ՝ ժամանակի  
տեխնիկական սարքավորումներով հագեցված: Այդպիսին էր  
1881 թվականին Շուշիում բացված Միրզաջան Մահտեսի Հա-  
կոբյանի տպարանը:

Տպարանի ստեղծման և հետագա գործունեության մասին  
հետաքրքիր հուշեր է պատմում Ղարաբաղի հրատարակչության

<sup>14</sup> ՏԿՍ հունիսի 16-ին լույս տեսած № 22-ի 324-րդ էջը:

և մշակույթի պատմութեանը քաջածանոթ Պետրոս Զաքարյանը: Նա գրել է. «Կառավարական ապարատի օրավուր բարդանալը և ճյուղավորումը, հասարակական, դպրոցական, վաճառականական պահանջներն առաջ բերին տպարանի անհրաժեշտութիւնը: Շուտով Բաքվի աքսորից վերագործած Մահտեսի Հակոբյանը հիմնեց իր տան կից հատուկ շենքում մի տպարան, որտեղ աշխատում էին իր որդիները: Ճիշտ է, տպագրական մամուլը նոր երևույթ չէր Ղարաբաղում...: Շվեյցարիայից՝ Բագելից եկած միսիոներները հիմնել էին Շուշիում հայկական տպարան, որտեղ լույս էր տեսել առաջին աշխարհաբար ավետարանը և ուրիշ շատ գրքեր, ապա թեմական դպրոցը բանեցրել էր նույն մամուլը միառժամանակ: Բայց այդ միջոցին հիշածս տպարանը փոշով պատած, ընկած էր սեմինարիայի սենյակներից մեկում: Նոր տպարանը բարգավաճում էր իր հիմնուկերու օրից:

Ի միջի այլոց այստեղ գրական մկրտութիւնն ստացավ մեր գրող Լեոն, որը տպարանի առաջին սրբագրիչն էր... Այստեղ երիտասարդ վաճառականական գործակատար Աբել Ապրեսյանը կատարեց Բաքիի «Խենթի» առաջին տպագրութիւնը, Արիստակես Սեդրակյանը տպագրեց «Դրեպերը» և այլն»<sup>15</sup>:

Ինչպես նշվեց վերևում, այս տպարանում է առաջին անգամ (1881 թ.) ամբողջապես տպագրվում Բաքիու «Խենթը»<sup>16</sup>: Սա ուշագրավ երևույթ էր և ունի հետաքրքիր պատմութիւն: Ոչ միայն հեղինակը, այլև առանձին ուսանողներ և մտավորականներ ցանկանում էին «Խենթը» տեսնել շքեղ հրատարակութեամբ ու մեծ տպաքանակով: Եվ ահա 1880 թ. Մոսկվայի համալսարանի ուսանող Միրզոյանը թույլտվութիւն ստանալու համար դիմում է հեղինակին: Սակայն ուսանողի մտահղացումը Մոսկվայում չի իրագործվում, որովհետև Բաքիին արդեն իր համաձայնութիւնը տվել էր գիրքը Շուշիում տպագրելու համար: Այս մասին Բաքիին գրում է. «Պարոն Միրզոյանցը մի երկու ամիս առաջ դիմել էր ինձ, խնդրելով, որ ես իրավունք տամ «Խենթը» Մոսկվայում տպագրելու, բայց

<sup>15</sup> Տե՛ս «Նորք», գրական, գիտական և բաղաբանական հանդես, գիրք № 1, 1922 թ., Երևան, էջ 83:

<sup>16</sup> Այն սկզբում հատվածաբար լույս էր տեսել «Մշակ» թերթի էջերում:

ես չկարողացա կատարել նրա գեղեցիկ ցանկութիւնը, որովհետև նրանից առաջ արդեն իրավունք էի տված Շուշիում տպագրելու: Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բավական լավն է և տպագրութիւնը մաքուր, երևում է այնտեղի տպարանը այժմ փոքրիշատե կանոնավորված է»<sup>17</sup>:

Ինչպես տեսնում ենք Բաքիին նույնպես գոհունակութիւն է հայտնում Մ. Հակոբյանի տպարանի բարձրորակ աշխատանքի նկատմամբ:

1886 թվականին Մ. Հակոբյանի տպարանում է առաջին անգամ հայերեն լույս տեսնում ուսու մեծ գրող Գոգոլի «Տարաս Բուլբա»-ն: Սա բնագրի ուղղակի թարգմանութիւնը չէր, այլ բովանդակութեան շարադրանքը: Թարգմանութիւնն անհաջող էր: Այդ մասին հանդես է գալիս «Մուրճ» ամսագիրը 1891 թ. № 10-ում: «Այս փոխադրութիւնը,— գրում է «Մուրճ»-ը,— երբեք չի կարող փոխարինել իսկական «Տարաս Բուլբա»-ին, ցանկալի է այս վերջինի լիակատար թարգմանութիւնը»:

Շուշիում լույս տեսավ Մանուկ Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծութիւնների ժողովածուն, որը հիմնականում բովանդակում է ժողովրդական ավանդութիւններն ու լեզենդները՝ հեղինակի մշակմամբ:

1889 թ. հրատարակվում է Աբեղյանի մի շատ կարևոր աշխատութիւնը՝ «Դավիթ և Մհեր, ժողովրդական դուցազնական վեպ» վերնագրով: Այս աշխատութիւնը մեծ ընդունելութիւն է գտնում: Գրախոսութիւններից մեկում ուղղակի կարդում ենք. «Այսպես, ուրեմն, պ. Աբեղյանի հրատարակած «Դավիթ և Մհեր» ժողովրդական դուցազնական վեպը, շնայած իր թերատութեան, մի շատ նշանաւոր երևույթ է մեր գրականութեան մեջ և ցանկալի է, որ այսուհետև ոչ թե պատահական կերպով անյայտութիւնից լույս աշխարհ ընկնեն մեր ժողովրդի փառաւոր դուցազներգութեան բեկորները, այլ կազմակերպւած հետազոտութեան և ուսումնասիրութեան արդիւնք լինէին Նոքա»<sup>18</sup>:

<sup>17</sup> Բաքիի, Երկրի ժողովածու, հատ. 10, Երևան, 1959, էջ 566:

<sup>18</sup> «Մուրճ», 1889 թ., № 9, էջ 1463:

Լեոյի աշխատութիւնները որոշ մասը՝ «Վե՛պ թե պատմութիւն» ուսումնասիրութիւնը (1887 թ.), «Կույր աղջիկը» պատմըվածքը, «Վահան Մամիկոնյան»-ը (1888 թ.), «Իմ յիշատակարանը», «Սպանուած հայրը»<sup>19</sup> (1891 թ.), «Թաթախման գիշեր»-ը (1892 թ.) և այլն առաջին անգամ լույս տեսան Շուշիում:

Արժեքավոր էր նաև Մակար Բարխուդարյանի<sup>20</sup> «Արազը սարին կտարի» վերնագրով ստեղծագործութիւնը, որը լույս տեսավ 1883 թ. Շուշիում: Հերոսները համագլուղացիներ Ստեփանն ու Թաքվին են, նահապետական ընտանիքի ներկայացուցիչներ, որոնք պարզ հոգու տեր մարդիկ են, մտածում և գործում են ազնւաբար: Նոր հրատարակութիւններից էին նաև «Ուխտավորի հիշատակարանը» (1885 թ.), «Նոր ցավ» (1886 թ.) և այլ գրքեր ու գրքույկներ:

Ուշագրավ է նաև Միրզա Տեր-Սարգսյանի վեպը՝ «Ռուշան և Հիրիզադ» վերնագրով, որի նյութը վերցված է Ղարաբաղի անցյալից: Գիրքը լույս է տեսել 1889 թ. Շուշիում: Հեղինակը ձգտել է տալ Ղարաբաղի մի գյուղում բնակվող երկու երիտասարդի՝ Ռուշանի և Հիրիզադի սիրո պատմութիւնը: Սակայն նրանց սերը, հանդիպելով ժամանակի խոչընդոտներին վերածվում է ողբերգութիւն: Աղջկան բռնութիւններ հարեմ են տանում, իսկ տղան ինքնասպան է լինում:

Հանդես գալով այս վեպի գաղափարական և գեղարվեստական արժանիքների և ստվերոտ կողմերի մասին, «Մուրճ» ամսագիրը շեշտը դնում է այն բանի վրա, որ պետք է առավել

<sup>19</sup> Այս աշխատութիւն մասին գրախոսութիւն է տպագրվել «Մուրճ» ամսագրի 1891 թ. № 6-ում:

<sup>20</sup> Ծնվել է 1836 թ. Ղարաբաղի Խանաձախ գյուղում: Եղել է դերձակի աշակերտ և գրադվել է ինքնակրթութիւնով: Այնուհետև տեղափոխվել է Էջմիածին: Գրել է միայն հայերենի բարբառով: Նրա գրչին են պատկանում «Պըլը-պուղի», «Չորանն ու նշանածը», «Բարոյական առածներ» և այլն: Վերջինիս մեջ ամփոփված են Ղարաբաղում տարածված բարոյախոսական առածները: Նա գրել է նաև գիտական աշխատութիւններ («Աղվանից աշխարհ և դրացիք», «Աղվանից պատմութիւն», «Արցախ» և այլն): Մահացել է 1906 թ. Էջմիածնում:

ուշագրութիւն գարձնել կերպարների ռեալիստական կերտմանը և լեզվական կուլտուրային:

Միրզաջան Հակոբյանի տպարանում լույս են տեսնում նաև թարգմանական գործեր, մեծ մասամբ գեղարվեստական նշանավոր ստեղծագործութիւններ: Սամվել Գյուլզադյանը<sup>21</sup> պարսկերենից հայերեն է թարգմանում Ֆիրդուսու «Ռոստոմ և Սոհրաբ»-ը («Շահնամե»-ից) և 1893 թվականին տպագրում: Հաջորդ տարում նույն Սամվել Գյուլզադյանի թարգմանութիւնով լույս է տեսնում Ֆիրդուսու «Ձոհակ Բիրասպի և Սոհրաբ»-ը: Սամվել Գյուլզադյանի թարգմանութիւնների սրակի մասին փոքրիկ գրախոսութիւններ են տպագրվում «Մուրճ» ամսագրում: Գրախոսը գրում է. «Պ. Գիւլզադեանի թարգմանութիւնները վերին աստիճանի ցանկալի և նոր երկվույթ են կազմում հայոց թարգմանական գրականութեան համար...»

Պ. Գիւլզադեանը, ինչպես երևում է, իրան նպատակ է դրել ծանոթացնել մեզ Շահնամէի հետ, որը զանազան մասերի բաժանած՝ առանձին գրքերով լույս է ընծայում»<sup>22</sup>:

Հետզհետե ծավալվում է Մ. Հակոբյանի տպարանի գործունեութիւնը: Փաստորեն նա դառնում է Ղարաբաղի այն միակ տպագրական օջախը, որի պիտակով լույս էին տեսնում ոչ միայն տարբեր գրքեր, գրքույկներ, այլև առանձին պատմութիւններ:

Նշենք, որ հրատարակված աշխատութիւնների հիմնական բովանդակութիւնը հայրենասիրութիւնն է, ժողովրդասիրութիւնը, դեմոկրատական գաղափարների արտահայտումը: Սա միաժամանակ նշանակում է, որ սկսած 1870-ական թվականներից, Ղարաբաղում նկատվում է մի նոր հոսանք դեպի լուսավոր աշխարհը, քաղաքակրթութիւնը:

<sup>21</sup> Նա Շուշիի թեմական դպրոցի հայոց լեզվի, ֆրանսերենի, գծագրութիւն և վայելչագրութիւն ուսուցիչն էր. ուներ կանոնավոր կրթութիւն և զբաղվում էր թարգմանութիւնով: Նրա մի շարք հոգվածները լույս են տեսել ոչ միայն Կովկասի, այլև արտասահմանի հայ մամուլի էջերում: Նա է, «Ուր մուր Կուրն է գալիս Կովկաս սարերեն» երգի հեղինակը:

<sup>22</sup> Տե՛ս ամսագրի 1894 թ. № 5-ի 771-րդ էջը:

1881 թ. Շուշիի Մ. Մահտեսի Հակոբյանի տպարանում տպագրվեց Նիկողայոս Տեր-Ավետիքյանի՝ «Քնար խոսնակ»-ը, ուր լույս տեսան ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական գործեր: Հենց սկզբից նշենք, որ թարգմանությունները կատարվել են ուսու և եվրոպական կլասիկներին՝ Պուլկինից, Լերմոնտովից, Դոբրոլյուբովից, Հայնեից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլն:

Սա պատահական երևույթ չէր. ժողովածուի հեղինակը, լինելով կրթված, դարգացած մարդ, գրական գործեր ընտրելիս առաջին հերթին հաշվի էր առնում դրանց գաղափարական բովանդակությունը, քաղաքական իմաստը: Նշենք նաև, որ Ն. Տեր-Ավետիքյանը գրական ասպարեզում նոր մարդ չէր. նրա գրչին են պատկանում 12 անուն գրքեր, այդ թվում և տեղագրական նամականիս:

Զհաշված Հայնեի «Մանկիկ» ոտանավորը, «Քնար խոսնակ»-ի առաջին բաժինը բովանդակում է ոչ թարգմանական գործեր: Ուշադրություն է գրավում Ն. Տեր-Ավետիքյանի «Պուլկինի արձանը» բանաստեղծությունը (գրված 1880 թվականի հունիսի 6-ին Մոսկվայում): Հեղինակը շատ բարձր է գնահատում ուսու մեծ բանաստեղծի ստեղծագործությունները, համարելով դրանք բացառիկ քանքարի և մեծ տաղանդի արհայտություններ:

<sup>1</sup> Ն. Տեր-Ավետիքյանը ծնվել է 1856 թվականին, նոյեմբերի 5-ին, Շուշիում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, ապա էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տասը տարի զբաղվել է ուսուցչությամբ, վարել է Ղարաբաղի հայկական դպրոցների տեսուչի պաշտոնը: Մոսկվայում լսել է առաջավոր գիտնականների դասախոսությունները:

1883 թվականից սկսած աշխատակցել է «Ազրյուր» ամսագրին: Ե. Մելիք-Աղամյանի հետ նա է «Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը» ստեղծագործությունը փոխադրել հայերենի և հրատարակել ամսագրի 4-րդ համարում: Գրել է «Վերածնության դար» գրական աշխատությունը և հրատարակել Շուշիում:

# Ք Ն Ա Ր - Խ Օ Ս Ն Ա Կ

## ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔԵԱՆ



ՀՈՒՇԻ

Ի Տղարանի Մ'իրզաշան Մահտեսի-Յակոբյանի:

1881

Ջերմորեն է արտահայտվում ժողովրդի շխամբող սերը պոետի նկատմամբ: Ավելին. հայ հեղինակը նրան անվանում է հայրենի աշխարհի «ազատության արուսյակ»:

Ստեղծագործությունը ավարտվում է այս տողերով.

Ուախացի, ո՛վ հանճար,  
Ահեղագոր ե՞ն խոսքերդ,  
Ազնիվ դարձան սրտե՞ր քա՛ր  
Եվ ծաղկեցան քո փշերդ:

Նա բարձր է գնահատում նաև Բայրոնի տաղանդը և ձոն նվիրում նրան:

Հեղինակը որոշ իմաստով հրապարակ է հանում ժողովրդի ներաշխարհը, ցույց տալիս նրա սոցիալական վիճակը և քաղաքական տրամադրությունները, քննադատական խոսք ասում այն մարդկանց հասցեին, ովքեր զուրում են խեղճ գյուղացու արդար վաստակը: Դա մասնավորապես արտահայտվում է նրա «Հյուսիսի աշունը» և «Հյուսիսի ձմեռը» բանաստեղծություններում:

Հայ աշխատավորի ողբերգական վիճակը արտացոլվել է Ն. Տեր-Ավետիքյանի «Սով» բանաստեղծության մեջ:

Դառն օրեր են ապրում նաև ուսանելու գնացած հայ աղջիկն ու պատանին: Նրանք զրկված են ապրելու, կրթվելու և զարգանալու որևէ հնարավորությունից: Նրանք շունեն դրամ, բնակվելու տեղ, զրկված են լույսից, ջրից: Կարգում են հեղինակի «Ուսանող» գողտրիկ պոեմը և լցվում խոր կսկիծով:

Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Ռուսաստանում փակվել էին հայ դպրոցները, տպագիր օրգանները, կուլտուրական, առանց այն էլ աղքատիկ, օջախները: Ցարիզմը ամեն կերպ ձգտում էր թուլացնել մասսաների հեղափոխական տրամադրությունը: Սակայն հետզհետե սրվում էր պայքարը կեղբորդների, բռնադատիչների դեմ, և հայ հեղինակի առանձին ստեղծագործություններում իր արտացոլումն է գտնում մասսաների դժգոհությունը ցարիզմի նկատմամբ:

«Հասարակություն» բանաստեղծության մեջ կոչ է արվում հայ երիտասարդներին՝ ծառայելու ժողովրդին, նպաստելու նրա քաղաքական և կուլտուրական առաջխաղացմանը.

Քեզ՝ որ բողած մեր սուր վայրեր,  
Բարեկամներ և ծնողներ,  
Թողած ամեն զվարճություն,  
Մատաղ հասակդ դու զոհել ես,  
Որ ծնվելուց դու նպաստես՝  
Մեր կործանված հայրենիքին,  
Որ շուտ հասնի իր հին փառքին:  
Դե՛հ անվեհեր, քաջ հայկ որդի,  
Լույսի տանար փուրս՝, մտի.  
Ուման պաշար մեծ հավաքե,  
Եվ Հայաստան տար՝ ծավալե:

Լավի, բարու գաղափարն է զարգացնում հեղինակը «Գարուն», «Վիթխարի բարերար», «Պաշտոնապես» և այլ ստեղծագործություններում:

«Գարուն»-ը փաստորեն լավ օրերի հրազանք է, իղձ արեվոտ գարնան ու նորոգ մի կյանքի: Այս չէ միայն բանաստեղծության իմաստը: Նիկ. Տեր-Ավետիքյանը կոչ է անում բոլորին՝ օգնել «ընկած մարդուն», ապավեն լինել նրան:

Ընկած մարդուն զարուն է հույս  
Նորոգ կյանքի ծնվելուն,  
Նա օրինակ է խնդահույզ՝  
Մեռածների հասնելուն.  
Մինչդեռ շրջում է երկրագունդ,  
Մինչդեռ փայլում է արև,  
Եվ մինչ հիեին մի նոր սերունդ  
Կհաչորդե հաբառ՝  
Միշտ հանապազ նոր զարուն  
Կր զա շքաղ, նրկարեն,  
Եվ կտոնե նոր դրվատ սիրուն  
Յուր նոր գեղի փոխարեն:

Նիկողայոս Տեր-Ավետիքյանը գեղարվեստական գործերի թեմա է դարձրել նաև ժողովրդասիրությունը: «Շուշեցու Հայաստան», «Շուշեցու իդեալը» և այլ ստեղծագործություններում շեշտված է ոչ միայն հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, այլև Ռուսաստանի առաջադիմական դերը հայ ժողովրդի կյանքում:

Դժվար չէ նկատել, որ Ն. Տեր-Ավետիքյանը «Քնար խոսնակ»-ը կազմելիս առաջնորդվել է որոշակի սկզբունքով, զե-

տեղելով այնտեղ ժողովրդի հայրենասիրությունը, բարեկամությունը և համագործակցությունը նպաստող ստեղծագործություններ: Դա ժամանակի արտահայտությունն էր: Անհրաժեշտ էր գեղարվեստական խոսքով ներգործել մարդկանց նուրբ զգացմունքների վրա, սեր սերմանել ոչ միայն հայրենիքի, այլև ժողովուրդների նկատմամբ, հաստատ համոզված լինելով, որ բարեկամությունն է ամենամեծ ուժն ու հզորությունը:


Ճիշտ է, «Քնար խոսնակ»-ի մի շարք բանաստեղծություններ արվեստով թույլ են, ցածր է խոսքի կուլտուրան, երբեմն էլ նույնիսկ աշակերտական գրչի արդյունք են թվում, բայց դադափարապես լուրջ ու արժեքավոր են:

Մի խոսքով, նիկ. Տեր-Ավետիքյանի ժողովածուն, որն իր տեսակի մեջ առաջինն էր գավառում, որոշակի դեր խաղաց 19-րդ դարի 80-ական թվականներին՝ Ղարաբաղում գրական միտքը աշխուժացնելու գործում:

«ԳՈՐԾ» ՀԱՆԴԵՍԸ

Թեև Ռուսաստանում օրեցօր ծանրանում էր հատկապես ոչ ուս ժողովուրդների դրությունը, թշնամանք էր հրահրվում ազգերի միջև, այնուամենայնիվ, անհնարին էր ամբողջովին փականքի տակ դնել լուսավոր միտքը: Դպրոցների ու կուլտուրական առանձին օջախների ստեղծմանը զուգընթաց լույս էին տեսնում առանձին հրատարակություններ ու պարբերականներ ոչ միայն ռուսերեն, այլև հայերեն, վրացերեն, աղբյուրեջաներեն և այլ լեզուներով:

Այս մասին հետաքրքիր փաստեր են հաղորդում թերթերը: Ահա ինչ ենք կարդում «Մշակ»-ում. «1880 թվին փոխարքայության (Կովկասի—Ս. Ա.) սահմաններում բոլոր պարբերական հրատարակությունների թիվը 30 էր. դրանցից ռուսաց լեզվով 21, հայոց լեզվով՝ 5, վրաց լեզվով՝ 3 և թուրքաց լեզվով՝ 1...: Վերոհիշյալ 30 հրատարակություններից կառավարչական էր 6, իսկ մասնավոր և հասարակական 24: Դրան-



ցից տեսակաների բաժանելով՝ էին ընդհանուր-գրականական:— 21, մասնագիտական—9, ամենօրյա—7, շաբաթական—9 և միամսյա կամ անորոշ ժամանակներում հրատարակվող—14: Բոլոր այս հրատարակությունների կենտրոնը բնականաբար Թիֆլիսն է, որպես մեր երկրի մտավոր և կառավարչական կյանքի միջակետ. բոլոր ամենօրյա և այլ հրատարակությունների մեծ մասը Թիֆլիսին է վերաբերում, բացի 7-ից, որոնք հրատարակվում են գավառներում, որով մեր քաղաքը, Պետերբուրգից, Մոսկվայից և Վարչավայից հետո կայսրության մեջ պետք է շորորոզ տեղը բռնի, բարձր կանգնելով Եղեսայից, Ռիգայից և բոլոր համալսարանական քաղաքներից, որոնցից ոչ մեկը չի կարող հաշվել իր մեջ 23 պարբերական հրատարակություններ...:

Նույնպես հետաքրքիր են կովկասյան ավելի ծանր մամուլի ընթացքի մասին տեղեկությունները, որը արտահայտվում է գրքերով և բրոշյուրներով: Տպագրական այս ճյուղի մեջն ևս Կովկասում չի կարելի նշանավոր առաջադիմություն չնկատել: Այսպես, 1880 թվին գրքեր և բրոշյուրներ բոլոր լեզուներով 300 հատ ունեինք, այն ինչ 1874 թվին նրանց թիվը 65-ից չէր անցնում, ուրեմն ցենզուրայով անցած հեղինակությունների քանակությունը համարյա 5 անգամ մեծացավ, այսինքն՝ ուսաց լեզվով առանձին հեղինակություններ 1876 երեսներով, 65 հատ, վրաց լեզվով առավելապես բրոշյուրներ՝ 6529 երես, 134 հատ, հայերեն լեզվով՝ առավելապես բրոշյուրներ 7325 երես, 96 հատ, թուրքաց լեզվով առավելապես բրոշյուրներ՝ 83 երես, 5 հատ»<sup>1</sup>:

Ինչպես նկատում ենք, որոշակի աշխուժացում է ապրում հայ պարբերական մամուլը: «Երկու տասնամյակի ընթացքում թե՛ բուն հայրենիքում և թե՛ աշխարհի այլևայլ կետերում հիմնադրվեցին 114 անուն պարբերականներ, այսինքն թվով ավելի քան ստեղծվել էր հայ մամուլի գոյություն անցած 75 տարիներին»<sup>2</sup>:

Հետաքրքիր էր նաև ճյուղային թերթերի և ամսագրերի

<sup>1</sup> «Մշակ», 1881 թ., № 50, մարտի 19:

<sup>2</sup> «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1964, էջ 28—29:

հանդես գալը, որոնք ունեին լուսաբանման իրենց որոշակի բնագավառը:

Կարևոր էր նաև շուշեցի Սիմոն Գասպարի Հախումյանի «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսը:

Ո՞վ էր նա և ի՞նչ նպատակ էր հետապնդում: Այս մասին կան ոչ սակավ փաստեր:

«Լուսա»<sup>3</sup> ամսագիրը 1905 թ. 4-րդ համարում հարուստ տեղեկություններ է հաղորդում Սիմոն Հախումյանի կյանքի և գործունեության մասին:

Նա ծնվել է 1859 թ. փետրվարի 4-ին Շուշի քաղաքում: Ակզբնական շրջանում աշակերտել է Պետրոս Շանշյանի մոտ՝ սովորել տեղի թեմական դպրոցում: Այնուհետև փալստուն կերպով ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

Երիտասարդ դարաբաղցին չի բավականացել միջնակարգ կրթությամբ և խոր գիտելիքներ է ձեռք բերել մասնավորապես հայկական, ռուսական և արտասահմանյան գրականությունների գծով, տիրապետել է մի քանի լեզուների: Սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Սկզբում իր գործունեությունը ծավալել է մանկավարժության ասպարեզում, ապա 1879 թ. 20-ամյա Ս. Հախումյանը եղել է Կարսի հայկական դպրոցի ուսուցիչն ու տեսուչը, իսկ 1880—1882 թթ.՝ Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցների ուսաց և հայոց լեզուների դասատուն: Նա եռանդուն գործունեություն է ծավալել Թավրիզի հայոց երկսեռ դպրոցներում:

Ս. Հախումյանի հրապարակախոսական-ժուռնալիստական աշխատանքը սկսվում է «Մշակ» թերթից: Եվ եթե Գրիգոր Արծրունու հրատարակած թերթում նա հանդես է եկել 1885—1890 թթ., ապա 1890—1892 թթ.՝ «Տարազ» և «Աղբյուր» ամսագրերում, 1894—1897 թթ.՝ «Արձագանք»-ում, 1899 թ.՝ «Նոր-դար»-ում և այլուր:

Սիմոն Հախումյանը պարբերաբար ելույթներ է ունեցել ռուսական մամուլի էջերում. մասնավորապես նշենք «Новое обозрение»-ն, «Тифлисский листок»-ը, «Кавказ»-ը, «Русский курьер»-ը և այլ թերթեր:

<sup>3</sup> Քաղաքական և գրական այս ամսագիրը, որը սկզբում կիսամսյա էր, լույս է տեսել 1896—1911 թթ. Թիֆլիսում:

Իբրև հատուկ թղթակից նա աշխատակցել է Թավրիզում. Կ. Պոլսում, Լոնդոնում, Փարիզում լույս տեսնող հայերեն և ռուսերեն պարբերականների: Հաճախակի նրանց էջերում հրապարակել է այնպիսի հոդվածներ, որոնք արժարժում էին գրականագիտական հարցեր, ելնում էին առօրեական խնդիրներից, արտահայտում էին աշխատավորության մտահոգացումներն ու ցանկությունները: Բացի հոդվածներից, թղթակցություններից, ֆելիետոններից, մամուլի տեսությունից, նա տպագրել է պատմվածքներ, փոքրիկ վեպեր և դրամատիկական գործեր. զբաղվել է նաև թարգմանությամբ:

Հրապարակախոսական նյութերի տակ իր իսկական անունից գատ ստորագրել է «Ահրաման» («Տարազ» և «Արձագանք»), „Едо“ („Тифлисский листок“, „Кавказ“, „Новое обозрение“ և այլն), «Մար-Ամադ» և այլն: Նրա տաղանդը դրսևորվել է նաև թատերական ասպարեզում. տարբեր ժամանակներում Սիմոն Հախումյանը ղեկավարել է Թիֆլիսի և Բաքվի հայկական թատերական խմբերը, հանդես գալով միաժամանակ որպես բեմադրող-ռեժիսոր:

Սիմոն Հախումյանը հայ դպրոցին, մամուլին և հրապարակախոսությանը նվիրված անձնավորություն էր, որ պատրաստ էր իր ուժերը նվիրաբերել ազգօգուտ գործին:

«Լումա» ամսագիրը նրա մահվան առթիվ բնութագրելով 46-ամյա կյանքի ուղի անցած մարդու գործունեությունը, գրում է. «Բայց Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարիներ գործել է իբրև լրագրող և հրապարակախոս, այլ որովհետև նորա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնուրաց սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նորա գրվածները դյուրիչ էին, անկերձ սրտից բխած, տպավորիչ, սուր և ջախջախիչ:

Դժբախտաբար նա ևս ենթարկվեց ընդհանուր հայ գրողների վիճակին, քանի մի տարի ապրեցավ Փարիզում հետին կարոտության մեջ, վերջին տարիներս ստացավ հոգեկան անբուժելի հիվանդություն՝ և մեռավ տակավին այրական հասակում, երբ նորա տաղանդը հասել էր գագաթնակետին և խոս-

տանում էր հայ գրականության առավել լուրջ ու արդյունավետ մասնակցություն»<sup>4</sup>:

Լինելով ժամանակի կրթված երիտասարդներից մեկը, Ս. Հախումյանը տոգորված էր ազնիվ նպատակներով՝ օգտակար լինել հայրենիքին և ժողովրդին: Տարբեր առիթներով նա իր բարի և հանրօգուտ նպատակների շարադրանքով հանդես է եկել մամուլում: «Մշակ»-ում նա տպագրում է Շուշիից ուղարկած մի հայտարարություն, որտեղ ասված է. «Մենք դուրս ենք գալիս ժողովրդի առաջ՝ նրան գրեթե, բոլորովին անձանոթ և առանց աշխատելու կանխավ հեղինակություն և անուն ստանալ: Այդ սովորական կարգից դուրս է, խոստովանում ենք: Բայց մենք դուրս ենք գալիս նորա առաջ անարատ դգացմունքներով և մի միակ ցանկությամբ— ծառայել ժողովրդին:

Ոչ մի քաջալերական օրինակ չկա մեր առաջ՝ անցյալից կամ ներկայից. բայց կա, հավատացած ենք, մի զորեղ ու աննկուն նեցուկ, որի վրա մենք կարող ենք կոթնել: Դա այն մատաղ սերունդն է, որի միտքը դեռ մաքուր, անխմոր է, որն ապրում է ընկերի համար և ապա իրեն համար. այն երիտասարդությունը, որի մեջ եռում, եփում է կյանքի և հասարակական զգացմունքներ. մեր հույսն այդ մատաղ սերնդի վրա է, որը պետք է աղատ լինի ներկա բուրժուական ոգուց և չպետք է մասնակցի սուտ ինտելիգենցիայի խարդավանքներին:

«Գործ»-ը նվիրում ենք հայ երիտասարդությանը և նորա միջոցով ժողովրդին,— թող նա էլ ընդունե, ինչպես իրեն արժան է համարում»<sup>5</sup>:

Սիմոն Հախումյանը փափագում էր ունենալ տպագիր օրգան և դրա միջոցով օգտակար մտքեր հաղորդել աշխատավորներին: Թիֆլիսի «Մշակ»-ը հատկապես դրվատանքով է խոսում Ս. Հախումյանի եռանդի մասին: «Շուշուց մեկ գրում են, որ այդտեղի մի պարոն, Սիմոն Հախումյանց, շատ է աշխատում հրատարակել մի հայերեն ամսագիր «Գործ» անունով: Չնայելով, որ պարոնը իր ուսման ընթացքը ավարտել է

<sup>4</sup> «Լումա», 1905 թ., № 2, էջ 164:

<sup>5</sup> «Մշակ», 1881 թ., № 243, դեկտեմբերի 30:

էջմիածնի ճեմարանում, սակայն նա, ինչպես երևում է, միշտ կհարվածե էջմիածնի անգործունեությունը, մանավանդ այն ամենը, որին ականատես է եղել ինքը»<sup>6</sup>:

Ս. Հախումյանը 1881 թ. փետրվարին Կովկասի փոխարքայութեանն է ներկայացնում դիմում, որով խնդրում է սեփական ամսագրի լույս ընծայման թույլտվություն: Մամուլի գրաքննչական մարմինները սկզբունքորեն չեն առարկում ամսագիր հրատարակելու վերաբերյալ ներկայացրած ծրագրին և նույն թվականի նոյեմբերի 27-ին թույլատրվում է նրան հիմնելու «Գործ»-ը: Կովկասի փոխարքայության գրված խավոր վարչությունը այս որոշումը ընդունում է միայն այն պայմանով, որ ամսագրի բոլոր նյութերը ենթարկվեն խիստ գրաքննության:

Ըստ Ս. Հախումյանի ներկայացրած ծրագրի<sup>7</sup>, «Գործ» հանդեսը պետք է ունենար յոթ բաժին, որտեղ պիտի լուսարանվեր տեղական, անգրկովկասյան և արտասահմանյան կյանքը, տրվեր հայ և մյուս ժողովուրդների առօրյան, հրապարակվեին քաղաքական և ներքին տեսություններ, գիտական, մանկավարժական և բարոյախոսական նյութեր, զրույցներ, մատենախոսություններ, գրախոսություններ, լույս ընծայվեին վերադաս օրգանների կարգադրությունները և այլն: «Գործ»-ի հրատարակիչը նախատեսվում էր իր հանդեսում լայն տեղ տալ գրականության զարգացմանը նպաստող հարցերին, հրապարակ հանելով ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական ստեղծագործություններ: Հանդեսը պետք է ունենար 5—6 մամուլ ծավալ, բաղկացած 80—90 էջից:

Հենց սկզբից էլ Ս. Հախումյանը հրապարակախոս-հրատարակչի հմտություն է հանդես բերում, հարուստ և խելացի ծրագիր նախատեսելով «Գործ»-ի համար: «Գործ»-ը պիտի հրատարակվեր պարբերաբար, ամիսը մեկ անգամ և տարբազմաթիվ հարցերի լայն լուսարանումը: Սակայն ֆինանսական անելանելի դրությունը և ցարական դաժան գրաքննությունը թույլ չեն տալիս նրան իրագործելու իր ծրագիրը: 1882

<sup>6</sup> «Մշակ», 1881 թ., № 43, մարտի 10:

<sup>7</sup> Մրագրի նախագիծը լույս է տեսնում «Մշակ»-ի 1881 թ. դեկտեմբերյան մի քանի համարներում:

թվականին լույս է տեսնում «Գործ»-ի միայն մեկ համար<sup>8</sup> այն էլ նվազ տպաքանակով:

Ս. Հախումյանը նյութական ծանր կացություն մեջ էր. և դա հիմնական պատճառներից մեկն էր, որ չկարողացավ հաջորդ տարում հրատարակել հանդեսի լիարժեք համար: Բայց սրպեսզի հրատարակչի իրավունքը չկորցնի, նա ստիպված 1883 թվականին լույս ընծայեց 13 էջանոց մի տետր՝ «Գործ» անունով:

Թեև այս անշուք համարում հրատարակիչը խոստանում էր կարգավորել իր հանդեսի լույս ընծայումը, բայց այդ նրան չի հաջողվում. հրատարակվում է ընդամենը երեք համար (վերջինը հաջորդ տարում): Առանձին փաստեր կան, որոնց համաձայն 1885 թ. Ս. Հախումյանը ձեռնարկել է «Գործ»-ի չորրորդ համարը, ուր պիտի զետեղվեր նաև իր «Կորածներ»<sup>9</sup> վերնագրով վիպակը, բայց դա մնում է լույ ցանկություն:

Հանդեսը դադարում է գոյություն ունենալուց:

«Գործ»-ի կարճ կյանքի հիմնական պատճառներից մեկը, ինչպես նշեցինք, հրատարակչի նյութական անմխիթար վիճակն էր: Շատ քիչ ընթերցողներ ունեին մասնավորապես վերջին համարը: Հրատարակիչը նշում է, որ «Գործ»-ի բաժանորդների թիվը հազիվ հասնում է 70-ի:

«Ընթերցողներին»<sup>10</sup> վերնագրով խմբագրականում նա ուղղակի գրում է. «Մանր է ընդհանրապես գրական անձի պաշտոնը, մանավանդ հայ գրական անձինը. ևս առավել ծանր է հայ ամսագրի խմբագրի վիճակը, երբ այդ խմբագիրը կամ ամսագիր հրատարակող անձինք իրենց այդ հրատարակության մեջ տեսնում են ոչ թե մի արհեստ, եկամտի մի աղբյուր, եթե նոքա չեն մղվում առաջ, որտեղից որ քամին փչում է, այլ ազատ կամքով ընտրելով իրենց համար մի նպատակ,

<sup>8</sup> «Գործ»-ի անգրանիկ համարի մասին փոքրիկ հաղորդագրություն է տպագրվում «Մշակ»-ի 1882 թ. № 84-ում:

<sup>9</sup> Այժմ այն շարված վիճակում (մի մասը նույնիսկ սրբագրված) պահպանվում է վրացական ՍՄԷ պետական կենտրոնական պատմական արխիվի 480-րդ ֆոնդի գործերի մեջ:

<sup>10</sup> Հրապարակված է հանդեսի վերջին համարի առաջին էջում:

հիմնված որոշ, հաստատ և անխախտ համոզմանց ու իդեալ-  
ների վրա՝ ձգտում են հասնել նրան»:

Ս. Հախումյանի միտքը պարզ էր. նա արտահայտում էր  
ամբողջ հայ հրատարակիչների սրտի խոսքը, ցույց տալիս  
այն դառն իրականությունը, որի մեջ գտնվում էին նրանք:

«Գործ»-ի հրատարակիչը այն հրապարակախոսներից էր,  
որոնք ձգտում էին խոսքը գործ դարձնել: Այդ են վկայում  
«Գործ»-ի երեք համարների նյութերը: Ճիշտ է, դրանցում քիչ  
տեղեկություններ կան երկրի ներքին ու արտաքին դրության  
վերաբերյալ, սակայն եղածներն էլ արժեքավոր են, ինքնատիպ  
և հրապարակախոսական որոշակի հետաքրքրություն են ներ-  
կայացնում:

Յուրաքանչյուր հոգված, ինֆորմացիա, թղթակցություն  
ունեք իր նպատակը, շոշափում էր ժամանակի կարևոր հար-  
ցեր:

Հենց առաջին համարի «Երկու խոսք»-ը (հեղինակ Ս.  
Հախումյան), որով սկսվում է հանդեսի գործունեությունը,  
արժարժում է ժողովրդասիրության գաղափարը, ձգտելով  
ընդգծել ժողովրդի և մտավորականության սերտ կապի ան-  
հրաժեշտությունը: Ով ձգտում է օգուտ տալ ժողովրդին,  
պետք է լինի նրա հետ, ասում է Ս. Հախումյանը: «Ժողովրդ-  
դի իդեալական հայրենիքի հիմքը,—գրում է նա,—նրա իրա-  
կան հայրենիքի շոշափելի հողը պետք է լինի. իսկ ժողովրդ-  
դասերի իդեալական հայրենիքը այդ ժողովրդի իրական կյան-  
քը պետք է լինի:

Ով կամենում է օգնել ժողովրդին, պետք է նրա հետ զգա  
այն ամենը, ինչ որ նա զգում է: Չի կարելի մի ժողովրդի զգա-  
ցածը զգալ, առանց նրան ճանաչելու»:

Խոսելով ժողովրդի «հասարակ» դասի՝ աշխատավորների  
մասին, երիտասարդ հրատարակիչը սրտի անհուն կսկիծով  
է նշում նրանց ծանր վիճակը: Միաժամանակ նա քննադա-  
տում է բուրժուազիային, որը «բարոյապես ապականված լի-  
նելով չի կարող զգալ ժողովրդի ցավը»:

Նա հատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդու-  
թյանը, որի «առաջ ընդարձակ ասպարեզ կա գործելու, ժողո-  
վրդի դրությունն ուսումնասիրելով և նրա վիճակը բարվո-

քելով»: Հանձին երիտասարդության, Ս. Հախումյանը տեսնում  
էր ապագայի կերտողին, նրան, որին վիճակված էր որոշելու  
ժողովրդի, հայրենիքի բախտը: Նա երիտասարդությանը կոչ  
էր անում առաջադիմության համար պայքարել՝ առանց ընկ-  
ճելու և դժվարություններից վախենալու: «Չվախենալ վը-  
տանգից, չխրտնել խոնավ բնակարաններից, կիսավեր խըր-  
ճիթներից, մաշող հիվանդությունից, մտնել համարձակ դոցա  
մեջ. ընկեր դառնալ արհեստավորին գործի ժամանակ, գյու-  
ղացուն յուր ցանքի ժամանակ. գտնել թշվառներին, համեմա-  
տել դրանց՝ յուղի առատությունից տրաքվողների հետ. նկա-  
րագրել դոցա դրությունը, բացատրել պատճառները. տալ ժո-  
ղովրդին յուր աշխատանքը, յուր անձը, յուր կյանքը,—ասա  
ինչ անող երիտասարդներ են հարկավոր», գրում էր «Գործ»-ի  
հրատարակիչը «Երկու խոսք»-ում:

Այնուհետև Ս. Հախումյանը գտնում էր, որ հատկապես  
երիտասարդությունը, որի միտքը խիզախ է, պետք է անձնվի-  
րաբար գործի, կյանքի բովում կերտի իր վաղվա օրը, կյանքի  
հորձանուտում մարտնչի Պրոմեթեոսի պես:

Եվ պատահական չեն «Գործ»-ի հենց առաջին համարում  
տպագրված այն նյութերը՝ «Հայրենիքի ուսումնասիրության  
կարևորությունը», «Արցախու աշխարհ (Ղարաբաղ)», «Շղթա-  
յակապ Պրոմեթեոս (էսքիլեսի ողբերգության վերջին արար-  
վածը)» և հատվածներ գրական այլ գործերից, որոնք ոչ մի-  
այն ցույց են տալիս Ս. Հախումյանի հրապարակախոսական  
գործունեության բուն նպատակը, այլև բնորոշում են «Գործ»-ի  
ուղղությունը:

Այստեղ պետք է նշել Ս. Հախումյանի մոտեցումը հրապա-  
րակախոսության և, ընդհանրապես, մամուլի հարցերին: Նա  
շեշտում է, որ մամուլի օրգանները, այդ թվում նաև «Գործ»-ը,  
պետք է քաղաքական որոշակի ուղղություն ունենան, պարզա-  
բանեն առօրյա խնդիրները, օգնեն թեթևացնելու ժողովրդի  
հոգսերը:

Հանդեսի հատկապես առաջին և երրորդ համարների նյու-  
թերը այն համոզմանն են բերում, որ Ս. Հախումյանը կղզիա-  
ցած մարդ չէր, սերտ կապ ուներ հայ, ռուս և մյուս ժողո-  
վուրդների առաջադեմ մտածողների ու տպագիր օրգանների

հետ: Ճիշտ է, մի քանիսը, նույնիսկ առանձին տպագիր օրգաններ («Արևելյան մամուլը» և այլն) նրան համարում էին մեծամիտ, գոռոզ և ամբարտաւան, բայց դրանք մաղաշափ անգամ չէին ազդում Ս. Հախումյանի գործունեության վրա: Ահա թե ինչ է պատասխանում «Արևելյան մամուլ»-ի 1882 թ. 15-ի համարում<sup>11</sup> տպագրված մի խզբզանքի. «Որքան մութ անկյուններից ձայներ լինին, «Գործ»-ը դնալու է իրեն ձանապարհով և նորան հանգամանքները կարող են միայն ժամանակավորապես դադարեցնել, բայց երբեք շեղել իրեն ուղիղ ձանապարհից:

Միայն առանձին անակնկալ հանգամանքները կարող են դադարեցնել «Գործ»-ը: Բայց այս էլ իմացեք, պ. Հարոյ, որ հզոր կաղնին մի օր քամու առաջ ճարձատումով կկտրվի. բայց ավելի լավ է լինել համառ կաղնի, քան թե կակուղ եղեգն դառնալ, որ ֆրանսը քեզ կտրի և իր ձեռնափայտը շինի»<sup>12</sup>:

Ս. Հախումյանը խնդիր է դնում մոտիկից ուսումնասիրել մյուս ժողովուրդների կյանքը, հատկապես Ռուսաստանի իրավիճակը: Ահա թե ինչու նա իր հանդեսի 3-րդ համարի 4-րդ էջում գրում էր. «Ռուսաստանի կյանքը շատ սերտ կապ և հարաբերություն ունի մերինի հետ, բայց այդ երկրի հասարակական կազմակերպությունը, ներքին կյանքը մեզ համար terra incognita է (անհայտ երկիր է)...»: Դրա պատճառներից մեկը նա համարում էր ժամանակի պարբերական մամուլի առանձին օրգանների անբարյացակամ վերաբերմունքը, թերթերի և հանդեսների վատ աշխատանքը:

Նա մեծ ապագա էր տեսնում ուս գրականության, արվեստի համար: Յավն այն է, սակայն, բողոքում էր Ս. Հախումյանը, որ հայ ընթերցողը շատ քիչ է ծանոթ ուս գրականությանը: Այնպիսի գիզանտներ, ինչպիսիք են Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյը, Դոստոևսկին, Սալտիկով-Շչեդրինը և ուրիշներ, ինչպես նաև եվրոպական շատ առաջնակարգ գրողներ,

<sup>11</sup> Դեռ լույս չէր տեսել «Գործ»-ի առաջին համարը (այն հրատարակվեց մայիսին), երբ «Արևելյան մամուլ»-ում երևաց ոմն պ. Հարոյի թխած ծաղրագիրը:

<sup>12</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 89—90:

թարգմանված չեն հայերեն, չեն դարձված հայ մասսաների սեփականությունը:

«Գործ»-ի հրատարակիչը գտնում էր, թե եվրոպական քաղաքակրթությունը կուրորեն չպետք է ընդունել: Ընդհակառակը, նա պահանջում էր քննադատական մոտեցում. «մենք գտնում ենք, որ եվրոպական լուսավորությանը կուրորեն հետևելը և նրան կուրորեն ընդունելը՝ չէ կարող ազդին մի մեծ բարիք լինել: Համաձայն և ջերմ ջատագով ենք այն մտքին՝ թե մեր ժողովուրդը պետք է օգուտ քաղե եվրոպական մտավոր և հոգեկան ահագին ժառանգությունից. բայց այդ ժառանգությունը ընդունելիս՝ պետք է միշտ քննել, թե եվրոպական կուլտուրայի մեջ ի՞նչ բան ճշմարիտ ընդհանուր մարդկային է, ի՞նչ բան պտղաբեր է, ի՞նչ բան կարևոր է մեր հայրենիքի զարգացման և բեղմնավորության համար և ի՞նչ բան նրա մեջ մասնավոր է, անցողական՝ մինչև անգամ կեղծ և վնասակար»<sup>13</sup>:

Ս. Հախումյանը գրեթե նույն կարծիքին էր ուս գրականության նկատմամբ: Նա իր միտքը ամփոփում է այսպես. «Մենք պետք է ծանոթանանք ուս գրականության այն արտադրությանը հետ, որոնք թեև նկարագրում են ուսաց կյանքը իր բոլոր գեղեցիկ և հոռի, մխիթարական և անմխիթար կողմերով, բայց որոնց մեջ միևնույն ժամանակ երևում են հանրամարդկային գծեր, որոնք համահավասար կերպով սիրելի են բոլոր մտածող և ամեն ազգի լավագույն մարդկանց համար: Այդ տեսակետից են, օրինակ՝ Տուրգենևի, Տոլստոյի դրվածները և հենց դրա համար է, որ ամբողջ եվրոպան այնքան սիրում էր Տուրգենևին, թեև նա նկարագրում էր ըստ մեծի մասի ուս տիպեր: Եթե մինչև այսօր մեր գրականությունը՝ մամուլը չի հետաքրքրվել ուսաց գրականությունով, եթե փոխանակ Տուրգենևի, Գոգոլի գրվածների՝ թարգմանվել են եվրոպական լեզուների անհամ ոտմաններ և միջակ երկասիրություններ, դրա պատճառը պետք է որոնել նրա մեջ, որ մեր գործողները, ինչպես հարկն է, չեն հասկացել մեր ունենալի հարաբերությունը դեպի եվրոպական ու ուսական կուլ-

<sup>13</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 4—5:

տուրան—մշակույթը: Մեզ հարկավոր է ընդօրինակել, թարգմանել այդ երևելի նկարիչների գործերը, որոնք կարողացել են մասնավոր, ազգային տիպերը հանրամարդկային շինել—ամեն մարդի համար հասկանալի և սիրելի»<sup>14</sup>:

Պատահական չէր, որ Ս. Հախումյանի հրատարակած «Գործ»-ում տեղ էին գտնում Սալտիկով-Շչեգրինի, Գր Մուպասանի, էսքրիեսի և այլ հեղինակների առանձին գործերը: Միաժամանակ տպագրվել են Շիրվանզադեի «Երևում են» (պատկեր) պատմվածքը, Ն. Տեր-Ավետիքյանի «Անի» բանաստեղծությունը և հայ գրողների ուրիշ ստեղծագործություններ:

Աշխատավորներին հուզող հարցերից մեկը հողատիրության հարցն էր: Հայտնի է, որ 1861 թվականի փետրվարի 19-ի ռեֆորմը՝ «սխրահոշակ «աղատագրումը», գյուղացիների ամենաանխիղճ թալանում էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք էր նրանց նկատմամբ»<sup>15</sup>:

Ռեֆորմը գյուղացիներին փաստորեն զրկել էր լավագույն հողերից: Խոսելով «աղատագրման» առթիվ կալվածատեր-ճորտատերերից նրանց կախվածության մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Աղատագրման» առթիվ գյուղացիական հողերն այնպես սահմանադատեցին կալվածատիրական հողերից, որ գյուղացիները վերաբնակեցվում էին «ավազիկի» վրա, իսկ կալվածատերերի հողերը սեպի պես խցկվում էին գյուղացիների հողերի մեջ, որպեսզի ազնվատոհմ ազնվականների համար հեշտ լինեի գյուղացիներին ստրկացնել և հողը հանձնել նրանց վաշխառուական գներով: «Աղատագրման» առթիվ գյուղացիներին հարկադրեցին «ետ գնել» իրենց սեփական հողերը, ընդ որում պոկեցին հողի իսկական գնից երկու և երեք անգամ ավելի»<sup>16</sup>:

Զարմանալի չէր, որ ռեֆորմը կատարվել էր այդ ձևով. բանի դեռ ճորտատերերը լիովին չեն տապալված, ասում էր Լենինը, ապա ազգային ռեֆորմը այլ կերպ հնարավոր չէր: Նման վիճակը չէր կարող արդարացի բողոք շտապացնել

<sup>14</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 5—6:

<sup>15</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 130—131:

<sup>16</sup> Նույն տեղում:

գյուղացիության լայն շրջաններում և այդ վրդովմունքն ու պայքարը շարտահայտվեի մամուլի առաջագեծ օրգաններում:

«Գործ»-ը ևս հրապարակում է մի շարք նյութեր: Ուշագրավ է «Համայնք և նրա նշանակությունը ժողովրդական կյանքում» հոդվածը, որը զետեղված է հանդեսի անդրանիկ համարում: Այն շոշափում է գյուղացիներին հողով ապահովելու գաղափարը: Սակայն հեղինակը կանգնած է գյուղական համայնքի պահպանման դիրքերում: Նա գտնում է, որ եթե «գյուղացիք աղքատ են, դրանում մեղավոր չէ ինքը համայնքը, այլ նրա գրություն այլանդակ պայմանները, զորօրինակ հողի եկամտին անհամապատասխան հարկերը, տուրքերի մեծությունը և հողաբաժինների փոքրությունը»<sup>17</sup>:

«Հողատիրության և կալվածական խնդիրը Անդրկովկասում» հոդվածում «Գործ»-ը շեշտը դնում է այն բանի վրա, որ հողից պետք է օգտվեն բոլորը և ոչ թե մի խումբ հարուստներ: Հողվածագիրը նշում է, որ Ռուսաստանում հողը հիմնականում պատկանում է կալվածատերերին, Ղարաբաղում՝ մի խումբ բեգերի: Նրանցից յուրաքանչյուրն ունի 200—1000 դեսյատին հող: Նա խոր վրդովմունք է հայտնում այդ իրավիճակի առթիվ, քանի որ հողազուրկ գյուղացիները զրկվում էին ապրուստի միակ միջոցից:

Հողվածագիրը նշում է նաև, որ տնտեսական հարցի լուծման հետ միասին կլուծվեն ուսման, կրթության, լուսավորության և մյուս հարցերը: Նա տնտեսականը սերտորեն կապում է մտավորի հետ, տեսնելով որոշակի կապ, պայմանավորվածություն:

Այդ համոզմամբ էլ «Գործ»-ը գրում է. «Մի ժողովուրդ որ չէ ուսումնասիրված, այսինքն չունի հաստատ տեղեկություն յուր նյութական և հոգեկան զորության վերա, որ չէ կարող վշտել յուր կյանքի պայմանների ազդեցության շափը—այդպիսի ժողովուրդը կանոնավոր կերպով առաջ գնալ չէ կարող և շուտ թե ուշ նա կպատժվի:

Հասարակական միտքը և զարգացումը միշտ թույլ կմնան, անհաստատ, վայրիվերոջ երեքուն»<sup>18</sup>:

<sup>17</sup> «Գործ», 1882 թ., № 1, էջ 45:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 12:

«Գործ»-ը ընթերցողներին պարզաբանում է, որ պետք է քննական մոտեցում ունենալ հասարակական-պատմական իրադարձությունների նկատմամբ, վերլուծել դրանք, ուշադրություն դարձնել կյանքի կարևոր կողմերի վրա: «Այն ժամանակ յուրաքանչյուր մտածող մարդ,—գրված է հանդեսում,—սկզբում է մասնակցել ազգային կյանքի առաջադիմության և օգնում է խնդիրների բազմակողմանի մշակության և հավաքական ուժեղ գործունեության»<sup>19</sup>:

«Գործ»-ի ընթերցողը լցվում է վաղվա հույսով: Ըստ նրա, մարդ օժտված է և ի վիճակի է նվաճելու իր իրավունքն ու աղատությունը:

Մի բանաստեղծության մեջ, որ ստորագրված է «Սրինգ», ուղղակի կոչ է արվում.

Բայց, սիրելիք, շվհատվե՞նք,  
Գործե՞նք, տֆե՞նք միշտ—անդադրում,  
Ամեն արգելի կործանելով  
Անհաղթ լինե՞նք մեր գործերում:  
Մե՞ք առաջնորդն է այն հույսը,  
Որի առաջ ամեն շարե՞ր՝  
Ոչեղանում, փշրվում են  
Որպես շնչին բույլ մծեղներ...<sup>20</sup>

Նպատակը մեզ մղում է առաջ: Պետք է ջանքեր թափել նրա իրագործման համար, թե ու թիկունք դարձնելով ժողովրդին, մասսաներին: Ս. Հախումյանը գտնում էր, որ սկսած գործի իրագործման համար վճռականությունն ու հայրենասիրությունը անհրաժեշտ նախադրյալներն են:

Հանդեսը քննարկել է նաև կանանց կրթության և զարգացման հարցերը: «Բժիշկ կանայք Հնդկաստանում» հոդվածի մեջ նշվում է, որ թեև կանանց հարցը միշտ էլ հուզել է ամբողջ Եվրոպային, սակայն չի լուծվել և մինչև հիմա էլ կինը մնում է իր նախկին վիճակում: Սակայն մի բան ակնհայտ է, շեշտում է հանդեսը, որ վերջերս նույնիսկ մահմեդականների մեջ նկատելի է կնոջ իրավունքների ձեռք բերման ձգտում: Ավելի սլարդ ասած «մահմեդական կինն էլ, որ մինչև այժմ

ստրկության մեջ էր դեգերվում, նմանապես սկսել է փոքր առփոքր ազատություն ստանալ և լույս աշխարհ դուրս գալ»<sup>21</sup>:

Հետաքրքիր է նաև Հնդկաստանի կանանց մասին ասվածը: Հանդեսը պատմում է, որ աստիճանաբար հնդիկ կինը ձեռք է բերում որոշ իրավունքներ և դառնում է լուսավոր, լրջախոհ, բանիմաց: Դրան մեծապես նպաստում են բացված կուլտուրլուսավորական օջախները և ուսումնական հաստատությունները: Նա Կովկասի կանանց խորհուրդ է տալիս շատ հարցերում օրինակ վերցնել Հնդկաստանի կանանցից: Այս կապակցությամբ կարդում ենք. «Հնդկաստանի բժիշկ կանայք մեծ ապագա կունենան, որով և մեծապես կարող կլինեն օգնել իրենց թշվառ զանանայի մեջ փակված քույրերին: Մեզ մնում է միայն ցանկանալ, որ Կովկասի կանանց մեջ էլ զարթնի բարի նախանձ՝ այդ Հնդկաստանի իրենց քույրերին նմանվելու, որովհետև մեր կնոջ դրությունն էլ շատ քրով է զանազանվում Հնդկաստանի զանանայում փակված կանանց դրությունից»<sup>22</sup>:

Քաղաքական, տնտեսական, հրապարակախոսական և գրական հարցերից բացի Ս. Հախումյանն արժարծում էր մանկավարժական հարցեր, պայքարում որոշ շափով կարգավորելու դպրոցական գործը:

Ըստ նրա, «ամեն մի բարեկիրթ և հասկացող հասարակություն, որ ունի իր սեփական, ազգային կրթական հաստատությունները», պետք է հաշիվ պահանջի ուսումնական օջախների գլուխ կանգնած անձանցից: Ժողովրդի առջև հաշվետվության մեջ հանդես գալը բարձրացնում է ղեկավարների պատասխանատվությունը: Այս նպատակով էլ հանդեսի էջերում զգալի տեղ էր հատկացվում Ղարաբաղում գործող դպրոցների գործունեությանը:

Հրապարակելով երկու դպրոցների հաշվետվությունը, «Գործ»-ը իր առաջին համարում գրում էր, որ 1880 թ. սեպտեմբերից մինչև 1881 թ. սեպտեմբերը ազգային հոգևոր դպրոցը աչքի է ընկել իր ուսուցիչներով, աշակերտներով և ուսուցման ձևերով: Դպրոցի 12 ուսուցիչներն ու նրանց 8 օգնականներն ամեն կերպ ձգտել են աշակերտության մեջ սեր

<sup>19</sup> «Գործ», 1882 թ., № 1, էջ 15:

<sup>20</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 41:

<sup>21</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 21:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 26:

պատվաստել զեպի գիտությունն ու գրականությունը, զեպի ուսումը, քաղաքակրթությունը: Նշվում են հատկապես Ղազարոս Աղայանի, Հակոբ Խոջամիրյանի, Սամվել Գյուլղաղյանի, Գաբրիել Ղուլիբեկյանի և ուրիշների անունները, որոնք մեծ ծառայություններ ունեն հայ մշակույթի, գրականության ու արվեստի տարբեր բնագավառներում:

Հանդեսը որոշ մանրամասնություններ է հաղորդում զբարոցների կառուցվածքի, դասարանական կազմի և աշակերտների քանակի մասին: Շեշտվում է, որ հոգևոր դպրոցը բաղկացած է 3 պատրաստականից, 4 դասատուներից և մի մասնագիտական-մանկավարժական բաժնից, որի ուսման տեղությունը մեկ տարի է:

Աշակերտների թիվը մասնագիտական բաժանմունքում սովորող 11 պատանիների հետ միասին հասնում է 386-ի: Նրանց մեծ մասը սովորում է «Ա», «Բ», և «Գ». պատրաստականներում, ուր գործում էին ղուգահեռ դասարաններ. յուրաքանչյուրում ընդգրկված էին միջին հաշվով 80 աշակերտ:

Հետաքրքիր են նաև այն տեղեկությունները, որոնք վերաբերում են աշակերտների խրախուսանքին: Յուցահանդեսներ էին կազմակերպվում շնորհքով սովորող աշակերտների աշխատանքներից և աղջիկների ձեռագործներից, ուսուցչական ժողովի որոշմամբ ուսման դերազանցիկները ստանում էին մրցանակագրեր և վարժապետական (դասատվական) կոչումներ, այսինքն՝ մի քանիսին իրավունք էր տրվում ուսուցիչ լինելու հայ ծխական և սկզբնական ուսումնարաններում:

Բացի դրանից, ուսուցչական կոլեկտիվներն էին երաշխավորում այս կամ այն աշակերտին՝ մտնելու էջմիածնի ձեռնարանը կամ որևէ բարձրագույն դպրոց:

«Գործ»-ը հայտնում է, որ որոշ հաջողություններ է ձեռք բերում օրիորդաց դպրոցը, ուր աշակերտուհիների թիվը հասնում է 149-ի: Մի շարք առարկաների հետ միասին հայ աղջիկները սովորում էին նաև ձեռագործի արվեստը, որը նրանց ուսուցանում էր Զառի Արզումանյանը: Շուշեցի այս տարեց կինը քիչ ջանքեր չի թափել օրիորդների ուսուցման գործը Ղաբաբաղում կազմակերպելու գործում:

Այստեղ էլ պատշաճ մակարդակի վրա էր աշակերտուհի-

ներին խրախուսելու գործը. երևելի սովորողները կազմելով «Հայոց օրիորդական դպրոցի առաջին երախայրիքը իրենց գեղեցիկ հառաջադիմությամբ և զարգացմամբ», «պիտի միշտ այդ դպրոցի՝ զարդը կազմեն» և օրինակ հանդիսանան իրենց հաջորդներին: Այդպիսիներից էին Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատարինե Դուլխանյանը, Մագրաֆինե Մասումյանը, Շուշանիկ Բեգլարյանը և շատ ուրիշներ:

Ղաբաբաղի մամուլը հետագայում հայտնում է, որ վերոհիշյալ օրիորդները խորանում են գիտության տարբեր ճյուղերում, ակտիվորեն մասնակցում գավառի քաղաքական-հասարակական կյանքին: Նրանցից մասնավորապես Ոսկի Թավրիզյանը և Բալախանում Առաքելյանը Սեդրակ Մանդինյանի մոտ հմտանում են մանկավարժական արվեստի մեջ:

Դրվատելով ուսումնական այդ օջախը, հանդեսը գրում է, որ «դպրոցը տալիս է... հայ հոգով և հայ կրթությամբ դաստիարակված, մեծացած օրիորդներ, և ապագա մայրեր, որոնք նույն ուղղությամբ և հոգով պիտի դաստիարակեն իրենց զավակներին և մեր հասարակության խորթացած, ստորացած կյանքի մեջ նոր, թարմ կյանք պիտի մտցնեն»<sup>23</sup>: Այնուհետև հանդեսը շարունակում է. «Ուսուցչական խումբը և դպրանոցի տեսչությունը ջանացել են այնպիսի միջոցներ գտնել, որոնք դպրոցից դուրս ևս նպաստեին սաների և սանուհիների մտավոր և բարոյական զարգացման: Այդ նպատակով զեռ 3 տարի առաջ երկու դպրոցներում ևս հաստատվել են աշակերտական զբոսաշրջության և «կարեկցության գանձանակ» անունով արկղեր, չքավոր ուսանողներին օգնելու համար: Գրադարանները պահվում են նվիրատվություններով, մանավանդ աշակերտների անդամակցական վճարներով և այժմ բավականին հարուստ են գրքերով թե՛ ուս, թե՛ հայ լեզվով»<sup>24</sup>:

«Գործ»-ը կարևոր է համարում օրիորդաց կրթական օջախների դերը կանանց զարգացման ասպարեզում: Շեշտում է հատկապես Թիֆլիսի Գայանեյան դպրոցի ուսանելի օրինա-

<sup>23</sup> Տե՛ս «Գործ», 1882 թ., № 1-ը, էջ 89:

<sup>24</sup> Նույն տեղում:

կը, որը մեծ աշխատանք է կատարում «ազգային և ընտանեկան կյանքի համար», զգալի ավանդ մուծելով բարոյական վերածնության գործի մեջ:

Սիմոն Հախումյանի հանդեսը նշում է, որ Շուշիի օրիորդաց դպրոցը պետք է ընդօրինակի իր ավագ քրոջը, առաջադեմ մեթոդներով կազմակերպի ուսուցման և դաստիարակման գործը օրիորդների շրջանում, հասնի այն բանին, որ Շուշիում նույնպես պատրաստվեն ազգի բարոյական վերածննդի համար լիարժեք քաղաքացիներ: Հանուն այս վեհ նպատակի Շուշիի հայ բնակիչները, որոնց թիվը հասնում է 20000-ի, պետք է ընդառաջեն դպրոցին նյութապես և բարոյապես, ապահովեն լուսավորության գործի առաջընթացը:

Հանդեսը առաջ է քաշում դպրոցական լայն ցանցի ըստեղծման, մի քանի օրիորդաց դպրոցներ ունենալու, աշակերտուհիներին տարբեր մասնագիտական գիտելիքների հաղորդելու հարցը: Ինչո՞ւ Կալկաթայում, Բոմբեյում և Մադրասում կգործեն մանկաբարձուհիների պատրաստման դպրոցներ, իսկ հայերի մեջ՝ ոչ, հարց է տալիս «Գործ»-ը:

Հաշվի առնելով այս, Ս. Հախումյանը «Ընթերցողներին» խմբագրականում գրում է. «Ժողովրդի առաջադիմությունը պետք է ամեն գործիչի և հաստատության ձգտումն ու հոգացողության առարկան լինի: Բայց հառաջադիմությունը պտուղ է միայն խորին մտածողության և առանց ամբողջ ազգաբնակչության մտածողության՝ նա չի կարող ծնվել. ուստի, նախ և առաջ պետք է ժողովրդին անկախ մտածել սովորեցնել:

Այդ մեծ գործի մեջ օրագիրն էլ յուր պատվավոր տեղն է բռնում՝ ժողովրդի, անկախ, ինքնուրույն մտածող մասի օրգանը, մտքի արտահայտիչը դառնալով...»<sup>25</sup>:

Ժողովրդի առաջընթացի համար հանդեսը առաջին պլան է մղում մի կողմից կուլտուր-լուսավորության օջախները, դպրոցները, մյուս կողմից՝ մամուլը, տպագիր խոսքը:

Ս. Հախումյանի հանդեսում տպագրվում էին նաև գրախոսականներ այս կամ այն աշխատության մասին, որոնց հիմնական նպատակը գրքերի տպագրության և, ընդհանրապես,

<sup>25</sup> «Գործ», 1884 թ., № 1, էջ 3:

հրատարակչական գործի նկատմամբ պատշաճ վերաբերմունք ստեղծելն էր:

Տպագրված գրախոսականների մեծ մասը քննադատական էին և բարձրացնում էին կարևոր հարցեր: Ուշագրավ է Մ. Բլոկի «Զեռնարկ գործնական տնտեսության» աշխատության Ս. Պալասանյանի թարգմանության քննադատությանը նվիրված գրախոսականը, ուր գրախոսը այն համարում է ձախողված:

Գործում էին նաև մամուլի տեսության, հայտարարությունների բաժինները: Հետաքրքիր տեղեկություններ էին հայտնվում Շուշի քաղաքի ներքին գործերի մասին:

Հանդեսին հատկապես ակտիվորեն էին աշխատակցում շուշեցիներ Համբարձում Առաքելյանը, բժիշկ Մարգար Առքատամյանը, նիկողայոս Տեր-Ավետիքյանը, Օսինկա Տեր-Մովսիսյանը և ուրիշներ: Հաճախակի էին դետեղվում Հակոբ Խոջամիրյանի և Ալեքսանդր Քալանթարի հոդվածները: Ընդհանուր առմամբ «Գործ»-ը դեմոկրատական հանդես էր և նրա արժարժած առաջավոր գաղափարները հանդիպում էին ցարական իշխանությունների թշնամական վերաբերմունքին:

Խմբագիր-հրատարակիչ Ս. Հախումյանի սկսած գործը կիսատ մնաց: Նա մտադիր էր սիստեմատիկաբար տպագրել հետաքրքիր հոդվածներ հայերի և նրա հարևան ժողովուրդների տնտեսական ու հոգևոր կյանքի մասին, լույս ընծայել ճանապարհորդական նոթեր (ինքնուրույն և թարգմանական), քաղաքական, հրապարակախոսական բազմաթիվ նյութեր, իբրև հավելված հրապարակել Եվրոպայի և ռուս անվանի հեղինակների գործերի բազմաթիվ թարգմանություններ և այլն:

Սակայն մոլեգնում էր ցարական գրաքննությունը և մամուլի գործերի գլխավոր վարչությունը մի քանի անգամ կովկասյան գրաքննչական մարմիններին հայտնում է այն մասին, որ Ս. Հախումյանի «Գործ»-ը «վտանգավոր ուղի» է բռնել և իր էջերում տպագրում է «հակակառավարական» հոդվածներ:

«Գործ»-ի «վտանգավորության» առթիվ կարգադրություններ են արվում 1882 թվականի մայիսի 20-ին և հոկտեմբերի 18-ին: Նույն թվականի դեկտեմբերի 31-ի № 6019 գրությունը մամուլի գործերի գլխավոր վարչությունը ուղղակի հայտնում

է, որ «Գործ»-ի № 1-ի մի շարք հոդվածներ «սոցիալիստական» են և ունեն «քաղաքական վտանգավոր ուղղություն»: Գրաքննչական 178-րդ հոդվածի հիման վրա առաջարկում է կալանքի տակ վերցնել «Գործ»-ի № 1-ը, թեև նրա լույս ընծայումը թույլատրված էր նահանգական գրաքննիչի կողմից:

Հանդեսը գրաքննելու կապակցությամբ առանձին մամուլում անույնություններ է պատմում Պետրոս Զաքարյանը<sup>26</sup> իր հիշողություններում. «Հետաքրքրական են «Գործ»-ի հրատարակության մի քանի մամուլում անույնությունները, որ հետագայում ես լսել եմ այդ ամսագրի անմիջական մասնակցողի, բժ. Առստամյանի բերանից: «Գործ»-ի հրատարակիչներն իրավունք էին ստացել տեղում ենթարկել ամսագիրը ցենզուրայի: Հատուկ ցենզոր չլինելու պատճառով կառավարությունը գրաքննությունը հանձնում է գավառական ոստիկանության վարչության քարտուղար Ն. Ներսիսյանին: Սահմանափակ ուսման տեր ցենզորը վախենալով, որ միգուցե ամսագրում սպրդեն արգելված մտքեր, իրեն խորհրդատու է ընտրում ուսումնական մեկին, քաղաքային բժիշկ Մ. Առստամյանին և նրա հավանությանը է բաց թողնում հոդվածները: Եվ ամսագրի № 1-ը ստացվում է Թիֆլիսի գրաքննչական ատյանում և այդտեղ նկատում են վնասակար, կործանիչ մտքեր, առավել Հ. Առաքելյանի հոդվածում, որը վերաբերում էր Ղարաբաղի հողային հարցին. ամսագրի համարը դրվում է արգելքի տակ և բացվում է քննությունը: Նա պարզում է բժ. Մ. Առստամյանի մասնագիտությունը, որի պատճառով ոչ-պաշտոնական ցենզորը նահանգապետ նակաշիճեի կարգադրությամբ արսոր է ուղարկվում Հյուսիսային Կովկաս. «Գործ»-ի խմբագրությունը այնուհետև դրվում է Շուշիում ցենզուրայի ենթարկվելու իրավունքից և այդպիսով ամսագիրը մեռնում է...»<sup>27</sup>:

<sup>26</sup> «Նորք» հանդեսի № 1-ում Պետրոս Զաքարյանի մասին մահախոսականով հանդես է եկել Ստ. Զորյանը: Նա Պ. Զաքարյանին բնութագրել է իբրև հիանալի մարդու, որի սիրած հեղինակներն են Չերնիշևսկին, Գլբե Ուսպենսկին, Կորոլենկոն և ուրիշներ: Մի շարք հարցերի նվիրված (քաղաքական, ֆինանսական և գրական) նրա հոդվածները լույս են տեսել «Մշակ»-ում, «Մուրճ»-ում, «Անկախ մամուլ»-ում և այլուր:

<sup>27</sup> «Նորք», գրական, գիտական և քաղաքական հանդես, գիրք № 1, 1922 թ., Երևան, էջ 84:

Ինչ խոսք, որ «Գործ»-ը հնարավորություն չունեցավ մեծ ծրագիր կենսագործել, բայց եղածն էլ մեզ իրավունք է տալիս ընդգծելու, որ Ս. Հախումյանի հանդեսը ժամանակի առաջագեմ պարբերականներից էր. նրա էջերում խոսվում էին գյուղացիների և, ընդհանրապես, աշխատավորների հոգսերի մասին, շեշտվում էր բնակչությանը լուսավորելու գործի կարևորությունը, առաջ էր քաշում ռուսական արվեստի և գրականությանը հաղորդակից լինելու անհրաժեշտությունը:

Նշենք նաև, որ «Գործ»-ի խմբագիր-հրատարակիչը և նրա ակտիվ աշխատակիցները պարզ ու որոշակի պատկերացում չունեին աշխատավորության ազատագրության մասին, չէին դնում դասակարգային պայքարի անհրաժեշտությունը, ձրգտում էին ամեն ինչ կարգավորել խաղաղ միջոցներով՝ խնդրապահներով, ռեֆորմներով, բարեգործական նախաձեռնումներով, առանձին ընկերությունների ու հաստատությունների արգասաբեր գործունեությամբ: Ամսագրի էջերում ղեկեղված որոշ հոդվածների տոնը մեզ իրավունք է տալիս ասելու, որ «Գործ»-ը այնքան էլ դժգոհ չէր 1861 թ. ռեֆորմից, ոչ մի անգամ հանդես չեկավ նրա քննադատությամբ, չբացահայտեց դրա իսկական էությունը: Նա չգիտակցեց, որ «տխրահոգ» «ազատագրումը» գյուղացիների ամենամանխիղձ թալանում էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք էր նրանց նկատմամբ»<sup>28</sup>: Ըստ էության, «Գործ»-ը կողմնակից էր տրվյալ հասարակական կարգի առկայությանը միայն ռեֆորմիստական միջոցներով կյանքի արմատական փոփոխման:

Ճիշտ է, հանդեսը խորապես ցավում էր մասսաների ծանր դրության համար, շեշտում էր հատկապես գյուղացիների դաժան աշխատանքը, պայքարը մի կտոր հացի համար, սակայն ունենալով նարոզնիկական հայացքներ, ամեն ինչ կապում էր հողի հետ, այն համարելով ոչ միայն գյուղական կյանքի հիմքը, այլև «նրա ապահովության և ազգային դուրության ամենամեծ ավանդը»<sup>29</sup>: Նա դնում էր հողի հավասար

<sup>28</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, Հայպետհրատ, 1950, էջ 130:

<sup>29</sup> «Գործ», 1882 թ., № 1, էջ 18:

բաշխման հարցը, ընդգծում չբավորներին բերրի հողամասերով ապահովելու կարևորությունը:

Քննադատելով Անգլիայում, Շվեյցարիայում և այլ երկրներում հողի օգտագործման սիստեմը, ըստ որի գյուղացիների որոշ մասը հող ունի և հարատև է, իսկ մեծ մասը զբրկված է հողից և, բնականաբար, աղքատ է, նա կարծես համաձայնվում է Ռուսաստանում տիրող հողատիրության ձևերի հետ: Գերադատելով համայնքը՝ համայնական հողատիրության այդ ձևը, հանդեսը շեշտում է նրա պայմանների բարելավման անհրաժեշտությունը, այսինքն՝ հարկերի և տուրքերի համապատասխանեցումը հողից ստացվող եկամտին:

«Գործ»-ը ամենակարող ուժ է համարում տպագիր խոսքը, մամուլը, գրականությունը, կրթական հաստատությունները, լուսավորությունը: Ըստ նրա, պրոպագանդայի և գաղափարախոսության այդ միջոցների լավ գործունեության դեպքում ամեն ինչ կգնա ցանկացած ուղիով:

Երբեմն «Գործ»-ը իր հույսը դնում է առանձին «բարերարների» վրա, մտածելով, որ եթե նրանք օգնեն աղքատներին, ապա զգալի չափով կբարելավվի բնակչության վիճակը:

Հայ պարբերականը, իհարկե շատ հարցեր է արծարծում, շատ խնդիրներ է բարձրացնում, դնում է հատկապես գյուղացիների դրության բարելավման, լուսավորության տարածման, հայրենիքի ուսումնասիրության, լիարժեք քաղաքացիներ պատրաստելու, մամուլի, գրականության դերի բարձրացման կենսական նշանակությունը, բայց վատն այն էր, որ դրանք արվում էին չսխտեմավորված, առանց որոշակի ծրագրերի:

Հանդեսը մեծ դեր էր տալիս գյուղացիներին, համարելով նրանց «ուժեղ և անկեղծ ազգային տարրը»: Նա, ըստ երևվույթի, կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում համարում էր պատահական երևույթ, չէր տեսնում բանվորական մասսաների աճը և նրանց հեղափոխող ուժը շահագործողների դեմ մղվող պայքարում:

Ինչպես նշել ենք, Մ. Հակոբյանի տպարանում<sup>1</sup> լույս էին տեսնում ոչ բիշ թվով գրքեր ու ժողովածուներ, որոնք այս կամ այն չափով նպաստում էին հասարակական-քաղաքական մտքի զարգացմանը:

19-րդ դարի 80-ական թվականներին Շուշիում նկատվում է հետաքրքրություն «ժողովրդական» գրքերի հրատարակման գործում: Սկսում է ակտիվություն ցուցաբերել Հայոց բարեգործական ընկերությունը: Վերջինս իր Շուշիի տեղական վարչությանը ներկայացնում է առաջարկ, որի համաձայն պետք էր պարզել հրատարակելիք գրքերի թեմատիկան:

«Շուշիի տեղական վարչության ձեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի,— գրում է «Մշակ»-ը,— մեր հասարակ ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտավոր սնունդից. չկա ո՛չ մի պաշար, ո՛չ մի նյութ, որով կարելի լիներ մատակարարել նրան այդ սնունդը. նախապաշարմունքներ, սնոտիապաշտություններ, անհեթեթ կարծիքներ և գաղափարներ այնպես վարակել են ժողովուրդը և մտել մինչև նորա ծուծը, որ նորա դեմ մաքառելու համար հարկավոր է գործածել ազդու և սուր զենք. իսկ այդպիսի զենք կարող է լինել լավ, դյուրըմբռնելի և մատչելի գիրքը:

Հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պետք է ձեռնարկել որոշ ծրագրով և պատրաստությամբ: Ժողովրդական գիրքը նպատակ պիտի ունենա հասարակ դասի, ամբոխի մտավոր հորիզոնը լայնացնել, բարոյական ձգտումներ առաջ բերել նորա մեջ, ներշնչել նորա մեջ գիտակցություն և ինքնուրույնության զգացմունք... գիտության էական ճշմարտությունները պարզ լեզվով ավանդելով նորան, և ի վերջո գրգռել սեր, ձրգտում դեպի ընթերցանությունը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վերջին տարիներին Մ. Հակոբյանի տպարանը հասել էր կատարելագործման, սակայն ցավով պետք է նշենք, որ այն զոհ դարձավ 1905 թ. հայազրբեջանական ընդհարումներին, ոչնչացավ Շուշիի հրդեհի ժամանակ:

<sup>2</sup> «Մշակ», 1887 թ., № 93, օգոստոսի 20:

Եվ արդեն մեկ ամիս անց Հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչությունը «Մշակ»-ում հայտնում է «Ժողովրդական» գրքերի հրատարակության ծրագիրը. «1) Ինքնուրույն և թարգմանական գրվածքներ բարոյագիտական բովանդակությամբ, վերցրած հայոց ժողովրդական կյանքից, կամ հարմարեցրած այդ կյանքին, 2) Գիտությունը և նրա դանազան ձյուղերը ժողովրդական կերպով պատմած, 3) Տեխնիկական գրվածքներ գյուղատնտեսության վերաբերյալ, 4) Զանազան պատմական գործիչների և նշանավոր անձերի կենսագրությունը»<sup>3</sup>:

Իրականացվում է ծրագրի մի մասը միայն, որովհետև այն հանդիպում է բազմաթիվ դժվարությունների, այդ թվում նաև ցարական իշխանությունների դիմադրության:

Խոսելով այդ ժամանակվա տպագրական գործի մասին, չի կարելի չընդգծել Տիգրան Նազարյանի՝ եռանդուն ջանքերը՝ Շուշիում հրատարակչական գրասենյակ հիմնելու և, ընդհանրապես, իր հայրենակիցների համար մատչելի գրականություն լույս ընծայելու համար: Այդ առթիվ «Մշակ»-ում հայտարարության մեջ ասում է. «Ես կազմում եմ Շուշիում «Հրատարակչական գրասենյակ» և առաջին սերիան իմ հրատարակությունների՝ կլինեն հետևյալ վեց գրքույկները. երեսաների համար «Երկու մանրավեպ» Ալֆոնս-Գոդեից թարգմանած (գինն է 15 կոպ.), ծնողների և դաստիարակների համար «Պողնանի ուսուցչի օրագրից» հեղ. Լետոլուսի, թարգմանած «Вестник Европы» ամսագրից (գինն է 20 կոպ.), ժողովրդի համար «Ծաղիկ և ծաղկահատություն» (գինն է 15 կոպ.): Նույնպես հետևյալ ընթերցանության գրքույկները. «Ճանապարհորդություն Ղարաբաղում» (գինն է 30 կոպ.), «Պարապ ժամեր» (գինն է 25 կոպ.) և «Քնար խոսնակ» ինք-

<sup>3</sup> «Մշակ», № 114, 1887 թ., հոկտեմբերի 10:

<sup>4</sup> Ծնվել է 1858 թվականին, Շուշիում: Չորս տարեկանում սովորում է գրել-կարդալ: Ուսանում է Գալուստ Փափաղյանի դպրոցում: Կատարելագործվում է հատկապես ֆրանսերենի մեջ: Պատանի հասակում սիրում է հրապարակախոսությունը և մինչև իր կյանքի վերջը զբաղվում է ժողովրդատական-հրատարակչական գործունեությամբ: Մահանում է 1926 թ., Թիֆլիսում:

նուրույն և թարգմանական բանաստեղծություններ (գինն է 50 կոպ.)»<sup>5</sup>:

«Մշակ»-ում տպագրած երկրորդ նամակում Տ. Նազարյանը հայտնում է գրքեր հրատարակելու իր նպատակը: Նա գրում է. «Այս տարվա (խոսքը 1881 թ. մասին է—Մ. Ա.) սկզբից Շուշիում «Հրատարակչական գրասենյակ» բացինք և մեր նպատակն էր գավառացի ժողովրդի ու մանուկների ընթերցանության համար հեշտ հասկանալի գրքույկներ հրատարակել և միևնույն ժամանակ մեր կարողության շահով միջոց տալ երիտասարդ հեղինակներին և թարգմանիչներին իրենց աշխատությունները լույս ընծայելու: Մեր հրատարակությունների առաջին սերիայի համար բաժանորդագրություն բացինք,— շարունակում է Տ. Նազարյանը,— ոչ այն նպատակով, որ նրանից ստացած փողով առաջ տանեինք հրատարակչական գործը, այլ որպեսզի ընթերցողների մի որոշ թիվ ի նկատի ունենալով՝ նրա համեմատ քանակությամբ հրատարակեինք: Թեև բաժանորդների թիվը 200-ի անգամ չհասավ, բայց մենք չհուսահատվեցինք, այլ որոշեցինք ամեն մի գրքույկից տպել մի մի հազար օրինակ և ցրել գավառներում»<sup>6</sup>:

Ղեկավարելով տեղի հրատարակչական գործը, Տ. Նազարյանը ամենից առաջ ձեռնամուխ է լինում տարբեր մասնագիտության գրքերի ու ժողովածուների լույս ընծայման գործին: Նա ձգտում է գրական գործերի հրատարակությամբ բարձրացնել իր հայրենակիցների գեղագիտական ճաշակը, նպաստել հայ աշխատավորների բազմակողմանի զարգացմանն ու առաջխաղացմանը:

Տպագրված գրքույկների տարածման համար Տիգրան Նազարյանը որոշակի աշխատանք է ծավալում, բայց շատ շուտով հանդիպում է մի շարք խոչընդոտների. հատկապես դանդաղ է ընթանում նյութական միջոցների հայթայթման գործը: Մյուս կողմից անպակաս էին ցարական իշխանությունների մշտական հալածանքները:

Այդպիսի պայմաններում լիովին չեն իրականանում Տիգրան Նազարյանի սկսած նախաձեռնումները: 1881 թ. վերջե-

<sup>5</sup> «Մշակ», № 70, 1881 թ., ապրիլի 22 (մայիսի 4):

<sup>6</sup> «Մշակ», № 179, 1881 թ., սեպտեմբերի 26 (հոկտեմբերի 8):

րին նա տեղափոխվում է Թիֆլիս ու ջանք թափում սկսած գործը շարունակելու համար: Այս մասին նա 1881 թ. դեկտեմբերի 26-ին նամակով հայտնում է «Մշակ»-ի խմբագր-րին. «Մեր հայտարարական նամակներից, որ տպվեցան հայ պարբերական թերթերում, իհարկե, արդեն հայտնի կլինի մեր հարգելի բաժանորդներին, որ մեզանից բոլորովին անկախ և անակնկալ արգելափոխներ խոչընդոտ եղան Շուշիում կանոնավորապես նոցա լույս ընծայելուն և մենք ստիպված էինք անորոշ ժամանակով հետաձգել հրատարակությունների շարունակելը: Առ ժամանակ տեղափոխվելով Թիֆլիս, պատիվ ունենք հայտնել մեր բաժանորդներին, որ այստեղ շուտով լույս կտեսնի մեր հրատարակությունների, 4-րդ համարը և անմիջապես կուղարկվեն նրանց, իսկ մյուս համարների շուտ, թե քիչ ուշ լույս ընծայելը կախված է կարևոր իրավունքներ ստանալուց, որոնց ձեռք բերելու մասամբ էլ սրանց համար եկած եմ Թիֆլիս»<sup>7</sup>:

Տ. Նաղարյանը շատ ծրագրեր ուներ Թիֆլիսում. պետք էր շարունակել ո՛չ միայն նախատեսված գրքերի հրատարակությունը, այլև հիմնել պարբերական, ապա՝ սեփական տպարան: 1883 թ. նա հիմք է դնում մանկական պատկերազարդ «Աղբյուր» ամսագրին, որն իր գոյությունը պահպանում է շուրջ 35 տարի: 1890 թ. մինչև 1919 թ. հրատարակում է «Տարազ» գրական, երգիծական շաբաթաթերթը (հետագայում՝ ամսագիր):

Հետաքրքիր են Տ. Նաղարյանի կողմից պատրաստված «Աղբյուր»-ի և «Տարազ»-ի հավելվածները: Ուշագրավ են, մասնավորապես, «Գեղափոխիկ» (1907—1912 թթ.), «Կովկասի առավոտ» (1907—1908 թթ.), «Առողջապահիկ» (1911—1912 թթ.), «Փարիզի մոդաներ» (1910—1918 թթ.), «Լրաբեր» (1918 թ.) հավելվածները:

1891 թ. Թիֆլիսում Տիգրան Նաղարյանին հաջողվում է ստեղծել «Արոք» տպարանը: Շնորհիվ իր ակտիվ գործունեության նա դառնում է Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության անդամ: Նա Անդրկովկասում և հայաբնակ այլ վայրերում լույս տեսնող գրականության և պարբերական մամուլի

<sup>7</sup> «Մշակ», № 9, 1882 թ., հունվարի 21 (փետրվարի 2):

ջերմ բարեկամն էր և ջանք չէր խնայում դրանց տարածման և պրոպագանդման համար: «Շուշեցի» և «Արցախեցի» ստորագրություններով Տ. Նաղարյանը շարունակ հանդես էր գալիս «Մշակ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում: Նա մտահոգվում էր նաև ապագա հրատարակիչների ու լրագրողների պատրաստման գործով: Պաշտոնապես նա դիմում է կառավարությանը՝ թույլտվություն ստանալու 1912 թ. սեպտեմբերից երկու տարվա դասընթացներ բաց անելու երիտասարդ լրագրողների համար: Նրա նպատակն էր մայրենի լեզվից բացի ժուռնալիստներին սովորեցնել անգլերեն, իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն, թուրքերեն և էսպերանտո լեզուները, զինել նրանց հայ, ռուս, վրաց գրականության ու պատմության իմացությունով, կովկասագիտությամբ, հոգեբանությամբ, քաղաքատնտեսության և արդյունաբերության գիտելիքներով: Տիգրան Նաղարյանը ձգտում է՝ «Առանց ազգի խտրության տալ պրոֆեսիոնալ ուսում երկսեռ լրագրողներին», գրում է «Մշակ»-ը 1912 թ. հունիսի 29-ի համարում:

Ավելին, նա մեծ հոգատարություն է ցուցաբերում նրանց նկատմամբ, ովքեր իրենց գրական փորձերով ցանկանում էին օգնել զարաբաղյիներին՝ վերացնելու կյանքի սովերոտ կողմերը, ովքեր իրենց համեստ ավանդն էին մոռոտ առաջընթացի համար մղվող պայքարում: Նրանցից մեկն էր Կոստանթին Մելիք Շահնազարյանը<sup>8</sup>, որը գրական շրջաններում հայտնի է «Տմբալի խաչան» անունով: Տ. Նաղարյանի ջանքերով 1882 թ. Շուշիում հրատարակվում է Կ. Մելիք-Շահնազարյանի «Ղըլըցե կնանոց պընը փեշակը» գիրքը, որը գրված է Ղարաբաղի բարբառով: Ի դեպ, հեղինակի գործերը լույս են տեսել ոչ միայն Շուշիի, այլև ուրիշ տպարաններում: 1907 թ. Վարդապատի (Էջմիածնի) էլեկտրաշարժ տպարանում տպա-

<sup>8</sup> Ծնվել է 1856 թ. Շուշիում: Սկզբում սովորել է Ղարաբաղի թեմական դպրոցում, իսկ հետո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1879 թ. վարել է Գեղեցիկի Մարիամյան օրիորդաց առաջին ուսումնարանի ավագ ուսուցչի պաշտոնը, իսկ 1882 թ. Թիֆլիսում աշխատել է որպես հայոց լեզվի ուսուցիչ: Ավարտել է Մոնպելիեի հայտնի երկրագործական դպրոցը: Զբաղվել է նաև մասնագիտությամբ: Մահացել է 1940 թվականին:

գրավում է Տմբլաչի խաչանի ֆելիետոնների ստվար ժողովածուն՝ «Զուռնա-Տմբլա» ընդհանուր խորագրով: Այստեղ Տըմբլաչի խաչանը ձգտել է երևան հանել «ընտանեկան նիստ ու կացի և հասարակական գործերի և գործիչների աչքի ընկնող պակասությունները»: Հեղինակը իր նպատակների մասին գրքի առաջաբանում («Երկու խոսք»-ում) գրում է. «Երանի կարողանալինք սորանով մի փոքրիկ ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր ու բարոյական առաջադիմություն չեք մի փառապանքից մեկն է տողերէս գրողը»:

Կ. Մելիք-Շահնազարյանը միաժամանակ հողվածներով հաճախակի հանդես էր գալիս անդրկովկասյան մի շարք թերթերում, ամսագրերում և հանդեսներում. ակտիվորեն աշխատակցում է հատկապես «Նոր դար» թերթին ու «Աղբյուր» ամսագրին: Մասնագիտությամբ լինելով գյուղատնտես, նա բազմիցս ելույթներ էր ունենում պարբերական մամուլի էջերից, օգտակար խորհուրդներ տալով բույսերի խնամքի, հողալին աշխատանքների կատարման, ցանքատարածությունների մշակման վերաբերյալ: Իր հայրենանվեր գործերով Կ. Մելիք-Շահնազարյանը սեր ու հարգանք էր վայելում ոչ միայն Ղարաբաղում, այլև նրա սահմաններից դուրս:

Նրա գրական-հրատարակախոսական գործունեության 35-ամյակի առթիվ «Աղբյուր» ամսագիրը գրել է. «Ահա «Աղբյուր»-ի մի կենսարար ջինջ ու բյուրեղ ակն, որն 35 անընդհատ տարիներ ջրել, ոռոգել է մանկական անդաստանը:

Հեզ, իբրև գարնանաբույր մանուշակ, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը գիտնականին հատուկ համեստությամբ, ամբոխային ծափերից ազատ, մեր արդի ականավոր մանկական դրողն է, և նշանավոր ֆելիտոնիստ Տմբլաչի խաչանը»<sup>9</sup>:

Ղարաբաղի գրական-հասարակական, հրատարակախոսական-հրատարակչական գործի բարելավումը շատ-շատերին էր մտահոգում: Նրանց մի մասը, որ իրերի բերումով գտնվում էր հայրենիքից դուրս, կարողանում էր որոշակի օգնություն ցույց տալ տեղի մտավորականներին՝ ի կատար ածելու նրանց

<sup>9</sup> «Աղբյուր», 1917 թ, № 1, էջ 89:

հայրենանվեր նախաձեռնումները: Սրանցից մեկն էր Համբարձում Առաքելյանը<sup>10</sup>:

Լինելով ժամանակի կրթված անձնավորություններից մեկը, նա շատ վաղ է սկսում իր ժուռնալիստական-հրատարակախոսական գործունեությունը՝ ակտիվորեն աշխատակցելով ոչ միայն հայ, այլև ռուսական պարբերականներին, մասնավորապես «Русские ведомости»-ին, «С. Петербургские ведомости»-ին, «Новости»-ին, «Новое обозрение»-ին և այլ թերթերի:

Նրա գործունեությունը ավելի բեղմնավոր էր 1880-ական թվականներին: 1881 թ. նա Շուշիում հիմնում է Կովկասյան հայ բարեգործական ընկերության առաջին գավառական ճյուղը, դառնալով նրա նախագահության անդամն ու ապա՝ ղեկավարը:

Նա սիստեմատիկաբար հանդես է գալիս թերթերում և ամսագրերում, ձգտելով լայնորեն լուսաբանել իր հայրենիքի առօրյան, հրատարակ հանել նրա խեղճ վիճակը, աշխատավորների ծով հոգսերն ու մտատանջումները, նախաձեռնում է «Մեսրոպյան հանրամատչելի գրադարան» գրքերի հրատարակության շարքը՝ օգնելով հայ ընթերցողներին:

Թիֆլիսում աշխատելու ժամանակ մասնավորապես «Մշակ»-ի խմբ. կոլեգիայի անդամ լինելու տարիներին, նա մեծ աշխատանք է կատարում Շուշիի հրատարակչական գործը աշխուժացնելու համար:

<sup>10</sup> Ծնվել է 1855 թ. Շուշիում: Մինչև 10 տարեկանը ուսանել է հայրենի բազարի վանքերից մեկում: 1865 թ. ծնողների հետ տեղափոխվել է Թավրիզ՝ աշակերտել Սամվել Գյուլզադյանի դպրոցում: Այստեղ ձեռնամուխ է եղել մի շարք լեզուների, մասնավորապես՝ գերմաներենի, ֆրանսերենի և պարսկերենի ուսումնասիրությանը:

1874 թ. վերադարձել է հայրենիք, ապա գնացել Բաբու: 1879 թ. ավարտել է տեղի ուսումնարանը: Սովորել է նաև Մոսկվայի երկրագործական ակադեմիայում: 1881 թ. վերադարձել է Շուշի և նշանակվել տեղի թեմական, ապա օրիորդաց դպրոցների տեսուչ: Աշխատել է նաև որպես ֆրանսերենի և աշխարհագրության ուսուցիչ: 1892 թ. «Մշակ»-ի մշտական աշխատակիցն էր, 1908 թ.՝ նրա երեք խմբագիրներից մեկը, իսկ 1913 թ.՝ խմբագիր-հրատարակիչը: Վախճանվել է 1918 թ.:

Համբարձում Առաքելյանը որոշակի օգնություն է ցույց տալիս տպարաններին՝ անհրաժեշտ տառատեսակներ և տպագրող մեքենաներ հայթայթելու գործում: Նա հայտնի է ոչ միայն որպես հրատարակիչ ու հրատարակախոս, այլև՝ գրող: «Շահրիար» ծածկանունով հեղինակ է մի շարք ստեղծագործությունների (մեծ մասամբ պատմվածքների), որոնց նյութը առնված է պարսկահայ կյանքից:

Հ. Առաքելյանը կատարել է մի շարք թարգմանություններ, կազմել «Հանրագիտական բառարան»:

Շուշիի հրատարակչական գործում մեծ ավանդ է ներդրել ականավոր պատմաբան ու գրող Լեոն (Առաքել Բաբախանյանը): Դեռևս 1870-ական թվականներին, երբ նա ուսանում էր Շուշիի թեմական և քաղաքային դպրոցներում, հետաքրքրություն էր հանդես բերում պարբերական մամուլի՝ թերթերի, հանդեսների նկատմամբ: Նա ակտիվորեն աշխատակցում էր «Մշակ»-ին, «Արձագանք»-ին, «Տարազ»-ին, «Աղբյուր»-ին:

Տիգրան Նազարյանի և մյուսների նման Լեոն մտահոգված էր հայրենիքի լուսավորության և հրատարակչական գործի առաջընթացով: Նա ջանք չէր խնայում Շուշիի տպարանները կարգավորելու, տպագրական անհրաժեշտ նյութեր հայթայթելու համար:

Լեոնի առաջին գրքույկը լույս է տեսնում Շուշիում, 1884 թվականին:

Ոչ միայն Շուշիում, այլև Բաքվում և Թիֆլիսում աշխատելու ժամանակ, Լեոն իր կապերը չէր խզում հայրենիքից, հետաքրքրվում էր մշակութային կյանքով և հնարավորին շահիով նպաստում նրա զարգացմանը: Նա մտածում էր իր հայրենիքում աճեցնել հրատարակչական գործի էնտուզիաստներ, որոնք բարձր աստիճանի պիտի բարձրացնեին գրքատպագրությունը Ղարաբաղում:

1893 թ. Բաքվում տպարանի կառավարիչ եղած ժամանակ նա նորաձույլ տառեր է ուղարկում Շուշի:

1895 թ. մշտական աշխատանքի անցնելով «Մշակ»-ի խմբագրությունում, Լեոն ձգտում էր հնարավորին շահի լուսաբանել Ղարաբաղի առօրյան, սիստեմատիկաբար նյութեր

տպագրել ոչ միայն Շուշիի, այլև ուրիշ բնակավայրերի մասին:

Մեծ է նաև մանկավարժ գիտնական Սեդրակ Մանդինյանի դերը Ղարաբաղի նոր սերնդի լուսավորության գործում: Հատկապես 1878—1880 թթ., Շուշիում ուսուցչություն անելիս, աշխատում է ուսումնական ձեռնարկներ տպագրել և բաժանել աշակերտներին: Այդ նպատակով տեղում հրատարակել է տալիս թեմական և քաղաքային ուսումնարանի առաջավոր ուսուցիչների գրքույկները:

Նրա օգնությունը մասնավորապես շոշափելի էր հոգևոր դպրոցի տպարանը գործարկելիս:

Սեդրակ Մանդինյանը հանդես էր գալիս որպես հրատարակախոս: Նրա մի շարք հոդվածները, որոնք մինչև հիմա էլ պահպանում են իրենց ուժը, լույս են տեսնում «Մեղու Հայաստանի»-ի, «Արարատ»-ի, «Վարժարան»-ի էջերում:

Երբեմն նա հրատարակչին բանավեճ էր սկսում այն հեղինակների հետ, որոնք սխալ էին ըմբռնում ազգային հարցի էությունը, հստակ չէին պատկերացնում պատանիների և աղջիկների դաստիարակության, դպրոցական ուսուցման որոշ հարցեր, կիրառում էին հին, իրենց շարժարացնող մեթոդներ:

Նրա բանավեճային հոդվածներից նշենք թեկուզ մեկը՝ «Մեղու Հայաստանի»-ի 1876 թ. № 5—6-ում տպագրվածը՝ «Աղգայնություն խնդիրը», որը փաստորեն պատասխան էր «Тифлисский ведомости»-ի 1876 թ. № 25 և № 27-ում լույս տեսած մի անստորագիր նամակի:

Անուրանալի է Գրիգոր Տեր-Ղազարյանի ներդրումը ոչ միայն ազգային ուսումնարանների առաջադիմության, լուսավորական գործի աշխուժացման, այլև հրատարակչական ասպարեզում: Նա կազմում էր մայրենի լեզվի ուսումնասիրման ձեռնարկներ և տպագրում Շուշիում: Միշտ վերահսկում էր, որ իր աշխատանքը լույս տեսնի տպագրական բարձր կուլտուրայով, լավ ձևավորմամբ ու առանց սխալների: Նրա մասին Սեդրակ Մանդինյանը «Մեղու Հայաստանի» թերթի 1881 թ. հուլիսի 16-ի համարում գրել է. «Մեր դպրանոցը անցյալ հունվար ամսին մի մեծ կորուստ կրեց, այն է նորահարազատ և ժրջան աշխատողներից մեկը՝ Գրիգոր Տեր-Ղա-

գարյանց վախճանվեցալ, ոչ միայն մեծ կարոտության մեջ թողնելով յուր բազմանդամ գերդաստանը, ոչ միայն մեծ ցաւ պատճառելով յուր ծանոթներին, այլև մեծ հարված տալով աղգային ուսումնարանին, որ զրկվեցաւ այնպիսի անձնվեր և ջերմեռանդ մշակից: Այդ ինքնուս ուսուցիչը 20 տարի ծառայել է աղգային ուսումնարանին, միշտ կատարելագործվել է, միշտ հոգացել է յուր աշակերտների և աշակերտուհիների առաջադիմության մասին, բայց չի վարձատրվել յուր աշխատության և հմտության շահով, այնպես, որ վերջին շունչը բերանին էլի յուր ուսումնարանն էր հիշում՝ կարծես մոռանալով յուր գերդաստանն ու զավակներին: Նա Շուշի քաղաքին ծառայել է այնպես, ինչպես ոչ ոք շուշեցիներին:

Ղարաբաղի մշակութային կյանքում աչքի է ընկնում նաև Համբարձում Առաքելյանի քույրը՝ Սոֆյան, որն աշխատել է դպրոցը, գրականութունը, արվեստը աշխատավորությանը ծառայեցնելու համար:

Իննելով գարգացած, կրթված օրիորդ, նա գիտեր մի քանի լեզուներ և զբաղվում էր բարոյախրատական գրքերի թարգմանությամբ:

Սոֆյան հրապարակայնորեն հանդես էր գալիս մամուլի էջերում և արծարծում ժամանակի հուզող հարցեր՝ այդ թրվում հայ կնոջ կրթության խնդիրը: Այս տեսակետից մեծ հետաքրքրութուն է ներկայացնում «Մշակ»-ի 1876 թ. նոյեմբերի 4(17)-ի համարում տպագրված նամակը Շուշիից: Այդտեղ կարդում ենք. «...Աշխարհի մեջ երջանիկ ապրելու համար պետք է կրթված, զարգացած ընտանիքներ ունենալ և որովհետև ընտանիքին կենդանութուն տվողը և նորա ծաղիկը կինն է, ուստի և կնկան տղամարդից ավելի հարկավոր է կրթվել, ուսում ստանալ...: Մեր հայ ընտանիքները համարյա թե դեռ ստրկական վիճակի մեջ են. տան մեջ տիրապետողը, հրամայողը՝ տղամարդի բռնապետական իշխանութունն է, որին ամենքը պարտ են հնազանդվել անպայման կերպով, կինը համարվում է միայն այդ իշխանության համար մեքենայական գործիք: Այսպիսի մի աննախանձելի վիճակ բարվոքելու համար մեր աղգային գրականության սեպուհ սպարտականութունն է ժողովրդի մեջ տարածել առողջ մտքեր, թե ինչ

ասել է ընտանիք, ինչ ասել են ամուսիններ, որոնք են տղամարդու և կնկա առանձին պարտավորությունները»:

Այս նամակում օր. Ս. Առաքելյանը հայտնում է նաև, որ ինքը մտադիր է ֆրանսերենից թարգմանել մի բազմահատոր աշխատութուն, որը կնպաստի բնակչության դաստիարակությանը, ընտանիքների ամրապնդմանը, կանանց և տղամարդկանց պարտականությունների պարզաբանմանը:

Սոֆյա Առաքելյանը մի քանի կրթված կանանց հետ ձեռնարկում էր Շուշիում ստեղծել «Կանանց հանրամատչելի գրագարան», ինչպես նաև այդ սերիայով լույս ընծայել դպրոցումբունելի գրքեր:

Դժբախտաբար այդ գեղեցիկ մտահղացումը չի իրականանում ոչ միայն տպագրական գործի անբավարար լինելու, այլև ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով: Էլ չենք խոսում ժամանակի դաժան գրաքննության և ցարական ոստիկանական կարգերի մասին:

Ե՛վ Տիգրան Նազարյանի, և՛ Կոստանդին Մելիք-Շահնազարյանի, և՛ Համբարձում Առաքելյանի, և՛ ուրիշների հիմնական նպատակն էր աշխատավորների շրջանում սեր սերմանել գրի, գրականության նկատմամբ, հոգևոր սնունդ տալ նրանց, տպագիր խոսքը դարձնել լայն մասսաների սեփականութունը:

Այսպիսով, 19-րդ դարի առաջին կեսից սկսած Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը, ուր ծավալվում էր հրատարակչական գործը և ուղի հարթվում առաջադիմական գաղափարների տարածման համար:

## «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ը

Շուշիում հրատարակվող հայերեն և ռուսերեն գրքերն ու զրբույկները կարելի է բաժանել երեք մասի՝ գիտական, գեղարվեստական և ուսումնական: Ուսումնական գրքերի մի նմուշ է մանուկների համար պատրաստված զրբույկը, որի տիտղոսաթերթի վրա գրված է. «Մայրենի լեզու, այբբենաբան, հայ մանուկների համար. առաջին տարի, երրորդ տպա-

գրութիւն. Թարգմանութիւն Մ. Մահտեսի Յակոբեանց. Շուշի, տպարան և գրավաճառանոց Մ. Մահտեսի-Յակոբեանցի, 1886»:

Գրքույկը մատչելի է առաջին դասարանցի երեխայի համար: Հենց սկզբից տրվում են փառերի գրատեսակները (բուլորագիր, երկաթագիր և այլն), բառերը՝ ըստ վանկերի, ապա ծանոթութիւն կետադրութեան բոլոր նշանների հետ:

Կովկասի հայ մամուլը պարբերաբար հաղորդումներ էր տալիս Շուշիում լույս տեսած նոր գրքերի մասին:

Թերթերի ինֆորմացիաներից երևում է, որ տպագրված գրքերի մի մասը անհաջող էր և՛ զաղափարապես, և՛ պոլիգրաֆիական առումով: Քննադատական խոսք է ասվում, օրինակ, «Արդարադատ աղջիկ» վերնագրով գրքույկի մասին, որի հեղինակը գյուղական ուսուցիչ Մինաս Տեր-Մինասյանն էր: Սրա թերութիւնների մասին երկու անգամ հանդես է եկել «Մշակ»-ը<sup>1</sup>: Թերթը նշում է, որ գրքույկը մի հեքիաթ է, սակայն անմիտ բովանդակությամբ, լեզուն փնթի է, խճողված սխալներով ու անկարգ ձևակերպումներով:

Բացասական կարծիք է հայտնվում նաև «Պատկերներ կյանքից» վերնագրով մի աշխատանքի մասին: Սրա հեղինակը հանդես է եկել «Շավարշ» կեղծանունով:

Գրքույկի մասին տպագրված ինֆորմացիայում ասվում է. «Կյանքից պատկերներ գրելը լավ բան է, բայց վերին աստիճանի միամտութիւնն է հեղինակի կողմից կարծել, թե բավական է թուրով կպցրած մի քանի պատմութիւններ անել, տպարան հանձնել, տպագրել և հրատարակել և ահա ամեն բան վերջացավ, և գիրքն էլ դարձավ կյանքի պատկերներ...»:

Գրքույկի մեջ շատ տեղ փոխանակ անունների գործ են դրված անվան սկզբնատառերը. դա մեզ առիթ է տալիս կարծելու, որ գրողն ակնարկում է այս կամ այն մասնավոր մարդու վրա, կամ ուրիշ խոսքով պամֆլետներ է գրում: Դա արդեն աններելի վարմունք է, և այդ տեսակ պամֆլետները կարող են բավականութիւն տալ միայն փշացած ընթերցողներ-

ին, որոնք կարգալով ակնարկութիւններ սրա, նրա մասին, պիտի բացականչեն «համա խայտառակել է, հա՛»<sup>2</sup>:

Վատ է բնութագրված նաև Շուշիում լույս տեսած «Семейная сцена»-ն: Հատկապես շեշտվում է նրա զաղափարական ցածր մակարդակը, բնակչութեան դատախարակութեան գործին ոչնչով չօգնող բովանդակութիւնը: Նշվում են գրքի գեղարվեստական թույլ կողմերը:

Ղարաբաղի հրատարակչական գործի բարելավման, ինչպես նաև կուլտուր-լուսավորական որոշակի աշխատանք ծավալելու համար խիստ անհրաժեշտ էր պարբերական մամուլի՝ թերթերի և ամսագրերի առկայութիւնը: Այս մասին ամենից առաջ մտահոգվում էր դավառի մտավորականութիւնը:

Դեռևս 1883 թ. ապրիլի 23-ին Մ. Ա. Հակոբյանը Կովկասի մամուլի գործերի կոմիտեին հղած դիմումի մեջ գրում է, որ ինքը ցանկութիւն ունի իր իսկ տպարանում շաբաթը երեք անգամ հրատարակել «Шушинские объявления» թերթը, որի հիմնական նպատակն էր ուսերեն և այլ լեզուներով հրատարակել զանազան հայտարարութիւններ, կարգադրութիւններ, լուսաբանել տեղական կյանքը, հետաքրքիր ինֆորմացիաներ տալ Շուշիի անցյալի և ներկայի մասին: Բայց, ցավոք, վերադաս մարմիններում նստածները չեն ընդառաջում հայ հրատարակչի ցանկութեանը: Նա փորձում է այդ նույն անվամբ լույս ընծայել հայերեն թերթ, բայց սա էլ, առանց լուրջ պատճառի, չի հաջողվում:

1887 թ. «Արցախ» («Ղարաբաղ»)՝<sup>3</sup> անունով հայերեն գրական-գեղարվեստական և քաղաքական ամսագիր հրատարակելու համար իղուր ջանքեր է թափում Շուշիի բնակիչ Վահան Դադյանը: Նրա խնդրանքը մերժվում է մի շարք անհիմն պատճառաբանութիւններով. գտնում էին, որ նա անհրաժեշտ քանակի բաժանորդներ չի ունենա, գրաքննչական մարմինների համար անհայտ անձնավորութիւն է, անկարող է հրատարակչական գործում և այլն, և այլն:

<sup>2</sup> «Մշակ», № 125, 1890 թ., նոյեմբերի 1:

<sup>3</sup> Տե՛ս Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 480. ց. 818, ց. 1:

<sup>1</sup> Տե՛ս 1891 թ. հունիսի 29-ի և հուլիսի 2-ի համարները:

Փաստեր կան նաև այն մասին<sup>4</sup>, որ Շուշիի բնակիչ Աբրահամ Ամիրխանյանը ցանկացել է ունենալ «Շրջան ընտանեկան» անունով ամսագիր, որի միջոցով նա պետք է կուտուրլուսավորական աշխատանք ծավալեր կանանց շրջանում, ընդարձակեր նրանց հետաքրքրությունների շրջանակները: Սակայն նրա նպատակը չի իրականանում:

1890-ական թվականներին Ղարաբաղի պարբերական մամուլի պատմության մեջ հայտնի է միայն Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ի առաջին զրբի լույս ընծայումը: Այն հրատարակվում է Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում, 1896 թվականին<sup>5</sup>:

Հանդեսի երեան զալու նպատակը պարզ էր. հրատարակել այնպիսի նյութեր, հոդվածներ, փաստեր, որոնք գերազանցապես վերաբերում են հայ ժողովրդին, նրա պատմությանը, տնտեսական դրությունը, մշակույթին: Այս մասին խմբագիր-հրատարակիչը գրում է. «Բուպեական ազդեցության տակ շենք վճռել մի այնպիսի հանդեսի հրատարակության ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահամբ ենք ընտրել այս. մեզ ճանաչողները գիտեն, թե ո՞րքան ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և ո՞րքան արգելքներ ենք հաղթել փոքր ի շատե նախապատրաստելու այս գործի համար...»:

Մենք չեն խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկությունը անհատական գործ չէ և սոսկ մինի տաղանդից չէ կախված. ազգի ուսումնասիրությունը ամբողջ առաջավոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կբանա իր սիրտը ազգագրի առաջ, երբ վերջինս կլուսանկարե նրան իր բոլոր ճշտությամբ, երբ կանխակալ և կուսակցական դադափարները չեն պղտորիլ ո՞չ ժողովրդի և ո՞չ էլ հետազոտողների միտքը, մեր հանդեսը կդառնա ժողովրդական կյանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իր նյութը կվերցնի ազգային վեպ ստեղծելու, լեզվաբանը՝ բաներ և ոճեր կբաղե՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու... բժիշկը՝ նրա ցավերը կտեսնեն՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կյանքը

<sup>4</sup> Տե՛ս Վրացական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 480, դ. 233, ց. 1:

<sup>5</sup> Հանդեսի երկրորդ էջի վրա գրված է 1895 թվական:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

Հ Ա Ն Դ Է Ս

ԿԻՍԱՄԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Ա. ԳԻՐԿ

1896

ՀՈՒՆԻ

ՅԴՈՐՈՆ ԱՌՆԴ Մ ԾՈՒՏԵՑԻ-ՏԵՂԵՆԵՑԻ

1896

կրմբունի՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը, չոր նյութը կվերցնեն գծելու էվոլյուսիոնի օրենքները: Այսպես՝ այս ձեռնարկությունը ծառայում է ինչպես ազգության, այնպես և գիտության. առանց հասարակական դեր կատարելու՝ այս գործը հասարակական ինքնուրույն կյանքի հիմունքն է ձգում և ընդհանուր գիտության նպաստում»<sup>6</sup>:

«Ազգագրական հանդես»-ը բաղկացած էր մի քանի բաժիններից («Ազգագրություն», «Հնագիտություն», «Բանահյուսություն» և այլն): Առաջին գիրքը բացվում է «Ազգագրություն» բաժնով: Այստեղ զետեղված մի շարք հոդվածներում և հաղորդագրություններում տրվում է հայ ազգագրության համառոտ տեսությունը: Այն սկսվում է հանդեսի խմբագրի ընդարձակ հոդվածով, ուր պատմվում է Գողթան երգերի և զրույցների կարեորության մասին, նշվում, որ դրանք «հայոց հոգեկան և մտավոր կյանքի փառավոր արշալույսի պայծառ հայելին են»:

Ե. Լալայանը ընթերցողներին ամենից առաջ հայտնում է հայ ժողովրդական զրույցների ու երգերի աղբյուրները, ապա կանգ առնում դրանց տեղի, ժամանակի և հեղինակի հարցի վրա: Միանգամայն իրավացի է բաղմահմուտ ազգագրագետը, երբ գրում է. «Ամեն մի գավառ, ամեն մի հետաքրքրվող մի բան ավելացնում է արդեն բոլորին ծանոթ անցքի վերաբերմամբ և այսպես կազմվում է մի ժողովրդական երգ, մի ժողովրդական զրույց»<sup>7</sup>: Արժեքավոր են հեղինակի հայտնած մտքերը երգերի տեսակների, երգիչների, պարերի, լեզվի մասին:

Ուշագրության է արժանի գերմանացի հուշակալոր գիտնական Ռ. Վիրխովի «Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ» ուսումնասիրությունը, որ թարգմանաբար տեղ է գտել հանդեսում:

Ի դեպ, այս հոդվածի լուսանկարների պատճառով ուշանում է հանդեսի առաջին համարը: Եվ ստիպված երվանդ Լալայանը 1896 թվականի հունվարի 10-ին Շուշիից ուղարկած նամակով հանդես է գալիս «Մշակ»-ում, ուր ասվում է.

<sup>6</sup> «Ազգագրական հանդես», Ա գիրք, 1896 թ., էջ 6:

<sup>7</sup> «Ազգագրական հանդես», Ա գիրք, 1896 թ., էջ 9:

«Ազգագրական հանդես»-ի լույս տեսնելը մի քանի օր ևս ուշանալու է, որովհետև պ. Վիրխովը հիվանդության պատճառով փոքր ինչ ուշացրել էր Բեռլինում տպագրել տալ իր «Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ» հոդվածի պատկերները, որոնք զետեղվելու են հանդեսի ներկա համարում: Այժմ այդ պատկերները ստացվել են Օդեսա և այստեղ հասնելուն պես՝ համարը լույս կտեսնի և կուղարկվի բաժանորդներին»<sup>8</sup>:

«Ազգագրական հանդես»-ի հարուստ բաժին էր «Գավառ»-ը: Այստեղ տպագրվում էին մի քանի հայ գավառների պատմության հետաքրքիր դրվագները: Խոսելով, օրինակ, Ախալքալաքի մասին, նշվում են սահմանները, տեղագրությունը, դաշտավայրերը, լեռները, լճերն ու գետերը, կլիման, հանքային ջրերը, բուսականությունը, կենդանական աշխարհը, բնակչության կազմը, դպրոցների քանակը, պատմում թատրոնի, գրադարանի, ընթերցարանի, բարեգործական ընկերությունների, տեղի հայերի սովորությունների, ընտանեկան բարքերի, զգեստների, զբաղմունքի մասին:

«Հնություններ» ընդհանուր խորագրի տակ մեծ մասամբ խոսվում է թագավորների գործունեության մասին, որոնք պատմական տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում և գիտական որոշակի արժեք ունեն:

Հանդեսի առաջին գրքի նշված բաժնում մասնավորապես պատմվում է Հեթում Ա. թագավորի հավաքած նշխարների տուփի մասին:

Հանդեսը հարուստ է վիճակագրական տեղեկություններով: Աղյուսակների մեջ ամփոփված են թվեր ու փաստեր քաղաքի և գյուղի բնակիչների զբաղմունքի, ինչպես նաև հացահատիկի բերքի ստացման վերաբերյալ:

Նրա էջերում լույս տեսած աշխատություններից ուշագրավ են «Համառոտ տեսություն հայ ազգագրության», «Միսական կարգերը հայոց մեջ» և այլն:

«Ազգագրական հանդես»-ը պատմում էր նաև մանկանց դաստիարակության, ընտանեկան կյանքի, գերդաստանի ան-

<sup>8</sup> «Մշակ», 1896 թ., հունվարի 13, № 5:

դամների իրավական հարաբերությունների, առանձին հիվանդությունների, ժողովրդական դեղերի և այլ հարցերի մասին:

Հանդեսին ակտիվորեն աշխատակցում են անվանի գիտնականներ Մանուկ Աբեղյանը, Ստեփանոս Մալխասյանցը, Հրաչյա Աճառյանը, Թորոս Թորամանյանը, Երվանդ Շահազիզը, Լևոն Մելիքսեթ-Բեկը, Խաչիկ Սամվելյանը, Գարեգին Լևոնյանը, գրող Վրթանես Փափաղյանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս արժեքավոր հոդվածներով:

«Ազգագրական հանդես»-ը ունեցել է 26 դիրք<sup>9</sup>: Նրա հրատարակությունը տևում է մինչև 1916 թ.:


Ուշագրություն արժանի է նաև այն փաստը, որ հանդեսը որոշ ժամանակ լույս է տեսնում հեղինակի անձնական միջոցներով: Հետագայում Ե. Լալայանի անմիջական ջանքերով հիմնված Ազգագրական ընկերության կողմից հնարավորություններ են ստեղծվում հանդեսի սիստեմատիկ հրատարակման համար:

«Ազգագրական հանդես»-ը ոչ միայն գիտական հարուստ նյութ էր մատուցում ընթերցողներին, այլև սեր արթնացնում հայրենիքի, ժողովրդի հանդեպ, խրախուսում լավ տրադիցիաների պահպանումն ու զարգացումը:

### «ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԸ

1896—1910 թթ. Ղարաբաղում հայրենի երկրի հոգսերով ու նրա կյանքի լուսաբանմամբ զբաղվող ոչ մի պարբերական լույս չի տեսել: Սակայն դա չի նշանակում, թե գավառի, մասնավորապես Շուշիի ու շրջակա գյուղերի առօրյան շեր լուսաբանվում Կովկասում հրատարակվող պարբերականներում: Հատկապես մեծ էր «Մշակ»-ի դերը: Շատերն էին Շուշիից նամակ ուղարկում «Մշակ»-ի խմբագրությանը՝ պատմելով

<sup>9</sup> «Բ» գրքից սկսած (1897 թ.) այն հրատարակվում է Թիֆլիսի Մ. Գ. Ռոտինյանցի տպարանում:



գավառի իրավիճակի, հասարակական կյանքի, առանձին իրադարձությունների ու երևույթների մասին:

Կովկասահայ մամուլի էջերում սիստեմատիկաբար երևում էր Գրիգոր Տեր-Միքայելյանը<sup>1</sup> («Սերմնացան» կեղծանունով): Նրա հոդվածներում ու թղթակցություններում ցույց էր տրվում Շուշի քաղաքի տնտեսական ծանր իրավիճակը, կուլտուր-լուսավորական օջախների անգործունեությունը:

Ղարաբաղի մասին հրապարակային ելույթներով հանդես էին գալիս նաև «Իսահակ Մաթևոսյան-Թադևոսյան» երկսեռ դպրոցի հոգաբարձուներ Եփրեմ Այդինյանն ու Անդրեաս Տեր-Հարությունյանը, Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանը, քաղաքային գրադարանի վարիչ Պողոս Զաբարյանը և ուրիշներ:

Ավելին, առանձին երիտասարդներ մտածում էին ունենալ սեփական տպագիր թերթ, հանդես, ժողովածու: Այս մասին է պատմում «Մշակ»-ում տպագրված մի նամակ: «Շուշիում մի խումբ ձեռնհաս անձանց մեջ, — կարդում ենք նամակում, — միտք է հղացել հայ տառերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի առթիվ հրատարակել հօգուտ դպրոցական և զրական ֆոնդի մի ժողովածու «Սյունիք» անունով: Հրատարակիչների նպատակն է հիշյալ աշխատության միջոցով հասարակությանը տալ պատմական ու աշխարհագրական ամփոփ տեղեկություններ Ղարաբաղի անցյալ ու ներկա կյանքից:

Ժողովածուի աշխատանքներին մասնակցելու են այն անձինք, որոնք ծագումով Ղարաբաղցի են, որպեսզի այդ միջոցով նպաստեն տեղացի գրական ուժերին — մայրենի գրական ասպարեզը դուրս գալու»<sup>2</sup>:

<sup>1</sup> Մնվել է 1850 թ., Շուշիում: Սկզբնական կրթությունը ստացել է ծնրնշավայրում, ապա զբաղվել ուսուցչությամբ: 1870—1880-ական թվականներին նա ուսուցիչ էր Շուշիի քաղաքային ուսումնարանում: Տիրապետում էր մի քանի լեզուների, հատկապես լավ գիտեր ռուսերենն ու ֆրանսերենը:

<sup>2</sup> Դասավանդման հետ միասին երկար տարիներ նա աշխատակցել է մի քանի պարբերականների («Արձագանք», «Աղբյուր», «Տարաղ» և այլն):

<sup>3</sup> «Մշակ», № 264, 1912 թ., նոյեմբերի 27:

1910 թ. Շուշիում հիմնադրվում է Մելքոն Բաբաջանյանի տպարանը: Այնտեղ տպագրված առաջին թերթը «Ղարաբաղ»-ն<sup>3</sup> էր, որի լույս ընծայման համար իրենց ավանդը ներդրեցին և՛ Զավեն Վարդապետը, և՛ բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը: Այդ մասին կան բազմաթիվ զրազրույթություններ Վրացական ՍՍՀ սփյուռքական կենտրոնական պատմական արխիվում<sup>4</sup>:

Բժիշկ Նիկոլայ Ավետի Յարամիշյանը թերթ հրատարակելու իրավունքը ստացել էր 1911 թ. սեպտեմբերի 13-ին՝ կովկասի փոխարքայության մամուլի գործերի Քիֆլիսի կոմիտեին նրա ներկայացրած ծրագրի հաստատումից հետո: Նախատեսվում էին թերթի հետևյալ բաժինները՝ 1) հեռագրեր, 2) առաջնորդող հոդվածներ, ակնարկներ, հասարակական և տնտեսական հարցերի հետազոտումներ, 3) տեղական խրոնիկա, 4) հոդվածներ և թղթակցություններ երկրամասի կարիքների մասին, 5) ֆելիետոններ, բանաստեղծություններ, արձակագրություն, հոդվածներ և ակնարկներ՝ պատմությունից, աշխարհագրությունից, քաղաքատնտեսությունից և այլ բնագավառներից, 6) կովկասյան կյանք և մամուլ, կայսերական կյանք և մամուլ, արտասահմանյան կյանք և մամուլ, 7) մամուլի տեսություն, 8) թղթակցություններ, 9) քննադատություն և մատենագիտություն, 10) թատրոն, արվեստ և տարբեր տեսակի ներկայացումներ, 11) դատական խրոնիկա, 12) ոստիկանական խրոնիկա, 13) այլևայլ արտատպություններ, մանրուքներ, փոստ, 14) նամակներ խմբագրությանը, 15) կողմնակի հաղորդումներ, 16) հայտարարություններ՝ ռուսերեն, հայերեն և աղբյուրներն լեզուներով»<sup>5</sup>:

Մամուլի կոմիտեից հայտնում են, որ Ն. Յարամիշյանի «Ղարաբաղ» թերթը պետք է տպագրվի Մելքոն Բաբաջանյանի տպարանում, որ տեղավորված է Շուշի քաղաքի Թամիրյան փողոցի վրա գտնվող Յաղուբյանի տանը, լույս կտեսնի շաբաթական 2—4 անգամ:

<sup>3</sup> Անդրանիկ համարը հրատարակվեց 1911 թ. նոյեմբերի 17-ին:

<sup>4</sup> ՏԿՍ Փ. 480, ց. 2, գ. 567:

<sup>5</sup> ՏԿՍ նույն տեղը:

Հաստատվում է նաև թերթի հսկիչը՝ Շուշի քաղաքի ճարտարապետ-ինժեներ Նիկիտա Արտեմի Ղոնդաղսազյանը<sup>6</sup>։

Թերթի հրատարակման օրերը՝ հինգշաբթի և կիրակի, հաստատուն էին։ Այն բաղկացած էր շորս էջից և տպագրվում էր սրակյալ թղթի վրա։ Թերթի ճակատին «Ղարաբաղ»-ը պատկերում էր հայրենի աշխարհի բնությունը, նրա աշխարհադրական դիրքը, բարձրաբերձ սարերը։

Անդրանիկ համարի խմբագրականում թերթը հայտնում է, թե ինչ ժամանակաշրջանում է այն լույս աշխարհ գալիս և ինչ նպատակներ է հետապնդում։ «Ղարաբաղ»-ը նպատակ է դնում, — կարգում ենք խմբագրականում, — նախ և առաջ ուսումնասիրության ենթարկել հայրենի երկրի ու ժողովրդի կրթական, կուլտուրական և տնտեսական դրությունը, ճանաչել այդ ժողովրդի կարիքն ու ցավը և ապա նրա կյանքի բարելավման թարգմանն ու ջատագովը լինելու։

Թերթը այդ նույն հողվածում նշում է նաև, թե ինչ սկզբունքով է առաջնորդվելու, ինչն է լինելու նրա նշանաբանը։ Այս մասին կարդում ենք. «Իր շուրջը խմբելով բոլոր սրբտաքավ հարազատ ժողովրդական տարրերին, «Ղարաբաղ»-ը լինելու է անաչառ իր մտրակումների մեջ, հեռու թայֆայական նեղսրտությունից։ Ճշմարտությունն ու արդարությունն են լինելու նրան առաջնորդողը և սկզբունք ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար» լայն նշանաբանը, լինելու է ազատ մտածող, առաջադիմական բոլոր մղումներով շահագրգռված և լայն ժողովրդական գաղափարներով տոգորված գավառական օրգան»։

Իրոք, ուսումնասիրելով «Ղարաբաղ» եռօրյա թերթի 1911 թ. 13 և 1912 թ. 61 համարները (վերջին համարը լույս տեսավ օգոստոսի 19-ին), մենք հանգում ենք այն համոզման, որ գավառական օրգանը հաստատ է մնում իր խոստմանը։

Առաջին իսկ համարներից նրա էջերում հաստատուն տեղ են գրավում «Գավառ», «Կովկաս», «Ռուսական կյանք», «Գյւրոցական», «Մամուլ», «Թերթոն», «Թղթակցություններ»։

<sup>6</sup> Հետագայում նրան փոխարինում է Գրիգոր Սերգեյի Քալանթարյանը՝ Շուշիի քաղաքագլխի բարտուղարը։

«Քաղաքական», «Վերջին լուրեր», «Լրատու», «Տեղեկատու» և այլ բաժիններ։

Բաժինների թվարկումը ինքնըստինքյան վկայում է, որ թերթը լայն տեղ է հատկացնում ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան կյանքի լուսաբանմանը, բազմաթիվ հողվածներ, ինֆորմացիաներ, նամակներ և հայտարարություններ է տպագրում ոչ միայն Շուշիից և Խանքենդիից, այլև գյուղերից և գավառին մերձակա վայրերից։

Թերթին ամենից առաջ զբաղեցնում է աշխատավորության տնտեսական ծանր վիճակը։ Մասնավորապես «Գավառական իրականությունը» խորագրի տակ զետեղված նյութերում խոսվում է այն մասին, որ հազարավոր ընտանիքներ զրկված են ապրուստի միջոցներից և հազիվ են պահպանում իրենց ֆիզիկական գոյությունը։ Եվ պատահական չեն գավառում կատարվող գողությունն ու թալանը, կողոպուտն ու մարդասպանությունը։

Ղարաբաղցիների աղքատության պատճառներից մեկը թերթը համարում է հողազրկությունը։ Բարձրացնելով այս հարցը, նորաստեղծ տպագիր օրգանը «Հերիք է թմրությունը», «Գործադու մետաքսի գործարանում» և այլ թղթակցություններում ու ինֆորմացիաներում քննադատում է կալվածատերերին, կուլակներին, որոնք օրեցօր ուժեղացնում են ճնշումը հողազուրկների նկատմամբ։ Պատմվում է Ներքին Թաղավարդի<sup>7</sup> մետաքսագործարանի բանվորների հայտարարած գործադուլի մասին՝ իրենց աշխատավարձը բարձրացնելու համար։ Գավառի դրությունը ծանր էր ոչ միայն տնտեսապես. չկային նաև կուլտուր-լուսավորական օջախներ, ուսումնական հաստատություններ։ Եղած ուսումնարաններն ու դպրոցները հիմնականում ծառայում էին հարուստներին։ «Ղարաբաղ»-ը առաջ է քաշում ոչ միայն կանոնավոր դպրոցներ ունենալու, այլև ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու խնդիրը։ Հենց առաջին համարում տպագրված «Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչությունը» թղթակցություններում ընդգծվում է կրթության, մատաղ սերնդի դաստիարակության և,

<sup>7</sup> Լ.Ղ.Մ-ի Մարտունու շրջանի խոշորագույն գյուղերից մեկն է։

ընդհանրապես, այդ բնագավառում պատասխանատուութեան բարձրացման կարևորութիւնը:

Քերթը իր ուսուցիչ հայրենակիցներից պահանջում է խոր հզացումով և սրտացավութեամբ կատարել ստանձնած գործը, մտածել լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մասին: «Ըստ երևույթին,—գրում է Քերթը,—բոլոր հայ ուսուցիչները գիտեն, որ չկա այլ ասպարեզ, քան ուսուցչականը, ուր մարդ անհատը այնքան պատասխանատուութեան ենթակա լինի, թե՛ հասարակական կարծիքի և թե՛ հենց իր սեփական խղճմտանքի առջև. չկա ավելի ծանր և դժվարին պաշտոն, քան ուսուցչականը:

Ստանձնելով այդ վեհ պաշտոնը, մարդը իր մեջ պիտի հզա կոչում, սեր և պատրաստութիւն. նա պիտի իր կատարած աշխատանքից որոշ բավականութիւն ստանա և ոչ թե ձանձրույթ. նա պիտի գոհունակութեամբ և լրջմտութեամբ կատարի իր սրբազան միսիան՝ մատաղ սերնդին դաստիարակելու պատասխանատու գործը. հակառակ դեպքում անօգուտ կանցնեն նրա թափած ջանքն ու ձիգերը»<sup>8</sup>:

1912 թ. ապրիլի 29-ի համարում («Դպրոցական հարցը» հոդվածում) «Ղարաբաղ»-ը իր ընթերցողներին ասում է դառն ճշմարտութիւնը. «Դպրոցը գոյութիւն ունի, բայց բովանդակութիւն չունի, կյանք ունի, էութիւն չկա, դա սարսափելի է և հետին ծայր հասած մտավոր թշվառութեան արտահայտութիւն»: Այնուհետև Քերթը շարունակում է. «Մենք պարծենում ենք մեր մի քանի հատ դպրոցներով, նրանց տված շրջանավարտներով, բայց չենք մտածում դրանց որակի մասին և անհոգութեան ենք մատնում այն կարևորագույն և առաջնակարգ դասը, որի կոչման բարձրութիւնից կախված է դրպրոցի առաջադիմութիւնը: Դա ուսուցչութիւնն է, դպրոցի ղեկավար, սնունդ տվող փայփայելի դասը»:

«Ղարաբաղ»-ը մտահոգվում էր դպրոցներում բարձրորակ ուսուցիչներ ունենալու մասին, մի բան, որ ժամանակի ցավոտ հարցերից մեկն էր:

Դառն էր ուսուցչի վիճակը ցարական Ռուսաստանում. Հայկական դպրոցների ուսուցիչների մեծ մասը չունի նյութ-

<sup>8</sup> «Ղարաբաղ», № 1, 1911 թ., նոյեմբերի 17:

թական միջոցներ: Ինչ խոսք, տնտեսապես անապահովածութիւնը իր խոր կնիքն էր դնում ուսման որակի վրա: Շատ տեղերում ոչ միայն ուսուցիչների խիստ պակաս էր զգացվում, այլև դպրոցական շենքեր չկային, ուսուցումը տարվում էր բաց երկնքի տակ կամ շափաղանց անհրապույր անկյուններում:

1911 թ. 6-րդ համարում «Ղարաբաղ»-ը տխրութեամբ պատմում է Ճարտարի<sup>9</sup> դպրոցի անմխիթար վիճակի մասին: Եվ թղթակիցը վրդովված իր նամակը սկսում է այսպես. «Չեմ կարծում, թե գտնվի այնպիսի մի աղքատ դպրոց, ինչպիսին է Ճարտար գյուղի եկ. ծխ. մի դասյան դպրոցը: Երևութիւնը վերին աստիճանի խախուտ է, պատերը ծակծկոտ, և ցուրտ եղանակներին դասարանը դառնում է սառցատուն: Իսկ եթե անձրև է, սենյակում փոքրիկ լճակներ են գոյանում:

Դպրոցը ունի միայն մի քանի կոտորված նստարաններ և մի գրատախտակ: Դպրոցը չունի գրադարան, դասական պիտույքներ, հարկավոր նկարներ, քարտեզներ, որով ավելի դժվարանում է դասատուութիւնը»:

Փաստը եզակի չէր գավառում: Քերթը շարունակում էր իր ընթերցողներին հայտնել դպրոցական գործում տեղ գտած բազմաթիվ թերութիւնների և բացերի մասին: «Թղթակցութիւններ» ընդհանուր խորագրի տակ «Ղարաբաղ»-ը 1912 թ. մայիսի 10-ի համարում հրապարակում է մի նամակ Հաղբութից: Նամակի հեղինակը զանգատվում է, որ «Հաղբութի ծխական երկսեռ երկդասյան դպրոցը մինչև հիմա չունի իր սեփական շինութիւնը, դորա համար էլ դպրոցը տեղավորված է երկու բնակարանում, որը շատ անհարմարութիւններ է առաջ բերում թե՛ դասատուների և թե՛ աշակերտութեան համար»:

Այդ նույն համարի մի այլ թղթակցութիւնում («Շուշվա ծխական դպրոցները») Քերթը դառնութեամբ է արձանագրում, որ Շուշիում հիմնական դպրոցների թիվը չի ավելանում, որ միայն ծխական եկեղեցիներին կից են հիմնվում այսպես կոչված դպրանոցներ: Ավելին, «ծխական դպրոցների մեջ ման-

<sup>9</sup> ԱՂԻՄ-ի Մարտունու շրջանի ամենախոշոր և առաջնակարգ գյուղերից մեկն է, որի կոտորտնութիւնը այժմ Աղբեջանում հռչակված է իբրև միլիտետներ տնտեսութիւն:

կավարժական կապ, միություն չկա: Ամեն մի դպրոց անկախ մյուսից ձգտում է ինքնուրույն կերպով առաջ ընթանալ, տավով փոքր շափով գրագիտություն իր սաներին»:

«Ղարաբաղ»-ը նշում է, որ ծխական դպրոցները չեն կարողանում հագեցնել իրենց «սաների ուսման ծարավը, որովհետև երկու, երեք կամ չորս տարվա դասընթացով, այն էլ միացյալ բաժանմունքներով և փողոցից հավաքած երեխաներով, շատ դժվար է ցանկալի արդյունք տալ»:

Թերթը ցավով հրապարակում է դպրոցներում աշակերտների գիտելիքները գնահատելու մի քանի տխուր փաստեր, շեշտում, որ հոգաբարձուները չեն մտածում աշակերտների բնությունները կանոնավոր անցկացնելու մասին, առանձին ուսուցիչներ քննությունը վեր են ածում մի յուրօրինակ խաղի: Թերթը գրում է, որ «քննության «սարսափելի» կանաչ մահուդի շուրջը բազմած են ընթերականեր, որոնք շատ անգամ թույլ հասկացողություն ունին դրվելիք առարկայի վերաբերմամբ. հաճախ, նույնիսկ հայերեն շիմացողներ, որոնք աշակերտի ձուռում խոսքերից շլացած, կամ խիստ բարեհոգի լինելով բաշխում են նրան մի «քեռք» թվանշան:

Կարծում եք նրանք չգիտեն, որ քննությունները իսկականը չեն, որ շատերը «անց են կենալու»: Մի՞թե նրանք անցյալ շրջանավարտների օրինակից չգիտեն»<sup>10</sup>:

Ռեակցիայի տարիները վատ ազդեցություն ունեցան հասկապես գյուղական կրթական օջախների վրա: 1910—1911 ուսումնական տարվա ծանր վիճակի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Առաքել Առաքելյանը<sup>11</sup>: «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911/1912 ուսումնական տարում» ծավալուն հոդվածաշարում նա նշում է, որ «անցյալ 1910/1911 ուսումնական տարում թեմիս ծխական դպրոցները զուրկ են

<sup>10</sup> «Ղարաբաղ», № 34, 1912 թ., մայիսի 10:

<sup>11</sup> Մնվել է 1887 թ. կեանային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Խաչատրյանի գյուղում: Ունենալով խոր գիտելիքներ և մեծ սեր դեպի մանկավարժությունը, Ա. Առաքելյանը նախասովետական շրջանում մեծ աշխատանք է կատարում իր հայրենի երկրում՝ լուսավորական-կրթական գործը առաջ տանելու համար: Այժմ նա բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր է, դասավանդում է Երևանի և Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում:

եղել թեմական տեսչից, որոնց ղեկը հանձնված է եղել տեղական հոգևոր վարիչների ձեռքը, որոնց ապիկարության և միմիայն իրենց հատուկ անհոգության պատճառով անխնամ մնացած դպրոցները հասել են իրենց քայքայման ու անկման ծանր աստիճանին, փակվել են մի շարք դպրոցներ, իսկ եղածներում կրթված ու ցենզավոր ուսուցիչներին շատ տեղերում փոխարինել են անկիրթ, անցենդ, կիսագրագետ անձնավորություններ, որոնք այս կամ այն գյուղում իրենց շուրջը հավաքած մի խումբ երեխաներ՝ գրագիտություն են սովորեցրել ու այդպիսով մի կերպ պահպանել իրենց ողորմելի դրությունը»<sup>12</sup>:

Հոդվածի հեղինակը միաժամանակ ցույց է տալիս ուսումնական գործի որոշ անաջընթացը հաջորդ տարում:

Տարբեր առիթներով Ա. Առաքելյանը շրջագայում է Ղարաբաղի թեմի դպրոցները, այցելում գյուղական եկեղեցական-ծխական դպրոցները, հարցաքննում աշակերտներին, օգնություն ցույց տալիս ուսուցիչներին՝ ուսուցումը ավելի լավ կազմակերպելու համար:

Նրա՝ որպես Ղարաբաղի եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ<sup>13</sup> պաշտոնավարելու շրջանում, դավառի դպրոցները բավականին առաջադիմում են. բարելավվում է ուսուցումը, ուսուցչական ասպարեզը հիմնականում մաքրվում է անորակ դասատուներից, կարգ ու կանոն է մտցրվում դպրոցների ներքին կյանքում, հոգ է տարվում լեզուների ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու համար:

Դպրոցական հարցերի լայն լուսաբանման հետ մեկտեղ Թերթը ձգտում է իր ընթերցողների մեջ սեր առաջացնել դեպի գրականությունը, արվեստը: Այս նպատակով նրա էջերում սխտեմատիկաբար գործում է «Գեղարվեստ» բաժինը: Շատ անգամ «Ղարաբաղ» թերթը հանդես է գալիս գրական գործերով, գրականագիտական հոդվածներ հրապարակում հայ, ռուս, ադրբեջանցի ականավոր գրողների ու մտածողների մասին:

<sup>12</sup> «Մշակ», № 151, 1912 թ., հուլիսի 13:

<sup>13</sup> Ա. Առաքելյանը դպրոցների տեսուչ է եղել 1912—1913 ուսումնական տարում:

Հնթերցողը թերթի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ համարներում «Գրական ակնարկներ»-ի տակ կարդում է նշանավոր գրող Վրթանես Փափազյանի ծավալուն հոդվածը արվեստագետի, նրա աշխարհայացքի, արժարժիլող գնդափարների և պոետիկական արժանիքների մասին: Հեղինակը չորս մասից բաղկացած ակնարկաշարում հրապարակ է հանում մի շարք հարցեր և ձգտում է գրանց պատասխանել բավականին հինքնատիպ, ճշմարտացի: Խոսվում է նաև ազնվության, առողջ քննադատության և օբյեկտիվ լինելու խիստ անհրաժեշտության մասին: Վրթ. Փափազյանը տանել չի կարողանում գրական աշխարհը ստվերող և արատավորող գրողներին: «Ո՞վ ապես, որ գրիչ ձեռք չի առնում և, իրենից առաջ եղածները սրբել-չնչելու մտքով, ապշեցուցիչ հանդգնությամբ և անպատկառ լեզվով չի տղմոտում թե՛ գործ, թե՛ գործիչ և թե՛ ազնվությամբ գործելու ամեն ցանկություն... մամուլի ներկայացուցիչ ու խմբագիր է դառնում...: Երեկվա անբարոյականն ու հրապարակով խարանվածը՝ այսօր բարոյախոսական ձևեր է հնչեցնում աշտարակների ծայրերից. գրական ամեն ասպարեզից զզվանքով կամ ծաղրով ետ մղված parvenu-ները այսօր «ամենք—գրողներս» են կոչում իրենց և անցյալ մեծություններն իսկ ձգնում են վարկաբեկել», ասում է հեղինակը<sup>14</sup>:

Փափազյանը քննադատում է այն վայ գրականագետներին, որոնք ելնելով իրենց նեղ անձնական փոխհարաբերություններից վարկաբեկում են անվանի գրողներին: Գրականության մեջ ամեն ինչ պետք է լինի գեղեցիկ, մաքուր, մարդկային, այս է օրվա պահանջը, շեշտում է Ղարաբաղի տպագիր օրգանը: Վարկաբեկելու ուղին բռնած մարդիկ իրավունք չունեն խոսելու գրականության անունից: «Գրականություն չէ դա այլևս, ո՛չ գրական շարժում, ո՛չ էլ մտավոր. իրար ուզողված լուտանքներով լի սավաններ են ուղարկվում մեզ և այդ սավանների մեջ ամեն ինչ տգեղ է, ամեն ինչ հեռու է գեղեցկագիտության որևէ նշույլից. մինչ գոհակ արտահայտությունների և ցուցադրությունների տակից երևում են միմիայն

անմաքուր հաշիվներ և վսեմ բաները լղճորելու գործունեություն»<sup>15</sup>:

«Գրական ակնարկներ»-ի մեջ հեղինակը իբրև տաղանդաշատ գրողի և մեծ արվեստագետի առաջին հերթին անդրադառնում է Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններին, մասնավորապես հռչակավոր «Աբու-Լալա-Մահարի» պոեմին: Վ. Փափազյանը նշում է. «Հինգ-վեց ամիս առաջ Կ. Պոլսից, վանազան գրքերի հետ, ստացա նաև մի փոքրիկ 24 երեսանոց աշխատություն, որի հեղինակը ռուսահայ է, և ռուսահայ գրականության մեջ, ըստ իս, արժանի է շատ պատվավոր տեղ գրավելու:

Ավետիք Իսահակյանն է այդ հեղինակը: Դա այն երգիչն է, որ ժողովրդին է տվել «Որսկան ախպեր», «Մաճկալ ես, բեզարած ես» և նման մի շարք գոհարներ, որ հայ նորագույն գրականությունն է հարստացրել իր փոթորկող ոգու, յուր զգայուն սրտի տրտունջներովն ու մրմունջներովը, ըմբոստացող յուր զգացմունքներով, տենդոտ վարանումներով և քնարական թախծոտ երգերովը:

Իսահակյանը ռուսահայ գրականության այն երիտասարդ տաղանդներից է, որ վառ երազներով լի մտել է կյանքի մեջ որպես երկնքի մի թիթեռ՝ սիրելու համար ծաղիկ ու աղջիկ, երգելու համար ծաղկի բուրմունք, կույսի սեր, մրմունջ-տըրտունջ և տանջող սրտի երգեր ու վերքեր»<sup>16</sup>:

Իհարկե, սա չէ միայն Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների լեյտմոտիվը. նա մեծ հայրենասեր է և մարդու ջերմ երկրպագու: Նրա ստեղծագործություններում գովերգվում է հայրենականը, մայր հողը, մարդկային հարուստ աշխարհը՝ իր մաքառումներով ու հրաշք գեղեցկությամբ:

Հեղինակը զարգացնում է այն միտքը, որ գրողը պետք է կապված լինի իր ժողովրդի հետ, արտացոլի նրա առօրյան, մարմնավորի ժամանակի բնութագրական կողմերը: Բայց այդպիսին չէ Հարություն Ճուղուրյանի «Շիրինանց նախշուն» վեպը: Իհարկե, Վ. Փափազյանը չէր նպատակադրվել ստվեր գցել Հ. Ճուղուրյանի լավագույն գրական գործերի վրա, որոնք

<sup>14</sup> «Ղարաբաղ», № 1, 1911 թ., նոյեմբերի 17:

<sup>15</sup> «Ղարաբաղ», № 1, 1911 թ., նոյեմբերի 17:

<sup>16</sup> «Ղարաբաղ», № 2, 1911 թ., նոյեմբերի 20:

հանդես գալով անցյալ դարի վերջերին, բացահայտեցին «հայ գյուղը իր բոլոր լավ և վատ կողմերով: Գյուղացին—ալնիվ, խեղճ, միամիտ, և այդ բոլոր հատկություններինք օգտվող վաշխառուներ, քոխվաններ, այս ու այն պաշտոնյա, գյուղի աղաններ, քաղաքի խաբեբաններ և այլն»<sup>17</sup>:

Փափազյանը, հատկապես ընդգծելով նրա «Մոռացված աշխարհ» ընդհանուր խորագիրը կրող ժողովածուն, ասում է. «Համիշտակությամբ կարդացվեցին իննսունական թվականներին ճուղղությանի բոլոր այդ գրվածքները»<sup>18</sup>:

Բայց միշտ չէ, որ պետք է նկարագրել նույնը, նույն գաղափարը մարմնավորել և ընթերցողին հրամցնել կյանքի մի կողմը: Ո՞ւմ հայտնի չէ, որ ժամանակները փոխվում են, ընդհանում է Վ. Փափազյանը, պետք է կարողանալ գեղարվեստորեն տալ փոփոխությունները, գտնել բնորոշը, բնութագրականը, ժամանակի ոգին արտահայտող կարևոր նրբագծերը:

Իր գրչակից ընկերոջ մասին նա ասում է. «Ամեն ինչ ենթարկվել սկսեց վերագնահատության, մի քանի դորեղ ոստյուններ տեղի ունեցան հայ մտավոր կյանքի մեջ, արյան հետքերի միջով նոր ճանապարհներ բացվեցին, որոնումների շնորհիվ ժպիտ հարուցանելու շափ հետամնաց դարձան շատ իրականներ... Կարճ ասել՝ պատուվեցին շատ քողեր, փշովեցին շատ վարդագույն ակնոցներ և ընկան շատ ոսկեզօծ պատյաններ՝ մերկացնելու համար անողոք իրականությունը, իսկական զնահատության ենթարկելու բոլոր արժեքները...»

Բայց եկեք ու տեսեք, որ այդ ամենին հանդիսատես լինելով հանդերձ, ճուղղությանը, գյուղի կյանքով այդքան հետաքրքրվող հեղինակը ոչ միայն կարծես չի նկատել եղած փոփոխությունները, այլ նույնիսկ իր «Մոռացված աշխարհից» էլ ետ է ոստնել և գյուղը իր այս նոր գրվածքում պատկերացրել է մեր առջև Սոս ու Վարդիթերային ժամանակվա գծերով, Սոս ու Վարդիթերային տիպարներով<sup>19</sup>: Այդ բանում համոզելու համար հողվածագիրը խորհուրդ է տալիս կարդալ հեղինակի «Շիրիխանց նախշունը»:

«Գրական ակնարկներ» հեղինակը խարազանում է ճուղղությանին՝ ընթերցողին ներկայացրած իրեալական, անաղարտ բարքերով ու սովորություններով հարուստ հայ գյուղի նկարագրության համար:

Մի՞թե Հ. ճուղղությանը չի տեսնում նոր ժամանակների հայ գյուղի անտանելի վիճակը, ասում է Վրթ. Փափազյանը: Նրա կարծիքով «Շիրիխանց նախշուն»-ը անախրոնիզմ է: Գոնե մեր գյուղի, այժմյան գյուղացու կյանքի պատկերը չէ. այլ գուցե հին, բարի ժամանակների, ով գիտե՞ ինչ օրերի նկարագրություն, որ շատ գրավիչ է... բայց, ալվա՞ղ, շափաղանց երազային է և իրականությունից ցավագինորեն հեռու...»<sup>20</sup>:

Վ. Փափազյանը «Գրական ակնարկներ» շարքում ընդգծում է, որ գյուղը ժամանակի հայելին է, և գրողը պետք է կարողանա ժամանակակից կյանքը վերարտադրել բազմակողմանիորեն ու բարձր արվեստով:

Թերթը պրոպագանդում էր բարձրարվեստ ստեղծագործողներին, բացահայտում նրանց արժանիքը, գաղափարական վերլուծումների ենթարկում և բնութագրում պոետիկան:

«Ղարաբաղ»-ը քննադատում է այն դատապարտելի լուծությունը, որ նկատվում է նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի երեսնամյա հոբելյանի առթիվ, «լուծություն այն աստիճան, որ վերջապես խնդիրը հրապարակ դրվեց սիրելի բանաստեղծի նախկին ճեմարանական սաների կողմից»<sup>21</sup>: Թերթը բաց չի թողնում առիթը պարսավելու այն «գրողներին», որոնք հասարակության մեջ դիրք ունեցող բարեկամների օժանդակությամբ հոբելյաններ են կազմակերպում ու օվացիաներ սարքում իրենց օգտին: Բայց ժամանակը այնքան մեծ ուժ ունի, ասում է նա, որ հարթեցնում է հարցերը և սին փառքերը քամուն տալիս:

«Հայկական մի շատ սիրուն առած կա,— շարունակում է «Ղարաբաղ»-ը,— «Խաչը տերը զորավոր կանի»: Դժբախտաբար մեր իրականության պարսավելի կողմերից մեկն էլ այդ է: Կան անձնական բարեկամներ, քիչ ու միչ դիրք ունեն հասարակության մեջ, և մեկ էլ տեսաք երեկվա սկսնակը այսօր

<sup>17</sup> «Ղարաբաղ», № 3, 1911 թ., նոյեմբերի 24:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> «Ղարաբաղ», № 3, 1911 թ., նոյեմբերի 24:

<sup>21</sup> «Ղարաբաղ», № 5, 1911 թ., դեկտեմբերի 1:

արդեն օվաքիաների է արժանանում: Իսկ այն տաղանդները, որոնք տասնյակ տարիներով սերունդներ են կրթել, իրենց հրապարակ գալով նոր դարագլուխ են կազմել, լինի դա գրականության, հրապարակախոսության կամ այլ ասպարեզում, այդպիսիները ետ են թողնվում, մոռացվում:

Այդ մոռացվածներից է մեր ամենատաղանդավոր բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը...»<sup>22</sup>:

Թերթը ողջունում է «տաղանդավոր բանաստեղծի գործունեության երեսնամյակի հոբելյանը տոնելու առաջարկը» և հույս հայտնում, «որ հայ հասարակությունը, որի ինտելիգենտ, մտավորական անդամներից շատերը Հովհաննիսյանի հետևողները և նրա դաստիարակած սաներն են, բարոյական պարտքի անկեղծ գիտակցությամբ հանդես կգան տոնելու հայ բանաստեղծական տաղանդի այդ մեծ ներկայացուցչի հոբելյանը, որովհետև դրան ամենից շատ արժանի է...»<sup>23</sup>:

Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված հատուկ հոբելյանական հոդվածով «Ղարաբաղ»-ը հանդես եկավ հինգ և կես ամսից հետո՝ 1912 թ. մայիսի 20-ին և 24-ին: Երկու մասից բաղկացած այս հոդվածում թերթը քննական էքսկուրս է կատարում՝ համառոտակի պատմելով կովկասյան առանձին հայ պարբերականների ժամանակին հանդես բերած ոչ հարգալից վերաբերմունքը Հովհ. Հովհաննիսյանի նկատմամբ, փորձերը նվազեցնելու նրա գրական արժանիքը, նսեմացնելու նրա կատարած գործը: «Մշակ»-ը հայտարարում էր, որ «Հովհաննիսյանի քնարը չափազանց էրոտիկ ու ասիական» է:

Բարի վերաբերմունք չի ցուցաբերել նաև Բաքվում հրատարակվող «Նոր կյանք» երկշաբաթաթերթը: Հոդվածի հեղինակ Դ. Անանունը 1912 թ. № 3—4-ում Հովհ. Հովհաննիսյանին անվանեց «քաղքենիության» բանաստեղծ:

«Ղարաբաղ»-ը նշում է, որ այս թերթերը հեռու են Հովհ. Հովհաննիսյանի արվեստը ըստ արժանվունյն գնահատելուց: Նա բարձրարժեք գործեր է համարում «Ախ տվեք ինձ քաղցր մի քուն», «Նս քեզ սիրում եմ», «Արի իմ հոգեակ, իմ գիրկը արի», «Դու ծաղկում ես ինչպես վարդը հարավի» և տասնյակ

<sup>22</sup> «Ղարաբաղ», № 5, 1911 թ., դեկտեմբերի 1:

<sup>23</sup> Նույն տեղում:

այլ հայրենասիրական երգեր, որոնք ինքնատիպ են ու անկեղծ:

Թերթի եզրակացությունն այս է. «Հովհաննիսյանը լիրիկ է, քնարերգու: Ոչ մի հայ բանաստեղծ նրա պես չի կարողացել երգել հայի անցյալ ու ներկա ցավը: Ընդհանրապես նրա ստեղծագործությունը նման է մի մարգագետնի, մի հարթ գմբուխտ կանաչով ծածկված մարգագետնի, որի միջով հեղիկ խոխոջով հոսում է առուն, որի ձայնը տեղ-տեղ հեկեկանքի է նման, շուրջը ծլլլում են սիրո կարոտով սոխակները, տեղ-տեղ առուն խորդուբորդությունների է հանդիպում և թեթև չափով փրփրում ու բողբոջում»<sup>24</sup>:

«Ղարաբաղ»-ը գրվատական խոսք է ասում Գևորգ Դոդոխյանի ստեղծագործության վերաբերյալ, ցավում, որ նրա մասին քիչ տեղեկություններ են հրապարակված, ոչստի շատ քչերն են ճանաչում նրան: Թերթը քննադատում է մեր պարբերականներին, հրատարակչական օրգաններին՝ բանաստեղծի թողած ժառանգության նկատմամբ ցուցաբերած սառը անտարբերության համար: Այս առթիվ նա գրում է. «Միժեռնակի երգիչը ապրել է մինչև խորին ծերություն ու քանի տարի առաջ վախճանվել է իր հայրենի Սիմֆերապոլ քաղաքում: Մի համեստ հողաթումբ զարդարում է նրա գերեզմանը, սակայն նրա հայրենակիցները հարց են հարուցում արժանավոր մահարձան դնելու նրա շիրիմին...»

Ցանկալի է, որ երախտագետ հայրենակիցները ոչ թե միայն մահարձան կանգնեցնեին, այլև հրատարակեին Դոդոխյանի հայտնի և անհայտ ոտանավորները»<sup>25</sup>:

Թերթի առանձին համարներում հոդվածներ կան աղբյուրական մեծ գրող, փիլիսոփա, հումանիստ Միրզա Ֆաթալի Ախունդովի, ուսս ականավոր քննադատ, գրականագետ Վիսարիոն Գրիգորևիչ Բելինսկու և ուրիշների մասին:

Հատկապես «Բելինսկին և ուսս գրողները» մեծածավալ հոդվածում<sup>26</sup> «Ղարաբաղ»-ը փորձում է բացահայտել այն

<sup>24</sup> «Ղարաբաղ», № 38, 1912 թ., մայիսի 24:

<sup>25</sup> «Ղարաբաղ», № 51, 1912 թ., հուլիսի 15:

<sup>26</sup> Տե՛ս թերթի 1911 թ. № 7-ը:

վիթխարի դերը, որ խաղացել է նա ոռու գրականութեան, պոե-  
դիայի զարգացման գործում:

Հաճախ այստեղ լույս են տեսնում բանաստեղծություն-  
ներ, պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ: Ընթերցող-  
ների ուշադրություն են գրավում Գրիգոր Ներսիսյանի, Խո-  
րեն Բորյանի, Հակոբ Խանլարյանի<sup>27</sup>, Սիմոն Առաքելյանի,  
Վ. Հայկազի և ուրիշների բանաստեղծություններն ու գողտ-  
րիկ պատմվածքները:

Բնորոշ գիծը, որ նկատվում է սրանց գործերում, մոռալ  
կյանքի պատկերումն է, անհրապույր, տանջանք-աշխարհում  
մարդու անելանելի վիճակի արտահայտումը:

Բանաստեղծ Վ. Հայկազը, ասում է, որ կյանքը մի բեռ է՝  
տանջանքերով լի, այն տանելու համար շատ ու շատ զրկանք-  
ներ են պահանջվում: Ողբերգական է հայ մարդու, հայ երգչի  
կյանքը. իր շրջապատում նա տեսնում է միայն վիշտ, հառա-  
չանք, թախիծ:

Դիմելով ընկերոջը, նա գրում է.

Ի՞նչ ես ուզում, դարիք ընկե՛ր,  
Ու բեզ համար ես երգեմ:  
Ի՞նչ ես ուզում, ջիվան ընկե՛ր,  
Ու բեզ համար նվագեմ:  
Թե ուրախ կյանք բերկրալից—  
Դեռ չի եղած ինձ համար.  
Թե հառաչանք, վիշտ կամ թախիծ,  
Նորուրյուն չէ բեզ համար:  
Թե ծաղկավետ գարուն ե՞րգեմ—  
Այդ կլինի անարդար.

<sup>27</sup> Մնվել է 1885 թ., Շուշի քաղաքում: 1906 թ. ավարտել է տեղի թեմա-  
կան դպրոցը. 55 տարի անընդհատ Շուշիում, Բաքվում, Թիֆլիսում և այլուր  
գրադվել է ուսուցչությամբ:

Աշակերտական տարիներին խմբագրել է «Արշալույս» թերթը: Ակտիվ-  
որեն աշխատակցել է Թիֆլիսում լույս տեսնող «Լուսա», «Աղբյուր», «Տարազ»,  
«Լուսաբաց», «Դարբնոց», «Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար» և  
այլ պարբերականների:

1916 թ. լույս է տեսնում բանաստեղծությունների ժողովածուն: Նրա  
ստեղծագործությունները թարգմանվել են մի քանի լեզուներով. տեքստե-  
րով երաժշտություն են գրել Ազատ Մանուկյանը, Գանիել Ղազարյանը և ու-  
րիշները: Մահացել է Թիֆլիսում, 1966 թ. մայիսի 20-ին:

Թե իրական երգ ես ուզում—  
Վիշտ է ընտրված մեզ համար:  
Կյանքը լի է տանջանքներով,  
Ու ել կամիս դու գնա.  
Հայ երգիչը իր ֆեարով,  
Դեռ շատ դարե՛ր պիտ ողբա՞ս:

Ոչ միայն մարդը, այլև ամբողջ տիեզերքը կարոտ է պայ-  
ծառ լույսի, գրում է Լևոն Աթաբեկյանը<sup>28</sup>: Մի շարք բանաս-  
տեղծություններում, ներկայացնելով տաղտկալի միջավայրը,  
մարդու ծանր ու ճնշող վիճակը, նա գեղարվեստական արտա-  
հայտման միջոցներով արտացոլում է մարդկային բանտ-աշ-  
խարհը: Եվ պատահական չէ, գրում է բանաստեղծը, որ մեկն  
իրենց սարն է կարոտում, մյուսը՝ ջինջ հորիզոններ, հայրենի  
տուն, երրորդը՝ մոր ձայնը, եղբորն ու քրոջը:

Լ. Աթաբեկյանի մոտ կարոտը կենսասիրություն է, ձրգ-  
տում, իղձ ու ցանկություն:

Գր. Ներսիսյանի հետևյալ անվերնագիր բանաստեղծու-  
թյունը լիրիկական ուժով արտահայտում է հեղինակի հիվան-  
դոտ հոգին «տանջանք-պատրանք աշխարհում»: Նա գրում է.

\* \* \*

Չֆեաղ լուսնի շողեր ընկան  
Ձյունով պատած սև սարին.  
Բյուրեղները շողերն առան,  
Պեծին տվին, փայլ առին...

Ու շաշում է ձմռան ֆամին,  
Սուլում հանդարտ ու վաշում,  
Եվ լայիս է իմ հեզ հոգին  
Տանջանք, պատրանք աշխարհում...  
Մոռալ կյանքի՛ անհույս, անլույս  
Մուր համիեֆում են ընկած:

<sup>28</sup> «Ղարաբաղ», № 12, 1911 թ., դեկտեմբերի 25:

<sup>29</sup> Մնվել է 1875 թ., Շուշիում: Նախնական կրթությունը ստացել է տե-  
ղի ուսուցչական դպրոցում: 1893 թ. մտել է կապուցիզի համալսարանի հասա-  
րակագիտական ֆակուլտետը, իսկ 1897 թվականից սովորել է Բեռլինի հա-  
մալսարանի բժշկագիտական բաժանմունքում:

1903 թ. վերադարձել է Ռուսաստան: Ռուսական առաջին հեղափոխու-  
թյան օրերին մեծ աշխատանք է կատարել Բաքվի բանվորների շրջանում:  
Հասարակական-քաղաքական աշխատանքներին զուգընթաց գրադվել է

Այս, ինձ համար վառ արշալույս  
Հեշ... երկնում շի ծագած...<sup>30</sup>:

Մարդկային նույն խոր կսկիծն է հեղինակի մի այլ, ավելի  
լի ընդարձակ բանաստեղծության մեջ, որի վերնագիրն է՝ «Ան  
հուշերից»:

Գր. Ներսիսյանի այս բանաստեղծությունը նվիրված է Շու-  
շիի թեմական դպրոցի հանդեսին:

Անցել եմ կյանքի հուզիչ փոքրկով,  
Անցել եմ, տեսել սոսկ-անագրական  
Մտեր՝ որ լի են կատաղի կրքով...  
Տեսել եմ մարդիկ՝ տանջված, անպաշտպան,  
Տեսել եմ հիվանդ, հյուսված մանուկներ,  
Տեսել եմ առույգ ու կայտառ ծերեր,  
Մեկին կարեկցել, մյուսին նախանձել,  
Երկար տանջվելով ես ետ եմ դարձել...<sup>31</sup>

Բանաստեղծը շի ուղում գնալ դեպի մահ, այլ, ընդհակա-  
ռակն, ձգտում է ապրել, ապրել՝ վաղվա օրը կռելու համար:

Ապրել եմ ուզում...  
Եվ իմ սրտի մեջ ծփում է ուժգին  
Յասումի վիշտը խորունկ տանջանքի,  
Կարոտ է հոգիս տանջված կարոզին,  
Հուզիչ, փոքրկող մի շքնաղ կոտնկի...<sup>32</sup>:

Հեղինակը գովերգում է հեղափոխության մարտիկներին,  
որոնք հերոսաբար հաղթահարում էին խոշընդոտները, պայ-  
քարում՝ աշխատանքի մարդու հաղթանակի համար: Մութ գի-  
շերվա լուսաբացն ու նոր օրերի դալուստը նա տեսնում էր  
«կյանքի խորհուրդով» քայլելու, թշնամու դեմ անվախ ու ան-  
զիջում մարտերի մեջ:

գրական գործունեությանը: 1913 թ. Բաքվում լույս է տեսել բանաստեղծու-  
թյունների ժողովածուն:

1. Աթաբեկյանը իր ուժերը ներդրել է անդրկովկասյան ժողովուրդների  
բարեկամությունը ամրապնդելու համար:

Վախճանվեց 1918 թվականին:

<sup>30</sup> «Ղարաբաղ», № 8, 1912 թ., հունվարի 29:

<sup>31</sup> «Ղարաբաղ», № 9, 1912 թ., փետրվարի 5:

<sup>32</sup> Նույն տեղում:

Իր մի բանաստեղծության մեջ («Նոր այգ»), որ նվիրել է  
Հովհաննես Հովհաննիսյանին, գրում է.

Անպարիսպ բանում անշրքա կապված  
Դու հողմահալած... քո տունն է այսօր...

Մեզը պատահած

Նոր այգն է ծնում նոր կյանք,

Նոր խորհուրդ...

Արյունի ծարավ զագսն ոռնոցով  
Հին կյանքն է առել իր մահ, իր վախճան...

Դու առաջ գնա՛ կյանքի խորհուրդով...

Կովի ու տանջվիր և անվերջ ապրիր<sup>33</sup>:

Գրիգոր Ներսիսյանը ճիշտ է գնում հարցը. միայն պայքա-  
րով կարելի է նոր կյանքի հասնել, միայն պայքարով կարելի  
է «անվերջ ապրել», առաջ գնալ, տեսնել տանջանքի վախ-  
ճանք:

Ավելին, հեղինակը տեսնում է ռեակցիայի տարիներից  
հետո հեղափոխության գործի առաջընթացը, բողջեփկների  
մոտալուստ գրոհը:

Նա նույն «Նոր այգ» բանաստեղծության մեջ ասում է.

Մռայ ամպերը ցրվել են արդեն,

Կապույտ երկնից արևն է շողում.

Սառցե շրթաներ շատով կհալվեն

Եվ սեզ-քալսածախս սարն էլ է ծպտում...

Մեռնում են վշտեր և քո սիրավանդ

Երգերը խոթսո հնչում են ուժգին:

Վառվում են հույսեր... և քո ցավատանջ

Սիրտն է քնդում նոր արշալույսին:

Նա հավատացած էր, որ հեղափոխության հաղթանակի  
համար նոր մարդիկ կենեն, շատերը բաց աչքով կնայեն գա-  
լիքին և պայքարը հետզհետե նոր ծավալ կստանա.

Այգը հուսատու իր նորոգ կյանքի

Հսկա մրբիկից նոր ծավալ կտոնե

Կապրի հուսալի ու անշեջ հրով:

<sup>33</sup> «Ղարաբաղ», № 38, 1912 թ., մայիսի 24:

Դեռ 1912 թ. գրած մի բանաստեղծության մեջ Հ. Սառիկ-  
ջանցը թեւավորում էր եղբորը՝ քայլելու անլարան, հասնելու  
աղատության բաղձալի ժամին.

Սիրում եմ նամիպ, իմ անգին եղբայր,  
Դաւեթի համբույրդ, դու իմ հարազատ.  
Առ և իմ ձեռքը, դա քեզ չէ օտար,  
Սուրբ է քո նամիպս, քայլի անվաստ<sup>34</sup>:

Թերթի տպագրած մի քանի ստեղծագործություններում էլ  
հետաքրքիր մանրամասներով մարմնավորվում են հայրենի-  
քի անմարելի սերը: Մարդը միշտ էլ իրեն ապահով է զգում  
մայր հայրենիքում. նրա անտառները, դաշտերը, ձորերը կար-  
ծես մարդու հոգուն նոր շունչ են տալիս. փարատվում է տըխ-  
րությունը, երբ շրջապատում տեսնում է ամեն ինչ հարազատ,  
խաղաղ.

Տխուր ու հոգնած, դեմքով առևան,  
Ճանապարհների փռչին ուտերիս,  
Քո գիրկը ընկա, մայրենի անտառ,  
Համբույր բուրեցիք խոնջացած սրտիս...

Մայրենի անտառ, աղբյուր ու գետակ,

Իմ լույս մանկության ջերմ հարազատներ,  
Հայրենի վայրեր, դաշտեր ու ձորակ  
Դու՛մ նույնն եմ դարձյալ... լոկ ես եմ փոխվել...  
Ականջ եմ դնում ձեր սիրո ձայնին,  
Իմ սիրտն է, անտես, ձեր սիրով վառվում.  
Մերգան հուշեր, ա՛խ վայրեր անգին  
Իմ հոգին կարծես նոր կյանք է առնում<sup>35</sup>:

Խորեն Բորյանի «Գյուղ» վերնագրով բանաստեղծությունը  
մի ներքող է աշխատանքի, ազատության և բնության դեղնե-  
կության մասին: Նա հրազում է բնության գրկում լինել ան-  
կաշկանդ, ուրախ ու անհոգ:

Առանձին հեղինակների ստեղծագործություններում, սյու-  
ժետային բանաստեղծություններում և գողտրիկ պատմվածք-

<sup>34</sup> «Ղարաբաղ», № 21, 1912 թ., մարտի 18:

<sup>35</sup> «Ղարաբաղ», № 1, 1911 թ., նոյեմբերի 17:

ներում նկարագրվում են մարդկային փոխհարաբերություննե-  
րը, նահապետական սովորություններն ու ժողովրդական բար-  
քերը:

Թերթի էջերում հրատարակվող ստեղծագործությունները  
աչքի էին ընկնում մի կողմից սյուժետային կառուցվածքով,  
ժամանակի ոգուն համահունչուն լինելով, մյուս կողմից՝ պոե-  
տիկական արժանիքներով, լեզվամտածողության բարձր մա-  
կարդակով: Հեղինակների խոսքը մարտական է, վարակող ու  
ներգործուն:

«Ղարաբաղ» թերթի էջերում հրատարակվել են նաև հու-  
շեր, հրատարակախոսական և ճամփորդական նյութեր, ու-  
րոնք գրված են մեծ շնորհքով և իրենց մեջ ներառում են զե-  
ղարվեստական պատկերներ, համեմված ժողովրդական բառ  
ու բանով, իմաստալից ու թեւավոր խոսքերով: Ավելին, ա-  
ռանձին հուշերում որոշ բնութագրումներ են տրվում երեկվի  
մարդկանց, նշում նրանց մանկության և պատանեկության  
հետաքրքիր դրվագները, պատմում կյանքի կարևոր մանրա-  
մասները:

Այդ տեսակետից հիշատակման արժանի է Պերճ Պոռշյանի  
«Մանկական հուշատետրից» գործը, որը լույս է տեսել «Ղա-  
րաբաղ» թերթի 1912 թ. № 11-ում: Ի դեպ, նշենք, որ Պ. Պոռշ-  
յանի սույն գործը մինչև հիմա տեղ չի գտել հեղինակի ո՛չ  
«Հուշեր»-ում, ո՛չ «Հուշիկներ»-ում<sup>36</sup>:

Պոռշյանը նշված գործը գրել է հատուկ նկատառումով:  
Հայ մեծ բանաստեղծ Ս. Շահազիզի հորեկյանն էր: Անհրա-  
ժեշտ էր լայնորեն ներկայացնել նրա մանկության ու պատա-  
նեկության տարիները, բնութագրել հայ բանաստեղծի անցած  
դժվարին, փշոտ ճանապարհը, մյուս կողմից՝ ցույց տալ այն  
միջավայրը, շրջապատը, ուր ծնվել ու հասակ է առել ապագա  
ստեղծագործողը:

Անկեղծ սիրով ու մեծ վարպետությամբ է գրված Ս. Շա-  
հազիզի դպրոցական տարիների առօրյան, նրա մանկություն-  
ը հայրենիքում՝ Աշտարակում, ապա ճանապարհորդությունը  
Մոսկվա, ծառայությունները մայրենի գրականությանը:

<sup>36</sup> Տե՛ս «Գրական թերթ», № 2, 1968 թ., հունվարի 5:

Թերթն իր մի շարք հողվածներում բարձրացնում է անհատի և հասարակության փոխհարաբերության հարցի ճիշտ բնութագրման, ժողովրդական շահերը բարձր դասելու, երիտասարդ հասարակական գործիչներ աճեցնելու հարցերը:

Արժեքավոր է մասնավորապես «Անհատականության սահմանը» ընդարձակ հողվածաշարը, որը ղետեղված է «Ղարաբաղ»-ի 1911 թ. № 2—3-ում:

Սրա հրապարակումը ինքնանպատակ չէ: Հայտնի է, որ ուսանողների տարիներին հայ մտավորականների մի մասը հիասթափվել էր: «Այդ բանին ավելի ևս նպաստեցին հետհեղափոխության շրջանում հրապարակ հանված բազմաթիվ գրվածքները, որոնք անհատականության շունչ ու բուրմունք ունեն: Եվ դարձանալի չէ, որ այդ գրվածքներով սնվող մեր երիտասարդ տարրը դարձավ անհատականության երկրպագու, յուր համար սեփական խիստնջ ստեղծեց և ներս՝ բաշխելով պարփակվեց ինքը յուր մեջ, դադարեց քննադատության տակ դնել յուր գործողությունները, ավելորդ համարեց յուր անհատականը ու հասարակականը հաշտեցնելու մասին մտածել ու հոգալ: Նա նույնիսկ գերագույն ու առաջնակարգ տեղ տվավ յուր անհատականին, սկսեց ապրել միայն ու միայն յուր բավականությանը համար»<sup>37</sup>: Այս հանգամանքը վատ է անդրադառնում ոչ միայն հասարակական կյանքի, այլև «հասարակական հաստատությունների առաջխաղացման վրա»: Քննադատելով այդ, միաժամանակ հիշատակվում են պատմական տարբեր ժամանակահատվածներում հասարակական վիթխարի գործ կատարած այն անհատները, որոնք իրենց ամբողջ կյանքը, եռանդը ներդրել են ընդհանուրի համար:

Տալով հասարակության մեջ անհատի դերը, նրա ստեղծագործական կարողությունների գործադրման համամարդկային նշանակությունը, ընդգծվում է անհատի և հասարակության գործողությունների պայմանավորվածությունը: «Եվ անհատը անհատ է այնքան, որքան պարփակված է յուր մեջ, հասարակական է այնքան, որքան առնչված է հասարակության մեջ, ապրում է այդ հասարակության մեջ, տոգորված է հա-

սարակական գաղափարներով, սնուցանում է յուր մեջ հասարակական մի պատվաբեր շիղ»<sup>38</sup>:

Թերթը խարաղանում է այն անձանց, ովքեր հեռացել են հասարակական կյանքից, չեն մտածում ժողովրդի մասին, անձնականը բարձր են դասում ընդհանուրից: Այնուհետև հայ մտավորականներին կոչ է արվում՝ զերծ պահելու իրենց «անձնական հախուռն բավականությունից, որովհետև այդ է պահանջում հասարակական գործը, այդ է պահանջում... միասիա դարձած գործը: Գիտակցե՛ք, որ այնտեղ, որտեղ սկսում է հասարակականը, այնտեղ դադարում է անհատականը»<sup>39</sup>:

Թերթում հաճախ էր գործում «Մամուլ» բաժինը: Այստեղ տպագրվում էին բազմաթիվ ինֆորմացիաներ առանձին ժողովածուների, ավանախների, ամսագրերի, հանդեսների և թերթերի համարների մասին, քննադատվում էին դրանցում սեղ գտած թերություններն ու բացերը, անճշտությունները, գուհիկ քննադատության ու շահագրիտական նկատառումներով ելույթները:

Վրդովմունքով է գրված «Գարուն»-ի 3-րդ գրքի մասին հաղորդումը, ավանախ, որտեղ ղետեղվել են այնպիսի հողվածներ, որոնք խոսքերը «մեկ արած արշավանք են սկսել հայ գեղարվեստական գրականության վրա»<sup>40</sup>: 370 էջանոց գրքի գրեթե բոլոր հողվածների հեղինակները ելնելով ոչ ճիշտ գիրքերից քննադատում են հայ մեծապատիվ գրողներին և աջ ու ձախ, անհամ ձևով կրկնում են տարիներ շարունակ ասված միտքը: Շատ ժամանակ էլ հողվածների հեղինակները, խիստ դժգոհ լինելով քննադատներից ու գրախոսներից, իրենց հաշիվները մաքրելիս չափ ու սահման չձանաչելով, իրենց զայրույթը թափում են ոչ թե տվյալ անձնավորության, այլ հայ բազմավաստակ գրողի, նրա գրական ստեղծագործության արժեքավորման վրա: «Մարդիկ մոռանում են, որ քննադատությունը բանակոխվ չէ,— գրում է թերթը,— և անընդհատ, ամեն քայլում, կոխվ են տալիս այս ու այն, իրենցից նախընթաց գրախոսների, գրականության պատմության գրողների

<sup>37</sup> «Ղարաբաղ», № 2, 1911 թ., նոյեմբերի 20:

<sup>38</sup> «Ղարաբաղ», № 2, 1911 թ., նոյեմբերի 20:

<sup>39</sup> «Ղարաբաղ», № 3, 1911 թ., նոյեմբերի 24:

<sup>40</sup> «Ղարաբաղ», № 36, 1912 թ., մայիսի 17:

և կամ իրենց քննադատած հեղինակների մասին խոսողների դեմ: Ու մինչև անգամ դաշրանում էլ են նրանց վրա. նախատում են, անքաղաքավարի կերպով նրանց տգետ գոչում, մի տեղ էլ «կիսակիրթ սեմինարիստ» անվանում նրանցից մեկին: Ու շեն էլ անդրադառնում, որ իրենց այդ տեսակի քննադատությունները իրենց—գրողների բերնում՝ ճիշտ որ «հնչում են որպես կիսակիրթ սեմինարիստի ունայն ու վանիչ գավառական էրուզիցիայի էժան էֆեկտ»<sup>41</sup>:

«Ղարաբաղ»-ը քննադատում է նաև անուն հանած պարբերականների առանձին համարներ: Թերթը քննություն է առնում Տ. Նազարյանի «Աղբյուր» ամսագրի 1912 թ. ապրիլի համարը, ուր մի քանի լավագույն հոդվածների կողքին տեղ են դրել նաև արժեքավոր, ճշմարտությունից հեռու, վերամբարձ ոճով գրված նյութեր:

Նախ պարսավում է այն հոդվածը, ուր տերտերը ուրախությամբ պատմում է «Աղբյուր»-ի բաժանորդ լինելու մասին: Գաղափարը ոչնչով չի հիացնում ընթերցողին:

Ամսագրի նույն համարի 135-րդ էջում տպագրված է մի նկար՝ «Ձայլամ» վերնագրով: Սրա տակ գրված է հետևյալ հայտարարությունը. «Գպրոցական մեր բաժանորդ օրիորդներից, որ 25 տողով մինչև մայիսի 25-ը նկարագրի ջայլամին և մարդկությունը տված նրա օգուտն ու վնասը և գրվածքը տպագրվի «Աղբյուրի» մանկական աշխարհում, կստանա մի օրինակ Ոգի Հայաստանի պատկերը, շրջանակի մեջ»<sup>42</sup>:

«Ղարաբաղ»-ը ամսագրի խմբագրությունը քննադատում է ջայլամի իսկական նկար չտպագրելու համար. դա ոչ թե ջայլամ էր, այլ բոցահավ (ֆլամինգո), որ ապրում է Միջին Ասիայի երկրներում:

Այդ նույն համարում «Աղբյուր»-ը հրապարակում է Ատրբայեանի «Կարա-Մուրդա» վերնագրով հոդվածը: Այն գրված է այնպիսի բովանդակությամբ ու ոճով, որ ընթերցողը չի հասկանում, թե ո՞րն է հայ մեծ երգահանի մեծությունը: Թերթը բերում է մի հատված հայ հեղինակի տպագրած հոբելյանական խոսքից և հանգում այն եզրակացություն, որ կարգացողը

<sup>41</sup> «Ղարաբաղ», № 36, 1912 թ., մայիսի 17:

<sup>42</sup> «Աղբյուր», № 4, 1912 թ., էջ 135:

ուչինչ չի հասկանա դրա ընթերցումից: «Ուշադիր լսողին թվում է, թե հեռովից ուղղաչու է կազմված, գնում են հեծելազորներն ու հետևակները, ահեղազորող բոմբյուններով: Զորականների զենքերի շաշյունից, զինվորների շուերգից, ձիերի սմբակների բամբյունից, խրխնջոցից ու փռուտոցից այնպիսի սարսափափյուռ աղաղակ է բարձրացել, որ կարծես ամենքը մի կողմ են քաշվում, ճանապարհ հարթում, որ անցնի այդ ուղղաչունթացքը: Այդ երգի ելևէջները այնպես են փոթորկում ունկնդրի սիրտը, որ նա շնչակալ լսում է մեծ ուշադրությամբ, ականջները թեքած հետևում է յուրաքանչյուր ձայնի բախյուններին և երկար հետամտելուց հետո, նա ուշքի է գալիս, զգում է, որ այդ ձայնը ուղղի կոչ չէ, դա արյունահեղության գնացողների բարձրացրած աղաղակ ու վայնասուն չէ»<sup>43</sup>: Սա ընտրված հատված չէ: Սկզբից մինչև վերջ գրված է այս տոնով, այս ոգով: Ատրպետը խոսում է սարերի ու ձորերի, հեղեղի շաշյունների, կատաղի ու փրփրալի հոսանքի, ապառաժների ու ժայռերի և բնության բազմազան երևույթների մասին: Ամեն բան այստեղ կա, բայց չկա երաժշտություն, չկա Կարա-Մուրդա:

Թերթը դրական գնահատական է տալիս 1911—1912 թթ. Բաբվում լույս տեսնող գրական հասարակական և քաղաքական «Նոր խոսք» երկշաբաթաթերթին: Սա մարքսիստական առաջին հայերեն լեզավ ամսագիրն էր: Լույս էր տեսնում Ստ. Շահումյանի խմբագրությամբ: «Այս հանդեսը—«Նոր խոսք», թողնում է լուրջ և լավ տպավորություն: Կարող է նա հետզհետե գուցե ուսաստիճան մտավոր կյանքի մեջ թարմություն մըտցրնելու դերն ունենալ...

«Նոր խոսք» հանդեսը 1911 թվականին երևան եկող պարբերականներից լավագույնն է: Թե՛ կարդալու և խորհրդածելու նյութեր է տալիս և թե՛ մանավանդ—հակառակ մի քանի՛ ոսկու քսակների առաջ գետնաքարը սողոսկող թերթերի—գիտե ձաղկել այն պնակալեզներին, որոնք իրենք-իրենց սըրտացավ «խնամակալներ» են հոչակում հայ աշխատավորի համար, սակայն ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ կաս՝ հարստահարող-

<sup>43</sup> «Աղբյուր», № 4, 1912 թ., էջ 148:

ների գծով սպասավորներ և կամ նոր սկսող կեղեքիչներ...»<sup>44</sup>, գրում է «Ղարաբաղ»-ը:

Թերթը դրվատում է «Մամուլ» շաբաթաթերթի գործունեությունը, որի խմբագիր-հրատարակիչը Ռուբեն Խանազադյանն էր: «Լուրջ, ողջամիտ հայացքներով և համակրելի ուղղութիւններով մի հրատարակություն է դա, որին ամենայն իրավամբ զգվեցրել է մեր մտավոր կյանքի ճահճային մթնոլորտը,— գրում է «Ղարաբաղ»-ը: Նա ղայրույթով նկատում է, որ ռուսահայերի կենսական և կարևոր հարցերը մոռացություն են տրվում մեր մամուլի կողմից, մինչ երկար սյունակներ են նվիրվում՝ կամ խոնկ ծխելու համար ոսկյա հորթի առաջ և կամ իրար հայհոյելու»<sup>45</sup>:

Ի դեպ, այս պարբերականին ակտիվորեն աշխատակցում էր («Սալման» ծածկանվամբ) երգիծաբան Աշոտ Աթանասյանը, մի մարդ, որի ծառայությունները հայ պարբերական մամուլին ակնհայտ են: Նա է հրատարակել «Աշխատանք» (Թիֆլիս, 1906 թ.), «Նոր աշխատանք» (Թիֆլիս, 1907 թ.), «Գլուղատնտես» (Թիֆլիս, 1909—1917 թթ.) և այլ առաջադեմ պարբերականներ:

«Ղարաբաղ»-ը մերկացնում է անունով աշխատավորական, բայց իրականում բուրժուազիայի շահերը պաշտպանող թերթերին: Այդպիսիներից էին 1910 թվականից Նոր-Նախիջևանում հրատարակվող «Լույս» գրական-հասարակական շաբաթաթերթը, 1911 թվականից Մոսկվայում լույս տեսնող «Մարտ» գրական-հասարակական երկշաբաթաթերթը: Քննադատությունը սուր էր հատկապես վերջինիս նկատմամբ: Խարազանելով «Մարտ»-ի խմբագիր-հրատարակիչ Արշակ Թումանյանին, «Ղարաբաղ»-ը ընդգծում է նրա անփառունակ դերը ոչ միայն պարբերական մամուլի, այլև հայ գրականության մեջ: Ա. Թումանյանը վարկաբեկված անձնավորություն էր և չէր կարող պատշաճ հիմքերի վրա դնել «Մարտ»-ը: «Եթե ասեմ,— գրում է «Ղարաբաղ»-ը,— որ նրա («Մարտ»-ի—Ս. Ա.) խմբագիրն է իննսունական թվականներին գրական ասպարեզում «հռչակ» ստացած Արշակ Թումանյանը—ինձ թվում է, որ

ամեն ինչ ասած կլինեմ: Արշակ Թումանյանին ո՞վ չի հիշում՝ սկսած էջմիածնի վարդապետներից, այս ու այն մեծ քաղաքների տերտերներից, մինչև նույնիսկ այս ու այն հարուստը, որոնց դռները լավ դիտեր մաշել այդ «գրագետ» պարոնը»<sup>46</sup>:

Հրատարակչություն մերկացվում էր «Հովիտ»-ը, ազգայնական հովերով ապրող մի շաբաթաթերթ, որ լույս էր տեսնում Թիֆլիսում՝ 1910—1917 թթ.: Թերթը «Հովիտ»-ին քննադատում էր այն բանի համար, որ իր էջերը տրամադրում է բամբասանքներ, հայհոյանքներ, սրա-նրա հասցեին վարկաբեկիչ խոսքեր ուղղելու համար:

Վրթ. Փափազյանը «Մի աղղարաբույություն ինձ հայհոյողներին»<sup>47</sup> նամակի մեջ խարաղանում է «Հովիտ» թերթի տեր ու տնօրեն քահանային և «Մյուրղաշյուր» կեղծանունով հանդես եկող անձնավորությանը, որը չափ ու սահման անցած, պիտակավորում էր հայ անվանի գրողներին՝ Հ. Թումանյանին, Ղ. Աղայանին և այլոց:

Քննադատության էր ենթարկվում նաև 1906 թ. Թիֆլիսում հրատարակվող «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը: Սա այն պարբերականներից էր, որոնք խուսափում են կոնկրետ փաստերով խոսելուց և սովոր են սրա-նրա անունից հայտարարություններ անել:

«Ղարաբաղ»-ը ամեն կերպ ձգտում էր մարդկանց հեռու պահել շարախոսությունից ու խզբզանքից: Այս մասին թերթը հանդես է գալիս մի քանի առիթներով: Կարդում ենք. «Հայ «քննադատը» մոռանում է թե՛ վայելչության սահմանները, թե՛ գրական էտիկան և թե՛ տարրական բարեխղճությունը: Նա տրորում է ամեն ինչ, միայն թե խժբժանքի և հայհոյանքների տարափը քո գլխին տեղա, իսկ ինքը հասնի իր ստոր նպատակներին, բավականություն տալով իր գծով եսին...»

Այդպիսի պայմաններում և անձնական շարժառիթներից բխող քննադատությունն իհարկե արժեք չպիտի ունենա, որովհետև նա ոչ թե ճշմարտություններ կամ «հաստատուն համոզմունքներ» է հայտնադործում, այլ միայն դիտավորու-

<sup>44</sup> Տե՛ս 1911 թ., նոյեմբերի 27-ի համարը:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> «Ղարաբաղ», № 4, 1911 թ., նոյեմբերի 27:

<sup>47</sup> «Ղարաբաղ», № 37, 1912 թ., մայիսի 20:

Յլամբ գցում է հակառակորդին և վարկազուրկ անում նրան: Ինչ արժեք ունեն առատությամբ թափվող լուսանքներն ու հիշոցները, որոնց հեղինակը երեկ ձեզ խոսնկ էր ծխում, շողոքորթում ու քծնում հանուն իր շահերի, իսկ այսօր ձեզ ցեխոտում է՝ կրկին հանուն այդ գծուծ շահերի...»<sup>48</sup>:

«Մամուլ» խորագրի տակ ղետեղված նյութերը պատմում էին ոչ միայն Ռուսաստանի հայաբնակ վայրերում, այլև արտասահմանում լույս տեսնող տպագիր օրգանների մասին և փորձում էին ցույց տալ դրանց քաղաքական ուղղությունը:

Շատ բնորոշ է 1912 թ. մայիսի 10-ի համարում տպագրված ինֆորմացիան: Այստեղ կարդում ենք. «Մի նոր պարբերական: Մի երկշաբաթաթերթ, որ սկսել է լույս տեսնել Թեհրանում «Արշալույս» վերնագրով: Առաջին համարն իսկ թողնում է շատ հաջող տպավորություն և ունի հետաքրքրող հոդվածներ»:

Ավելին, «Ղարաբաղ»-ը տարբեր առիթներով անդրադառնում էր հայերեն պարբերականներում հրապարակվող կարեւոր նյութերին, շեշտում դրանց անհրաժեշտությունը:

Թերթի էջերը սիստեմատիկաբար տրամադրվում էին արտասահմանյան լուրերին: Այս կարգի նյութերը սովորաբար տեղ էին գտնում «Քաղաքական» և «Վերջին լուրեր» բաժիններում:

Ընթերցողները, օրինակ, տեղեկանում էին, թե տվյալ ժամանակաշրջանում ինչ իրադարձություններ են տեղի ունենում Գերմանիայում, Չինաստանում, Իտալիայում, Թուրքիայում, Պարսկաստանում և աշխարհի այլ վայրերում: Հաղորդումների մեջ շեշտը դրվում էր ոչ միայն ազգաբնակչության տխուր վիճակի բնութագրման վրա, այլև լուսաբանվում էր տեղերում աշխատավորական զանգվածների պայքարը խղատության համար:

Հետաքրքիր էին նրա էջերում հրապարակվող զրույցները մասնավորապես գյուղատնտեսական և առողջապահական թեմաներով:

«Ղարաբաղ»-ը կարևոր փաստեր էր ղետեղում «կրատու» բաժնում: Այստեղ տպագրվում էին Շուշիում տեղի ունեցող

<sup>48</sup> «Ղարաբաղ», № 51, 1912 թ., հուլիսի 15:

նորությունների մասին, սիստեմատիկաբար հաղորդագրություններ էին տրվում այն մասին, թե առանձին մարդիկ բարեգործական ինչ աշխատանք են կատարում հայրենի երկրի և ժողովրդի համար: Օրինակ՝ Թերթը արձանագրել է այսպիսի մի փաստ՝ «Հաստատ աղբյուրներից տեղեկանում ենք, որ թեմական դպրանոցի 50-ամյա հոբելյանի առթիվ հայ հայտնի հրապարակախոս-պատմագետ պ. Լեոն ուրախությամբ է հանձնում առել գրելու իր հայրենիքի կրթական այդ հիսնամյա հաստատության պատմությունը»<sup>49</sup>:

Թերթը ուներ «Տեղեկատու», «Հայտարարություններ», «Փոստարկղ» և այլ բաժիններ:

Ինչպես ժամանակի մյուս թերթերը, այնպես էլ «Ղարաբաղ»-ը «Փոստարկղ» խորագրի տակ հայտնում է խմբագրության ստացած հոդվածների և թղթակցությունների տպագրության բախտի մասին:

Ի դեպ «Փոստարկղ»-ից հայտնի է դառնում, որ հայ գաղառական թերթին աշխատակցել են ոչ միայն Ղարաբաղի շրջաններից ու գյուղերից, այլև Բաքվից, Թիֆլիսից, Կիևից, էջմիածնից, Ղափանից և այլ քաղաքներից ու բանվորական շրջաններից:

«Փշոտ է եղել հայ մամուլի ճանապարհը,—ասում է «Ղարաբաղ»-ը,—առավել ևս փշոտ է գավառական մամուլի ուղին: Այն մթնոլորտը, որի մեջ ծնունդ է առնում գավառական այս կամ այն օրգանը, անշուշտ, այնքան էլ նպաստավոր հանգամանքներ չի ներկայացնում մամուլի համար»<sup>50</sup>: Սա վերաբերում է նաև իրեն՝ «Ղարաբաղ» թերթին:

Չնայած դժվարին պայմաններին, թերթը մեծ դեր խաղաց Ղարաբաղի կյանքում: Նա արտահայտում էր աշխատավոր մարդու իղձերն ու ցանկությունները և փորձում էր հլբ գտնել դրանց իրականացման համար: Այս գործում իրենց ավանդը ներդրեցին նրա խմբագիրները:

Թերթի համարները առավել բովանդակալից և գաղափարական բարձր մակարդակով էին լույս տեսնում հատկապես գրող վրթանես Փափաղյանի խմբագիր լինելու ժամանակ: Նա

<sup>49</sup> «Ղարաբաղ», № 34, 1912 թ., մայիսի 10:

<sup>50</sup> «Ղարաբաղ», № 37, 1912 թ., մայիսի 20:

մեծ ուշադրություն էր դարձնում հրատարակվող նյութերի բաղմամբեմայնություն, բաղմամբանություն և լեզվական կուլտուրայի վրա:

Ճիշտ է, թերթում չի եղել Վրթանես Փափազյանի ստորագրությունը, բայց կան անհերքելի փաստեր, որ 1911 և 1912 թթ. որոշ ամիսների «Ղարաբաղ»-ը լույս է տեսել հայ գրողի ղեկավարությամբ: Ահա այդ վկայող երկու փաստ:

Գարեգին Լևոնյանին հղած մի նամակում Վրթանես Փափազյանը գրում է.

«Սիրելի պ. Լևոնյան.

Ձեզանից դեռևս ո՛չ ես եմ ստացել «Գեղարվեստ»-ի 4-րդ գիրքը, ո՛չ էլ «Ղարաբաղ»-ի խմբագրությունը: Եթե ուզում եք, որ ռեկլամ լինի գրքի մասին և տարածվի, ինձ թվում է, որ «Ղարաբաղ»-ին էլ պիտի ուղարկեք:

Այս առիթով խնդրեմ մի՛ կարծեք, որ ես եմ խմբագրում թերթը, ես և թերթը միևնույն ենք...»<sup>51</sup>:

Թեմական դպրոցի տեսուչ, բժիշկ Ն. Երամիշյանը, որի ստորագրությամբ լույս էր տեսնում «Ղարաբաղ» թերթը, նույնպես վկայում է, որ Վրթանես Փափազյանը եղել է թերթի խմբագիրը:

«Մշակ»-ի 1912 թ. հոկտեմբերի 6-ի համարում հրատարակված մի հաղորդագրության մեջ («Ղարաբաղ» թերթի խմբագրի դեմ դատ» վերնագրով) հայտնում է, որ բժ. Երամիշյանը միայն նոմինալ կերպով է եղել խմբագիր-հրատարակիչը, իսկ փաստորեն թերթը խմբագրել է Վրթանես Փափազյանը:

1912 թ. հունիսի 29-ի համարում թերթը մի առիթով հաստատում է, որ «Ղարաբաղ»-ի խմբագիրներից է եղել նաև Սիմոն Տեր-Մինասյանը, մի ձեմարանավարտ երիտասարդ, որ գբաղվել է ուսուցչությամբ և 1910 թ. Գորիսում հրատարակել է «Գավառ» թերթը:

Սակայն «Ղարաբաղ» թերթը ուներ սովորու կողմեր. նշենք, որ նա գրեթե չէր արձագանքում երկրի կարևոր իրադարձություններին, քիչ էր տպագրում տեսական հոդվածներ:

Ճիշտ է «Քաղաքական» խորագրի տակ երբեմն հաղորդվում էին լուրեր Գերմանիայից, Չինաստանից, Իտալիայից, Թուրքիայից, Պարսկաստանից և այլ երկրներից, բայց դրանք ի մեծի մասամբ քաղաքականության հետ ոչ մի կապ չունեին: Օրինակ, 1912 թ. մայիսի 10-ի համարում զետեղված մի հաղորդագրության մեջ գրված է. «Մալթայից հեռագրում են Լոնդոն, որ Տրիպոլիում եղած իտալական զորքի մեջ սաստիկ տիֆ է ընկել և թանչք (դիզենտերիա): Օրական 60 մարդ է մեռնում, վախենում են, որ շոգերի վրա հասնելովը, ավելի ծավալ ստանան համաճարակները»:

Մյուս կողմից թերթը պատշաճ ուշադրություն չէր դարձնում Ղարաբաղի բոլոր գավառների կյանքի լուսաբանման վրա. առանձնապես շատ էր գրվում Շուշիի և մերձակա մի քանի խոշոր գյուղերի առօրյայի մասին: Լրագրային ժանրերը սահմանափակ էին օգտագործվում, գրեթե չէին տպագրվում ֆելիտոններ: Առաջնորդողները քիչ էին տարբերվում թղթակցություններից. հարցերի առաջըաշման փոխարեն իշխում էր պատմելաձևը, նկարագրությունը: Տպագրվող թղթակցություններն ու հաղորդագրությունները շափից ավելի ծավալուն էին և չէին բավարարում լրագրային ժանրերի պահանջները: Շատ համարներում քիչ նյութ էր հաղորդվում ընթերցողներին. երբեմն առաջին էջը գրավում էր միայն առաջնորդողը և երբեմն թղթակցության մի մասը:

Տեքստերի մեջ սակավ էին օգտագործվում ժողովրդական սասցվածքները, թկավոր խոսքերը, առածները, պատկերավոր արտահայտությունները: Աղքատ էր թերթի բառապաշարը, ցածր՝ լեզվական կուլտուրան: Հաճախ էին օգտագործվում բարբառային բառեր, նախադասություններ: Վերնագրերը խոսուն չէին: Տեքստերը կրում էին «Համակրելի գործունեություն», «Դպրոցական աչքակապություններից», «Շուշվա ծխական դպրոցները» և նման վերնագրեր, որոնք կոնկրետ կերպով չէին արտահայտում նյութերի բովանդակությունը:

Անսխտեմ էր թերթի համարների ձևավորումը: Նյութերի մակետավորումը կատարվում էր միօրինակ, երբեմն աննպատակ, առանց քաղաքական, գաղափարական բովանդակու-

<sup>51</sup> «Բանբեր Հայաստանի արխիվներ», № 3, 1964 թ., էջ 35:

թյունը հաշվի առնելու (չենք խոսում նկարների մասին, որոնք տպագրվում էին ստեպ-ստեպ): Տառատեսակները սահմանափակ էին և շարված նյութերը միշտ ունենում էին միևնույն չափը: Նույնիսկ առաջնորդողների և ծավալուն նյութերի վերնագրերը շարում էին այնպիսի տառատեսակներով, որոնք գրեթե չէին տարբերվում տեքստերի տառատեսակներից. ընթերցողները դժվարությամբ էին զանազանում մի նյութը մյուսից:

Էջերում նյութերը տեղադրվում էին խառը. վերջագարդերը և գծերը դրվում էին աննպատակ. երբեմն նյութը վերջանալուց հետո օգտագործում էին գիծ, երբ դրա կարիքը չկար. ըստ երևույթին դա արվում էր բաց մնացած տեղը ծածկելու համար:

Պատշաճ չէին ձևավորվում էջերի ներքնամասերը (подвалы): Նկատելի էին շօգտագործված բացատները: «Փոստարկը»-ի տակ զետեղվող հաղորդումները՝ թղթակիցների նյութերը չտպագրելու մասին, պարզ չէին հայտնում, թե ինչու համար է հեղինակի հոգվածը կամ թղթակցությունը մերժվել խմբագրության կողմից:

Մի խոսքով ցածր էր «Ղարաբաղ» թերթի խմբագրության ժողովրդական կուլտուրան, բացակայում էր նյութը մատչելի, պատշաճ միջոցներով ընթերցողներին հասցնելու գրելաձևը:

\* \* \*

Մեկըն Բաբաջանյանի և Բագրատ Տեր-Սահակյանի տպարանները հիմնականում ծառայում էին թերթերի տպագրության համար: Բայց սա չի նշանակում, թե այդ տարիներին Շուշիում լույս չէին տեսնում գրքեր և գրքույկներ:

Ահա մի քանիսը Գր. Տեր-Պողոսյան, «Լեռնականք, Ա. Փորձ կովկասյան ժողովուրդների համեմատական ազգագրության», Շուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1910 թ., Գր. Տեր-Պողոսյան, «Լեռնականք, Բ, Փորձ կովկասյան ժողովուրդների համեմատական ազգագրության», Շուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1912 թ., Գր. Տեր-Պողոսյան, «Հովոցի Եղոն», պատմվածք Բալխանու կյանքից, հիշատակարանի փոխարեն, Շուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1911 թ.,

Վ. Փափագյան, «Զրույցներ», Շուշի (Բ. Տեր-Սահակյանի տպարան), 1911 թ., Գր. Ներսիսյան, «Նորտակված հույսեր», Շուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1912 թ. և այլն:

Գրքերի և գրքույկների հրատարակությունը ինքնանպատակ չէր. գեղարվեստական գործերում մի կողմից նկարազրվում էր ռեակցիայի տարիների դաժանությունը, ցույց էր արվում մարդկանց անկումային տրամագրությունը, մյուս կողմից՝ առկայծում էր հավատը գալիքի նկատմամբ: Գիտական աշխատությունները հիմնականում նվիրված էին ազգագրությանը:

Առանձին գրախոսություններում և անոտացիաներում փորձ էր արվում երևան հանելու Շուշիում հրատարակված գրքերի լուսավոր ու սովորու կողմերը:

Գր. Տեր-Պողոսյանի «Լեռնականք»-ի առաջին գրքի մասին «Հանդես ամսօրյա»-ն<sup>52</sup> գրում է. «Կովկասեան լեռնաբնակ ժողովրդեան համեմատական ազգագրութեան ուսումնասիրութեանց Ա. պրակն է, զօր մեզի կը ներկայացընէ Գր. Տեր-Պողոսեան՝ իբրեւ նախապատրաստողական փորձ մը նոյն ազգաց իսկական ազգագրութեան: Առաջին պրակէն կը տեսնուի գործնականապէս թէ հայ ազգագրութեան համար որչափ կարեւոր է շրջակայ՝ կովկասեան ազգաց բարոյից եւ սովորութեանց ուսումնասիրութիւնը»<sup>53</sup>:

Նույն հեղինակի «Լեվոն Շանթի «Հին աստվածները» և Ստեփանոս Վանականի հիշատակարանը» աշխատության մասին գրախոսականով հանդես է գալիս «Նոր հոսանք»<sup>54</sup> ամսագիրը: Այնտեղ գրված է. «Այս գրքույկը կազմված է երկու մասից. «Հառաջաբան» (էջ 1—40) և «Հիշատակարանը» (էջ 41—60), որ տպագրվում է երկրորդ անգամ, ութ ձեռագրերի համեմատությամբ: Նոր հրատարակությանը կցված է տասը ծանոթություն... Հեղինակը փորձում է տալ Մաշտոցի կենսա-

<sup>52</sup> Բարոյական, ուսումնական և արվեստագիտական հանդես, հրատարակում են Վիեննայի Մխիթարյան միաբանները (լույս է տեսնում 1888 թվականից):

<sup>53</sup> Տե՛ս հանդեսի 1911 թ. 2-րդ համարի 120-րդ էջը:

<sup>54</sup> Գրական, գիտական, հասարակական և քաղաքական այդ ամսագիրը լույս է տեսել Թիֆլիսում, 1913—1915 թթ.:

գրությունը, հենվելով հիշատակարանի և հետագա պատմիչների վրա, բայց իր աղբյուրներից օգտվելիս նա հնարում է իրողություններ, որոնք և հերքվում կամ չեն արդարանում եղած տեղեկություններով»<sup>55</sup>:

Գրախոսը համոզում է ընթերցողներին, որ Գր. Տեր-Պողոսյանը Մեսրոպ Մաշտոցին ներկայացնելիս տեղ-տեղ շափաղանցությունների մեջ է ընկնում, վերանում է իրականությունից, բերելով անհիմն փաստեր առանձին անձնավորությունների պատմածներից:

Տարբեր գրախոսականներով և՛ «Նոր հոսանք»-ը, և՛ «Հանդես ամսօրյա»-ն ու մյուս պարբերականները հեղինակների ուշադրությունը բեռում են այն բանի վրա, որ պետք է հրապարակ հանել զաղափարական բարձր մակարդակով աշխատություններ, գիտական պրպտումները կատարել բարեխղճույթյամբ, փութաջանորեն, կարողանալով հավաքած նյութը շարադրել խելամտորեն, ներքին կուռ կառուցվածքով:

1910-ական թվականների պարբերական մամուլը առաջ է քաշում նաև գիրքը արտաքին հաճելի տեսքով տպագրելու հարցը: Այսպես, «Հանդես ամսօրյա»-ն, խոսելով Գր. Տեր-Պողոսյանի «Հովոցի Եղօն» պատմվածքի մասին, ընդգծում է, որ Մ. Բաբաջանյանի տպարանի աշխատողները չեն պահպանում գրքի տպագրության տարրական կանոնները:

Մամուլը նշում է նաև միօրինակ տառերի գործածության սխալ պրակտիկան:

### ՌՈՒՍԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1911—1914 թթ. Ղարաբաղում լույս են տեսնում ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն տպագիր օրգաններ, որոնք այս կամ այն չափով նպաստում են ժողովրդի առաջադիմության, հոգևոր կյանքի զարգացման, լուսավորության տարածման գործին:

Առաջին ռուսերեն թերթը «Շուշինսկի լիստոկ»-ն էր (խրմբազիր-հրատարակիչ՝ Շամիլ Ա. Մելիք-Ղարազյոզով)<sup>1</sup>, որի առաջին համարը լույս տեսավ 1911 թ. հունիսի 9-ին<sup>2</sup>: Այն բաղկացած էր չորս փոքրածավալ էջերից (յուրաքանչյուր էջը չորս սյունակով) և տպագրվում էր Մ. Բաբաջանյանի տպարանում:

Թերթը լույս էր տեսնում շաբաթը երկու-չորս անգամ: Առաջին 18 համարներում թերթի ճակատի մոտ գրվում էր՝ «Ս. Պետերբուրգի հեռագրական գործակալության հեռագրերով»: Այս նշանակում էր, որ «Շուշինսկի լիստոկ»-ը լայնորեն հրապարակում էր Պետերբուրգից տրվող հեռագրերը:

Սա էլ Կովկասի մյուս պարբերականների պես խմբագրական հոգվածը գրեթե միշտ վերնագրում էր թերթի լույս ընծայման տեղի անվամբ և ամսաթվով:

«Շուշի, հունիսի 9-ին» վերնագրով անդրանիկ խմբագրականում («Շ. Մ—Կ» ստորագրությամբ) թերթը հայտնում է, որ այն լույս է ընծայվում ամենադժվարին պայմաններում, երբ բացակայում են կարող ուժերը, անմխիթար վիճակում է տպագրական գործը, շատ քիչ են գրաշարները և այլն: Իրոք, Շուշիում ծանր էր ոչ միայն անտեսական, այլև հոգևոր կյանքը: Առավել դժվար էր դարձել կուլտուրական որևէ ձեռնարկում կատարելը գավառում:

«Շուշինսկի լիստոկ»-ի երևան գալը ինքնին վկայում էր, որ հեղափոխական վերելքի հետ միասին հարություն էր առնում մշակութային կյանքը, ստեղծվում էին տպագիր օրգաններ, ուժեղանում էր աշխատավորության շրջանում կատարվող զաղափարական աշխատանքը:

Թերթի երևան գալը միաժամանակ նշանակում էր, որ գավառում մտավորականութունը աշխատում էր պահել հասա-

<sup>1</sup> Տարիներ շարունակ նա աշխատակցել է «Новое обозрение» թերթին, ծառայել է փոխադարձ վարկի ընկերության Շուշի բաժանմունքում: Մամուլում նա հանդես էր գալիս ոչ միայն «Շ. Ա. Մելիք-Ղարազյոզով», այլև «Շ. Մ—Կ» ստորագրությամբ:

<sup>2</sup> Այն պետք է լույս տեսներ 1910 թ. հուլիսի 1-ից (վկայում է «Մըշակ»-ի 1910 թ. օգոստոսի 1-ին տպագրած «Լրագրական հարցը Շուշիում» վերնագրով նամակը):

<sup>55</sup> Տե՛ս ամսագրի 1913 թ. 2-րդ համարի 432-րդ էջը:

րակական մտքի գործունեությունը, մտահոգված էր ժողովրդի հոգսերով:

«Շուշինսկի լիստոկ»-ի լուսաբանած հարցերը բազմազան էին: Մի քանի հիմնական խորագրերի («Մեր թղթակիցները», «Ռուսաստանում», «Տեղական խրոնիկա», «Քատրոն և արվեստ», «Վերջին փոստ» և այլն) տակ զետեղված նյութերում արտացոլվում էր ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան կյանքը, իր ընթերցողներին էր հասցնում առանձին նորություններ, պատմում տարբեր երկրներում կատարվող իրադարձությունների մասին: Սակայն ընդհանուր առմամբ, թերթի տեսադաշտը Անդրկովկասի առօրյան էր, նրա տնտեսական և մշակութային կյանքը:

«Տեղական խրոնիկա»-ի տակ թերթը հաճախակի հաղորդագրություններ էր զետեղում Քիֆլիսից, Քաբլից, Ելիզավետպոլից և այլ նահանգներից, թղթակցություններ տպագրում աշխատավորների կարիքների և հոգսերի մասին: Զգալի տեղ էր հատկացվում մշակույթի, գրականության, դպրոցական հարցերին նվիրված նյութերին:

Տարբեր առիթներով «Քատրոն և արվեստ» խորագիրը երևում էր թերթի 3-րդ էջում: Տպագրվող նյութերը պատմում էին գավառում տեղի ունեցող համերգների, երեկույթների, դերասանական խմբերի ելույթների մասին: Հունիսի 19-ի համարում ծանուցվում էր, որ Շուշիում կկայանա Ս. Դեմուրյանի և ուրիշների զեղարվեստական երեկոն:

Առանձին հոգվածներ են տպագրվում հայ գրողների մասին: Հունիսի 23-ի համարում հրատարակած հոգվածում հեղինակը շատ բարձր է գնահատում Ղազարոս Աղայանի դերը մայրենի գրականության զարգացման գործում<sup>3</sup>: Ընդգծվում է նաև նրա հասարակական գործունեությունը և՛ որպես մանկավարժ, դաստիարակ, և՛ որպես մանուկների բարեկամ: Հոգվածում կարդում ենք. «Աղայանը կապրի, քանի դեռ գոյություն ունի հայկական դպրոցը, քանի մայրենի լեզուն հնչում է հայ դպրոցականի շուրթերից»:

«Շուշինսկի լիստոկ»-ը պարբերաբար տալիս էր «Մուսուլ-

<sup>3</sup> Թերթը Ղազարոս Աղայանին անդրադառնում է նաև 1911 թ. հուլիսի 3-ի համարում:

մանների կյանքից» բաժինը: Ինֆորմացիաների, թղթակցությունների և նամակների միջոցով մանրամասնություններ էին հաղորդվում աղբրեջանցիների տնտեսական թշվառ դրության, կենցաղային վատ պայմանների ու ճնշվածության մասին:

Այստեղ հրատարակվում էին նաև կուլտուրական կյանքի նորություններ: Օգոստոսի 14-ի համարում լույս տեսած թղթակցության («Շուշիի ուսուցիչական դպրոցի եռամսյա ուսուցման արդյունքների մասին») մեջ դրվում է այն հարցը, որ Շուշիում պետք է բարելավել ոչ միայն հայկական, ուսակական, այլև աղբրեջանական դպրոցների դրվածքը, ուշադրություն դարձնել երեխաների կրթական և դաստիարակչական գործի վրա, հոգ տանել նրանց առաջադիմության մասին:

Թերթում առանձին նյութեր են տպագրվում Ղարաբաղի բնակավայրերի, մասնավորապես Խանքենդիի աշխարհագրական դիրքի, բնակչության կազմի, զբաղմունքի մասին, ընթերցողներին ծանոթացնում հայրենի երկրի պատմական անցյալի որոշ դրվագների հետ:

Ուշագրավ էր նաև այն, որ «Արտասահմանում» խորագրի տակ երբեմն տրվում էին հաղորդումներ հայերի կյանքից: «Հայերը Հնդկաստանում» վերնագրով ինֆորմացիայում պատմվում է Կալկաթայում գործող հայկական կոլեջի մասին, այն մասին, որ ընթացիկ տարում՝ 1911 թվականին այնտեղ կընդունվեն 60 աշակերտ:

Թերթը ընթերցողներին տեղյակ է պահում արտասահմանում լույս տեսնող պարբերականների, նրանց տպագրած նյութերի բովանդակության և քաղաքական ուղղության մասին:

«Շուշինսկի լիստոկ»-ի էջերում լույս են տեսնում նաև «Բժշկի զրույցներ», նյութեր ֆիզիկոսուրայի և մարդու զեղազիտական դաստիարակության մասին:

Նրա վերջին համարը՝ լույս է տեսել 1911 թ. հոկտեմբերի 23-ին:

Ճիշտ է, թերթը որոշ աշխատանք էր կատարում՝ լուսաբանում էր տեղական և արտասահմանյան կյանքը, բայց նա

<sup>4</sup> «Շուշինսկի լիստոկ»-ի 37 համարները պահպանվում են Մոսկվայի վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանում:

զրեթե շէր տպագրում քաղաքական սուր բնույթի հոդվածներ և թղթակցություններ, շէր բացահայտում տնտեսական և կուլտուրական կյանքի հետամնացութեան հիմնական պատճառները, շէր քննադատում շահագործողներին, ինչպես հարկն է շէր դնում առաջադիմական գաղափարների պրոպագանդան հարցը. ինչպես վերացնել անմխիթար վիճակը, ինչ միջոցներով պայքարել հետամնացութեան, քայքայվածութեան դեմ, ինչ անել լուսավորութեան տարածման համար: Այլ կերպ ասած, «Շուշինսկի լիստոկ»-ը արժեքավոր է սոսկ իբրև գավառի կյանքը նկարագրող մի օրգան:

Նշենք նաև, որ թերթի շուրջը համախմբված չէին շատ թղթակիցներ: Նյութերի զգալի մասը պաշտոնական էր, հաճախ միայն հրապարակվում էին կենտրոնից ստացվող հեռագրերը:

Խոսելով լրագրային ժանրերի, հրապարակախոսական-ժուռնալիստական որոշ ձևերի օգտագործման մասին, պետք է շեշտել, որ «Շուշինսկի լիստոկ»-ի նյութերը միանման էին, ոճը ճապաղ էր, թղթակցությունները թողնում էին գրասենյակային ձևով կազմված արձանագրությունների տպավորություն: Լրագրային ժանրերից զրեթե միշտ օգտագործվում էին թղթակցությունն ու ինֆորմացիան:

Գավառի հիմնական թերթերից մեկը «Շուշինսկայա ժիզն»-ն էր, որի առաջին համարը լույս է տեսնում 1913 թ. հունիսի 21-ին: Մյուս թերթերի համեմատությամբ «Շուշինսկայա ժիզն»-ը հրատարակվում էր կանոնավոր, ուներ հաստատուն օրեր (հինգշաբթի, ուրբաթ և կիրակի):

Թերթի առաջին խմբագրականը վերնագրվում է՝ «Շուշի, 21-ը հունիսի»: Սա իր անկեղծ խոսքն է ուղղում ընթերցողներին, գտնելով, որ թերթի հրատարակությունը, իրոք, օրվա պահանջն է դարձել և ձգտելու է հետաքրքիր ձևով լուսաբանելու աշխատավորների կյանքը:

«Շուշինսկայա ժիզն»-ը գրում է նաև, որ խմբագրության բոլոր ջանքերը ուղղված կլինեն երկրում կատարվող նոր իրադարձությունների, երևույթների հաղորդմանը, պարզ, մատչելի լեզվով ընթերցողներին հասցնելու օրվա հուզող հարցերը:

Նա կոչ է անում երկրամասի մտավորականներին համատեղ և բարեկամական պայմաններում աշխատակցելու թերթին, գրելու ոչ միայն տնտեսական, այլև հոգևոր կյանքի հետաքրքիր փաստերի մասին:

Առաջին իսկ համարներից «Շուշինսկայա ժիզն»-ը իր տարբեր բնույթի և լրագրային տարբեր ժանրերով գրված նյութերով ձգտում էր լայնորեն լուսաբանել տեղական և արտասահմանյան կյանքը, օգտակար խորհուրդներ տալ ընթերցողներին, բարեկամական լեզվով խոսել նրանց հետ:

Նրա էջերում աչքի են դարձնում «Վերջին փոստ», «Արտասահմանում», «Տեղական խորհիկա», «Նահանգում», «Ռուսաստանում», «Քաղաքային դումա», «Ֆինանսներ», «Առևտուր և արդյունաբերություն», «Թղթակցություններ», «Մեր թղթակիցները», «Հայկական կյանք», «Մուսուլմանական կյանք», «Դատարան և կյանք», «Ֆելիետոն», «Նամակ խմբագրությանը» և այլ խորագրեր:

Իրոք, «Շուշինսկայա ժիզն»-ի տեսադաշտը լայն էր: Նրան հետաքրքրում էին կյանքի բազմազան կողմերը: Նա նույնիսկ հրապարակում էր Ռուսաստանում նավթային արդյունաբերության վիճակի, Սիբիրի հարստությունների, Մոսկվայում աշխատանքային բորսայի, ոսկու համաշխարհային հանույթի, Փարիզի բնակարանային կարիքի, Գերմանիայում աշխատավորական հարկերի մեծացման, Բալկաններում պատերազմական գործողությունների ծավալման և այլ հարցերի մասին հարուստ նյութեր:

Կարևոր հարցերից մեկը ժողովրդասիրության պրոպագանդան էր: Մի շարք նյութերում շեշտվում է, որ ռուսների և հայերի բարեկամությունը գալիս է դարերից, և որ միշտ էլ ռուսները լավ են տրամադրված եղել հայերի նկատմամբ: Մեծ ժողովրդի օգնությունը զգացվել է ոչ միայն հոգևոր կյանքում, այլև ռազմական ասպարեզում: «Ռուսական հասարակությունը և հայկական հարցը» վերնագրով հոդվածը կարդալով համոզվում ենք, որ թերթը ձգտում էր ամուր հիմքերի վրա դնել ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը:

Խոսելով Արևմտյան Հայաստանում հայերի ծանր կացու-

**ШУШИНСКАЯ ЖИЗНЬ**

Высшее издание 30 июня 1913 г. № 24  
 Цена 6 к.  
 1913

**Шушинская Жизнь**

**РОССИЯ**

Издательство Сербявичъ-Лазаревича

**Сибирь Григорьевъ**

**А. Б. БАЛАЯНЪ**

**САГИЯНЪ**

**КОСТАВНАЯ ПОЧТА**

թյան մասին, նա ոչ միայն ներկայացնում է հայկական հարցի շուրջ բորբոքված կրքերի առանձին պատճառները, այլև անուղղակի կերպով ցույց է տալիս Արևելյան Հայաստանի համեմատաբար բարվոք վիճակը: Բայց, ցավոք, նշում է «Շուշինսկայա ժիզն»-ը, դեռևս կան մարդիկ, որոնք կասկածի տակ են առնում հայերի հավատարմությունը Ռուսաստանի նկատմամբ: Հայերը, շեշտում է ռուսերեն թերթը, միշտ էլ աչքի են ընկել մարդասիրությամբ և ժողովրդասիրությամբ:

Թերթի ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, մնում էր Շուշին, նրա առօրյան: Առանձին թղթակցություններում, հաղորդագրություններում և նամակներում կողմնակիորեն շոշափվում էին բանվորների վատ վիճակի և նրանց կողմից կազմակերպվող առանձին գործադուլների մասին: Բնորոշ է թերթի 1913 թ. օգոստոսի 30-ի համարում ղետեղված հաղորդումը, որտեղից ընթերցողը տեղեկանում է, որ Թիֆլիսի տրամվայի աշխատողները մի շարք պահանջներ են ներկայացրել իրենց տերերին՝ աշխատանքի պայմանները բարելավելու համար: Եվ երբ չեն կատարվել այդ պահանջները, Թիֆլիսցիները կանգնեցրել են վագոնների շարժումը, գործադուլ են հայտարարել:

Թերթը հայտնում է իր համակրանքը գործադուլավորների նկատմամբ:

«Շուշինսկայա ժիզն»-ին հուզում էր նաև աշխատավորների կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման հարցը:

Չթաքցնելով իր դժգոհությունը ստեղծված քառասյին վիճակի նկատմամբ, թերթը նշում է, որ գավառի տխուր վիճակը միաժամանակ բացատրվում է ազգաբնակչության հետամնացությամբ, անգրագիտությամբ, նահապետական անցյալով: Պատահական չէր, որ թերթը մեծ տեղ էր հատկացնում դրսևրոցական գործի կարգավորմանը, կրթական օջախների ստեղծմանը, մանուկների, պատանիների և աղքիկների դաստիարակությանը: Մի շարք նյութերում խմբագրությունը ուղղակի անհանգստություն էր ցուցաբերում երեխաների կրթության հարցում: Եղած մեկ-երկու դպրոցներում էլ, ցավով նշում է թերթը, ոչ թե գիտելիքներ են տալիս երեխաներին, այլ մեռյցնում են նրանց սերը դեպի գիտությունը, արվեստը, գրա-

կանությունը, կորցնում շատ բան իմանալու նրանց ցանկությունը:

Շուշիում կանանց գիմնազիայի բացման առթիվ գրված ֆելիետոնում թերթը իր ընթերցողների ուշադրությունը հրավիրում է կրթությունը ընտանեկան դաստիարակությունից չկտրելու, դպրոցի և ընտանիքի կապը ամուր պահելու, երեխաների կրթության և դաստիարակության գործում ոչ միայն ուսուցիչների, այլև ծնողների պատասխանատու լինելու հարցերի վրա:

Դպրոցական յուրաքանչյուր լավ նորություն թերթը հաղորդում էր առանձին բավականությամբ: «Մուսուլմանական կյանք» խորագրի տակ հաղորդագրություն մեջ տպագիր օրգանը հայտնում է, օրինակ, որ Նուխիում բացվել է ադրբեջանական ուսումնարան: Մի այլ հաղորդման մեջ ընթերցողը տեղեկանում է Կաղանում գործող ուսուցչական սեմինարիայի մասին, որը շրջանավարտներ է տալիս ադրբեջանական դրուրոցներին:

Թերթը առանձին նյութեր է նվիրում Շուշիում գործող դրուրոցների հոբելյաններին, շեշտելով հատկապես այն անձնավորությունների դերը, որոնք մեծ գործ են կատարել մատաչ սերնդի դաստիարակության և, ընդհանրապես, մանկավարժության բնագավառում:

Դաստիարակության մասին թերթը գրում է նաև «Աշխատավորների նամակներ»-ի տակ: Առանձին քաղաքացիներ իրենց նամակներում դատապարտում են անազնիվ, խարդավանքների սիրահար, խղճից ու պատասխանատվության զգացումից զուրկ մարդկանց:

Կարևոր համարելով աշխատավորների գեղարվեստական ճաշակի բարձրացումը, նրանց բազմակողմանի զարգացումը և, ընդհանրապես, հայրենի քաղաքում մշակութային կյանքի զարթոնքը, թերթը 10-րդ համարից սկսած բացում է «Թատրոն և արվեստ» բաժինը: Զետեղված նյութերը պարունակող փաստերի և մատուցման տեսակետից հետաքրքիր են: Ընթերցողները տեղեկանում են առանձին հաջողված բեմադրությունների, երեկույթների ու համերգների մասին: 1913 թ. հուլիսի 12-ի համարում տպագրված մի հաղորդագրության մեջ

հայտնվում է, որ հուլիսի 4-ին տեղական հասարակության ժողովի ամառային շենքում ադրբեջանական դրամատիկական արվեստի սիրողները վաստակավոր դերասան Գրիգոր Ավետյանի մասնակցությամբ ներկայացրել են Ա. Ախվերդովի հայտնի ողբերգությունը, ուր մերկացված է Իրանի միապետ Աղա՝ Մուհամեդ խան Կաջարը:

Թերթը համառոտակի պատմում է դրամայի բովանդակությունը, գովում դերասաններին:

Առանձին հոդվածներ արժեքավորում են հայ, ուսև և ադրբեջանցի գրողների վաստակը: Ուշագրավ է 1913 թվականի նոյեմբերի 10-ի համարում «Լ. Ն. Տոլստոյի հիշատակին» հոդվածը, որտեղ թերթը բարձր է գնահատում ուսև մեծ գրողի խոսքը, արվեստը:

Ավելի հետաքրքիր փաստ է հաղորդում թերթը նույն թվականի դեկտեմբերի 22-ի համարում: «Լ. Ն. Տոլստոյի ձեռագրերը» վերնագրի տակ ազդարարվում է, որ 1906 թ. Ա. Ա. Տոլստոյան պատմական թանգարանի պահպանության է տվել և Տոլստոյի մի քանի արկղ ձեռագրերը:

«Շուշինսկայա ժիղն»-ը առանձին համարներում թարգմանաբար հրատարակում է հայ հեղինակների ստեղծագործությունները:

Տարբեր բնույթի էին հրատարակվող ֆելիետոնները. խառաղանվում էին կյանքի արատավոր կողմերը՝ հետամնացությունը, կաշառակերությունը, անբարոյականությունը, երկերեսանիությունը, ստորաքարշությունը:

«Ֆելիետոն» անվան տակ հրատարակվում են ոչ միայն բացասական բնույթի փաստեր, այլև ժողովրդական հեքիաթներ, պատմվածքներ, ակնարկներ, բանաստեղծություններ:

«Շուշինսկայա ժիղն»-ը նյութեր էր տպագրում նաև տեղացիների առողջասպահության, քաղաքի փոստային-հեռագրական գործը կարգավորելու, ինչպես նաև առանձին բարեգործական ընկերությունների գործունեության մասին: Թերթը երբեմն անդրադառնում էր հարևան շրջանների առօրյային: Առանձին նյութեր էին տպագրվում Աղզամից:

«Դատարանի դահլիճից» և այլ կարգի հաղորդումների մեջ

պայքարի սուր սլաքը ուղղվում էր խարդախությամբ ու ավա-  
զակությամբ զբաղվող անձնավորությունների դեմ:

Ութերորդ համարից թերթում բացվում է «Տեղեկատու»  
բաժինը: Նրա վերջին համարը լույս է տեսնում 1914 թ. դեկ-  
տեմբերի 21-ին:

«Շուշինսկայա ժիզն»-ը պայքար ծավալեց զավառի հետա-  
մնացության դեմ, ձգտեց տպագիր խոսքով նպաստել լուսա-  
վորության տարածմանը, օգնել աշխատավորներին՝ դուրս  
գալու դարավոր խավարից: Այս գործում, ինչ խոսք, վճռական  
դեր խաղաց խմբագիր Ստեփան Մանդինյանը<sup>5</sup>: Նրա ուշադրու-  
թյան կենտրոնում էր թերթի էջերում առօրեական հարցերի  
լուսաբանումը: Դա հաճախ արվում էր ինքնատիպ և հետա-  
քրքիր ձևերով: Գործին մեծապես նպաստում էր լրագրային  
ժանրերի օգտագործումը: Տպագրվում էին ոչ միայն հոդված-  
ներ, թղթակցություններ, հաղորդագրություններ, այլև նա-  
մակներ, ֆելիետոններ, գրախոսություններ, մամուլի տեսու-  
թյուն:

Թերթի տեսադաշտի ընդարձակմանը և լեզվական կուլտու-  
րայի բարձրացմանը օգնում էին նրա շուրջը համախմբված  
թղթակիցները, որոնք կապված էին առօրյայի հետ, խորապես  
գիտեին հայրենի երկրի նիստն ու կացը, աշխատավորների  
հոգսերն ու տրամադրությունները:

Առաջին համաշխարհային պատերազմում Ռուսաստանը  
սուներ իր զավթողական պլանները: Նա ձգտում էր գրավել իր  
մրցակիցներից ազատ մնացած նոր շուկաներ:

Ճիշտ է, «Շուշինսկայա ժիզն»-ը տպագրում էր հաղորդա-  
գրություններ ռազմաճակատից, բացահայտում էր ընդհան-  
րապես պատերազմի աղետաբերությունը և վնասակարությունը:

<sup>5</sup> Նա մասնագիտությամբ իրավաբան էր և մեծ հեղինակություն էր վա-  
րձնում Շուշի քաղաքի մտավորականների շրջանում: Համաշխարհային պա-  
տերազմի տարիներին նա Շուշիի թեմական դպրոցում ավանդում էր ուս-  
սաց լեզու: Իր գաղափարներով առաջադեմ մտավորական էր. սիրում էր  
լրագրային գործը և մի շարք պարբերականներում (մասնավորապես «Փայ-  
լակ»-ում) մեծածավալ հոդվածներով հանդես էր գալիս կոոպերացիայի, ա-  
ռևտրի հարցերի շուրջը:

Սովետական տարիներին աշխատում էր Հայաստանում:

նր, բայց լուր էր ընթացիկ պատերազմի համաշխարհային  
բնույթի ու նրա զավթողական էություն մասին: Ընդհակառա-  
կը, տեղ-տեղ փորձում էր հավատացնել ընթերցողներին, թե  
այն մղվում է հանուն ժողովրդի, հանուն հայրենիքի: Ավելի  
շեշտված են հնչում պատերազմը հաղթանակով ավարտելու  
կոչերը:

«Շուշինսկայա ժիզն»-ը իր էջերում չհրապարակեց բոլ-  
շևիկյան կոչերը պատերազմի դեմ՝ «իմպերիալիստական պա-  
տերազմը քաղաքացիական պատերազմի, սեփական կառա-  
վարության, սեփական բուրժուազիայի և կալվածատերերի  
դեմ պատերազմի վերածելու համար»<sup>6</sup>: Զհրապարակեց նաև  
տեսական այնպիսի հոդվածներ, որտեղ պարզաբանվեին պա-  
տերազմների բնույթը, ծագման պատճառները, իմպերիա-  
լիստների քաղաքականության էությունը և այլն:

Թերթը հեռու էր մնում պատերազմի հետևանքով Պարա-  
բաղի աշխատավորության տնտեսական ծայրահեղ վատ վի-  
ճակի մասին խոսք բաց անելուց: Գյուղական տնտեսություն-  
ները գրեթե լիովին զրկվել էին աշխատող ձեռքից: «Շուշին-  
սկայա ժիզն»-ը իհարկե գիտեր, որ «Շուշիի զավառի 19 հայ-  
կական և ադրբեջանական գյուղերի տղամարդկանց ճնշող մե-  
ծամասնությունը մորելիզացված էր. միայն մինչև 13 տոկոս  
աշխատունակ տղամարդիկ էին մնացել տնտեսության մեջ»<sup>7</sup>:

Աներևակայելի չափերի էր հասել մթերքների գինը. Շուշիի  
շուկայում հաց գրեթե չէր երևում, իսկ փոխ առջև վիթխարի  
հերթեր էին գոյանում:

Առաջնորդող և խմբագրական հոդվածներում թերթը փոր-  
ձում էր բացահայտել մամուլի խնդիրները դժվարին պահերին:  
Նա գրում էր, որ մամուլը սուրբ պարտականություն ունի քր-  
տահայտելու աշխատավորության ցանկությունները, «կոչ ա-  
նելու բոլոր հասարակական ուժերին միավորվելու՝ զարգացող  
աղքատության դեմ պայքարելու համար»: Բայց խոսքը գործ  
չէր դառնում: Նա չեղոք դիրք էր գրավում զավառի տխուր վի-  
ճակը ներկայացնելիս, կսկիծ էր հայտնում այս կամ այն

<sup>6</sup> «Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմություն»,  
Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 214:

<sup>7</sup> «История Азербайджана», Աղբր. ՍՍՀ Գ. Ա, Բարու, 1960, էջ 760:

փաստի մասին, բայց լռում էր մասսաների գաղափարական պայքարի, ցարական կառավարության դաժան քաղաքականության և վայրագ օրենքների մասին:

Թերթի տեսադաշտից դուրս էին հակաժողովրդական կուսակցությունների խարաղանումը, մարքսիստական գաղափարների լայն պրոպագանդումը, ազգային հարցի լուծման համար պայքարի ծավալումը և այլն:

Այսպիսով, Ղարաբաղի ուսական պարբերականները, ժընվելով հեղափոխության վերելքի ժամանակաշրջանում, լուսաբանելով զավառի տխուր կացությունը, օգտակար նյութեր տպագրելով տնտեսական և հոգևոր կյանքի տարբեր բնագավառներից, չհասան այն մակարդակին, որ պայքարի ձիշտ ուղիներ նշեին:

#### ԱՀԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆԼԵԳԱԼ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Դեռևս անցյալ դարի վերջերից Շուշիի պատանիների շրջանում շոշափելի էին առաջադիմական խմորումները: Նըրանց զգալի մասը տարված էր հայրենիքի ազատագրման գաղափարներով: «Այդ տրամադրությունների ծավալմանը յուրովի զարկ էին տալիս ժամանակի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը», գրում է պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը «Հուշեր անցյալից»<sup>1</sup> հոդվածում:

Կապիտալիզմի զարգացումը ավելի է «սաստկացնում մանր արտադրողների և, առաջին հերթին, գյուղացիության շերտավորումը»<sup>2</sup>, նոր թափ հաղորդում առաջադիմական շարժումներին:

Հեղափոխական շարժումը հետզհետե իր ոլորտի մեջ է առնում աշխատավորական ամենալայն խավերի: Ղարաբաղը, թեև ցարական Ռուսաստանի ծայրագույն գավառն էր, բայց

<sup>1</sup> «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 1966 թ., էջ 67:

<sup>2</sup> Նույն տեղում:

այստեղ էլ շատ շուտ է սկսվում պայքարը ցարական ինքնակալության դեմ:

Ղարաբաղի ուսուցիչներից շատերը, որոնք սերտ կապերի մեջ էին Բողզան Կնունյանցի և առանձին հեղափոխական գործիչների հետ, քաղաքական հանձնարարություններ էին կատարում: Հայտնի է, օրինակ, որ Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում 1891 թ. նշվել է աշխատավորների միջադրային համերաշխության օրը: Հատկապես մեծ ախտիվություն են հանդես բերում դպրոցի ուսուցիչներից Գրիգոր Իսրայելյանը, Անդրեաս Միրզոյանը, Հուսիկ Տեր-Սահակյանը և ուրիշներ:

Հեղափոխական գաղափարները թափանցում են գավառի ամենախուլ անկյունները:

Շատերը սկսում են հարել այս կամ այն առաջադիմական խմբակներին ու կազմակերպություններին: Դրանցից էր, օրինակ, Գևորգ Ղարաջյանը՝ Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչներից մեկը: Նա էր, որ «1897—98 թվականներին Թիֆլիսում ձեռնարկեց հայ բանվորների ինքնազարգացման ընդհատակյա խմբակների կազմակերպմանը՝ ունենալով գործունեության շեշտված սոցիալ-դեմոկրատական ուղղություն»<sup>3</sup>: Փորձեր էին արվում Շուշիում սովորող երիտասարդներից ստեղծել հեղափոխական խմբակներ: Այս մասին կան ոչ սակավ փաստեր: Զամիաթ գյուղի բնակիչ Պատվական Հարությունի Շամշյանը այլ և այլ պատճառներով խուսափելով ցարական բանակում ծառայելուց, Թիֆլիսում, Բաքվում, Բաթումիում, Շուշիում և այլ քաղաքներում թաքնվում է պարսկահայատակ «Սարգիս Ստեփանյանց», «Արսեն» և «Հայկ» անուններով: Նա կարողանում է փող հավաքել «հայ հեղափոխական կուսակցության նպատակների համար...»:

... Նրա մոտ կատարված խուզարկությունները հայտնաբերվում է հայկական հեղափոխական բանաստեղծություն»<sup>4</sup>:

Հեղափոխական խմորումներ նկատելի էին նաև դպրոցներում, մասնավորապես, աշակերտների շրջանում: Արխիվային փաստերը հաղորդում են, որ դեռևս անցյալ դարի վերջերին

<sup>3</sup> «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 1966 թ., էջ 67:

<sup>4</sup> Վրացական ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 23, թ. 1:

Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի տարբեր դասարանների աշակերտները ստեղծված իրավիճակի, ուսուցման անպետք մեթոդների հանդեպ իրենց բողոքն ու տրտունջն արտահայտում էին տարբեր ձևերով. նրանց դժգոհությունը լուրջ մտահոգություն առարկա էր դարձել թե՛ դպրոցի տեսչի և թե՛ տեղի ուստիականական մարմինների համար: 1894 թ. սեպտեմբերի 9-ին դպրոցի հոգաբարձական-ուսուցչական ժողովը քննում է այն հարցը, թե ինչ պատժի պետք է ենթարկել բողոքարկու աշակերտներ Արշակ Ոսկանյանին, Զաքարե Բաբայանին, Հովհաննես Եսայանին, Քրիստափոր Միքայելյանին, Ավագ Շահ-Մուրադյանին, Կոստանտին Աթալյանին և Հակոբ Հովհաննիսյանին: Սրանց համարում են «դպրոցում և հասարակության մեջ շփոթում հարուցանողներ», հակակրոնական ուղղության պաշտպաններ: 1900 թ. հունիսի 15-ին կաթողիկոսին ուղարկած ընդարձակ զեկուցագրի մեջ դպրոցի տեսուչը գրում է. «Եղել են դեպքեր, որ շատ անգամ իսկ տարել եմ սեփական անձիս դեմ ուղղած վիրավորանքներ... անտեղի խոսքեր... անվայել լրագրական զրաբանություններ, անդադար հասած անստորագիր նամակներ (մանավանդ տարվա վերջն ու սկիզբը), որոնց գրողի ձեռքը շատ ակնհայտ է եղել... բայց այդ բոլորը համբերությամբ տարվել է ամենամանր հանգամանքները կշռադատելով, որոնք կարող են ամենաշնչին ամպեր հարուցանել դպրոցական կյանքի հորիզոնի վրա»<sup>5</sup>:

Եվ պատահական չէր, որ շատ սովորողներ ամենաշնչին «անկարգությունների» համար արձակվում էին դպրոցից, հնարավորություն չստանալով ուսումը շարունակելու ուրիշ տեղ: Ավելին, աշակերտներին արգելվում էր թերթ, ամսագիր կարդալ, օգտվել պարբերական մամուլից: Հենց ինքը՝ դպրոցի տեսուչը նույն զեկուցագրի մեջ նշում է, որ 1897—1898 ուս. տարում դպրոցի աշակերտության 7,9 տոկոսը կամ 43 աշակերտ հեռացվել են կատարած «զանցանքների» և «անկարգապահության» պատճառով:

Տեսուչը փորձում էր ծայրագույն պատրիարքին հավատացնել, որ ձեռք առած կտրուկ միջոցները տալիս են շոշափելի արդյունք:

<sup>5</sup> Հայկական ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 415, թ. 169:

Բայց տեսուչին այլևս պատիվ չէր բերում դեպքերի իրական պատկերը էջմիածնի քահանայապետին ներկայացնելը:

Հետզհետե նոր որակ են կազմում աշակերտական ընդլրգումներն ու ըմբոստացումները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Շուշիի թեմական դպրոցի մի խումբ աշակերտների 1900 թ. դեկտեմբերի 4-ին էջմիածնի կաթողիկոսին գրած նամակը: «Մենք Շուշվա թեմական դպրանոցի աշակերտներս՝ 1900 թ. ուսումնական տարվա սկզբում նկատելով, որ շատ կաղում է մեր ուսումը և իզուր ենք կորցնում մեր ոսկե ժամերը, շնորհիվ նորան, որ մեր արժանապատիվ հայ տեսուչը մի կողմից կրճատել էր մի շարք առարկաներ, ինչպես տիեզերագիտություն, մանկավարժություն և գյուղատնտեսություն, ... մյուս կողմից էլ մնացած առարկաները տվել էր այնպիսի ուսուցիչների, որոնց մասնագիտությունից դուրս էին այդ առարկաները, ուստի չէին կարողանում բավարարություն տալ մեր հարցասիրության: Բացի դրանից, ռուսաց լեզվի և ռուսաց պատմության համար մինչև այն ժամանակ ուսուցիչ չկար, և մենք մեր օրերը անց էինք կացնում աննպատակ:

Այդ ի նկատի ունենալով, աշակերտությունը սկսած Գ դասարանից մինչև Գ դասարանը, կամեցավ մի խնդրով դիմել վարչությանը, այդ պակասը լրացնելու համար, բայց, դժբախտաբար դպրանոցի վարչությունը, հանձին հայ տեսչի, փոխանակ հարգելու մեր խնդիրը, չորս աշակերտի զրկեց իրենց սիրելի ուսումից, արձակելով դպրոցից...»<sup>6</sup>:

Ինչ խոսք, աշակերտական շարժումներին նոր բովանդակություն էր հաղորդում 1898 թ. Թիֆլիսում կազմակերպված հայ բանվորների առաջին մարքսիստական խումբը, որի հիմնական նպատակն էր ղեկավարել շահագործողների դեմ պայքարը, լայն մասսաներին հասցնել առաջադիմական գաղափարները:

Հետագայում, 1902 թ. «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որն ուներ լենինյան իսկրայական ուղղություն, նրպաստում էր Շուշիում սովորող երիտասարդության և աշակերտական շարժումների զարգացմանը: Դպրոցներում ստեղծ-

<sup>6</sup> Հայկ. ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 415, թ. 219:

վում էին սոցիալ-դեմոկրատական խմբակներ, որոնք փաստորեն ղեկավարում էին հեղափոխական աշխատանքը: Նրանք սկզբնական շրջանում հեկտոգրաֆով թուղիկներ էին տպագրում և տարածում բնակչության մեջ: Այդ թուղիկներում հրապարակվում էին բուլշևիկյան կուսակցության օրվա լուսնագրերն ու կոչերը:

Հեղափոխականորեն տրամադրված աշակերտները, մասնավորապես 1905 թ., սկսում էին միահամուռ և բացահայտ պայքարի դուրս գալ շահագործողների դեմ: Նրանք պահանջում էին վերջ տալ դեսպոտիզմին, դպրոցներից արձակել շինվիչիկ ուսուցիչներին, փոխել դպրոցների ղեկավարությունը...:

Շուշիում ղինված ընդհարումներ էին տեղի ունենում ուստիկանների և աշակերտների միջև: Թեմական դպրոցի աշակերտներին աջակցում էին ռեալականում սովորողները: Գեպրեբերի մասնակից Հարություն Թումյանը<sup>7</sup> պատմում է, որ ռուսական առաջին հեղափոխության օրերին թեմական դպրոցի II—IV դասարանների աշակերտների ուժերով հրատարակվում էր «Կոչնակ» անլեզալ խմորատիպ ամսագիրը (յուրաքանչյուր համարը 10—12 էջից բաղկացած), որտեղ համառոտակի արտահայտվում էին օրվա հոգսերը: Այդտեղ հեղափոխական մտքերն ու հայրենասիրական մոտիվները մեծ մասամբ հրապարակ էին հանվում գրական փոքրիկ ստեղծագործությունների՝ բանաստեղծությունների և պատմվածքների միջոցով: Տպագրվում էին շուշեցի Սիմոն Ֆոլյանի, Մարտիրոս Արզումանյանի և ուրիշների գործերը: Այդ ամսագիրը հիմնականում խմբագրում էին Հ. Թումյանը և Ս. Ֆոլյանը: Այն ունենում է 5—6 համարի կյանք:

1912 թվականից սկսած, երբ ոչ միայն Ռուսաստանի խոշոր քաղաքներում, այլև հետամնաց գավառներում ծայր էին առնել հեղափոխական ընդլզումները, Շուշիի թեմական դպրոցի սովորողները համախմբված էին աշակերտական երկու

<sup>7</sup> Նա մեծ գործ է կատարել Լեոնային Ղարաբաղում, մասնավորապես 1917—1920 թթ.: Սովետական իշխանության տարիներին Հայաստանի բուհերում աշխատել է իբրև դասախոս: Այժմ թողափառու է և բնակվում է Երևանում:

«Միություն» և «Միրած» կազմակերպություններում: Առաջինին հովանավորում էր դաշնակցական կուսակցությունը, երկրորդին ցուցումներ էր տալիս ու ղեկավարում ՌՄԳԿ Շուշիի ընդհատակյա կոմիտեն: Երկուսն էլ բավական գործնական էին և ձգտում էին հետք թողնել աշակերտության շրջանում:

1913 թ. սկսվում է հրատարակվել «Միրած» կազմակերպության համանուն անլեզալ խմորատիպ ամսագիրը, որի յուրաքանչյուր համարը ուներ 10—12 տետրակի թերթի ծավալ: Այն տպագրում էին Սիմոն Ափյանը<sup>8</sup>, Անդրանիկ Ավագյանը և Գրիգոր Խաչյանը<sup>9</sup>:

Նրա խմբագիրը՝ Գրիգոր Մեհրաբյանը և սրբագրիչ Մկրտիչ Մելքոնյանը հոգով ու սրտով նվիրված էին աշխատավորների գործին, ամեն ջանք ներդնում էին «Միրած»-ը աշակերտության ընդհատակյա հեղափոխական աշխատանքի օջախն ու կենտրոնը դարձնելու համար: Նրա տպագրությանն ու տարածմանը շատերն էին մասնակցում:

Մեր խնդրանքով գրած հուշերում Ս. Ափյանը պատմում է. «Տպարանը մեր տունն էր... թերթը տպագրում էինք խմորատիպ, այսինքն գործ էինք անում գլխեցիքին և ժելատին: Թուղթին էլ բարձր որակի էր («Ալեքսանդրյան»):

«Միութենականները» շատ են հետևել իմանալու մեր տպարանի տեղը, որպեսզի մատենն մեզ, բայց մինչև վերջ էլ այդ նրանց չհաջողվեց:

<sup>8</sup> Մեծ են Սիմոն Ափյանի ծառայությունները Լեոնային Ղարաբաղում Սովետական իշխանության հաստատելու գործում: Մնվել է 1897 թ., Շուշիում: 1917—1918 թթ. ավարտել է տեղի թեմական դպրոցը: 1917 թ. մայիսից բուլշևիկյան կուսակցության անդամ է: 1917—1920 թթ. Ղարաբաղի մի շարք գյուղերում ստեղծում է կուսակցական բջիջներ և ղեկավարում նրանց գործունեությունը:

Սովետական տարիներին ղեկավար աշխատանք է կատարել Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Այժմ անհատական կենսաթոշակառու է և բնակվում է Երևանում:

<sup>9</sup> Անդրանիկ Ավագյանն ու Գրիգոր Խաչյանը բուլշևիկյան կուսակցության շարքերն են մտել 1917 թ. և իրենց համեստ պայքարով նպաստել հայրենի երկրի ազատագրմանը: Նրանք աչքի են ընկել իբրև ժուռնալիստներ: 1920-ական թվականներին խմբագրել են «Նորհրդային Ղաբաբաղ» մարզային թերթը: Իրենց կուսակցական-սովետական գործունեությամբ նպաստել են մարզի տնտեսական և հոգևոր կյանքի զարգացմանը:

Մեր և «Միութեան» պայքարը սկզբունքային հարցերի շուրջը մեծ մասամբ կատարվում էր «Միրաժ» ամսագրի միջոցով: «Միրաժ»-ը լույս էր ընծայվում 50—60 օրինակով և մի ժամվա մեջ ցրվում էր: Մեծ էր հատկապես ցրիչ Շմավոն Շահնազարյանի եռանդը. նա իսկույն տեղ էր հասցնում բոլոր օրինակները... Այդ կատարվում էր շատ արագ, ոստիկանությունից աննկատ: Համարները գաղտնի թաքցնում էր թևքերի մեջ և մեկ-մեկ տալիս բաժանորդներին:

Շատ մեծ հեղինակություն ուներ «Միրաժ»-ը աշակերտության և ուսուցիչների մի մասի մոտ: Լույս ենք ընծայել այն մինչև 1917 թ. մարտ ամիսը: Վերջին համարներից մի քանիսը անլեզալ ուղարկել ենք անգամ էջմիածին, ձեմարան, ընկ. Ա. Հովհաննիսյանին և ձեմարանում սովորող մեր տղաներին ու Բաբու, մի երկու-երեք ընկերոջ:

Նրա տեսադաշտում էին գտնվում հատկապես դպրոցական հարցերը, քննադատվում էին լեզուների վատ ուսուցումը, առանձին դասատուների վարքագիծը:

Սուր էր «Միրաժ» և «Միութեան» պարբերականների պայքարը: «Միրաժ»-ը մերկացնում էր նացիոնալիստական տրամադրությունները, աշակերտությանը կոչ անում համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի տակ:

Հետագայում, «միրաժականների» հետևողական պայքարի շնորհիվ, «գաշնակցության» ազդեցության տակ գտնվող «Միութեան»-ը լրիվ կազմալուծվեց, և շատերն էլ, իրենց կայերը լրիվ խզելով դաշնակցականներից, անցան «միրաժականների» կողմը:

«Միրաժականների» հետ սերտ կապեր ունեին արդեն ճանաչում գտած բոլշևիկները: Նրանք օգտագործում էին բոլոր հնարավորությունները՝ Ղարաբաղի աշխատավորությանը առաջավոր գաղափարներին հասու դարձնելու համար:

Հարգանք էր վայելում աշակերտական «Միծաղ» խմորատիպ երգիծական ամսագիրը, որն սկսեց լույս տեսնել 1916 թ., Շուշիում: Նրա շնորհալի թղթակիցները խարազանում էին աշակերտության մեջ տեղ գտած թերությունները, սպանիչ ծաղրի ենթարկում հակահասարակական երևույթները:

Ամսագիրը հաճախ դուրս էր գալիս դպրոցական շրջանակ-

ներից և մերկացնում էր հետամնացությունը, սնտիապաշտությունը, նախապաշարումներն ու գոեհիկ բարքերը:

«Միծաղ»-ի լեզուն սուր էր, խոսքը՝ հատու. նրա քննադատության կրակի տակ էին ընկնում այն թերթերը, որոնք հանդրգնում էին փաստերը ներկայացնել ծուռ հայելու մեջ:

1916 թ. Շուշիում մի խումբ աշակերտների հրատարակած «Պայքար» խմորատիպ շաբաթաթերթը, «Միծաղ»-ի էլույթից խոցված, առաջին համարից հետո դադարեց լույս տեսնելուց: «Պայքարը» փորձում էր ազգայնական շիկացած միջնորոտ ստեղծել Ղարաբաղի հայ և ադրբեջանցի աշխատավորների միջև:

Թերթը սովորաբար տարածվում էր երեկոյան՝ վստահելի անձանց միջոցով: Նրա յուրաքանչյուր համարը ընդունվում էր մեծ խանդավառությամբ:

Հին բոլշևիկ Լևոն Վարդունին պատմում է, որ Շուշիի աշակերտական մամուլի պատմության մեջ կարևոր են նաև «Սրինգ» և «Աշակերտ» խմորատիպ թերթերը: Երկուսն էլ 1917 թ. հրատարակել են Շուշիի թեմական դպրոցի աշակերտները:

«Սրինգ»-ին ակտիվորեն է մասնակցել վաղամեռիկ շնորհալի պոետ Գրիգոր Ներսեսյանի եղբայրը՝ Եղիշեն, կրթված ու դարգացած մի անձնավորություն, որը 1917 թ. քաղաքական պայքարի ամենադժվարին օրերին մտավ բոլշևիկյան կուսակցության շարքերը:

«Աշակերտ» թերթը գլխավորում էին Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը: Վերջինս գերազանցապես կատարում էր թերթի արտաքին ձևավորումը: «Աշակերտ»-ը ունեցավ ընդամենը 5—6 համարի կյանք: Սա բաղկացած էր 12 փոքրածավալ էջերից, հիմնականում լուսաբանում էր դպրոցական առօրեական հարցեր: Տպագրում էր մեծ մասամբ երգիծական նյութեր:

Ուշադրության է արժանի Լևոն Վարդունու («Աղբրուշկա» ստորագրությամբ) «Վարժապետի երազը» ֆելիետոնը, որտեղ հեղինակը ծաղրի է ենթարկում առանձին հետամնաց ուսուցիչների, նրանց նահապետական մտածելակերպը, վարքն ու բարքը, կեցվածքը, հագուստը:

Թերթին մեծ ակտիվությամբ աշխատակցում էր դպրոցի առաջադեմ աշակերտ Սարգիս Դանիելյանը («Դանիելյան» ստորագրությամբ), որի նյութերը կրում էին խիստ քննադատական բնույթ և հենց սկզբից աչքի էին ընկնում սուր լեզվով, մարտական շնչով: Դա էր պատճառը, որ Ս. Դանիելյանի նյութերը կարգազուրկ էին շուտ և շատ:

Աշակերտական կազմակերպություններն ու նրանց տպագիր օրգանները մեծ դեր են խաղացել ոչ միայն սովորողների, պատանիների և աղջիկների կյանքում, այլև, ընդհանրապես, Ղարաբաղի հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում: Այստեղ անուրանալի են Ալ. Ծատուրյանի (Ռուբենի) ջանքերը: Նա է ուղղություն տալիս 1916—1917 թթ. աշակերտական առաջադեմ կազմակերպությունների գործունեությանը, նպատակամղում նրանց պայքարը աշխատավորության գործի հաղթանակի համար:

#### ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀՈԳՍԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԻՉԸ

Հեղափոխական շարժումների լայն ծավալման և իմպերիալիստական պատերազմի ծանր օրերին Ղարաբաղը խիստ կարիք էր դրում տպագիր մի թերթի, որը կարողանար մասսաներին հասցնել ոչ միայն օրվա լուրերը, այլև զաղափարական աշխատանք ծավալել նրանց շրջանում, բարձրացնել ժողովրդական լայն զանգվածների գիտական մակարդակը: Առաջվա պես, շատ զարբաղցիներ մտածում էին թերթ հիմնել Շուշիում: Նրանցից էր Եղիշե Թարխանյանը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչներից մեկը:

Ելիզավետպոլի նահանգի գրասենյակը դեռ 1914 թ. օգոստոսի 31-ին հայտնում է մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեին, որ թույլատվություն է տրված Եղիշե Թարխանյանին Շուշիում հրատարակելու «Արցախ» անունով հայերեն թերթ: Դրա նպատակն էր լայնորեն հրապարակել հայտարարություններ, հոդվածներ՝ արտաքին և ներքին հարցերի, գիտության, արվեստի, գրականության և քաղաքականության վերաբերյալ:

տալ ռուսական և արտասահմանյան կյանքի խրոնիկա, տպագրել հեռագրեր, դատական հաշվետվություններ, ունենալ տեղեկատու բաժին և այլն:

Ըստ թույլատվության, «Արցախ» թերթը պետք է հրատարակվեր Շուշի քաղաքի առաջին մասում գտնվող Բագրատ Տեր-Սահակյանի տպարանում, շաբաթը մեկից չորս անգամ: Թերթի վերահսկիչը նշանակված էր Շուշիի քաղաքապետի Գրիգորի Քալանթարյանը<sup>1</sup>:

Սակայն, ցավալի է նշել, որ մինչև հիմա հայտնի չէ «Արցախ»-ի 1914 թ. հրատարակման փաստը և արխիվում մնացել են միայն տեղեկություններ այդ մասին:

Առոտ Հախումյանը ևս ջանքեր է գործադրել Շուշիում 1915 թ. «Ղարաբաղի ձայն» անունով թերթ հրատարակելու համար: Այս մասին նույնպես վկայում են արխիվային փաստաթղթերը<sup>2</sup>: Սա էլ գրեթե նույն բաժիններն ու պարբերականությունը պետք է ունենար, ինչ «Արցախ»-ը, այն տարբերությամբ, որ «Ղարաբաղի ձայն»-ը պետք է տպագրվեր Մելքոն Բաբաջանյանի տպարանում:


Ավելի ռեալ արդյունք ստացան Լևոն Վարդապետյանի ղեկավարումը կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտեին՝ Շուշիում «Փայլակ» անունով թերթ հրատարակելու մասին:

Թերթը պետք է հրատարակվեր հետևյալ ծրագրով. 1) առաջնորդող հոդվածներ հասարակական և քաղաքական հարցերի շուրջը, 2) ներքին տեսություններ, 3) արտասահմանյան կյանքը լուսաբանող նյութեր, 4) թղթակցություններ, 5) ֆելիետոններ, 6) գիտական բաժին, ուր պիտի հրապարակվեին մատչելի հոդվածներ գիտության տարբեր ճյուղերի մասին, 7) արձակագրություն և պոեզիա, 8) քննադատություն և մատենագիտություն, 9) տեղական և կովկասյան խրոնիկա, 10) թատրոն և արվեստ, 11) փոստային արկղ, 12) հեռագրեր, 13) հայտարարություններ:

Թույլատրվում էր թերթը հրատարակել Բ. Տեր-Սահակյանի

<sup>1</sup> Տե՛ս Վրացական ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 2, Բ. 1011:

<sup>2</sup> Նույն տեղում, Բ. 1012:



նի տպարանում<sup>3</sup>, շաբաթը երեք անգամ: Վերահսակիչ էր նշանակվում Շուշիի քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Հայկ Կոստանդյանը:

Թերթի առաջին համարը լույս տեսավ 1915 թ. մարտի 8-ին<sup>4</sup>:

«Փայլակ»-ի առաջին խմբագրականում նախ ընդգծվում է մամուլի կարևոր դերը ընդհանրապես, ապա Թերթի լույս ընծայվելու նպատակը, շեշտվում է, թե ինչ հարցեր են լուսաբանվելու նրա էջերում, ինչն է լինելու նրա մտահոգության օբյեկտը:

«Խմբագրության կողմից» հոդվածն սկսվում է այսպես. «Հայտնի է մամուլի մեծ նշանակությունը հասարակական կյանքում. նրանով են արտահայտվում հասարակության մտքերը, իդեներն ու զաղափարները, նրանով է սնվում նույնիսկ հասարակությունը:

Ղարաբաղը, մասնավորապես Շուշին, անշուշտ մեծ կարիք է զգում մի օրգանի, որով արտահայտվեին նրա ցավերը, կարիքներն ու ցանկությունները: Ահա «Փայլակ»-ը աշխարհ զարով ձգտելու է այդ նպատակին ծառայելու:

Հաճախ շուշեցի ինտելիգենտը, — շարունակում է Թերթը, — բաղձակողմանի տեղեկություններ է ունենում համաշխարհային ու համապետական հարցերի մասին, իսկ յուր անմիջական հայրենիքի, յուր բնագավառի ցավերն ու հոգսերը մնում են նրա համար խորթ և հեռու: Ուստի, «Փայլակ»-ը ընդհանուր և քաղաքացիական խնդիրների հետ միասին շոշափելու է միշտ և ծանրանալու է զուտ տեղական բնույթ կրող խնդիրների վրա» և «քաղաքային կյանքից ոչ պակաս զբաղեցնելու են... գյուղական իրականությունն ու տնտեսությունը»: Հենց այս հոդվածում էլ «Փայլակ»-ը հայտարարում է, որ «տխուր է մեր գյուղացու անօգնական, թշվառ վիճակը տգիտության, խուլ խավարի ճանկերում»:

Պատահական չէր այս ճշմարտության հրապարակումը: Թերթը ցանկանում էր ընթերցողներին ասել, որ ինքը ավելի

<sup>3</sup> Հետագայում, լրացուցիչ կարգադրության համաձայն, Թերթը 4-րդ համարից տպագրվում է Մ. Բաբաջանյանի տպարանում:

<sup>4</sup> Հրատարակությունը շարունակվեց մինչև 1917 թ. հուլիսի վերջը:

շատ գրելու է ցավոտ հարցերի մասին, ձգտելու է ցույց տալ դրանց պատճառները, բննադատելու է գյուղացու վաստակը յուրացնողներին:

«Գավառական թերթը և գավառի պահանջները» հոգւածում թերթը զարգացնում է խմբագրականի մտքերը և փորձում է որոշակի պարզաբանել, թե ինչ դեր ունեն կատարելու մտավորականները և ինչ՞ու են գավառական թերթերը ունեցել շատ կարճ կյանք: Կարգում ենք. «Գավառի ցավերն այնքան շատ են և կարիքները այնքան բազմատեսակ, որ հասարակական շահերին նվիրված գիտակից անձինք չեն կարող անտարբեր վերաբերվել դեպի այդ կարիքները, որոնք օրվա հարցերն են կազմում և շուտափույթ լուծումն են պահանջում: Ի՞նչ և շատ անգամ կարճատև է եղել գավառական թերթի գոյությունը և բազմատեսակ զոհողությունների հետ կապված, բայց այս դեպքում մեղավորը ոչ թե գործին ձեռնարկողներն են եղել, այլ այն շրջապատը, որ վիճակված է եղել գավառական մամուլին յուր գործունեության վայր ընտրելու»:

Անդրանիկ համարից «Փայլակ»-ում աշխատում էին բուշեիկներ և էսեններ: Օր-օրի նրա շուրջը համախմբվում էին նորանոր մարդիկ, երևելի անձնավորություններ, մտավորականներ, գրողներ, հասարակական-բազաբական գործիչներ:

Շատերն ի սրտե ցանկանում էին «Փայլակ»-ին բեղմնավոր կյանք, հաստատուն քայլեր, անկոտրում կամք, սկզբունքայնություն, թշնամական գաղափարների դեմ անհաշտ պայքար:

«Փայլակ»-ին գրած նամակում Լևոն Աթաբեկյանը հայտնում է մի շարք ցանկություններ. «Եթե ձեր թերթը, պարոն խմբագիր, չպիտի դառնա մի նոր աղգային մեռելատուն, եթե պիտի կարողանա հետևելու իր նուրբ մատներով Ղարաբաղի ժողովրդի կյանքի զարկերակին և պիտի սովորեցնի նրան՝ զսպած արցունքով՝ հուսալ, տոկալ և ապրել, իմ և ինձ պես խորհողների համակրանքն ու աջակցությունը ձեզ կը պատկանե»<sup>5</sup>:

Այսպիսի նամակները եզակի չէին թերթի էջերում: Առաջին իսկ նյութերում «Փայլակ»-ը մերկացնում է աշ-

խատավորների թշնամիներին, պայքարում է նրանց դեմ, ուրբեր ոտնահարում են «հասարակ» մարդու շահերը, թալանում, կողոպտում նրան: Նա հայտարարում է, որ «դեռ գավառներում վաշխառուները շարունակում են քամել խեղճ գյուղացու արյունը»<sup>6</sup>, հնարավորություն չեն տալիս աշխատավորին՝ տեր կանգնելու իր վաստակին:

«Մեր թղթակիցները» ընդհանուր խորագրի տակ թերթը բազմիցս անդրադառնում է Շուշիից մեկ ու կես կիլոմետրի վրա գտնվող Քարին-Տակ գյուղի կապիտալիստ Հարունովի մետաքսակարծական-մետաքսաողորող ֆարրիկային, նշվում է այն մասին, որ կանայք և անչափահաս երեխաները, աշխատելով արշալույսից վերջալույս, ստանում են աննշան աշխատավարձ, որը հազիվ է մի կտոր հացի գին դառնում:

Գյուղական պարագիտների մասին գրված նյութերը հաճախ ստորագրվում էին «Ligga»: Այդ ծածկանվան տակ «Փայլակ»-ին ակտիվորեն աշխատակցում էր Սերգեյ Կարգանյանը<sup>7</sup>, մի մարդ, որ ականատես լինելով խեղճ ու կրակ մարդկանց տառապանքներին, ձգտում էր մամուլի էջերում մերկացնել բռնադատիչներին ու հարստահարիչներին («Մեր տրետեսական կացությունը», «Գյուղը առանց շաքարի», «Աննախանձելի դրություն», «Բարբարոսական ոճրագործություն» և այլն):

Նրա թղթակցություններում նկատվում են բննադատական սուր միտքը, համոզականությունը և ներգործելու ուժը:

<sup>5</sup> «Փայլակ», № 1, 1915 թ., մարտի 8:

<sup>7</sup> Մեծիլ է 1898 թ., Շուշի գավառի Քարին-Տակ գյուղում: Ավարտել է ակդի ծխական և հայոց թեմական դպրոցները: Բարձրագույն կրթություն ստացել է Սովետական Հայաստանում:

Քառասուն տարի աշխատել է ժողովրդական կրթության օրգաններում: Ակտիվորեն հանդես է եկել հանրապետական մի շարք պարբերականներում, մասնավորապես «Կոմունիստ»-ում (Բաբու), «Մարտակոչ»-ում (Թիֆլիս):

Նրա ժողովրդական աշխատանքը արդյունավետ էր Լեւնային Ղարաբաղի մարզային «Սովետական Ղարաբաղ» թերթում, երբ վարում էր գյուղատնտեսական բաժնի վարիչի պաշտոնը:

Այժմ կենսաթոշակառու է և բնակվում է Երևանում:

<sup>5</sup> «Փայլակ», № 58, 1916 թ., հուլիսի 31:

«Գավառական ցավերից» մի քանի բաժիններով ներկայացվող ծավալուն հոդվածում Ա. Ասլանյանը, որը ապրելով նախքենդի ավանում մոտիկից տեղյակ էր գյուղացու հոգսերին և, ընդհանրապես, զբաղվում էր գյուղատնտեսության հարցերով, «Փայլակ»-ում գրույց է բացում գյուղական բնակիչների ծայրահեղ տնտեսական վատ վիճակի մասին, միաժամանակ շեշտում, որ դրա պատճառներից մեկն էլ գյուղատնտեսական աշխատանքների կատարման նահապետական ձևն է: Նա գրում է. «Խոսելով գյուղացիների տնտեսական վիճակի մասին առհասարակ, չպետք է մոռանալ և այն խոշոր բացը, որի շնորհիվ մեր գեղջուկը տնտեսապես չի բարգավաճում, չի առաջադիմում: Մեզանում գյուղացիները, շատ սակավ բացառությամբ, դեռևս իրենց տնտեսությունը—երկրագործական աշխատանքը և այլն—վարում էին հին նահապետական ձևի գործիքներով: 80—100 տնից բաղկացած գյուղում հազիվ կգտնվի 4—6 նոր ձևի գուլթան, մնացածները օգտվում են հին ձևի խոփ ու գուլթանով. բացի դրանից՝ գյուղացիները դուրկ են գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքներից—հետեկով միմիայն ավանդական սովորություններին»<sup>8</sup>:

«Թանգություն դեմ» հոդվածում նա պարզ նշում էր, որ մի կողմից տնտեսական ծանր վիճակը, մյուս կողմից՝ իմպերիալիստական պատերազմը այնպիսի աստիճանի են հասցրել մթերքների գինը, որ անկարելի է գոյությունը պահպանել այսպիսի պայմաններում: Նա գրում է. «Մի կողմ թողնենք այն ծանր հարվածը, որ հասցրել և հասցնում է պատերազմը ժողովրդի տնտեսության՝ խլելով նրա աշխատավոր ձեռքերը, մի կողմ թողնենք նաև այն ավելորդ ծախսերն ու տուրքերը, որ կապված են պատերազմի հետ, որոհետև լներկա պայմաններում անպատեհ և ավելորդ է խոսել դրանց մասին, մանավանդ որ միանգամայն մեր ուժից վեր է, անկարելի և անհնարին որևէ կերպ փոփոխել այն պմենը, ինչ որ հրամայական սրահանջ է համարվում ներկա մոմենտում:

<sup>8</sup> «Փայլակ», № 5, 1915 թ., մարտի 22:

Սակայն կան բացասական երևույթներ... որոնց մասին ոչ միայն պիտի խոսել, քննադատել, այլ նույնիսկ միջոցներ մտածել վերացնելու, արմատախիլ անելու, որովհետև դրանք մեծ չափով ազդում են ժողովրդի տնտեսության և նյութական կացության վրա: Այդ բացասական երևույթներից առաջինն և զլխավորը կյանքի կենսական անհրաժեշտ մթերքների թանգությունն է, որն զգալի հարված հասցնելով ընդհանուրին՝ անտանելի վիճակ է ստեղծում շունևոր դասի և աղքատ գյուղացիության համար:

Ազգաբնակչության այն մասը, որ խաղաղ ժամանակ, կյանքի նորմալ պայմաններում հազիվ կարողանում էր ծայրը ծայրին հասցնել, մի կերպ քարշ տալ իր խղճուկ կյանքը, բնական է, որ այժմ պետք է կանգնած լինի սովի ուրվականի առջև. և եթե այսպես շարունակելու լինի, հաստատ համոզված պետք է լինենք, որ պատերազմի դոհերի կողքին կունենանք նոր դոհեր, սով ու համաճարակ հիվանդությունների դոհեր»<sup>9</sup>:

Թերթը թանգության մասին հանդես է գալիս պարբերաբար: Նույնիսկ են ունենում ոչ միայն թերթի ակտիվ թղթակիցները, այլև խմբագիր Խաչիկ Սամվելյանը:

«Հացի խնդիրը Շուշում» հոդվածում գավառական թերթը կրկին ցավով հայտնում է, որ դրությունը ոչ միայն չի բարելավում, այլ ընդհակառակն, օրըստօրե վատթարանում է: Այնտեղ կարողում ենք. «Անտանելի դրություն է ստեղծվել մեր քաղաքում, ժողովրդի ամենաէական սնունդը—հացը ոչ մի տեղ այնքան վատ չէ, որքան Շուշում: Դառն և սև, սակայն—որակի համեմատ—ավելի թանգ քան Կովկասի մեծ քաղաքներում»<sup>10</sup>:

Թերթը տխրությամբ նշում է նաև, որ քաղաքում չկան ջուր, լուսավորություն, փողոցները անանցանելի են դարձել, քայքայվել է կոյուղին:

«Շուշին անմոռաց է յուր դիրքով, յուր բուժիչ օդով, յուր հմայիչ շրջակայքով. բայց,—շեշտում է «Փայլակ»-ը,—նա չունի բարեկարգ տարտեղ՝ մի պարկ, որտեղ կարողանային

<sup>9</sup> «Փայլակ», № 6, 1915 թ., մարտի 29:

<sup>10</sup> «Փայլակ», № 7, 1915 թ., ապրիլի 2:

վայելուչ հանդիստ ու զվարճութուն գտնել թե՛ եկողը, թե՛ քաղաքացին»<sup>11</sup>:

Ղարաբաղի աշխատավոր ժողովրդի դրուժյունը անմխիթար էր նաև բժշկական տեսակետից: Գյուղական վայրերում շկային ո՛չ բուժական կետեր, ո՛չ հիվանդանոցներ: «Գյուղացիները զուրկ են բժշկական օգնությունից և միևնույն ժամանակ սնտրիապաշտ լինելով զանազան վճուկների—«փալչիներ»-ի, «գրբացներ»-ի, «կոռներ շափողներ»-ի և այլն—բժիշկներից բարձր են դասում և ավելի են հավատում... Այսպես, օրինակ, Խաչեն գավառի մասի Ղայբալու, Կարկաթան, Փահլուր, Խանածախ, Բալլուջա, Ջամիլու, Մեյտիշեն, Դահրավ, Պտրեցեք գյուղերը, իրանց հետ միասին և Խանքենդ ավանը, զուրկ են բժշկական օգնությունից. զուրկ են ոչ միայն մի հիվանդանոցից, այլ նույնիսկ մի ֆելդշերական պոնկտից»<sup>12</sup>, գրում է «Փայլակ»-ը:

«Փախստականների հարցը» հոդվածում Նորայրը<sup>13</sup> գրում է. «Տաճիկ կառավարության ինքնակործան անմիտ քաղաքականությունը սոսկումի և արհավիրքների մեծ դուռ բաց արեց խաղաղ աշխատանքի սովոր հայ ազգաբնակչության առջև: Հավարավոր բարեկեցիկ ընտանիքներ ստիպված եղան թողնել տուն-տեղ և փախուստի դիմել ձմեռվա ցրտին ու բուքին»<sup>14</sup>: Թերթը կոչ է անում իր հայրենակիցներին՝ օգնության ձեռք մեկնել հայ տարագիրներին, օգնել նրանց: «Փայլակ»-ը 3-րդ համարում (1915 թ. մարտի 15) ուղղակի ասում է. «Ղարաբաղի հայը շատ անգամ է ցույց տվել յուր առատաձեռնությունը դեպի յուր թշվառ եղբայրակիցները, այս անգամ էլ չի զլանալ ձեռք կառկառել տարագիր հայ գաղթականներին»:

Այդ նույն հեղինակը՝ Նորայրը, հայ տարագիրներին օգնելու մասին հանդես է գալիս թերթի հաջորդ շորորդ համարում (1915 թ., մարտի 19): Հենց հոգվածի վերնագիրը («Կատարե՞լ

<sup>11</sup> «Փայլակ», № 1, 1915 թ., մարտի 8:

<sup>12</sup> «Փայլակ», № 8, 1915 թ., ապրիլի 5:

<sup>13</sup> «Փայլակ»-ի ակտիվ աշխատակիցներ Լ. Վարդունին և Ս. Կարդանյանը համոզում են, որ «Նորայր» ծածկանվան տակ հանդես էր գալիս Հայկ Հոփակիմյանը՝ թեմական դպրոցի հայոց լեզվի ուսուցիչը: Նա «Փայլակ»-ի նյութերը գրական մշակման ենթարկողներից մեկն էր:

<sup>14</sup> «Փայլակ», № 2, 1915 թ., մարտի 12:

ենք մեր պարտքը») շատ բան է ասում: Վերնագրի տոնից էլ դրացվում է, թե ինչի մասին է խոսքը: Դրուժյունը ողբերգական էր դարձել հատկապես 1915—1917 թթ., երբ շարունակվող համաշխարհային պատերազմը աշխատավորներից խլում էր ապրուստի միջոցները:

Իզուր չէր, որ «Փայլակ»-ում հրապարակվող շատ նյութերի տոնը տխուր էր: Թերթը գրում է, որ ամբողջ երկիրը վեր է ածվել պատերազմական ճամբարի, ուր կտեսնեք միայն փախըստականներ, բոկոտն, քաղցած, սովամահ մարդկանց, հարյուրավոր անտեր ու որբ երեխաների, լացակամած կանանց ու աղջիկների:

«Գեռ հրդեհված քաղաքների ու գյուղերի բոցերը չմարած, — գրում է «Փայլակ»-ը, — դեռ սպանվածների ու սրախողխող անմեղների արյունը շառած, դեռ հազարավոր տնից-տեղից... զրկված փախստականների արտասուքները չցամաքած, դեռ հարյուրավոր անտեր ու որբ երեխաների աղեկտուր ողբն ու կոծը շղաղարած՝ նոր-նոր արհավիրքների ու սոսկումների լուրեր են գալիս «զուլումի երկրից»»<sup>15</sup>:

Այստեղ խոսքը այն մասին է, որ հայերի մի մեծ հատվածը կործանվում է թուրք բռնակալների դավադրությամբ, որ թուրք և բուրդ հրոսակները սպառնալիքների տակ են դրել հայերին և հետզհետե դրուժյունը ծանրանում է: Եվ թերթը դժվարանում է ընտրել որևէ մեկի պաշտպանությունը: Չէ որ արտասահմանյան պետությունները միշտ խաբել են և սին խոստումներ տվել հայ ժողովրդին: «Դիմել չեզոք պետություններին հանուն մարդասիրության, հանուն ընդհանուր միջազգային օրենքների...», բայց չէ՞ որ այդ միջազգային օրենքները ցայտուն կերպով ցույց տվին իրենց սնանկությունը և իրենց ամբողջ մերկությունը ցցեցին մեր առջև այս պատերազմի ընթացքում...»<sup>16</sup>:

Ինչպես նկատում ենք «Փայլակ»-ը հույս չի դնում նաև չեզոք պետությունների վրա: Նրանք էլ, գրում է թերթը, բռնըկված շատ կապիտալ կորզելու տենդով, ոչինչ լավ բան չեն առնի աշխատավոր ժողովրդի համար: Եվ միակ հույսը, այնուա-

<sup>15</sup> «Փայլակ», № 11, 1915 թ., ապրիլի 16:

<sup>16</sup> նույն տեղում:

մենայնիվ, մնում է սեփական ուժը, սեփական ջանքերի լարումը:

Այնտեղ կարգում ենք, որ «Ալաշկերտի, Դիաղինի, Ղարաբախի շրջանները տակն ու վրա եղան, արյունարբու դահիճների սրերից ազատվածները գլխապատառ փախուստի դիմեցին ուսական հողը և լցվեցին Երևանի, Սուրմալուի և էջմիածնի գյուղերն ու ավանները: Արգահան, Արգանուշ, Օլթի մինչև Սարեղամիշ ական-թալանի մատնվեցին, ահաբեկված ազգաբնակչությունը գլուխն ազատեց մի կերպ՝ թափվելով Ալեքսանդրապոլ, Թիֆլիզ, Ախալքալակ»: Թերթը հարց է տալիս. «Ի՞նչ արեց Ղարաբաղի հայությունը», և պատասխանում է. «Նոյեմբերի 10-ից մինչև փետրվարի 20-ը, ամբողջ 4 ամիս 10 օրվա ընթացքում, ինչպես ցույց է տալիս Շուշու «եղբայրական օգնության» կոմիտեի ել ու մուտքի հաշիվը, Ղարաբաղը փախստականներին տվել է ընդամենը 1500 ուրբի և մոտ 400 ուրբի հագուստ: Կատարե՞լ ենք մեր պարտքը»<sup>17</sup>: Իհարկե, Թերթը դժգոհ է նման օգնությունից և կոչ է անում Ղարաբաղի հայերին՝ օգնությունը դարձնել ավելի շոշափելի ու կոնկրետ:

Թերթը օրինակ է բերում ուս ժողովրդի ցուցաբերած օգնությունը հայ վտարանդիներին: «Պետրոզդարը հայերին» թղթակցության մեջ պատմվում է, որ պետրոզդարցիները նվիրատվություններ են անում հայ բաղամաշարչար աշխատավորներին և ձգտում են մի կերպ ամօքել թուրք մարդասպանների կողմից հասցրած վերքերը:

«Գավառական Թերթը և գավառի պահանջները» հոդվածում «Փայլակ»-ը մի շարք խնդիրների հետ միասին կրկին գնում է գավառական մամուլին ներկայացվող պահանջները և շեշտում Թերթի դերը հատկապես անգրագիտության վերացման, լուսավորության տարածման գործում:

Թերթը կարևոր է համարում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալը, այնպես էլ ուսուցումը նոր հիմունքներով կազմակերպելը, դպրոցում նոր առարկաներ մտցնելը, լեզուների ուսումնասիրումը և այլն:

<sup>17</sup> «Փայլակ», № 4, 1915 թ., մարտի 19:

«Հայ դպրոցը» հոդվածում, բնորոշելով դպրոցի տեղը հասարակական կյանքում, Թերթը գրում է. «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է. այդ իսկ պատճառով նրա հիմքում, որպես ամենից ամուր և ամենից ապահով պատվանդան, պիտի դրված լինի մանկավարժական ճշմարտությունը: Իսկ ամեն կրթության, մտքի, հոգեկան ուժերի ամեն մշակույթի մանկավարժական բազան այս ճշմարտությունն է. նպատակահարմար և հասարակագուտ կրթության համար մայրենի լեզուն միակ բանական և անփոխարինելի միջոցն է...»<sup>18</sup>:

Միանգամայն ճիշտ է դրվում հարցը, որ առանց մայրենի լեզվի խոր և կայուն իմացություն դժվար է յուրացնել մյուս առարկաները: Չէ որ լեզուն է հաղորդակցման միջոցը, չէ որ լեզվի միջոցով պետք է պրպտումներ կատարել մյուս գիտությունների աշխարհում, ասում է «Փայլակ»-ը:

Նա գնում է հանրագուտ աշխատանքը սիրող և հարգող, դժվարություններից չվախեցող երիտասարդ սաներ պատրաստելու խնդիրը և շեշտում, որ դրա լուծման գործում մեծ է դպրոցի դերը: «Դպրոցական ռեֆորմ» առաջնորդող հոդվածում կարգում ենք. «Դպրոցական գործով, մատաղ սերնդի կրթությամբ և դաստիարակությամբ հետաքրքրվող հասարակությունը վաղուց նկատել է և մատնանշել այն հակասությունը, որ կա դպրոցի ծրագրի, նրա կատարած գործի, տված արդյունքի և կյանքի պահանջների, հասարակության զարգացման կարիքների միջև: Մինչդեռ կյանքը պահանջում է դպրոցավարտ երիտասարդից ի վիճակի լինել արտահայտելու կենսական արժեքներ. մինչդեռ հասարակությունը պահանջում է նրանից կարողանալ ստեղծել հասարակագուտ արժեքներ. դպրոցը տալիս է գրաճանաչություն, գիտությունների զանազան ճյուղերի մասին ընդհանուր հասկացողություն: Մինչդեռ հասարակության զարգացման շահերի տեսակետից դպրոցավարտ երիտասարդությունը պիտի կարողանա դիմանալ կյանքի արհավիրքներին և ուժ ունենա կովելու նրա հետ և մի դրած նպատակի հասնելու, իսկ սրա համար դպրոցը պետք է կարողանա աշխատանքի մեջ կոփել ու ամրացնել իր սաների կամ-

<sup>18</sup> «Փայլակ», № 3, 1915 թ., մարտի 15:

քը, հասունացնել նրանց մեջ սիստեմատիկ գործունեության կարողությունը, դպրոցն արձակում է իր ծոցից կամազուրկ, սիստեմատիկ և պլանավոր աշխատանքի համար անպատրաստ, շուտ գրավվող և նույնքան շուտ հիասթափվող երիտասարդություն...»<sup>19</sup>:

Գավառական հայ թերթը պակաս կարևոր չի համարում կանանց կրթության գործը: Այս մասին նա խոսք է բացում մի շարք առիթներով: Ուշագրավ է հատկապես ականավոր պատմաբան Լեոյի հոդվածը «Փայլակ»-ի 1917 թ. 20-րդ համարում:

Լեոն գրում է, որ կինը կրթվելով, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելով, պետք է լինի տղամարդուն հավասար, մեր հասարակության իրավահավասար անդամը: Կրթություն տալու հետ միասին, շեշտում է մեծ գիտնականը, կնոջը պետք է սովորեցնել կատարելու տարբեր աշխատանքներ, տիրապետելու տարբեր մասնագիտությունների:

Կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված հոդվածների և թղթակցությունների շարքը բավականին մեծ է թերթում: Գավառական թերթը շատ բան է տեսնում կրթված մարդկանց շրջանում. չէ որ լուսավորված գաղափարներն ու մտքերն են, գրում է «Փայլակ»-ը, լուսավորում մարդկանց ձամփաները, սպեղանի լինում մարդկային ցավերին ու հոգսերին: Եվ այս ասպարեզում մեծ դեր ունեն կատարելու մտավորականները: «Կազմակերպչական գործի անհրաժեշտությունը» հոդվածում Արշավիր Քամալյանը<sup>20</sup> գրում է. «Ղարաբաղի ինտելիգենցիան պիտի և պարտավոր է կազմակերպվելու, նա պիտի յուր ձեռքը վերցնի ժողովրդին նոր սով կրթելու գոր-

<sup>19</sup> «Փայլակ», № 14, 1915 թ., ապրիլի 26:

<sup>20</sup> Մնվել է 1889 թ., Շուշում: Սկզբնական կրթություն ստացել է սեռական դպրոցում: Այնուհետև հասարակագիտական գիտությունների մեջ խորանալու նպատակով սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Ավարտելուց վերադարձել է հայրենիք, թեմական դըպրոցում դասավանդել ուսաց լեզու, պատմություն, իրավագիտություն և այլ առարկաներ: Ղարաբաղում սովետական իշխանության հաղթանակից հետո ընտրվել է լուսժողովում (1923—1928 թթ.): Այնուհետև Ստեփանակերտում և Բաքվում աշխատել է ժողովրդական կրթության տարբեր օրգաններում: Այժմ կենսաթոշակառու է և բնակվում է Երևանում:

ծը, որպես միակ ընդունակ տարրը այդ խնդրում: Անհրաժեշտ է համախմբվել և անհապաղ գործի անցնել, այլ կերպ ժամանակակից ինտելիգենցիան յուր անտարբերությամբ մեծ պատասխանատվություն է վերցնում յուր վրա: Ժամանակը պահանջում է ղոհաբերություն. մենք պարտավոր ենք այդ ղոհը տալու ազատության ընդհանուր գործին»<sup>21</sup>:

Թերթի դերը ուշագրավ է նաև ընթերցողներին հայրենասիրությամբ դաստիարակելու գործում: Հրապարակված առանձին նյութեր սյուտում են հայերի սխրագործությունների, հերոսական գրվազների, հայրենիքի թշնամիների դեմ նրանց անձնվեր պայքարի մասին: Այս տեսակետից ուշագրավ է Լեոյի «Ղարաբաղ և զարաբաղցիներ» մեծածավալ հոդվածը, որն իր բովանդակությամբ, ընդգրկված փաստերով ու նյութի շարադրմամբ պատիվ է բերում «Փայլակ»-ին: Այն լույս է տեսնում թերթի 1917 թ. մարտի 9-ի, 16-ի և 23-ի համարներում:

«Փայլակ»-ի էջերում պատմվում է այն մասին, որ Ղարաբաղը հետզհետե կյանքի շատ ասպարեզներում զիջում է իր դիրքերը և շարունակում է մնալ Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը, ուր թագավորում են տգիտությունն ու խավարամտությունը: Սակայն ազատության տենչը միշտ վառ է մնում զարաբաղցիների սրտում:

«Փայլակ»-ը մեծ մասամբ այդ արտահայտում է գեղարվեստական խոսքի ուժով:

Գրական ստեղծագործություններով հանդես են գալիս մասնավորապես Գրանիկ Ղազարյանը<sup>22</sup>, Գրիգոր Ներսիսյանը, Լեոն Վարդունին և ուրիշներ:

<sup>21</sup> «Փայլակ», № 25, 1917 թ., ապրիլի 16:

<sup>22</sup> Մնվել է 1888 թ. Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում: Պատանի հասակից բանվորություն է արել Բաքվի նավթահանքերում: 1906—1911 թթ. ավարտել է Բաքվի Մեսրոպյան դպրոցը: Բաքվում նա մոտիկից ծանոթացել է Սո. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կոտնյանցի, Մ. Մելիքյանի, Բ. և Ա. Բորյանների և այլ ականավոր բոլշևիկների հետ: 1915 թ. դարձել է ՌՍԳԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ: 1914 թ. սկսած նրա բանաստեղծություններն ու պատմվածքները լույս են տեսել պարբերական մամուլում:

Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո նա

Հին բուլղարիկ Գառնիկ Ղազարյանի բանաստեղծություններում նոր օրերի հավատար արտահայտվում է մարտական շքանշանով: Նա հավատացնում է ընթերցողներին, որ կփոխվի աշխարհը և վերջ կտրվեն անլուր հայածանքներին:

Գրիգոր Ներսիսյանը անեծք է կարդում անցած տարուն, փափագում, որ մայրերի արցունքը այլևս չհոսի: Նոր տարուն նվիրված բանաստեղծության մեջ նա գրում է.

Անեծք անցյալին... Անեծք նաև քեզ,  
Եթե մայրերի այրող արցունքի  
Վախճանը չկա... Եթե գուժակն ես  
Քնույշ, սիրառատ, հեզ, կենսաբերիտ,  
Երկշտ հույսերի անդաճ խորակման,  
Թե նոր վշտերի, մի նոր արյունի,  
Նոր տանջանքի օր պիտ բերես դու մեզ...<sup>23</sup>:

Հետո Վարդունին դիմում է նոր տարուն ազատության կանչով, տառապանքը, լացը, տանջանքը վերացված տեսնելու հույսով:

Թե հայրենիքս խոսքան դաշտերում  
Նորից պիտ լավի լաց ու հեկեկանք,  
Եվ դժբախտ հայի ցավատանջ հոգում  
Դարձյալ պիտ ծնվի մի նոր տառապանք,  
Թե հայը նորից դառնալի լացով,  
Անտեր պիտ բողբի օշախն հայրենի՝  
Եվ մերկ ու բոբիկ, փողցից նվազած՝  
Անվերջ պիտ բախի դուրս օտարի,  
Իզուր ես գալի  
Այ դու նոր տարի<sup>24</sup>:

Նոր օրերի, գալիքի մասին Գր. Ներսիսյանը գրում է.

Ճավալի է կուսակցական, սովետական եռանդուն աշխատանք: 1922—1924 թթ. ղեկավարել է կուսակցության Զանգեզուրի գավառը, 1925—1929 թթ. «Մաճկալ» թերթը, 1929—1938 թթ.՝ Հայաստանի դավաճանը և ՀՀԳ-ն: Մահացել է 1960 թ.:

1963 թ. Հայպետհրատը լույս ընծայեց Գ. Ղազարյանի «Ազատության շեփորը» բանաստեղծությունների ու արձակ գործերի ժողովածուն:

<sup>23</sup> «Փայլակ», № 1, 1917 թ., հունվարի 1:

<sup>24</sup> Նույն տեղում:

ես հավատում եմ՝ կգա մի նոր ժամ,  
Նոր օր, նոր կյանքի տենչերով առատ.  
Նոր սարսափների, նոր ապրումների  
Երգս կենչե ուժեղ ու անպարտ.  
Ու տես հոգեբով, սեզ հեռուները ինձ  
Ավետում են Յիզ՝ նոր կյանքով հոյ.  
Փոքրիկից ջարդված իմ կուրծքը նորից  
Նոր-նոր հույզերով բեղում է ուժգին...<sup>25</sup>:

Ղարաբաղի ստեղծագործողները կանխազգում էին հին կարգերի վախճանը: Նրանք երգում էին չվհատվող, անպայման հաղթելու վճռականության մտքով ազդեցության:

Ահա «Դու մի վհատվիր» վերնագրով բանաստեղծությունը, որը լույս տեսավ թերթի 1917 թ. հունվարի 1-ի համարում:

Դու մի վհատվիր, իմ ընկեր անգին,  
Որ ողջ աշխարհը սև մուրեք է պատել՝  
Ու սև օրերի փոքրիկն ուժգին,  
Պայքում է, գոռում մարդկության գլխին...  
Մի նայի՛ր հեռուն, տես ինչպես գարեան  
Նորոգ արևի շողերը ուժգին  
Նոր քափ են առնում, որ այս սև մուրի  
Կապանները գոռ փշրեն, խորտակեն...  
Դու մի՛ վհատվիր, որ սև օրերի  
Փոքրիկն է գոռ նայքում մեր գլխին.  
Դու մի վհատվիր, մոտ է վախճանը  
Մարդկության գլխին ծանրացած մուրի...

Այս և նման կարգի այլ բանաստեղծություններում աշխատավորներին կոչ է արվում կրկնապատկել իրենց ուժերը, լքել վեճ համառ, անկոտրում կամքով՝ ջախջախելու այն ամենը, ինչ խոչընդոտում է նրանց:

«Փայլակ»-ում հանդես եկող հեղինակները համոզում են ընթերցողներին, որ հեռու չէ հաղթանակի ժամը, որ այն պետք է նվաճել սեփական ուժով: Ուրախության մեջ է նշվում, որ անցնում են տխուր օրերը, երկնքում ճառագում է վառ արշալույսը և դա էլ իր հետ բերում է ազատության շողեր:

Անցավ ժամանակ, անցան և օրեր,  
Ճշմարտությունը բարձրացավ ի՛ ոտ,

<sup>25</sup> «Փայլակ», № 74, 1916 թ., սեպտեմբերի 25:

Ելավ հաղթական Արշալույսը վառ,  
Եվ երգչի շիրմին, վաղուց մոռացված,  
Ազատությունը փայլուն շողերով  
Գրեց հաստատուն իր սուրբ մահաբաժան<sup>26</sup>:

Սիմոն Սիմոնյանը այս բանաստեղծությունում («Մոռացված շիրմի») հայտնում է այն միտքը, որ ազատության համար ընկածները մահ չունեն, նրանք անմահ են, և նրանց շիրմին կկանգնեցվի «սուրբ մահաբաժան»:

Թերթի էջերում տպագրվող ինքնուրույն ստեղծագործությունների կողքին տեղ էին գտնում նաև թարգմանական գործեր՝ մեծ մասամբ նովելներ և պատմվածքներ: Թարգմանությունների մեծ մասը կատարում էին Լ. Վարդունին և Գր. Ներսիսյանը:

Հետաքրքիր մտքեր են պարունակում գրականագիտական հոդվածները: Երբեմն թերթը առանձին էջեր, հոդվածներ էր նվիրում այս կամ այն ստեղծագործողին: Արժեքավոր է, մասնավորապես, 1917 թ. ապրիլի 16-ի համարում տպագրված «Վշտի երգիչը» ծավալուն հոդվածը՝ նվիրված Ալեքսանդր Յատուրյանին: Հոդվածագիրը բավականին հարուստ փաստերով ներկայացնում է գրողի կյանքը և գրական գործունեությունը, կանգ առնում մի քանի բարձրարժեք բանաստեղծությունների վերլուծման վրա:

Տպագրվում էին նաև ֆելիետոններ, որոնց նյութը հիմնականում Շուշիի խնուր առօրյան էր, քաղաքային դումայի գործունեությունը: 1915 թ. ապրիլի 5-ի համարում լույս տեսած «Քաղաքային դումայի նիստը» վերնագրով ֆելիետոնը համեմված է սրամիտ խոսքերով, օգտագործված են գեղարվեստական արտահայտման միջոցներ: Սակայն նշենք, որ բոլոր ֆելիետոնները գրված են Ղարաբաղի բարբառով:

Թերթի տեսադաշտից դուրս չի մնում նաև հակահեղափոխական տպագիր օրգանների խարաղանումը, որոնք փորձում էին սուտը ներկայացնել իբրև ճշմարտություն:

Հայտնի է, որ Բաքվում լույս տեսնող դաշնակցական «Արև» թերթը չափ ու սահման չէր ճանաչում աչ ու ձախ հերյուրանքներ տարածելու ազնիվ մարդկանց և բարեգործական

<sup>26</sup> «Փայլակ», № 40, 1917 թ., հունվարի 25:

ընկերությունների հասցեին: Նա ամենից շատ սովոր էր փաստերը ցուցադրել ծուռ հայելու մեջ և դատարկ կրակոցներ արձակել: Պատահական չէր, որ գրեթե բոլոր առաջադիմական տպագիր օրգանները հանդես էին գալիս «Արև»-ի դեմ:

«Արև»-ի կեղծ փաստարկների և նրա անհիմն եղրակացությունների քննադատությանը կարելի է ծանոթանալ «Փայլակ»-ի 1916 թ. սեպտեմբերի 25-ի («Սրտացավ «Արևը»»), 1917 թ. փետրվարի 9-ի («Որոտ «Արև»-ի էջերից») և այլ համարներում: «Սրտացավ «Արևը»»-ը հոդվածում թերթը գրում է. «Մենք վրդովվում ենք ո՛չ թե նրանց դեմ, ովքեր կարողանում են Շուշիի խեղճ իրականության մեջ շահատակություններով հռչակվել, մենք վրդովվում ենք ո՛չ թե կատարված ավելի քան ցավալի դեպքերի հանդեպ, այլ նրա դեմ, որ այդ բոլորը հովանավորվում ու պաշտպանություն են գտնում մի թերթի կողմից, որպիսին «Արև»-ն է, որը հավակնություն ունի «ժողովրդական», «գեմոկրատիկ» և այլ մականուններով հորջորջել իրեն»<sup>27</sup>:

«Փայլակ»-ը քննադատում է նաև 1917 թ. Շուշիում լույս տեսնող «Ապառաժ» դաշնակցական թերթը, որի խմբագիրը դաշնակցականների ցուցակի մեջ հիշատակված Ղուկասյան ղարոցի տեսուչ Հայրապետ Սուսայելյանն էր:

Գավառական լուրերի և տեղական կյանքի որոշ նորությունների հաղորդման զուգընթաց, այդ թերթը ուներ «Հ. Հ. դաշնակցություն» բաժինը, ուր ներկայացվում էին միայն դաշնակցականների գործողությունները, գովերգվում նրանց գործելակերպը:

Այս թերթը մի քանի անգամ ելույթ է ունեցել «Փայլակ»-ի դեմ: Ըստ երևույթին վերջինս բավականին «անհանգստություն» է պատճառել «Ապառաժ»-ին: № 1-ում<sup>28</sup> «Մամուլ» ընդհանուր խորագրի տակ («Մենք և «Փայլակը»» վերնագրով) «Ապառաժ»-ը գրում է. «Բայց ցավոք սրտի «Փայլակը» էլի սկսել է թույլ տալ անկորրեկտություններ, որ մենք համարում ենք նշան նախկին դիրքը բռնելուն»:

<sup>27</sup> «Փայլակ», № 74, 1916 թ., սեպտեմբերի 25:

<sup>28</sup> Լույս է տեսել 1917 թ. մայիսի 13-ին:

«Ապառաժ»-ը փորձում է պատասխանել «Փայլակ»-ին՝ նրա ճիշտ խոսքը համարելով «անկոռեկտություն»:

«Փայլակ»-ը «Ապառաժ»-ին մերկացնում էր նաև այն բանի համար, որ նա երկինք էր բարձրացնում դաշնակցության պարագլուխներին, անվանելով նրանց աշխատավոր ժողովրդի շահերին մինչև վերջ նվիրված գործիչներ:

«Ապառաժ»-ի 1917 թ. հուլիսի 2-ի համարում («Հ. Հ. Դ» վերնագրի տակ) այս անգամ դաշնակցական օրգանը անհրաժեշտ էր գտել առաջին էջում, խոշոր տառերով գրված դաշնակցության Շուշիի կոմիտեի կոչի մեջ հայտարարել, որ «Փայլակ»-ը ճիշտ ուղու վրա չէ, և որ միշտ, տեղին անտեղի քննադատում է իրենց: Բայց դա ճշմարտությունից շատ է հեռու: «Փայլակ»-ը լինելով աշխատավորական թերթ, ժամանակին նկատում էր իր հակառակորդի թշնամական դիրքը և հարվածներ հասցնում նրան:

Շուշիի «Ապառաժ» թերթին լավ էր պատասխանում նաև «Մշակ»-ը իր խմբագրական հոդվածներում: Նա պարզ ու որոշակի նշում էր «Ապառաժ»-ի առաջին «ղգույշ» քայլերը, նրա դիրքը՝ դաշնակցականների փառաբանման գործում: «Մշակ»-ը գրում է. «Նոր թերթը (խոսքը «Ապառաժ»-ի մասին է—Ս. Ա.), իհարկե խոհեմաբար լուծում է, թե ապա ինչպես եղավ, որ ամբողջ հայ ազգը Թուրքիայում կործանվեց և ջրնջվեց, եթե նա ուներ այդպիսի մի գորեղ և իսկական պաշտպան և թե արդյոք որքան շահած կլիներ հայ ժողովուրդը, եթե «դաշնակցությունը» գոյություն չունենար:

Գալով ներկա ռուսական հեղափոխության, թերթը ոչ մի փաստ չի տալիս, թե արդյոք ինքը՝ դաշնակցությունը ինչ մասնակցություն է ունեցել այդ հեղափոխության մեջ. և արդյոք նա չէ՞ հանդիսանում մի հյուր, որ պատահամբ եկել, ընկել է մի խրախճանի մեջ, ինչպես և ուրիշ շատ հյուրեր»<sup>29</sup>:

«Փայլակ»-ը պայքարում էր նաև ժողովուրդների համերաշխության և բարեկամության, ազգային հարցի ճիշտ լուծման համար: Նրա տպագրած մի շարք նյութերում կոչ էր արվում աշխատավորներին՝ լուծելու աղգային ինքնորոշման

հարցը, ստեղծելու այնպիսի դեմոկրատական կարգեր, որ ապահովեն աղատ ու խաղաղ կյանք, տան ստեղծագործական աշխատանք կատարելու անհրաժեշտ պայմաններ:

Այս հարցին նվիրված խմբագրական հոդվածը («Հեղափոխության հաղթանակները») ավարտվում է հետևյալ խոսքերով. «Եվ փշրված շղթաները թոթափելով, թող բոլոր ժողովուրդները իրենց ազգային ինքնորոշման հետ միասին կռեն, կոփեն համայն Ռուսաստանի դեմոկրատիկ հանրապետության այն հոյակապ շենքը, ուր ամենքի համար կա ազատ անկյուն, ուր ամենքի համար գոյություն ունի ազատ շնչելու օդ»<sup>30</sup>:

«Փայլակ»-ը մեծ ցնծությամբ է ընդունում Շուշիում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու լուրը: Թերթի խմբագրականը վերնագրվում է՝ «Ողջունում ենք»: Այստեղ կարդում ենք, ««Փայլակ»-ի անցյալ համարում հաղորդել էինք, որ Շուշիում արդեն կազմակերպվում է սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, որին անդամագրվելու են, ինչպես և սպասելի էր, առանց ազգի խտրության բոլոր նրանք, որոնք տոգորված են սոցիալիստական իդեալներով, պրոլետարական հաղթանակի նպատակներով, որ արձանագրված են միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի վրա: «Փայլակ»-ը, որ այդ գաղափարների շերտ պաշտպանն է հանդիսացել ու ջանացել է այդ գաղափարներին ծառայել՝ չնայած աննպաստ պայմաններին, չի կարող իր խնդակցությունն ու անհուն ուրախությունը չհայտնել, որ վերջապես մեր գավառական նեխված իդեական մթնոլորտում հանդես է գալիս մի թարմ գավառական հոսանք, որ մեծ դեր ունի կատարելու և նույնքան ավելի մեծ, հսկայական աշխատանք ունի արժարժելու տեղական քաղաքական-հասարակական կյանքի բարեշինության մեջ»<sup>31</sup>:

Այնուհետև թերթը հայերեն և ռուսերեն լեզուներով, խոշոր տառերով, առաջին էջի վրա հայտարարում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Շուշիի բյուրոյի գտնվելու տեղի մասին:

1917 թ. 33-րդ համարից սկսած «Փայլակ» թերթի ճակա-

<sup>30</sup> Փայլակ», № 22, 1917 թ., ապրիլի 2:

<sup>31</sup> «Փայլակ», № 28, 1917 թ. ապրիլի 28:

<sup>29</sup> «Մշակ», № 108, 1917 թ., մայիսի 25:

տին գրվում է «Քաղաքական-հասարակական սոցիալ-դեմոկրատական թերթ» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լուղունգը:

Թերթը իր էջերում լայն տեղ է տալիս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության Շուշիի բյուրոյի աշխատանքը լուսաբանող նյութերին: Ընթերցողը այնտեղ գտնում է իրեն հուզող առանձին հարցերի որոշակի պատասխանները: Նրա հրապարակած նյութերը կարդացվում են մեծ հետաքրքրությամբ:

«Փայլակ»-ը իր համեստ ուժով ձգտում էր նպաստել բարձրացրած հարցերի լուծմանը (թեև որոշ հոդվածներում, մասնավորապես, խաղաղության, սահմանադիր ժողովի, բուրժուազիայի դերի, հողի և այլ հարցերի վերաբերյալ ելնում էր ոչ ճիշտ դիրքերից):

Նա իր շուրջը համախմբել էր Ղարաբաղի առաջավոր մտավորականներին, բանվորներին և գյուղացիներին, այդ թվում նաև Շուշիի ռեալական, Մարիամ-Ղուկասյան օրիորդաց, հայոց թեմական դպրոցների բարձր դասարանների աշակերտությանը:

«Նստուման» ծածկանվան տակ հաճախ կուլտուր-լուսավորական հարցերի մասին հոդվածներ ու թղթակցություններ էր տպագրում Առաքել Առաքելյանը:

Նրան հետաքրքրում էր նաև գավառի տխուր առօրյան, բանվորների և գյուղացիների ծանր վիճակը: Այդ շարքի նյութերից էին «Միլիտարիզմը և գյուղացիությունը» (1917 թ. հունիսի 22), «Շաքարի բաշխումը Շուշի քաղաքի մեջ» (1917 թ. հունիսի 8) և այլն:

Մեծ մասամբ տեսական հոդվածներով էր հանդես գալիս Սարգիս Դանիելյանը<sup>32</sup> («Ս», «Ս. Դանիելյան», «Սուր-Դան», «Ս. Դ.» և այլ ստորագրություններով): Արժե նշել նրա հոդվածներից, օրինակ, «Ինչպե՞ս էին մեզ թալանում հին կառա-

<sup>32</sup> Նա հեղափոխական գաղափարներով տոգորված հրապարակախոս էր: Հոդվածները տպագրվում էին ոչ միայն «Փայլակ»-ի, «Նեցուկ»-ի այլև Բաքվում և Քիֆլիսում լույս տեսնող հայերեն պարբերականների էջերում:

Սովետական տարիներին նա կատարում էր հասարակական-քաղաքական աշխատանք երկրի տարբեր վայրերում:

վարույթյան ժամանակ կամ ինչպե՞ս էին հարկեր հավաքում» (1917 թ., մայիսի 4 և այլ համարներում), «Պահպանողական կամ բուրժուական սոցիալիզմը համերաշխության պատգամներով» (1917 թ., հունիսի 15-ի և 16-ի համարներում), «Գավառի կազմակերպության խնդիրը» (1917 թ., ապրիլի 23) և այլն: Նրա գրիչը սուր էր, մարտական, աչքի էր ընկնում բարձր գաղափարայնությամբ և նյութը մատչելի, անպաճուճ լեզվով մատուցելու շնորհքով: Իր հոդվածներում նշավակում էր նրանց, ովքեր խոսում էին մարքսիզմի դիրքերից, բայց փաստորեն գործում էին նրա շահերի դեմ:

Դաշնակցական գործիչների նկատմամբ նրա քննադատությունը սուր էր և փաստարկներով առատ: Նրանից չէր վրիպում հակաբոլշևիկյան ոչ մի «մանրուք»: «Շուշիի Հ. Հ. դաշնակցության հասարակական դասախոսությունը» վերնագրով մի ծավալուն ինֆորմացիայում, որ լույս է տեսել թերթի 1917 թ. ապրիլի 28-ի և հաջորդ համարներում, Ս. Դանիելյանը մերկացնում է դաշնակցական Հայրապետ Մուսայելյանին, որը ապրիլի 23-ին դասախոսություն էր կարդացել «Ռուսական ներկա հեղափոխությունը» վերնագրով և ճիշտ չէր ներկայացրել մի շարք թեզեր, սխալ էր բացատրել բանվորների և գյուղացիների դաշինքի հարցը, գալիք հեղափոխությունը չէր գիտել որպես աշխատավորության ազատագրության վճռական քայլ:

Բավականին ակտիվ էր գործում հաշիկ Սամվելյանը, որը հանդես էր գալիս «Նիմանդ», «Խ. Ս.» և այլ ծածկանուններով: Մի որոշ ժամանակ (1917 թ. № 33-ից մինչև 40-ը) նա դառնում է «Փայլակ»-ի խմբագիրը: Նրա հոդվածները շոշափում էին ամենատարբեր հարցեր. երբեմն հանդես էր գալիս տարբեր երկրների արտաքին, ռուսական վերաբերյալ կազմած տեսություններով, մի այլ անգամ խոսում էր գավառի հոգսերի մասին, մերկացնում էր անազնիվ, երկերեսանի մարդկանց: «Արձագանքներ» ընդհանուր վերնագրի տակ Խ. Սամվելյանը դետեղում է «Թող են փշում մեր աչքերին...» հոդվածը, ուր քննադատում է այն մարդկանց, ովքեր «աշխարհիս ուժեղներ» ի առաջ սողալիս ու քծնելիս» գիտեն պահել իրենց գոռոզ ու ինքնահավան, կոխկրտելով ստանձնած հասարակական պար-

տականությունները, ծակ ու ծուկ են որոնում հերոսական  
փախուստի, միայն թե փրկեն իրենց թանկագին կյանքը...»<sup>33</sup>։

Այս նույն միտքը նա զարգացնում է մի այլ՝ «Մաղր թե՞  
ապտակ» հոդվածում։

Նրա խմբագրական աշխատանքը ուներ շատ ուսանելի կող-  
մեր, պատմում է պրոֆ. Ա. Առաքելյանը։ Սիրում էր տպա-  
գրել լրագրային բոլոր ժանրերով գրված նյութեր, բայց գերա-  
դասում էր ֆելիետոնը։

Նա խնդրում էր առանձին մարդկանց հանդես գալ ֆելիե-  
տոններով։

Խ. Սամվելյանը վերին աստիճանի հայրենասեր, բարե-  
խիղճ և սիրելի մարդ էր։ Չնայած ավարտել էր ուսսական գիմ-  
նազիան, բայց տիրապետում էր աշխարհաբարին ու գրաբա-  
րին։

«Փայլակ»-ին աշխատակցում էին նաև ուրիշներ, որոնց  
նյութերը հետաքրքրում էին ընթերցողների լայն շրջանակին։

Հոդվածներով, թղթակցություններով և նամակներով հան-  
դես էր գալիս թերթի պատասխանատու քարտուղար Մելիքսեթ  
Նսայանը (հաճախ «Մեկը. Նսայան», «Մ. Ն.» ստորագրու-  
թյուններով)։ Նրա նյութերը մեծ մասամբ տպագրվում էին  
«Մեր թղթակիցները» ընդհանուր խորագրի տակ։ Նա պարսա-  
վանքի էր ենթարկում նրանց, ովքեր գիտեին միայն կուրծք  
ծեծել, ծրագրեր կազմել, բայց իրականում ոչինչ չանել։

Սարկավումով էին համեմատված թերթի մի այլ ակտիվ աշ-  
խատակցի՝ Գր. Տեր-Ավետիքյանի հոդվածներն ու թղթակցու-  
թյունները։ Նա կոչ էր անում ընթերցողներին հանդես բերե-  
լու եռանդ ու անկոտրում կամք հարցերի լուծման մեջ։ Պետք  
է լինել գործի և ոչ թե խոսքի մարդ, ասում էր նա։ «Պետք է  
գործել» հոդվածում Գր. Տեր-Ավետիքյանը գրում է. «Երկրներ  
են ավերվել, քաղաքներ ու շեն գյուղեր սրի ու կրակի ճա-  
րակ դարձել, իսկ բնիկները մերկ ու սոված, կյանքի անողոր  
ճակատագրին մատնվել։

Ամենուրեք՝ կրակ, մահ, սարսափ։

Ընդհանուր լքման ներկա օրերում, վախկոտներն ու այլա-  
սերվածներն են միայն, որ կարող են հուսահատվել ու լռել։

<sup>33</sup> «Փայլակ», № 1, 1915 թ., մարտի 8։

Առողջ մտքից բխող խոսք ու այդպիսով առաջնորդվող  
գործ է պահանջվում մեզնից, որին և ձգտելու ենք ըստ շարի  
ու կարողության, հնարավոր սահմաններում»<sup>34</sup>։

Լեոն Վարդունին հանդես էր գալիս «Սյունեցի Լեոն», «Ար-  
ցախեցի», «Վարանդեցի» և այլ ստորագրություններով։

Նա ձգտում էր ամեն կերպ օգնել «Փայլակ»-ին, համակող-  
մանի լուսաբանելու տեղական կյանքը, որի համար էլ դեռևս  
1915 թ. մարտի 19-ին գրել է. «Փայլակ»-ը պետք է երկար  
ապրի և ոչ թե իր նախորդ «Ղարաբաղ» օրագրի պես դեռ  
չծաղկած թառամի»։

Տարբեր թեմաներով գրված թղթակցություններ և նամակ-  
ներով «Փայլակ»-ի էջերում տեղ էին գրավում գավառական  
և թեմական դպրոցների ուսուցիչներ Ս. Տեր-Գասպաբջանը,  
Ստ. Շերմազանը, Իսաջան Տեր-Հովհաննիսյանը, Տիգրան  
Տեր-Գրիգորյանը, իրավաբան Ստ. Մանդինյանը և ուրիշներ։

Թերթի հրատարակիչ Լեոն Վարդապետյանը, որը անվա-  
նապես էր միայն թերթի տակ ստորագրում, նույնպես հանդես  
էր գալիս բազմաթանր նյութերով, մեծ մասամբ «է. վ.» ստո-  
րագրությամբ։ Նա գրում է պատերազմական ակնարկներ,  
քաղաքական պամֆլետներ։

Ճիշտ է, նա բոլշևիկ չէր, բայց դա չէր խանգարում նրան  
«Փայլակ»-ում հրատարակելու քաղաքականապես լիարժեք  
հոդվածներ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նյու-  
թեր։

Ընթերցողները անհամբեր սպասում էին թերթի հերթական  
համարի լույս ընծայմանը։ Թերթը բազմաթիվ բաժանորդներ  
ունեի Ղարաբաղի սահմաններից դուրս, որոնցից շատերը աշ-  
խատակցում էին մեծ եռանդով։ Սերգեյ Կարդանյանը մեղ  
համար գրած հուշերում պատմում է. «Երիտասարդ բանաս-  
տեղծ Գրիգոր Ներսիսյանը Ղարաբաղի հայոց թեմական դպ-  
րոցն ավարտելուց հետո բանակ է զորակոչվում։ Նա գտնվում  
էր Պետրոգրադում և կանոնավոր ստանում էր «Փայլակ»-ը,  
բանաստեղծություններ ու նամակներ ուղարկում խմբագրու-  
թյանը։ Նրա նամակագրական կապը խմբագրության հետ մեծ  
օգուտ էր բերում։ Խմբագրությունը նրա միջոցով իրազեկ էր

<sup>34</sup> «Փայլակ», № 58, 1916 թ., հուլիսի 31։

ցարական Ռուսաստանի մայրաքաղաքի—Պետրոգրադի եռուգեռին, քաղաքական և հասարակական կյանքին, աշխատավորների տրամադրություններին, նույնպես և հեղափոխական ելույթներին:

1916 թ. դեկտեմբերն էր. ծանր ձմեռ էր, դուրսը ցուրտ. տողերիս գրողը խմբագրության քարտուղար Մելիքի հետ գրուցում էր, իսկ բանվորները պատրաստվում էին թերթի հերթական համարի տպագրմանը, երբ ներս մտավ խմբագիրը, մի ծրար ձեռքին: «Այս նամակը նոր ստացա. բանաստեղծություն է ուղարկել Գր. Ներսիսյանը, որից կարելի է կռահել, որ Պետրոգրադը հղի է հեղափոխական ելույթներով: Այս համարում բանաստեղծությունը պիտի անսպասան տեղավորել»,—ասաց խմբագիրը:

Տպարանատեր Բաբաջանյանի բողոքին հակառակ գրաշարը, առանց մեր խնդրանքի, վերցրեց բանաստեղծությունն ու սկսեց շարել և յուրաքանչյուր տողը վերջացնելուց բարձրաձայն ու ոգևորությամբ ընթերցել: Բանաստեղծությունը տեղավորվեց էջում. մենք դուրս եկանք տպարանից, երբ տպագրիչն սկսեց տպել, մեզ հետ տանելով «Փայլակ»-ի թարմ համարը, որում ղետեղված էր գալիք հեղափոխական պոռթկումների մարզարեությունը»:

Բանաստեղծը արդեն լսում էր հեղափոխության ոտնաձայները և փառք տալիս այն հերոսներին, որոնք վառում էին ազատության խարուկը, մարտնչում էին շահագործողական լուծը ջախջախելու համար:

1917 թ. ապրիլի 4-ին Պետրոգրադից գրած նամակ-ակնարկում իր հայրենակիցներին նա ասում է. «Հեռու չէ մարդկության ազատության, մեր ցանկալի հաշտության արշալույսը...»:

Մենք հավատում ենք...: Նա կգա, նա անհրաժեշտ է, նա պետք է գա... Ազատություն և հաշտություն սիրաշող և հուսառատ, կենսաբույր արշալույսը.

Փառք մեր օրերի հերոսներին:

Փառք և նոցա, համամարդկային ապստամբության խարուկը վառող հերոսներին»<sup>35</sup>:

<sup>35</sup> «Փայլակ», № 26, 1917 թ., ապրիլի 20:

«Փայլակ»-ը գործել է դժվարին պայմաններում: Թերթը այս մասին մի քանի առիթներով է հիշում: 1916 թ. դեկտեմբերի 1-ի համարում ««Փայլակ»-ի ընթերցողներին» հոդվածում նշվում է. «Երկու տարի, փոքր ընդմիջումներով, մեր թերթը կարողացավ պարբերաբար լույս տեսնել և իր գոյությունամբ ապացուցել, թե որքան անհրաժեշտ է նա զգացվել մեր դավառական իրականության մեջ»:

...Ահա այն անհրապույր հանգամանքներում է գործել «Փայլակ»-ը, այդ դաժան պայմաններում է նա բարձր բռնել իր դեմոկրատիկ դրոշակը և ներածին շափ ծառայել գավառի կուլտուրական զարգացման ու մտավոր առաջադիմության...:

...Սակայն այն աներկբա իրողությունը, որ մեր թերթը ստեղծել է արդեն մշտական ընթերցողների բազմություն և անհրաժեշտ պահանջ է դարձել գավառական որոշ շրջանների, մեզ քաղցր հույս է ներշնչում ավելի ևս ամրապնդելու «Փայլակ»-ի գոյությունը, իբրև գավառական կյանքի արտահայտիչ ձայնի, հայ գյուղացիության և գավառի փոքրաթիվ ուսմկավար ինտելիգենցիայի հասարակական շահերից ծառայող գործոն»:

Իրոք, «Փայլակ»-ը անդավաճան ծառայեց աշխատավորների շահերին, օգնեց նրանց՝ առաջադիմության համար մղվող պայքարում:

Եթե քաղաքական-գաղափարական տեսակետից «Փայլակ»-ը սուր սայթաքումներ գրեթե չէր կատարում (հատկապես վերջին շրջանում), ապա նույն բանը չի կարելի ասել օգտագործվող ժուռնալիստական ձևերի, ղետեղվող նյութերի կառուցվածքի, արտաքին տեսքի, ձևավորման տարրերի և տպագրական կուլտուրայի մասին:

Նախապես ասենք, որ նկատելիորեն թույլ է մի շարք նյութերի ներքին կառուցվածքը, տրամաբանական կապը. երբեմն բացակայում են փաստերին հաջորդող վերլուծումները, հիմնական փաստը չի զանազանվում երկրորդականից: Պատահական չէին նաև նյութերի ծավալուն լինելը:

«Փայլակ»-ը հաճախ էր հանդես գալիս միևնույն հարցի

շուրջը, բայց վատն այն էր, որ չէր հայտնում գրածի ներգործութեան մասին:

Նկատելի են տպագրվող առանձին նյութերի գործնական-նութեան պակասն ու անօգտակարությունը, հրատարակախոսական թույլ թափը: Անհրաժեշտ էր, որ յուրաքանչյուր փաստ իրենից ներկայացնի կենդանի հետաքրքրություն, օժտված լինի ընթերցողների վրա ազդելու ուժով:

Թերթում տեղ էին գտնում նաև այն թղթակցությունները, որոնք տառապում էին գրասենյակային ոճով, երևույթների, փաստերի շոր ու ցամաք հրատարակմամբ, նկարագրական տարրի գերիշխմամբ: Այստեղ կարևոր էր դառնում նաև նյութի մատուցման ձևը: Պատահում են այնպիսի հաղորդումներ և թղթակցություններ, որոնք գրական մշակման չեն ենթարկված, հեղինակի կողմից չի գտնված միտքը մատչելիորեն արտահայտելու միջոցը: Այդ էր պատճառը, որ երբեմն տպագրված նյութերի նպատակը պարզ չէր, և ընթերցողը չէր կարող լիովին ընկալել հեղինակի միտքը:

«Փայլակ»-ը իր արտաքին ձևավորմամբ նույնպես աչքի չէր ընկնում: Յուրաքանչյուր էջը բաղկացած լինելով շորս սյունակից, այն հնարավորություններ չէր ընձեռում խելամորտորեն և պատշաճ ձևավորելու նյութերը: Գրեթե ոչ մի նյութ էջում չի «կանգնեցվել» երեք սյունով. եղել են կա՛մ մեկ, կա՛մ երկու Երբեմն դժվարություններ են հարուցվել ընթերցողի համար. նյութի մեծ մասը տեղավորել են մի էջում և միայն շատ փոքր մասը՝ այլ էջում և ընդհակառակը, երբ այդպես վտրվելու կարիք բոլորովին չի զգացվել:

Ուշադրություն չի դարձվել վերնագրերի և խորագրերի ձևավորման և իմաստի վրա: Հաճախակի դրվել են «Մեր թղթակիցները» վերտառությունը, բայց դրա տակ արվել է բոլորովին այլ հաղորդում: Օրինակ՝ 1917 թ. հունիսի 25-ի համարի շորորդ էջում «Մեր թղթակիցները» խորագրի տակ գետեղված է «Աշակերտության գործը Գորիսում» թղթակցությունը, որտեղ պատմվում է Ա. Բակունցի շնորհիվ Գորիսում կազմակերպված աշակերտական միություն մասին, մի միություն-խմբակ, որը հոգ էր տանում գավառում կուլտուր-լուսավորական օջախներ ստեղծելու մասին:

Հաճախ էլ հոգնակի վերնագրեր են դրվել, դրանց ներքո գետեղելով մեկ ինֆորմացիա, հաղորդում կամ էլ թղթակցություն:

Կոնկրետ չէր «կրատու» բաժինը: Ծիշտ է, սիստեմատիկաբար լուրեր էին հաղորդվում Շուշիում գործող ընկերությունների և կազմակերպությունների առօրյայից, տպագրում նրանց ծանուցումները, բայց յուրաքանչյուր լուր փաստորեն վերածվում էր ինֆորմացիայի կամ հաղորդման, երբեմն էլ հիմնական նյութը, փաստը խճողված էր անհարկի մտքերով: Եվ պատահական չէին միշտ թերթի շորորդ էջի երեք սյունակ պրազեցնող «լուրեր»-ը:

«ԾԻՍԾԱՆ»

Ղարաբաղի աշխատավորությունը սիրում էր գեղարվեստական խոսքը և պատահական չէ, որ գավառի մտավորականության ուժերով երբեմն հրատարակվում էին գրական ամսագրեր, հանդեսներ, ժողովածուներ, որոնք բովանդակում էին տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններ:

Ինչ խոսք, գրական այդ պարբերականներն ու ժողովածուները լույս էին տեսնում մեծ դժվարությամբ: Անմխիթար էր ոչ միայն տպարանական բազան, այլև չկային ֆինանսական միջոցներ: Պետությունը ոչ մի կոպեկ չէր տրամադրում ազգային լեզուներով թերթ կամ ամսագիր հրատարակելու համար: Ավելին, նա գջում էր աշխատավորների վերջին միջոցները:

Կուլտուրական-լուսավորական որևէ ձեռնարկման համար անհրաժեշտ էին դրամական միջոցներ: Ահա թե ինչ է պատմում Լևոն Վարդունին մեր խնդրանքով գրած հուշերում. «1915 թվականն էր. մեր Շուշի հոյակապ քաղաքի գեղեցիկ ամառն էր. ես թեմական դպրոցի վերջին ավարտական դասարանի աշակերտ էի. գրում էի բանաստեղծություններ և գրավոր կապույտների մի շարք երիտասարդ գրողների հետ՝ Գառնիկ Ղազարյա-

# ՇԻԱԾԱՆ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐԻՆՍԵՆՍԻՆ

ԵՒ ԳՆՆԱԳԵՏՍԻՆՆԵՐԻ

1916 թ.

№ 1  
Մ Ե Ր Տ

Ա. ՏԱՐԻ



Տ Ա Ր Ե Ր  
Տպարան Մ. Բարաջանեանի  
1916

նի, Ավագ Կոծինյանի<sup>1</sup>, Խորեն Լորենցի<sup>2</sup> հետ, որոնք հենց այդ ամառ պետք է գալին Շուշի՝ հանգստանալու: Այդ ամառ Շուշի էր եկել և Ազատ Վշտունին. եկան նաև վերոհիշյալ ընկերները, և սկսվեց մեր գրական կյանքը: Ամեն օր հավաքվում էինք և ընթերցում մեր բանաստեղծությունները. արձակ գրում էր միայն Ավագ Կոծինյանը: Մի օր որոշեցինք հրատարակել մի ամսագիր, բայց որովհետև բոլորս երիտասարդ էինք, մեզ չէին թույլատրի: Այդ ժամանակ Շուշիում էր ուսուցիչ և գրող Մխակ Պետրոսյանը<sup>3</sup>, որը հասակով բոլորիցս մեծ էր. նա հավանություն տվեց մեր մտահղացմանը և համաձայնվեց լինել պաշտոնական խմբագիր: Դժվարությունը միայն նյութականի հարցն էր: Ես այդ ժամանակ լավ ձայն ունեի և Շուշիում եղած բոլոր համերգներին մասնակցում էի: Որոշեցինք կազմակերպել մի համերգ: Այդպես էլ եղավ. կազմակերպեցինք համերգ Ղուկասյան օրիորդաց դպրոցի դահլիճում: Համերգում երգերով հանդես եկա ես, գիտառով՝ իմ ընկերներից մեկը՝ Հովհաննես Թորոսյանը, իրենց բանաստեղծությունների արտասանությամբ՝ Ազատ Վշտունին, Գառնիկ Ղազարյանը, Խորեն Լորենցը:

Այդ տարի գաստրոլներով Շուշի էր եկել Հովհաննես Ա-

<sup>1</sup> Ծնվել է 1891 թ. Գուգարքի Համգալիման գյուղում: Հայրենի ծխական դպրոցն ավարտելուց հետո 1907 թ. ընդունվել է Ներսիսյան դպրոցը, որը և մասնակցել է դասադուլներին: Բաքվում մոտիկից ծանոթացել է բանվորական կյանքին, ստեղծելով մի շարք գեղարվեստական կտավներ: Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, ֆելիետոններ: Մահացել է 1918 թ. քաղաքացիական կռիվների ժամանակ:

<sup>2</sup> Խորեն Լորենցը (Բորյան) ծնվել է 1892 թ., Կարմիրի շրջանի Ներքին ճամբարակ գյուղում: Հայրենիքում սկզբնական կրթությունն ստանալուց հետո անցել է Բաբու և 1911 թ. ավարտել Մեսրոպյան դպրոցը:

1906 թ. նրա ստեղծագործությունները լույս են տեսել «Պատանի արմառախ»-ում, Նոր-Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթում և այլ պարբերականներում: 1917 թ. մտել է բոլշևիկյան կուսակցության մեջ: Մեծ են նրա ծառայությունները Ադրբեջանում հակահեղափոխական բանդաների մերկացման գործում: Մահացել է 1919 թ.:

<sup>3</sup> Սովետական տարիներին նա աշխատում էր ԼՂԽ-ի Ստեփանակերտի շրջանի Դաղբուլաղ գյուղում՝ իբրև ուսուցիչ: Անտիպ մի շարք աշխատություններ ունի՝ մասնավորապես մանկավարժության գծով: Սիստեմատիկաբար աշխատակցում էր Թիֆլիսում, Բաքվում և Ստեփանակերտում լույս տեսնող պարբերականներին:

բելյանի խումբը. Արուս Ոսկանյանը նույնպես այդ խմբումն էր. խնդրեցինք Արուսին հանդես գալու մեր համերգում արտասանութեամբ: Նա իմանալով մեր համերգի նպատակը, ուրախութեամբ համաձայնվեց: Նրա մասնակցությունը բարձրացրեց մեր համերգի հեղինակությունը: Դահլիճը լեցուն էր համերգն անցավ մեծ հաջողությամբ, և ստացած եկամուտով մենք պատրաստեցինք մեր ամսագիրը, որ անվանեցինք «Ծիածան»:

Այսպիսով «Ծիածան»-ը լույս ընծայեցինք 1916 թ.՝ միայն մեկ համար, որին մասնակցեցինք մենք բոլորս մեր ստեղծագործություններով:

Իհարկե, դժվարությունը միայն ֆինանսական գրությունը չէր, անհրաժեշտ էր հասնել նաև այն բանին, որ ցարական մարմինները թուլատրեն Շուշիում գրական ամսագրի լույս ընծայումը, սակայն պայմանով, որ պահպանի բուրժուական կարգ ու կանոնը, իր ծրագրով և արժարժված հարցերով «անհանգստություն» չպատճառի գրաքննիչներին:

Սկզբում հատուկ խնդրանք է ներկայացվում Ելիզավետպոլի նահանգապետին, ապա 1915 թ. հոկտեմբերի 29-ին հայտնվում է մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեին, որ թուլատրվի Շուշի քաղաքի բնակիչ Միսակ Պետրոսյանին՝ տեղում հրատարակելու «Ծիածան» անունով ամսագիր: Այն կազմված էր հետևյալ ծրագրով. 1) գրականություն՝ արձակագրություն և պոեզիա, 2) արվեստ, 3) գրաքննադատություն, 4) հայտարարություններ, 5) փոստարկղ<sup>4</sup>:

Թուլատրվության մեջ նշված էր նաև, որ նորաստեղծ ամսագիրը պետք է լույս ընծայվի Մելքում Բաբաջանյանի տպարանում, ամիսը մեկ անգամ, չորաքանչյուր համարի արժեքը 25 կոպեկ:

«Ծիածան»-ի վերահսկիչ էր նշանակված Շուշիի քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Հայկ Կոստանդյանը:

Ամսագիր-ժողովածուի մեջ տպագրվեցին Ա. Վշտունու «Կա և չկա, չէ...», «Անապատի մեջ» չափածո գործերը, Խ. Լորենցի «Ճակատագիր» բանաստեղծությունը, Լ. Վարդունու

<sup>4</sup> Տե՛ս Վրացական ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 480, ց. 2, գ. 1118, թ. 1:

«Էլեգիա» արձակ բանաստեղծությունը, «Օձաբերդ» ժողովրդական լեգենդը, «Հարսնաբերդ» պոեմը, Գ. Ներսիսյանի «Ծն գիտեմ» չափածո, Գ. Ղազարյանի «Ծաղիկը» արձակ և այլ հեղինակների ստեղծագործություններ:

«Ծիածան»-ի խմբագրությունն ստեղծագործությունների ընտրություն էր կատարում. հաշվի էին առնվում և՛ գաղափարական, և՛ գեղարվեստական արժանիքները: Ամսագրի վերջին էջում հրատարակվում էին այն ստեղծագործությունների անունները, որոնք թույլ լինելու պատճառով, մերժվում էին խմբագրության կողմից:

«Ծիածան»-ի չափածո և արձակ գործերը մարմնավորում են մի կողմից ռեակցիայի տարիների հիասթափությունը, թախիծը, մյուս կողմից՝ ազատության ու երջանկության ձրգտումը: Առանձին գործերում, թեև ոչ ուղղակի կերպով, բողոք է հայտնվում բուրժուական աշխարհի ապականության դեմ, մի աշխարհ, ուր ռոտնահարված են սերն ու ընտանիքը, իսկ բարոյականությունը կախման մեջ է «դեղին սատանա»-ից:

Ա. Վշտունու «Կա և չկա, չէ...» բանաստեղծությունը, թեև հնչում է տխրագին, բայց զգացմունքային մի ստեղծագործություն է, որը մարմնավորում է մարդկային ներքնաշխարհը, վհատ տրամադրությունը: Ծանր են հաղթանակ տանող ուղիները, բայց պետք է հաղթահարել, կոչ է անում հեղինակը:

Մտիս մեջ աղոտ,

Երգ մը կա ցավոտ,

Որ վհատ, բեկ-բեկ միշտ կը կարկաչե.

«Ժպիտ չկա՛, չէ...»:

Իմ ուղին անմաղ,

Անհայտ ու անվարդ,

Չայն մը հեռավոր յար ինձ կը կանչե.

«Վախճան չկա՛, չէ...»:

Անուրջս մանուկ,

Մերք վառ, մերք դալուկ,

Լուրք բարձունքներեն—անվերջ կը հեչե.

«Չո՛ւր, զո՛ւր, չկա՛ չէ...»:

Իմ խիզախ հոգին,

Ժպտուն, լալագին,

Անհայտի գրկեն մեղմ կը մրմնչե.

«Կա և չկա՛, չէ...»:

Հեղինակը իր մի այլ ստեղծագործության մեջ («Անապատի մեջ») կյանքի համար կարևոր հարց է առաջ քաշում: Դա ձգմարտության վերահաստատումն է իրականության մեջ: Նա նկարագրում է, թե ինչպես անապատում մեկը երազ է տեսնում՝ ծովը սևացած, դարձած կատաղի, աղմկոտ և անհրապույր: Ծովում կան շատ դիակներ, «Կենդանի դիակներ լեռնակուտակ ալիքների մեջ», որոնց նայվածքն էր «ախտաբորբոք ու տարտամ, հրացայտ և աղերսող, բռնկանքներ սեղմած, դողգոջուն»: Ամենուր՝ «հառաչանք, քրքիչ, ժխոր»:

Միսակ Պետրոսյանի ստեղծագործությունների հերոսները նույնպես երազում են լավ օրեր, ձգտում են նոր կյանքի, հեքիաթային աշխարհի: Սա մասնավորապես արտահայտվում է նրա «Կարավանս գալիս է» բանաստեղծության մեջ.

Բայց չգիտեմ  
Ի՞նչ է բերում ինձ համար.  
Նոր կյանք, մուրա՛գ,  
Թե սին երա՛գ...:

Իսկ «Հերոսի երազը» փոքրիկ պոեմի հերոսը ցանկանում է ոչ միայն նոր կյանք, այլև միություն.

...Մեզ համար էլ քող ծաղկի  
Նոր Արշալույս, նոր-Տարի,  
Մի տեղ ձուլվենք նոր կյանքում,  
Հյուսվի մի՛ սիրտ, մի՛ հոգի...  
Մեզ օրոհեն անբնյհատ  
Նո՛ր կյանք-երազ ու հեփար:

Խորեն Լորենցի ստեղծագործությունները լի են հավատով պայծառ գալիքի նկատմամբ: Նա համոզված է, որ ի վերջո մարդկությունը իր ուսերից դեն կշարտի դարավոր լուծը: Այս միտքը իր արտահայտությունն է գտել «Ճակատագիր» բանաստեղծության մեջ:

«Ծիածան»-ում տպագրված են նաև Գառնիկ Ղազարյանի ստեղծագործությունները: Հեղինակը անմիջական է, իր սրտի խոսքը՝ զգացմունքով լի: Նրա արտահայտած միտքը առօրեական է, մարդկային սրտին հարազատ: Նրա մոտ իշխում է կյանքի նկատմամբ ունեցած լավատեսությունը: Գորիսից ու-

ղարկած՝ մի անվերնագիր բանաստեղծության մեջ ասում է, որ արդեն «մոտ է վախճանը այս սև գիշերվա», որ «գրսում հընչում է աղմուկը կյանքի, զանգերը ուրախ զողանջ են հյուսում»:

Գ. Ղազարյանը գովերգում է մարդկային առաքինությունները, հավատում սիրո հավերժությանը: Առանց սիրո, ասում է հեղինակը, չկա կյանք: Այս առումով հատկապես կարելի է նշել «Ծաղիկը» արձակ բանաստեղծությունը: Այստեղ սիրո նկարագրության մեջ հեղինակը գույներ չի խնայում: Ստեղծագործությունն ավարտվում է հետևյալ տողերով. «Եթե բնության մի խաղով պարտելիս վարդերը չորանան ու կորչեն հավետ, ես արցունքիս բյուրեղներով կլցնեմ նրա բաժակը, և նա չի թառամի...»: Հեղինակը սերը համարում է անթառամ և բնությունից մարդուն տված ամենամեծ պարգևը:

Լ. Վարդունին ևս նկարագրում է անաղատ, կաշկանդված սիրո ողբերգությունը: Ի դեպ, հեղինակը իր ուժերը փորձել է մի քանի ժանրերում. գրել է և՛ բանաստեղծություններ ու պոեմներ, և՛ լեզենդներ ու պատմվածքներ, որոնց մեջ առավել հաջող են ժողովրդական բանահյուսությունից վերցված թեմաներով գրված ստեղծագործությունները:

«Օձաբերդ» լեզենդում, որը նվիրել է իր հարգելի ուսուցիչ Ս. Գեմուրյանի հիշատակին, պատմվում է մի սիրո տխուր վախճանի մասին: Արգամ իշխանը ուներ մի շատ սիրուն աղջիկ՝ Գյուլվարդ անունով: Մի օր այդ աղջկան տեսնում է Արգամի հսկա ու քաջազուն հովիվներից մեկը՝ Սաքոն և սիրում է: Նա փախցնում է Գյուլվարդին: Իշխանը իմանալով սպանում է Սաքոյին:

Հեղինակը գեղարվեստական արտահայտման միջոցներով է ներկայացնում այդ սիրո պատմությունը: Լեզենդն ավարտվում է այսպես.

Անցան օրեր...

Էլ արշալույսը չէր ժպտում ուրախ  
Էն վեհ, սիգապանձ, հսկա ամրոցին,  
Էլ վերջալույսին ուրախ մայունով  
Հոսք չէր մոտ գալի էն հսկա բերդին...  
Միայն մի սև օձ ահռելի տեսով

Գոռում էր անվերջ, գոռում կատաղի...  
Նա էն իշխանն էր, որ իր սուր քրով  
Խորտակեց սերը սիրած Գյուլվարդի...  
Նա այնքան գոռաց, այնքան մոռաց,  
Ու նրա ձեռքից սարը զրոգաց,  
Ու սարի գլխին ամրոցը նշաց,  
Ամրոցը նշաց ու ավեր մնաց...  
Ու էն սև օրից էն հսկա սարի  
Կատարին ցցված մնում են միայն  
էն վեհ սիգապանձ, ծիծղուն ամրոցի  
Բեկորները հին, տխուր ու տրուռ:

Սիրո ողբերգությունը Լ. Վարդունին պատկերում է նաև «Հարսնաբերդ» ժողովրդական լեգենդում:

Գարեր առաջ Հուսեին բեկը իր հովիվներով ապրում էր մի ամրոցում: Քաջասիրտ հովիվ Մոսին տեսնում է Ասլին և գայթակղվում նրա գեղեցկությանը: Նա ընկերներով մտնում է թուրքի վրանը և փախցնում աղջկան: Բեկի մարդիկ գրտնում ու սպանում են Մոսին: Ասլին ողբում է Մոսի մահը:

Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ սիրո կսկիծը մնում է աղջկա սրտում: Երիտասարդների սերը ավարտվում է ողբերգությամբ:

Հեղինակը ոչ միայն նկարագրում է ժամանակի նահապետական սովորություններն ու աղաթները, այլև ցույց է տալիս, թե ինչպես դրանք կաշկանդում են, թույլ չեն տալիս, որ սիրող զույգերը վայելեն բնությունից տրված պարգևը:

Լ. Վարդունին իր ստեղծագործությունների մեջ միաժամանակ զարգացնում է ժողովուրդների բարեկամության զաղափարը, պարզ արտահայտելով դարերից եկող այն ճշմարտությունը, որ սերը ազգերի միջև խտրություն չի դնում, և ազատ կերպով հայ հովիվը կարող է սիրել թուրք իշխանի աղջկան, հայ աղնվականի աղջիկը՝ թուրք չքավոր տղային, որ սերը ի ծնե ազատ է ու այդպես էլ պետք է լինի իրականության մեջ:

Գրական ժողովածուի թեմատիկան հարուստ է, ընդգրկում է կյանքի շատ բնագավառներ: Ուշագրություն է ընթերցվում Ավագ Կոծինյանի «Ատեսատար» վերնագրով փոքրիկ պատմրվածքը: Այստեղ նուրբ գծերով պատկերվում է մարդու ցրն-

ծությունը կրթության վկայական ստանալու պահին: Ներկա պատմվածքի հերոսը օժտված է լավատեսությամբ, կյանքի նկատմամբ ունեցած պայծառ հավատով: Նա պատրաստ է իր կյանքը նվիրաբերելու հայրենիքին և ժողովրդին:

«Ծիածան»-ում տպագրված մի շարք ստեղծագործություններում ծաղրվում են դոփոդները, ուրիշի վաստակը յուրացնողները, բննադատվում են անբարոյականությունն ու այլասերվածությունը, երկերեսանիությունն ու անաղնվությունը: Առանձին գործերում աշխատանքի մարդիկ հակադրված են քաղքենիներին:

«Ծիածան»-ի արժեքը ամենից առաջ պայմանավորված է նրա արժարժած հարցերով: Ծիշտ է, նրանում տեղ են գտել նաև գեղարվեստական թույլ գործեր, բայց ընդհանուր առմամբ ամսագիր-ժողովածուն քննություն է բռնում և ուշագրավ էջ է կազմում նախասովետական շրջանի հայ գրական մամուլի պատմության մեջ:

Հետաքրքիր է նաև այն, որ «Ծիածան»-ի էջերում հրատարակված գեղարվեստական գործերին առանձին հեղինակներ առաջադեմ հայացքների տեր և պրակտիկ գործունեության մեջ իրենց լավ դրսևորած մարդիկ են:

## ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՕՐԳԱՆԸ

Հայ բողևևիկյան պարբերական մամուլի պատմության մեջ նոր էջ է բացում «Նեցուկ» թերթը: Այն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (բողևևիկները և մենշևիկ-ինտերնացիոնալիստների) Շուշվա կոմիտեի օրգանն էր:

Թերթը սկսեց լույս տեսնել այն օրերին, երբ հակահեղափոխականներ Կոնստիտուցիոնալը և նրա համախոհները հարձակում էին նախապատրաստում Պետերբուրգի վրա:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ երկրի բազմաթիվ քաղաքներում ստեղծվել էին բանվորների և զինվորների դեպուտատների սովետներ, վերջացել էր հեղափոխության խաղաղ



1917 թ. հուլիսի 25-ի (օգոստոսի 7-ի) կոչի մեջ կարդում ենք. «Շուշի քաղաքի և գավառի քաղաքացիներ».

Հուլիսի 25-ը բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետի օգտին նվիրատվությունների հանգականության օրն է:

Ընկեր քաղաքացիներ՝, Շուշի քաղաքում ստեղծվել է հեղափոխական օրգան—զինվորների, բանվորների և գյուղացիների դեպուտատների սովետ, որը նպատակ ունի ամրապնդել հեղափոխությունը նվաճածը և այն հասցնել մինչև լիակատար դեմոկրատական հանրապետության իրականացումը, ինչպես նաև ամբողջ ուժով աջակցելու և պաշտպանելու դեմոկրատիայի շահերը: Իրա համար էլ խնդրում ենք ընկերներին համախմբվել բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետի շուրջը, աջակցելով նրան՝ ինչպես բարոյապես, այնպես էլ նյութապես: Միջոցներ նվիրեք սովետի ուժեղացմանը»<sup>2</sup>:

Հենց անդրանիկ առաջնորդողում «Նեցուկ»-ը շատ լավ է բնորոշում հրապարակ գալու իր նպատակը: «Ուրբաթ, 18-ին օգոստոսի» վերնագրի տակ թերթը գրում է. «Ասպարեզ է իջնում մեր թերթը պաշտպանելու բանվորության և սեփականազուրկ գյուղացիության շահերը, դասակարգային դիտակցության հրավիրելու ժողովրդական ճնշված խավերին»:

Նրա լույս ընծայումը լայն արձագանք է գտնում Անդրկովկասի մի շարք թերթերում և ամսագրերում: «Բակինսկի ուրուխտ»-ն 1917 թ. սեպտեմբերի 13-ի համարի խորհրդանշաններից մեկում գրում է. «Նոր թերթ Շուշիում: Սկսվել է հայերեն լեզվով հրատարակվել տեղական բոլշևիկ ընկերների «Նեցուկ» թերթը: Թերթի աշխատանքները տարվում են լրջորեն»: Այդ բանին մեծապես նպաստեց «Նեցուկ»-ի խմբագիր, հին բոլշևիկ, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Աշոտ Հովհաննիսյանը:

«Նեցուկ»-ի գլխավոր խնդիրն էր պրոպագանդել լենինյան գաղափարները, աշխատավորներին հասցնել կուսակցության օրվա լողուններն ու կոչերը, բարձրացնել նրանց հեղափոխական ոգին, մարտունակությունը: Թերթի հինգերորդ հա-

մարում հրապարակվում է Վ. Ի. Լենինի «Լոգունգների մասին» նշանավոր հոդվածը, որն ուղեցույց էր բոլշևիկների գործունեության ծավալման համար: Թերթը լայնորեն լուսաբանում էր առօրեական հարցերը, ձգտում էր բոլշևիկյան սկզբունքայնությամբ ցույց տալ հեղափոխական խմորումները, երևան հանել պատճառները, աշխատավորների ուժերը ուղղել դեմոկրատական իշխանության ստեղծմանը: Նա ճիշտ դիրքերից բնորոշում էր բանվորներից և զինվորներից կազմված խորհուրդների դերը երկրի կառավարման գործում:

«Նեցուկ»-ը մի շարք հոդվածներում նշում է, որ Շուշիում նույնպես պետք է պայքարը նոր թափով տարվի հակահեղափոխական, մութ ու հեղհեղուկ տարրերի, ամեն գույնի նայինալիստների ու նրանց հովանավորողների և բոլոր նրանց դեմ, ովքեր ոտնահարում են աշխատավորների շահերը, չեն մտածում նրանց մասին: Այս տեսակետից բնորոշ են թերթի երկրորդ համարի «Ղարաբաղի գործադիր կոմիտեն» և «Շուշիի բանվորական ներկայացուցիչների խորհրդի վերակազմության խնդիրը» հոդվածները:

Առաջինում «Նեցուկ»-ը քննադատում է ժամանակավոր կառավարության Ղարաբաղի գործադիր կոմիտեին, որը ոչինչ չի անում աշխատավորների համար, ընդհակառակը, նա է «քաջալերել հակահեղափոխական, մութ ու գիշատիչ տարրերին՝ ամեն տեղ կազմալուծելու իշխանությունն ու պարենավորումը»:

... Միայն դեմոկրատական մասսաների կազմակերպված բայլերը,—շարունակում է «Նեցուկ»-ը,—կարող են փրկել մեր երկիրը հակահեղափոխական կազմակերպությունների ազդեցությունից և հենակետ լինել հեղափոխական կենտրոնների վճռական պայքարին»<sup>3</sup>: Իրավացի է «Նեցուկ»-ը, երբ հայտարարում է, որ աշխատավորների միակ բարեկամը բոլշևիկներն են, և այն խորհուրդները, որոնց մեջ ընդգրկված կլինեն միայն բանվորների և գյուղացիների ներկայացուցիչները:

Ժամանակը, շարունակում է թերթը, կենսական պահանջ է դրել նաև Շուշիի հեղափոխական-դեմոկրատական ուժերի

<sup>3</sup> «Նեցուկ», № 2, 1917 թ., օգոստոսի 24:

<sup>2</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՀՀԱ, ֆ 1, գ. 117, թ. 253:

առջև՝ գործելու այնպես, ինչպես Ռուսաստանի կենտրոնական վայրերում: «Ինչպես Ռուսաստանի բոլոր վայրերում, այնպես և մեղանում (Շուշիում—Ս. Ա.) հեղափոխական ուժերի հավաքումը, նրանց կենտրոնացումը պայքարող դեմոկրատիայի պատասխանատու մարմինների մեջ վայրկյանի հրամայական պահանջ է»<sup>4</sup>:

Ուրեմն պետք է ավելի ուժեղացնել հեղափոխական աշխատանքը լայն մասսաների շրջանում, նրանց պարզաբանելով նորաստեղծ խորհուրդների անելիքները, դերն ու նշանակությունը:

Թերթը դնում է Շուշիի բանվորական ներկայացուցիչների խորհրդի վերակազմության հարցը և նշում դրան հասնելու ռեալ ուղիները:

Երկրորդ հոդվածում ասված է. «Միայն հեղափոխական խորհուրդներն են, որ կենտրոնացնելով իրենց մեջ պայքարող դեմոկրատիայի կազմակերպված կամքը, կարող են դիմադրել ռեակցիայի տեսանելի և աներևույթ ուժերին, գորացնել հեղափոխության թափը, արմատականացնել նրա ընթացքը: Կապ պահպանելով դեմոկրատիայի կենտրոնական օրգանների հետ, Շուշիում կազմակերպվող Բ. Զ. և Գ. խորհուրդները կոչված են ոչ միայն կուլելու գավառի բոլոր հակահեղափոխական երևույթների դեմ, այլև, կենտրոն դառնալով իսկական հեղափոխական և դեմոկրատական իշխանության, իրենց շուրջը հավաքելու այն բոլոր հասարակական տարրերին, որոնք վճռական պայքար պիտի մղեն տիրող դասակարգերի դեմ՝ ընդլայնելու և խորացնելու հեղափոխության սոցիալական և քաղաքական բովանդակությունը»<sup>5</sup>:

Այլ կերպ ասած «Նեցուկ»-ը կոչ է անում աշխատավորներին՝ սովետներից ետ կանչել էսենտ-մենշևիկյան դեպուտատներին և աջակցել բոլշևիկներին, ապահովել նրանց լիակատար հաղթանակը սովետներում:

«Նեցուկ»-ը հարցը դնում է ուղղակի. Ղարաբաղում կիրառել բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի օրվա լուրերը՝ «Ամբողջ իշխանությունը սովետներին»: Սա

<sup>4</sup> «Նեցուկ», № 2, 1917 թ., օգոստոսի 24:

<sup>5</sup> Նույն տեղում:

միաժամանակ նշանակում էր, որ պետք է պատրաստվել բուրժուական կառավարության տապալման, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար:

Երկրորդ և հաջորդ համարներում թերթը հրապարակում է մեծածավալ մի հոդված՝ «Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան» վերնագրով, որտեղ ճիշտ դիրքերից բնութագրվում է բանվոր դասակարգի ավանգարդային դերը հեղափոխության մեջ:

Թերթը առիթը բաց չի թողնում ծաղրելու հեղափոխության թշնամիներին, մասնավորապես մենշևիկներին և էսէններին, որոնք ժխտում էին բանվոր դասակարգի վճռական դերը երկրի հեղափոխական վերակառուցման գործում:

«Նեցուկ»-ի խոսքը խրոխտ էր ու համարձակ, փաստերը՝ ակնառու, եզրահանգումները՝ ճիշտ: Նա բացահայտում էր Փետրվարյան հեղափոխության շնորհիվ ստեղծված ժամանակավոր կառավարության հակաժողովրդական էությունը և համոզում ընթերցողներին, որ այդ կառավարության մեղքով աշխատավորները գտնվում են անելանելի վիճակի մեջ, որ «երկիրը քաղցում և տանջվում է: Ժողովրդի ամենալայն խավերը կարիքի և զրկանքի են մատնված»<sup>6</sup>:

Թերթը նշում է ճիշտ ելքը. «Պետք է ջախջախել կապիտալի տիրապետությունը—վերջ տալ պատերազմին: Հարկավոր է բանվորական կոնտրոլ, հսկողություն արտադրության վրա, արդյունաբերական իրերի բաշխման կազմակերպում թե՛ քաղաքում, թե՛ գյուղում»<sup>7</sup>:

«Նեցուկ»-ը ակտիվորեն պայքարում է կապիտալի տիրապետությունը աշխատավորական իշխանությամբ փոխարինելու համար, ստեղծելու այնպիսի իշխանություն, որի տերը կլինեն ոչ թե մի խումբ կապիտալիստներ, այլ աշխատավոր մարդիկ, և բարիքների բաշխումը քաղաքում ու գյուղում կկատարվի բանվորների և գյուղացիների միջոցով:

Այս հարցերը մասնավորապես շեշտվում են «Բանվորությունը և գյուղացիական շքավորությունը» և այլ հոդվածներում: Թերթը պասսիվ քննադատող չէր: Նա բոլշևիկյան կր-

<sup>6</sup> «Նեցուկ», № 5, 1917 թ., սեպտեմբերի 14:

<sup>7</sup> Նույն տեղում:

քոտուխյամբ մերկացնում էր ժամանակավոր կառավարութեանը, «սոցիալիստ» մինիստրներին, որոնք իրականում գործում էին ժողովրդի շահերին հակառակ և փորձում էին «ասպացուցել», որ իրենք աշխատավորական գործի ղեկավարներ են:

Ժամանակավոր կառավարության հասցեին «Նեցուկ»-ի ծաղրը սուր բնույթ էր կրում հատկապես 3-րդ և 4-րդ համարներում հրատարակված «Կարմիր գծեր» հոդվածում, որը գրված էր հրատարակատեսակական մեծ պաթոսով, մարտական ոգով ու մատչելի լեզվով:

Հոդվածագիրը չի թաքցնում իր դժգոհությունը ստեղծված վիճակից և կարողանում է խոսքի ուժով հույս ներշնչել մարդկանց, բարձրացնել նրանց տրամադրությունը և ուժերը ուղղել մեծ պայքարի հաղթանակին:

Թերթի շատ նյութեր համարձակորեն վերլուծության են ենթարկում երկրի քաղաքական իրադրությունը, ջրի երես հանում այն տիղմը, որ ստեղծվել էր ժամանակավոր կառավարության մեղքով:

«Նեցուկ»-ը 6-րդ համարում (1917 թ. սեպտեմբերի 21) սուր ծաղրի է ենթարկում Կերենսկուն, որի «կառավարությունը հենվում է բուրժուազիայի և քաղբենիության քաղաքական կողախցիայի վրա» և զբաղված է միայն ժողովրդին կեղծ խոստումներ տալով: Չի անտեսվում կոռնիլովչինայի մերկացումը:

Իրավացիորեն շեշտվում է, որ Կոռնիլովը սոցիալիստական հեղափոխության կատաղի թշնամի է, և նրա խռովության ջախջախումը նպաստեց աշխատավորության ազատագրման մեծ պայքարի ծավալմանը:

Բոլշևիկյան օրգանը դատապարտում է ոչ միայն կոռնիլովներին, այլև այն բոլոր ռազմամոլներին, որոնք պատերազմը դարձրել են շահույթի աղբյուր, ուրիշների դիակներով գնով հարստություն կորզելու հարմար միջոց:

Տարբեր առիթներով «Նեցուկ»-ն իր խոսքն է ասում պատերազմի և խաղաղության մասին: «Պատերազմը» վերնազրով հոդվածում թերթը գրում է. «Պատերազմը քայքայում է չքավոր ժողովրդին. նա ոսկու աղբյուր է աշխարհակեր կա-

պիտալիստների համար: Պատերազմը ժողովրդինը չէ, նա պրոլետարիատի և չքավոր գյուղացիության թշնամունն է»<sup>8</sup>:

«Նեցուկ»-ը պրոլետարիատի և չքավոր գյուղացիության բարեկամն էր, նրանց իղձերի ու ցանկությունների արտահայտիչը: Թերթը քաջ գիտեր, որ աշխատավորները լսել անգամ չեն ուզում իմպերիալիստական պատերազմի մասին, որ այն հրահրում են միայն կապիտալի տերերը, միայն նրանք, ովքեր խորշում են ազնիվ աշխատանքից, սովոր են ապրել ուրիշի հաշվին:

Թերթը պայքարում է հակաժողովրդական ուժերի, այդ թվում նաև դաշնակցականների դեմ:

Բացահայտելով դաշնակցության կեղծ խոստումները և նրա գործունեության ողջ աղետաբերությունը, «Ազգային համախորհրդակցությունը» հոդվածում թերթի խմբագիրը (հանդես է գալիս «Ներհակ» ծածկանունով) քննադատում է Մոսկվայի մի տխրահոշակ խորհրդակցություն, և ապա, թե ինչպես դրա օրինակով դաշնակցականները ձգտում են համախորհրդակցություն (համագումար) հրավիրել, իբր լուծելու «հայոց հարց»-ը: Բախտախնդիրների կեղծ խոստումները և հայ ժողովրդի անունից նրանց հանդես գալը խիստ վնասակար էր ու կործանարար: «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան չի կարող ժամավաճառ լինել մի խորհրդակցության մեջ,— գրում է «Նեցուկ»-ը,— որի նպատակն է ի մի խմբել անպատասխանատու տարրերին և հանուն հայ ժողովրդի՝ «համաձայնություն» կնքել ինչ-ինչ մութ ու պղտոր խնդիրների շուրջը: Նրանք չեն կարող և ոչ մի խնդրում համերաշխ լինել ո՛չ հայ կաթողիկոսի, ո՛չ հայ վաճառականության, ո՛չ հայ խմբապետների և ո՛չ իսկ հայ «սոցիալիստների» հետ: Մեր ընկերները պետք է բռնկոտի ենթարկեն ազգային համախորհրդակցությունը և մերկացնեն հայ բանվորության առաջ ազգային այդ կատակերգության հակաժողովրդական բովանդակությունը»<sup>9</sup>:

Մի այլ հոդվածում («Դաշնակցության քաղաքականությունը») փաստարկների և խոսքի տրամաբանական ուժով մեր-

<sup>8</sup> «Նեցուկ», № 6, 1917 թ., սեպտեմբերի 21:

<sup>9</sup> «Նեցուկ», № 7, 1917 թ., սեպտեմբերի 28:

կացվում է դաշնակցութեան ու նրա մամուլի փարիսեցիութունը. «Դաշնակցութունը երբեք իր դրոշակը մի գույնով չի ներկել և չի էլ ներկում: Մեզնում նա եռագույն դրոշակ ունեք, որ մի քիչ ծալծլված էր... և ծալծլված էր հատկապես նրա «կարմիր» մասը: Այդ դրոշակի կրողը նացիոնալիստական «Հորիզոն»-ն էր, որ միաժամանակ և՛ կղերական էր, և՛ ազատամտական, և՛ «սոցիալիստական»:

Ավելին՝ «Դաշնակցութեան տակտիկական» հոդվածում «Նեցուկ»-ը միանգամայն ճիշտ կերպով «Հորիզոն»-ին անվանում է դաշնակցութեան բերան, որը մի օր մի բան է ասում, մյուս օրը՝ մի ուրիշ բան:

Եվ իրոք, հատկապես «Հորիզոն» թերթը, որը լույս էր տեսնում Թիֆլիսում, 1909—1918 թթ., ամեն կերպ ջանում էր բոլշևիկների հասցեին անհեթեթություններ տարածել, բայց, ինչպես ճիշտ կերպով ասում է ժողովուրդը՝ սաի ոտքերը շատ կարճ են և ճշմարտութեան չի հասնի:

«Նեցուկ»-ը քննադատական սուր խոսք է ասում դաշնակցութեան մյուս օրգաններին՝ «Արև»-ին, «Հառաջ»-ին (Բաբու), «Աշխատավոր»-ին (Թիֆլիս):

«Նեցուկ»-ի հարվածներն ուժեղ էին նաև դաշնակցական «Ապառաժ» թերթի նկատմամբ:

Բոլշևիկյան թերթը մի քանի առիթով ցույց է տալիս, որ «Ապառաժ»-ը վատաբանում է բոլշևիկներին և, ընդհակառակը, փառաբանում է Հիմնադիր ժողովը, մի հաստատություն, որը փաստորեն ոչ մի հարց չէր լուծում և չէր հոգում ժողովրդի մասին:

Որ իսկապես «Նեցուկ»-ը խարազանել է դաշնակցութեան օրգանին, խոստովանում է ինքը՝ «Ապառաժ»-ը: Նա հրապարակաչորեն հայտարարում է. ««Փայլակ» (խոսքը Շուշիում լույս տեսնող պարբերականի մասին է—Ս. Ա.) թերթը մեռավ և քիչ անց նրա տեղը բռնեց «Նեցուկ»-ը: Մենք չէինք կարող հուսալ, որ այս նոր թերթի «նոր» ղեկավարները բարձր կմընան այն ընկած մակերևութից, որի վրա կանգնած էին նախորդ թերթի ղեկավարները: Եվ մեր այդ կասկածները լիովին արդարացան»<sup>10</sup>:

<sup>10</sup> «Ապառաժ», № 19, 1917 թ., օգոստոսի 27:

Բոլշևիկյան օրգանի էջերում Շուշիի կուսակցական կազմակերպութեան առօրյայի, բանվորական շարժումների, օրվա կարևոր իրադարձությունների մասին հրապարակված նյութերը շատ էին:

Ուշագրավ էր թերթի երկրորդ համարում տպագրված «Բանվորական շարժում» վերնագրով ինֆորմացիան: Թղթակիցը Քարին-Տակ գյուղից հաղորդում էր, որ ավելի է վատացել մետաքսագործարանի բանվորների վիճակը, որ նրանք օրական աշխատելով ավելի քան 12 ժամ, ստանում են աննշան աշխատավարձ և չեն կարողանում հայթայթել ապրուստի նվազագույն միջոցները: Իբրև բանվորների համարձակելույթի պատասխան, գործարանատերը բանվորներին զրկել է աշխատելու հնարավորությունից՝ փակել է գործարանը:

«Նեցուկ»-ը բողոքում է այս վիճակի առթիվ և գործարանատիրոջից պահանջում, որ բաց անի գործարանը, բանվորներին ապահովի աշխատանքով, աշխատանքային օրը դարձնի ութ ժամից ոչ ավելի:

Այլ ինֆորմացիաներում նույնպես թերթը բողոքում է աշխատավորների անտանելի վիճակի հանդեպ, բացեիբաց մերկացնելով նրանց, ովքեր զավթել են աշխատանքի միջոցները, իսկական տերերին մատնելով սովամահության:

«Նեցուկ»-ի էջերում, պրակտիկ նյութերից բացի, տեղ են դրնում տեսական հոդվածներ, որոնք մարքսիզմ-լենինիզմի դիրքերից պարզաբանում են ժամանակի մի շարք կնճոտ հարցեր: Ուշագրավ է հատկապես թերթի 6-րդ համարում զետեղված այն մեծածավալ հոդվածը, որի վերնագիրն է՝ «Ո՞ւմ է ձեռնտու հողի «սոցիալիզացիան» և ո՞ւմ է շահավետ բոլոր հողերի նացիոնալիզացիան»: Այստեղ մատչելի լեզվով ընթերցողներին ասվում է, որ վերացնելով հողի մասնավոր սեփականությունը և այն բաժանելով աշխատավորներին, գյուղացիները իրենց օգտագործման տակ կունենան լավորակ հողամասեր, որոնցից և կստանան առատ բերք: Դրա հետ միասին թերթը բացատրում է, թե այդ ճշմարտութեան դեմ ինչպիսի ոռնոց են բարձրացնում հակաբոլշևիկյան տարրերը:

«Նեցուկ»-ի էջերում հոդվածներ լույս տեսան պրոլետարական դիկտատուրայի, բանվորների և գյուղացիների դաշին-

քի, դասակարգալին պայքարի, պատերազմի ու խաղաղության և այլ հարցերի մասին:

Հարկ է նշել, որ մինչև հիմա հայտնի էր «Նեցուկ»-ի յոթ համարի գոյութիւնը: Սակայն վերջերս թերթի խմբագիր Աշոտ Հովհաննիսյանը սիրով մեզ արամադրեց «Նեցուկ»-ի ութերորդ համարը:

Այս համարի լույս ընծայումը (1917 թ. հոկտեմբերի 20) հետապնդում էր որոշակի նպատակ. սկսվել էին Շուշիի բաղադրյալն դումայի ընտրութիւնները, և «Նեցուկ»-ը պետք է բացարձակ ասեր իր խոսքը, բնութագրեր բոլշևիկներին և նրանց հակառակորդներին, բացատրեր, թե ինչ են ցանկանում կոմունիստները և ինչ հետին սլաններ ունեն նրանց հակառակորդները:

Ընտրութիւնների կամպանիան սուր բնույթ է ստանում և առաջ է քաշվում մի քանի ցուցակ:

Թերթը ամբողջ առաջին էջում խոշոր տառերով գրում է, որ Շուշիի աշխատավորները պետք է ձայն տան երկրորդ ցուցակի օգտին, որի մեջ մտնում են միայն բանվորական գործին նվիրված մարդիկ: Այդ ցուցակը կազմված էր 9 հոգուց (Աշոտ Հովհաննիսյան, Մելիքսեթ Եսայան, Հակոբ Բեջանյան<sup>11</sup>, Վարվառե Մելիք-Հայկազյան, Արմենակ Ղարազյուզյան<sup>12</sup>, Գրիգոր Ներսիսյան, Սերգեյ Իսախանյան, Գրիգոր Հա-

<sup>11</sup> Մնվել է 1889 թ. Մարտակերտի շրջանի կուլասագ գյուղում: Սկզբնական կրթութիւնն ստացել է հայրենիքում, ապա՝ Գորիի ուսուցչական սեմինարիայում: Այստեղ էլ նա մասնակցել է հեղափոխական աշխատանքներին: 1908 թ. սկսած նա եղել է Անդրկովկասի մի շարք բաղադրներում, ուր և կապվել է պրոֆեսիոնալ հեղափոխականների հետ: 1914 թվականից շերմեռանդորեն աշխատակցել է բոլշևիկյան տպագիր օրգաններին, ակտիվ մասնակցութիւն ունեցել «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կոիլը» և այլ թերթերի հրատարակմանը:

<sup>12</sup> 1920 թվականից կուսակցական ղեկավար գործունեութիւն է ծավալել Անդրկովկասում, մասնավորապէս Ղարաբաղում:

1930 թ. մահացել է թոքախտից:

<sup>13</sup> Մեծ է Ա. Ղարազյուզյանի (1895—1938) դերը Ղարաբաղի աշխատավորների ազատագրման պայքարում: Նա ակտիվ գործունեութիւն է ծավալել Շուշիի կուսակցական օրգաններում, դարձել է Ղարաբաղի բոլշևիկյան կազմակերպութեան հիմնադիրներից մեկը: Առաջիններից էր Ա. Ղարազյուզյանը, որ 1919 թ. սկստեմբերին ընտրվեց ՌԿ(Բ)Կ Ղարաբաղի օկրուգա-

կորյան, Նիկիտա Գանիելյան): Սրանց մի մասը մտավորականներ էին՝ պատմաբան, ուսուցիչ, մի քանիսն էլ՝ բանվոր, դրաշար:

Իր խոսքն ուղղելով բանվորներին, բանվորուհիներին, զինվորներին և շքավոր դյուղացիութեանը, «Նեցուկ»-ը բացահայտում է, թե ինչ հայացքներ ունեն սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները, որն է նրանց պայքարի նպատակը: Նա գրում է, որ «սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները դեմ են ժողովրդական միջոցներով մղվող թալանչիական, միլիտոնավոր մարդկանց ոչնչացնող պատերազմին, կոչում են բուրժուանների աներևակայելի ավազակային օգուտների և պատերազմի առաջացրած սպեկուլյանտների անկուշտ ախորժակների դեմ, պահանջում են, որ կառավարութիւնը բաղկացած չլինի կապիտալիստներից և կալվածատերերից, որոնք հանգցնում են հեղափոխական խարույկը, դեմ են թալանչիական պատերազմը պաշտպանող այսպէս կոչված ազատութեան փոխառութեանը, դեմ են ցարական և սև հարյուրակային դումային, որ ուժեր է հավաքում՝ հեղափոխութիւնը ճշնելու և որն այժմ պահանջում է ցրել խորհուրդները, պահանջում են ժողովուրդների եղբայրութիւնն ստեղծող շուտափույթ հաշտութիւն...»: Եվ այս ծրագրային փաստաթուղթը ավարտվում է հետևյալ մտքով. «սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները «կոիլ են մղում լայնացնելու, խորացնելու համար հեղափոխութեան նվաճումները, հեղափոխութիւն, որ կդառնա միջազգային և կբերի խաղաղութիւն, հաց, ազատութիւն» (բոլոր ընդգծումները թերթինն են—Ս. Ա.): Աշխատավորները «պահանջում են միակ ժողովրդական իշխանութիւն, որ ելնելու է բանվորների, զինվորների պատգամավորների խորհուրդներից»:

«Նեցուկ»-ը հրապարակում է «Մեր մունիցիպալ պլատֆորմը» բավականին ծավալուն հոդվածը, որտեղ խոսվում է այդ պահին հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան առջև կանգնած կարևոր խնդիրների մասին: Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան անհրաժեշտ է համա-

լին կոմիտեի կազմում և հեղափոխական աշխատանք կատարեց լայն մասնակցութեամբ:

րում կյանքում իրականացնել քաղաքային ինքնավարության լրիվ դեմոկրատացումը, լիկվիդացնել պարենավորման ճգնաժամը և այլն: Պարզ տրված է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը պրոլետարական մասսաների դասակարգային պայքարի մասին, գրված է նաև, որ «քաղաքային ինքնավարության ամբողջ քաղաքականությունը, քաղաքային տնտեսություն ամբողջ կազմակերպությունը հիմնովին պիտի փոխվեն: Մունիցիպալիտետը (դուման) պիտի դադարի մի խումբ բուրժուական տերերի շահերի պաշտպանը լինելուց և պրոլետարիատի ու նրան հարող քաղաքի ազգաբնակչության ամենաչքավոր մասի մղած կենսական պայքարի համար պատվար պիտի դառնա»:

Այդ հոդվածը, որն, ի դեպ, գրավում է թերթի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի «ներքնամասերը», ավարտվում է հետևյալ կոչով. «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, ինչպես դասակարգային և ինտերնացիոնալիստական կուսակցություն, մունիցիպալ քաղաքականության շրջանում ևս պետք է եռանդուն կերպով պայքար մղի ամեն մի շովինիզմի ու նացիոնալիզմի դեմ, որ ձգտում է բաժան-բաժան անել տարբեր ազգության պատկանող բանվորներին. նա,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան,—միշտ և հանապաղ կոչ կանի բոլոր ազգերի պրոլետարներին և կիսապրոլետարներին ի մի խմբված սոցիալիզմի կարմիր դրոշի տակ կռիվ մղել կապիտալիզմի դեմ: Նրա նշանաբանն է՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»:

Իննելով աշխատավորների շահերի պաշտպանը, թերթը պայքարում է այն բանի համար, որ նորից չբռնկվեն հայթույրական կոտորածները, դաշնակցական-մուսավաթական թափթփուկները նորից ու նորից արյունահեղություններ չսարքեն, իրար դեմ չզրգոնեն երկու բարեկամ ժողովուրդներին:

Թերթի խոսքը բարեկամության, ժողովուրդների եղբայրության մասին հնչում էր հաստատուն, համոզող և ազդեցիկ: Նա՝ ուներ դաստիարակչական մեծ նշանակություն: Դրա առհավատչյան էր հայերի և ադրբեջանցիների բարեկամության ամրապնդումը ոչ միայն Շուշիում, այլև գավառի բոլոր գյուղերում:

«Նեցուկ»-ի վերջին համարում տպագրվում է «Մենշևիկ-պահպանողականներն ու սոցիալիստ-հեղափոխականները» վերնագրով հոդվածը: Այստեղ համոզիչ փաստերով բացահայտվում է մենշևիկների և մյուս հակահեղափոխականների անփառունակ գործունեությունը, շեշտվում այն հանգամանքը, որ «Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը, չքավոր գյուղացիությունն ու զորքը երես դարձրին մանրբուրժուական այդ սոցիալիստներից, որոնք հեղափոխությանը մահացու հարված են տալիս, դուրս շարտեցին նրանց իրենց շարքերից...»:

Հոդվածագիրը համոզված էր, որ վերահաս սոցիալիստական հեղափոխությունը կփրկի բանվորներին ու գյուղացիներին և պայմաններ կստեղծի նոր, ազատ կյանքի համար:

Մի այլ ընդարձակ հոդվածում («Մեր հակառակորդները և մենք») «Նեցուկ»-ը նշավակում է բուրժուական և մանրբուրժուական տարրերին, որոնք մեծ վնաս են հասցնում աշխատավոր ժողովրդի ազատագրման գործին: Նրանց մեղքով է, գրում է Հակոբ Կամարին իր հոդվածներից մեկում («Քաղաքային ընտրությունները»), որ թշվառության մեջ են Շուշին և նրա բնակիչները: Ի՞նչ է հարկավոր, որպեսզի վերականգնվի «Նրա կյանքի քայքայված մեխանիզմը»: Դիմելով բանվորներին և բոլոր քաղաքացիներին, թերթը գրում է. «Դուք պետք է կազմակերպված վերցնեք այդ տնտեսությունը և դնեք նրան նոր դեմոկրատական հիմքերի վրա: Անհրաժեշտ է վերականգնել քաղաքի ամբողջ կյանքը չքավոր դասակարգի կարիքների համաձայն»<sup>13</sup>:

Տխրությունամբ ներկայացնելով Ղարաբաղի մոռյալ առօրյան, թերթը նշում է, որ կյանքը այդպես էլ կշարունակվի, քանի իշխանության գլխին կանգնած են կապիտալիստներն ու նրանց արբանյակները, քանի հեղափոխության թշնամիները, կարմիր ժապավենները թևերին կապած, կապիտալի միահեծանությունն են պատրաստում: Հեղինակը իր հայրենակիցներին ասում է. «Եթե ուզում եք ազգաբնակչությունը հաց ունենա, հրաժարվեցե՛ք թալանչիական պատերազմը պաշտպանելուց, եթե ուզում եք չքավոր քաղաքացիներին ազատել տուր-

<sup>13</sup> «Նեցուկ», № 8, 1917 թ., հոկտեմբերի 20:

բերի ծանրությունից, հրաժարվեցե՛ք բուրժուական կառավարությունից, որ պաշտպանում է ունեւորների թաւանն ու սպեկուլյացիան: Եթե ուզում եք իրականանան ձեր պահանջները, պաշտպանեցե՛ք հեղափոխությունը այն մութ և բացահայտ ուժերից, որոնք ղեմնկրատական միլիցիայի փոխարեն ճրգնում են հաստատել միապետականի պոլիցիան: Նրանք, որոնք կոչ են անում պաշտպանելու արյունահեղ պատերազմը, բուրժուական ու կոալիցիոն կառավարությունը, որոնք գաղտնի և համարձակ պաշտպանում են ցարի ոստիկանությունը, սակայն խոստանում են լավ օրենքներ, հաց և ազատություն— ժողովրդի եղեռնագործ թշնամիներն են:

Ոչ մի հավատ այդ հանդուգն գիշատիչներին, ոչ մի ձայն հեղափոխության այդ գերեզմանափորներին»:

«Նեցուկ»-ը և նրա ակտիվ աշխատակիցները մտահոգվում են հայրենի քաղաքի և, ընդհանրապես, ամբողջ աշխատավորության կենսական պայմանների բարելավման մասին, ցավում են չքավորների անելանելի վիճակի համար:

Թերթի և՛ խմբագիրը, և՛ նրա ակտիվ աշխատակիցները զինված էին մարքս-լենինյան տեսությամբ և պայքարում էին այդ ամենակենսահաստատ ուսմունքի իրականացման համար:

Թերթին ակտիվորեն աշխատակցում էին շատերը. նշենք միայն մի քանիսին: Հակոբ Հովհաննիսյանը (1875—1941) շուշեցի մտավորական էր, որ բարձրագույն կրթություն էր ստացել Բեռլինի և Հայդելբերգի համալսարաններում, ուներ դոկտորի գիտական աստիճան, 1917 թ. բոլշևիկյան կուսակցության անդամ էր, ակտիվորեն մասնակցել էր Անդրկովկասի հեղափոխական շարժումներին: Հակոբ Հովհաննիսյանի հոգվածները և՛ տեսական էին, և՛ գործնական, ուր բոլորն էլ՝ բոլշևիկյան հրապարակախոսության լավագույն նմուշներ: Նրանցում միտքը արտահայտվում էր պարզ, փաստերին հաջորդում էին վերլուծումներն ու եզրահանգումները:

Հաճախակի էր ընթերցողը «Նեցուկ»-ի էջերում հանդիպում Ալեքսանդր Մատուրյանի («Ալ—Ռուբենի») ստորագրությամբ) նյութերին, որոնց մեծ մասը նվիրված էր Ղարաբաղի կոմունիստական կազմակերպության գործունեությանը:

Ալեքսանդր Մատուրյանը 1917 թ. հունիսին Շուշիում ըս-

տեղծված Ղարաբաղի բոլշևիկյան կազմակերպության հիմնադիրներից մեկն էր, կազմակերպության անդրանիկ կոմիտեի անդամ և հեղափոխական մեծ աշխատանք էր ծավալում իր հայրենակիցների շրջանում:

Հակոբ Կամարու հոգվածները՝ «Կարմիր գծեր», «Բանվորությունը և գյուղացիական չքավորությունը», «Միջազգային սյրրլետարիատը և միջազգային բուրժուազիան», «Պատերազմը» հագեցած էին կոմունիստական գաղափարներով և նպաստում էին բոլշևիկյան դիրքերի ամրապնդմանը:

Նա կարողանում էր իր հոգվածները երբեմն համեմել ղեղարվեստական խոսքի արտահայտման միջոցներով, միտքը հաղորդել պատկերավոր, խոսքն ասել վստահությամբ:

Թերթի առաջնորդողները գրում էր Աշոտ Հովհաննիսյանը: Դրանք, և «Նեցուկ»-ի էջերում հրապարակված այլ ժանրի նյութեր գրված են բարձր գաղափարայնությամբ, մարքսիզմ-լենինիզմի խոր իմացությամբ: Այսօր էլ նրանք պահպանել են իրենց թարմությունը:

«Նեցուկ»-ի շուրջը համախմբվեցին ճեմարանի (խոսքը էջմիածնի Գևորգյան ճեմարանի մասին է—Ս. Ա.) մեր բոլշևիկյան խմբակի անդամներից՝ Ե. Ներսիսյանը, Գ. Աղասյանը, Գ. Թովմասյանը և ուրիշներ»<sup>14</sup>, իր հիշողություններում գրում է Գառնիկ Ղազարյանը:

Այդ ակտիվ աշխատողների ջանքերով էր, որ «Նեցուկ»-ը իսկապես դարձավ ժողովրդական մասսաների հենարանը: Նրա էջերում միշտ էլ տեղ էին գրավում այնպիսի խորագրեր, ինչպիսիք էին «Կուսակցական կյանք», «Պրոֆեսիոնալ կյանք», «Արտասահման», «Գավառ», «Արատու» և այլն, որոնցում աշխատավորները ստանում էին իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները և մոբիլիզացվում հեղափոխական պայքարի:

Շատ կարճ տևեց «Նեցուկ»-ի կյանքը: Դա առաջին հերթին բացատրվում էր նյութական շատ սուղ պայմաններով: Թերթը փաստորեն հրատարակվում էր խմբագրի միջոցներով: Նա էր հոգում նաև տպարանի միակ աշխատողի՝ գրաշար-տպագրիչի

<sup>14</sup> Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք առաջին, Հայպետհրատ, Երևան, 1958 թ., էջ 223:

նյութականի մասին: «Հոնորարի մասին խոսք լինել չէր կարող, — պատմում է «Նեցուկ»-ի հրատարակիչ-խմբագիրը, — և, առհասարակ, այն ժամանակ իրենց հրապարակախոսական հոդվածների համար հոնորար էին ստանում շատ քիչ մարդիկ»:

«Նեցուկ»-ի ութ համարներն էլ մեծ դեր խաղացին Շուշիի և, ընդհանրապես, Ղարաբաղի քաղաքական և հասարակական կյանքում: Նա ծնվեց այն օրերին, երբ Ղարաբաղը, իրոք, «նեցուկների» խիստ կարիքն ունեւր, երբ անհրաժեշտ էին բուշեհիկյան տպագիր օրգաններ, որպեսզի բարձր պահեն հեղափոխական դրոշը, պարզ ու հասկանալի լեզվով խոսեին իրավագուրկ մարդկանց հետ, մերկացնեին նրանց թշնամիներին, ջախջախիչ հարվածներ հասցնեին ամեն գուցնի պառակտիչներին ու հակաբուշեհիկյան տարրերին:

Իր այդ միսիան «Նեցուկ»-ը կատարեց պատվով: Նրա աշխատանքը բարձր գնահատեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կոիվը». «...գալով թերթին, նորա բովանդակությանն ու ուղղությանը, պետք է գովենք մեր ընկերների եռանդն ու կորովը, որ ասպարեզ գալով, բաց ձակատով անմիջական կոիվ են սկսել «դաշնակցության» դեմ:

...Ցանկանում ենք հարատևություն և հաջողություն «Նեցուկ»-ին:

Կենտրոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն նման «նեցուկների», եթե միայն վերջինները ունենան դիմացկանություն և, որ գլխավորն է, նյութական միջոց:

Ողջույն «Նեցուկ»-ին»<sup>15</sup>:

1918—1920 ԹԹ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

1918 թ. հուլիսի 22-ին Ղարաբաղի ընդհանուր համագումարում ստեղծված «Ժողովրդական կառավարությունը» օգոստոսի 29-ին հրատարակում է «Ղարաբաղի սուրհանդակ»

<sup>15</sup> «Բանվորի կոիվը», № 23, 1917 թ., սեպտեմբերի 10:

թերթը. այն ունենում է մեկ համար<sup>1</sup>: Այստեղ հրապարակվում են ծրագրային մի շարք փաստաթղթեր, շրջաբերականներ, կարգադրություններ, որոշումներ և այլ նյութեր:

Թերթի առաջին էջում հրապարակված դեկլարացիայում նշվում է Ղարաբաղի «Ժողովրդական կառավարության» վերաբերմունքը ռուսական Մեծ հեղափոխության նկատմամբ և նրա դիրքը առաջիկայում: Այն սկսվում է այսպես. «Ռուսական Մեծ հեղափոխությունը ոչնչացրեց ցարական բռնակալությունը և դարերի ընթացքում ստեղծած կառավարական ձևերը: Արմատախիլ արվեց այն ամենը, ինչ ժառանգություն էր մնացել անցյալից: Կործանելով հինը՝ Մեծ հեղափոխությունը ամրացրեց նոր գաղափարները, կյանքի նոր ձևերը: Նա տվեց ժողովրդին իր կենսական իրավունքի գիտակցությունը — իրավունք կառավարելու ինքն իրեն, որոշելու իր ձակատագիրը. ամբողջ Ռուսաստանում սկսվեց նոր կյանքի կառուցումը»:

Այնուհետև պատմվում է, թե «Հեղափոխության ալիքը հեղեղեց և Կովկասը» ու նոր պահանջներ դրեց աշխատավորների առաջ, ինչպիսի դժվարություններ հաղթահարվեցին հոկտեմբերի գաղափարները Ղարաբաղում էլ տարածելու համար: Հատկապես քննադատվում է կովկասյան կոմիսարիատը, որին անվանում է «անհուսալի տաշեղ քաղաքական կյանքի ալեկոծվող ծովի վրա»:

Ղարաբաղի «Ժողովրդական կառավարությունը» իր անդրանիկ դեկլարացիայում զգալի տեղ է հատկացնում ազգերի բարեկամության հարցին. մասնավորապես ընդգծվում է հայերի վերաբերմունքը հարևան ազրբեջանցիների նկատմամբ: «Պահպանել ամեն գնով խաղաղ հարևանական կապը մուսուլմանական (ազրբեջանական — Մ. Ա.) դեմոկրատիայի հետ, որովհետև նրանց շահերը ի մի են ձուլվում: Վճռեցին (խոսքը Ղարաբաղի հայության համագումարի մասնակիցների մա-

<sup>1</sup> Լույս է տեսնում Մ. Բարաջանյանի տպարանում: Դժբախտաբար համարը չի պահպանվում երկրի ոչ մի արխիվում կամ գրադարանում: Միայն վերջերս պարզվեց, որ համարի պատճենահանված նյութերը գտնվում են Ղարաբաղի ժողովրդական կրթության համար բավականին մեծ գործ կատարած, այժմ անհատական թոշակառու, Երևանում բնակվող Արշավիր Քամայանի մոտ:

սին է—Մ. Ա.) ձեռք-ձեռքի, նույնիսկ կովի ձանապարհով փըշ-  
րել այն հակահեղափոխական պատենը, որը բաժանում է մեզ  
ուսական դեմոկրատիայից»:

«Ժողովրդական կառավարությունը» հաստատ համոզմունք  
է հայտնում, որ կրնանա ուսական Մեծ հեղափոխության  
գաղափարներով և լիակատար ազատություն ձեռք կրելի Ղա-  
րաբաղի հայ և ադրբեջանցի աշխատավորների համար: «Գի-  
տակցելով, որ միայն համառուսական հեղափոխությունն է,  
որ երաշխավորում է ամբողջ անդրկովկասյան աշխատավոր  
ժողովրդական ազատ և բարեկեցիկ կյանք,—ասված է դեկ-  
տաբերյանում,—Ղարաբաղի համագումարը գտնում է, որ ժո-  
ղովրդի կյանքի ապահովությունը և լիակատար ազատությունը  
կարող է երաշխավորված լինել միայն ուսական հեղափոխու-  
թյան տիրապետության տակ, դեպի որը և պիտի լարե իր ամ-  
բողջ ուժերը»:

Դեկտաբերյանում նշվում են նաև «Ժողովրդական կառա-  
վարության» ամենագլխավոր խնդիրներից մի քանիսը՝ լայն  
մասսաների կազմակերպական գործը, պայքարը «գոյություն  
ունեցող անիշխանության և ճնշումների դեմ», արդարացի ո-  
րոշումներ կայացնելը, ճնշվածներին, կեղեքվողներին պաշտ-  
պանելը, «ինքնադատաստան գործողությունների վերացու-  
մը», «բեկական հողերի բռնագրավումը», ֆինանսական ծանր  
գրություն կարգավորումը, ընտրական սկզբունքի սահմանու-  
մը և այլն:

«Ղարաբաղի սուրհանդակ»-ում հրապարակված մի շարք  
ըրջաբերականներում Ղարաբաղի «Ժողովրդական կառավա-  
րությունը» կոչ է անում հայ և ադրբեջանցի աշխատավորնե-  
րին՝ եռանդուն լծվելու նոր կյանքի ստեղծմանը:

Հատուկ ըրջաբերական է տպագրվում այն ստահող լուրերի  
առթիվ, որ իբր «հայ-թուրքական կռիվներն արդեն սկըս-  
վել են»:

Շրջաբերականում ուղղակի ասվում է. «Հայտարարում ենք  
ի գիտություն Ղարաբաղի հայ ժողովրդին, որ այդպիսի բան  
չկա, որ այդ լուրերը տարածվում են ստոր նպատակներով,  
ղանազան բախտախնդիրներ ու թալանչիներ. մենք որոշել

ենք մեր հարևան թուրքերի հետ պահպանել կատարյալ բարե-  
կամական խաղաղ եղբայրություն»:

Հարուստ էր թերթի տեղեկատու բաժինը: Այստեղ հայո-  
կապես հայտնվում էին Ղարաբաղի աշխատավորությանը վե-  
րաբերող լուրեր:

«Գավառական կյանք» բաժնում հաղորդումներ են հրա-  
պարակվում մի շարք գյուղերում (Նորաշեն, Ղղղալա, Չայլու  
և այլն) կատարվող գյուղատնտեսական աշխատանքների մա-  
սին:

Թերթի վերջին էջում զետեղվող նյութերը տեղեկություններ  
էին բովանդակում երկրի տարբեր շրջանների և արտասահ-  
մանյան կյանքի վերաբերյալ:

Թերթը լույս տեսավ «Խմբագրական կոլեգիա»-ի ստորա-  
գրությամբ: Սակայն մի բան պարզ է, որ նրա միակ համարի  
հրատարակմանը ամենակտիվ մասնակցությունն է ունեցել  
Արշավիր Քամալյանը: Նա է մի շարք պաշտոնական նյութերի  
կազմողը և խմբագրողը:

1919 թ. «Ազգային խորհուրդը» ստեղծում է «Արցախ» ա-  
նունով թերթ՝ «Խմբագրական կոլեգիա»-ի ստորագրությամբ,  
որը, ինչ խոսք, արտահայտում էր իր տերերի՝ դաշնակցա-  
կանների շահերը:

Թերթն ունեցել է առնվազն յոթ համար<sup>2</sup>, որտեղ հիմնա-  
կանում տպագրվում էին պաշտոնական նյութեր, կոչեր, ըրջա-  
բերականներ: Յոթերորդ համարի առաջնորդողի տեղը հատ-  
կացվում է «Ղարաբաղի հայ ժողովրդին» կոչը<sup>3</sup>, որը գրված է  
ազգայնական հովերով, անտեղի մեղադրանքներ հարուցելով  
բարեկամ ժողովրդին:

Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդը շատ մեծ հույսեր  
է կապում դրսի ուժերի, մասնավորապես, օտարերկրյա տե-  
րությունների հետ, անտեսելով նրանց զավթողական նկատա-  
ռումները:

Վերը նշված կոչի մեջ, գովերգելով անգլիական միսիա-

<sup>2</sup> Յոթերորդ համարը, որ լույս է տեսել 1919 թ. մարտի 23-ին, պահ-  
պանվում է ՍՄԿԿ-ին կից մարբուղմ-լենինկզմի ինստիտուտի հայկական  
ֆիլիալում:

<sup>3</sup> Շարվում է թավ, խոշոր տառերով:



առաջին համարը լույս տեսավ 1919 թ., հունվարի 30-ին, Մ. Բաբաջանյանի տպարանում<sup>7</sup>:

Անդրանիկ համարում տպագրված նյութերը վկայում են, որ դրանք սոցիալ-դեմոկրատական խմբակի անդամների գրքչի արդյունք են: Հոգվածներում հատկապես մտահոգություն է հայտնվում գյուղացիության դրուսթյան բարելավման, երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության ամրապնդման, զավառում ստեղծված անարխիան, գողությունն ու թալանը՝ վերացնելու մասին: Գրեթե բոլոր նյութերն էլ հազեցած են ինտերնացիոնալիստական գաղափարներով: Ճիշտ է, թերթը ուղղակի կոչ չէր անում երկրամասում սովետական իշխանության հաստատման համար, բայց ընթերցողներին անուղղակի ձևով հասկացնում էր, որ աշխատավորների կազմակերպված կամքով ու ուժով միայն կարելի է ազատություն ձեռք բերել:

«Նոր կյանք»-ի առաջին խմբագրականը վերնագրված է «Րուսիի պահանջը»: Թերթը նշում է ոչ միայն սոցիալ-դեմոկրատական կազմակերպության նպատակը, այլև տպագիր օրգանի անհրաժեշտությունը: Այնտեղ կարդում ենք. «Հայ սոց.-դեմոկրատական կուսակցությունը, իբրև աշխատավորության շահերի պաշտպան կուսակցություն, այսօր հրապարակ է գալիս իր օրգանով Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության կյանքի ուղին դժեղու: Այն անարխիան, որ տիրում է այժմ գավառում, ծայրահեղորեն վտանգում է աշխատավոր գյուղացու դրուսթյունը: Երբ դեպքերի շնորհիվ հրապարակ են գալիս զենքի մարդիկ, որոնց մեջ քչերը չեն իրենց անձնական շահի ետևից ընկածները,— նրանք, այդ մութ անձնավորությունները, հարևաններին թալանելուց հետո պետք է սկըսեն թալանել և մեզ, այդպիսով թե՛ վտանգեն գյուղացու տընտեսությունը և թե՛ նպաստեն անարխիական դրուսթյանը»:

Թերթը առիթը չի կորցնում քննադատելու նրանց, ովքեր «անարխիական դրուսթյունից օգտվելով» պիտի ընկնեն «ձրի փառքի ետևից» և ձգտեն իրենց կամքը թելադրելու ժողովրդին: Բայց այդ նրանց չի հաջողվի, շեշտում է «Նոր կյանք»-ը

<sup>7</sup> Խմբագրությունը գտնվում էր Գյանջունցյան փողոցում գտնվող Մելիք-Հովսեփյանի տանը:

և տալիս իր եզրակացությունը. «Դրանց դեմ պիտի պայքարի ժողովրդի կազմակերպված կարծիքը, նրա ուժեղ կամքը»<sup>8</sup>:

Ավելին, նա մեծ հույսեր է կապում սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, համոզված հայտարարելով, թե այն «ժողովրդի կամքն ու նրա ցանկությունները արտահայտող կազմակերպությունն է, որ կարող է վերջ դնել այդ անարխիական կացությանը և ապահովել Ղարաբաղի աշխատավորության քաղաքական և տնտեսական դրուսթյունը՝ մինչև նրա վստահությունն ու հավանությունը վայելող մի կառավարություն մշտական կարգ-կանոն հաստատի մեր երկրում»<sup>9</sup>:

«Նոր-կյանք»-ը կոչ է անում. «Ղարաբաղի գյուղացին չպիտի բավականանա միայն ազատության համար պայքար մղելով. նա պիտի կարողանա իր առտնին կյանքը կուտուրական ճանապարհով կարգավորելու: Նա պիտի հանդես գա ոչ միայն իբրև կուլոդ, այլև ստեղծագործող: Եվ այդ ստեղծագործական աշխատանքը կատարող մարմինն է, որ պետք է առաջին հերթին երևան գա մեր գավառում»<sup>10</sup>:

Թերթը դիմում է աշխատավորներին՝ մոբիլիզացնելու իրենց ուժերը ստեղծելու մի մարմին, որի մեջ ընդգրկված մարդիկ պիտի պաշտպանեն բանվորների և գյուղացիների շահերը, պայքարեն արդարություն սահմանելու գավառում: «Այդ մարմինը այսօր չկա,— գրում է «Նոր կյանք»-ը,— բայց աշխատավորությունն իր բոլոր բարոյական ուժերը պիտի հրապարակ բերե այդ մարմինն ստեղծելու: Այդ մարմնի մեջ տեղ պիտի գտնեն աշխատավորության շահերին նվիրված ներկայացուցիչներ: Անձնական շահերով տարված, սին փառքի հետևից ընկած անհատները չեն կարող տեղ բռնել ժողովրդական ներկայացուցչության մեջ: Թալանի հակումներով տարվածը ո՛չ քաջ զինվոր կարող է լինել կուլի դաշտում, ո՛չ էլ հայրենասեր գործիչ խաղաղ կուլտուրական աշխատանքի միջոցին»<sup>11</sup>:

Եվ թերթը իր առածը մի տեսակ ամփոփում է այս պարբե-

<sup>8</sup> «Նոր կյանք», № 1, 1919 թ., հունվարի 30:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

րության մեջ. «Ամեն բան աշխատավորութեան համար. այդ պիտի լինի առաջնորդող սկզբունքը ամեն մի անհատի, որը կ'մտնե Ղարաբաղի ապագա ներկայացուցչական մարմնի մեջ»<sup>12</sup>:

Խմբագրականում նորաստեղծ տպագիր օրգանը իրոք առաջ է քաշում նոր կյանքի ստեղծման հարցը, դրան հասնելու ուղիները նշում և բարի խորհուրդներ տալիս դարաբաղցիներին գործելու միահամուռ, միասնաբար, պայքարելու գավառի հետամնացութեան դեմ:

Ոչ միայն խմբագրական և առաջնորդող հոդվածները, այլև թերթի մյուս նյութերը բացահայտում են աշխատավոր մարդու ցանկություններն ու տրամադրությունները:

Թերթը դատապարտում է այն հանցավոր անտարբերությունը, որ ստեղծվել էր գավառում: Օրինակ՝ քաղաքում և գյուղերում սաստիկ կերպով տարածվել է տիֆը, ամեն օր մահահնում են տասնյակներով մարդիկ, բայց ոչ մեկը, ինչպես հարկըն է, չի զբաղվում այդ հարցով: Քննադատության սլաքն առաջին հերթին ուղղում է քաղաքագլխին. «և ի՞նչ է արված» հարցնում է «Նոր կյանք»-ն ու պատասխանում՝ «Քաղաքագլուխը վերցնելով գումարը (խոսքը առողջապահության գծով նախատեսված գումարի մասին է—Ս. Ա.), չհանձնելով ոչ մի պատասխանատու օրգանի, որից վաղը կարելի լիներ պահանջել և՛ աշխատանք, և՛ հաշիվ համաճարակի դեմ պայքարելու, շատ հասարակ կերպով հրավիրում է բժիշկներին, քաղաքը բաժանում ռայոնների և որոշում բանալ տարափոխիկ հիվանդների բարաք և միմիայն» այդ<sup>13</sup>:

Թերթը որոշակի դնում է ազգաբնակչության շրջանում բժշկագիտության զրավոր ու բանավոր պրոպագանդայի հարցը և շեշտում, որ անհրաժեշտ է մարդկանց սովորեցնել հիվանդություններից նախազգուշանալու, դրանց դեմ կովելու ձևերը: «Աղգարնակությանը հայտնված չէ մինչև իսկ ռայոնական բժիշկների գոյության մասին,— գրում է թերթը,— ո՛չ մի բրոշյուր, ո՛չ մի թերթիկ չի հրատարակված, թե ինչպես նախազգուշանալ, ինչպես կովել տիֆի դեմ: Դեղատներում ամեն

<sup>12</sup> «Նոր կյանք», № 1, 1919 թ., հունվարի 30:

<sup>13</sup> Նույն տեղում:

նասուկալի սպեկուլյացիա է տիրում, չհանդիպելով ոչ մի արգելքի, դեղորայքը սպառվել և սպառվում են, ոչ ոք սրա մասին հոգ չէ տանում»<sup>14</sup>:

Թերթը տիրութեամբ է նշում գավառում տիրող սովի մասին, որը վարակիչ հիվանդության պես մահացությունների պատճառ է դառնում: Անտանելի են դարձել մթերքների գները, ապրել այլևս հնարավոր չէ: Այս բոլորի մեջ մեծ մեղքը ընկնում է տեղական իշխանությունների և, առաջին հերթին, դումայի վրա: «Հանցավոր անտարբերություն» խմբագրականը ավարտվում է հետևյալ տողերով. «Մենք պահանջում ենք, որ դուման ցրվի, մանավանդ, որ նրա լիազորության ժամանակը արդեն լրացել է: Նա ոչինչ չի անում և ոչինչ չանելով նա հանցավոր է: Մենք պահանջում ենք նրանց հեռանալը»<sup>15</sup>:

«Նոր կյանք»-ը խարաղանում է նաև նրանց, ովքեր սիրում են «ազգասիրաբար» խոսել, հանդես գալ ամբողջ հայության անունից, անվերջ Շառեր ասել, բայց դժվարին պահերին մի կողմ քաշվել և տաքուկ անկյուն փնտրել: Այդ վայ-հայրենասերները չպետք է այլևս հրապարակ գան և իրենց ստահող ելույթներով շեղեն աշխատավորության ուշադրությունը, շեշտում է սոցիալ-դեմոկրատների օրգանը: Նրանց մեղքով է, որ Շուշին դարձել է մուրացկանների քաղաք, ուր լիովին սպառվել են «բոլոր այն միջոցները, որոնցից մեր աղքատիկ տնտեսությունն էր իր սնունդն ստանում»<sup>16</sup>:

Ժողովրդի տնտեսական ծանր դրության մեծ պատճառներից մեկը թերթը համարում է համաշխարհային պատերազմը, որը աստիճանաբար քամում էր աշխատավորների ֆիզիկական գոյության ամենաաղքատիկ աղբյուրներն անգամ: Այս մասին շատ որոշակի է գրում թերթը: «Մուրացկանների քաղաքը» առաջնորդողը սկսվում է այսպես. «Համաշխարհային պատերազմը և նրան հետևող մի շարք քաղաքական անցքեր հիմքից խախտեցին մեր երկրի տնտեսական կյանքը: Սպառվեցին բոլոր այն միջոցները, որոնցից մեր աղքատիկ տնտեսությունն էր իր սնունդն ստանում. փակվեցին այն աղբյուրները, որոնք

<sup>14</sup> «Նոր կյանք», № 1, 1919 թ., հունվարի 30:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> «Նոր կյանք», № 5, 1919 թ., փետրվարի 27:

շարժման մեջ էին դնում մեր երկրի ամբողջ տնտեսական ապարատը: Եվ այսօր մենք կանգնած ենք անույժ խոսքի իրականության առաջ: Այդ դրությունը նոր չէր ստեղծվել. նա հենց զգալի էր պատերազմի առաջին տարվանից»<sup>17</sup>:

Նոր ձևով է հարցերը առաջ քաշում թերթը: Նա դեմ է բռնակալական, զավթողական պատերազմներին, դեմ է, որ մի ժողովուրդ իր կամքը թելադրի մյուսին: Դա հերոսություն չէ, շեշտում է «Նոր կյանք»-ը, հերոսությունը երկիրը հարստացնելն է, կարգ ու կանոն սահմանելը և յուրաքանչյուրին իր ստեղծագործական ունակություններն ու անկախ կյանք վարելու ընդունակությունները ի հայտ բերելու հնարավորություն ընձեռելը: «Ազատությունն այն ձևով չի ըմբռնվում և չպիտի էլ ըմբռնվի, ինչպես մեզանից դարեր առաջ: Մի ժողովուրդ,— գրում է թերթը,— կարող է զենքը ձեռքին քաջությամբ պաշտպանել իր ազատությունը և նույնիսկ խլել այդ ազատությունը որևէ բռնակալից: Բայց այդպիսի քաջ ու անկախ ժողովուրդը կարող է միաժամանակ սովամահության մատնել, որի հետևանքը կլինի կամ մահացում, կորուստ և կամ ավելի սոսկալի ստրկություն, տնտեսական կախումն: Եվ, ընդհակառակն, մի ժողովուրդ կարող է զենքով չկռվել իր ազատությունը բռնաբարողի դեմ, բայց շնորհիվ իր երկրի հարստության և արդյունաբերության կարող է ոչ միայն մաքառել ֆիզիկապես իրենից ավելի ուժեղի դեմ, այլև իր կամքը թելադրել»<sup>18</sup>:

Թերթը շեշտում է, որ երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ են հաղորդակցման լայն հնարավորություններ, ժողովուրդների հետ բարեկամական կապ, տնտեսական համագործակցություն:

Նա մտրացկաններ է անվանում ոչ միայն նրանց, ովքեր սոված են ու ստիպված վաճառքի են հանում «տնային ամեն տեսակ գործված իրեղենները», այլև նրանց, ովքեր քաղաքականապես կույր են և ուրիշներին են առաջարկում որոշելու իրենց բախտը:

«Նոր կյանք»-ը իր վերաբերմունքն է ցույց տալիս փե-

<sup>17</sup> «Նոր կյանք», № 5, 1919 թ. փետրվարի 27:

<sup>18</sup> Նույն տեղում:

տրվարին տեղի ունեցած Ղարաբաղի «գյուղացիական» շորրորդ համագումարի նկատմամբ: Ինֆորմացիա տպագրելով նրա նիստերի մասին, թերթը հրապարակում է խմբագրական հոդված՝ «Ղարաբաղի համագումարի շուրջը» վերնագրով: Նշելով նրա բացերը, թերթը ամենից առաջ բացահայտում է նրա ոչ ներկայացուցչական լինելը: «Ղարաբաղի ամբողջ հայությունը չէր ներկայացված նրա մեջ... ո՞ւմ էր հարկավոր գյուղացիության այդ մասին զրկել իրեն վերապահված ձայնի իրավունքից— չգիտենք... ապա քաղա՞քը. միթե՞ նա ներկայացված էր,— շարունակում է թերթը,— ե՞րբ և ո՞րտեղ ժողովներ տեղի ունեցան՝ ներկայացուցիչներ ընտրելու համար: Արդյոք պայքար տեղի ունեցա՞վ այնպիսի կոորդինալ հարցի շուրջը, որպիսին Ղարաբաղի համար իրավասու մարմին ընտրելն էր: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Տեղի են ունենում համագումարի նիստերը և այս մեռյալ քաղաքի հանգիստը ոչ ոք ոչընչով չի ցանկանում վրդովել: Հասարակությանը հեռու պահել իրեն իսկ վերաբերող խնդիրների քննությունից և մասնակցությունից— դա անչափահաս քաղաքագետին կամ շարամիտ պոլիտիկանին միայն կարող է ձեռնտու լինել»<sup>19</sup>:

Թերթը քննադատում է նաև, թե ինչպես համագումարի նիստերը անցան անկազմակերպ, ավելի շատ խոսվում էին անձնական, քան ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին, անգամ համագումարի նախագահը «ամենատարրական ըմբռնողությունը շուներ դրված հարցերի լրջության վերաբերմամբ»: Եվ պատահական չէ, ընդգծում է թերթը, որ համագումարը չկարողացավ վերջ տալ գավառում տիրող անիշխանությանն ու քառսին, անտարբերությանն ու խառնաշփոթությանը, որից այնքան տուժում են աշխատավոր մարդիկ:

Գավառում գործերի իրական վիճակը կարելի է բարելավել միայն երկու միջոցով. «Առաջին միջոցն այն պատրաստի ունալ ուժն է,— շեշտում է թերթը,— որի միջոցով կառավարական օրգանը իր սկզբունքներն ու կարգադրությունները կյանքի մեջ է անցկացնում. երկրորդ միջոցը հանդիսանում է հասարակության լայն խավերի գիտակցությունը, պետական ըմ-

<sup>19</sup> «Նոր կյանք», № 5, 1919 թ., փետրվարի 27:

բըռնողութիւնը. երկրորդը բարոյական միջոց է, որն ապագայում հենարանը պիտի լինի կառավարութիւն կազմող օրգանի»<sup>20</sup>:

Թերթն իր միտքը շարադրում է ավելի բացահայտ, ընդգծում այն հայտնի ճշմարտութիւնը, որ յուրաքանչյուր կառավարութիւն, կամ կառավարական սիստեմ ուժեղ կարող է լինել, եթե ղեկավարները կապված են լայն մասսաների հետ, հաշվի են նստում նրանց հետ, նրանց խորհուրդով են շարժվում, խորհուրդով գործում: «Եթե անցած կազմակերպութիւններն ու հասարակութեան մեջ նկատելի էր խոր անջրպետ,— գրում է նա,— եթե շնորհիվ այդ հանգամանքի ստեղծվել էր երկու հակառակորդ բանակ— դա պիտի համարել անցած կազմակերպութեան ամենամեծ սխալը. նա չի կարողացել կապ հաստատել իր և հասարակական լայն մասսաների մեջ. նա այդ ուղղութեամբ աշխատանքներ չի կատարել, կամ ուղղակի աչքաթող է արել հասարակական կազմակերպված կարծիք ունենալու անհրաժեշտութիւնը: Այս վերջին հանգամանքի վրա մենք շեշտում ենք նրա համար, որովհետև մեր մեջ քիչ չեն անհատներ, որոնք ինքնիշխան անպատասխանատու գործեր և աշխատանքներ կատարելու հիվանդութիւնն ունեն»<sup>21</sup>:

Քաղաքականի հետ միասին «Նոր կյանք»-ը արծարծում էր այլ կարգի հարցեր, որոնք վերաբերում են դավառի ներքին դրութեանը:

Թերթի ինֆորմացիաներից մեկում պատմվում է ներքին թաղավարող գյուղում կատարվող ոտնձգութիւնների, զոփումների և քաղաքից եկող շարժիների առևտրական սպեկուլյացիայի մասին:

«Նոր կյանք»-ը ընթերցողներին տեղեկացնում է վարադաբունի, Փիրջամալի, Նախիջևանի, Քյաթուկի և Դահրաղի բնակիչների առօրյայի մասին, այն մասին, որ նրանք արդեն գյուղ են վերադարձել՝ իրերի տխուր բերումով երկար ժամանակ հայրենիքից դուրս գտնվելուց հետո և սկսել են իրենց տընտեսութեան վերականգնման աշխատանքները:

<sup>20</sup> «Նոր կյանք», № 5, 1919 թ., փետրվարի 27:

<sup>21</sup> Նույն տեղում:

Թերթում տպագրվում են նաև լուրեր մշակութային կյանքից, արվեստի և գրականութեան բնագավառներից:

Նրա մշտական խորագրերն էին «Տեսեսական կյանք»-ը, «Գավառ»-ը, «Հայ կյանք»-ը, «Արտաքին տեսութիւն»-ը, «Քաղաքական աշխարհ»-ը, «Վերջին լուրեր»-ը, «Լրատու»-ն և այլն, որոնց ներքո տպագրվում էին հիմնականում ինֆորմացիաներ և թղթակցութիւններ:

«Նոր կյանք»-ի նյութերից օգտվում էին առանձին թերթեր, մասնավորապես՝ «Մշակ»-ը: Վերջինս լավ է արտահայտվել «Նոր կյանք»-ի մասին. «Դարաբաղի հայ սոցիալ-դեմոկրատները Շուշում հրատարակում են «Նոր կյանք» անունով մի շաբաթաթերթ,— կարդում ենք այնտեղ,— որի առաջին վեց համարները ստացվել են Թիֆլիսում: Շաբաթաթերթը թողնում է լուրջ տպավորութիւն: Նրա վարիչները քաջ ծանոթ են երեւում իրենց երկրի անցյալին և ներկային, ճանաչում են Դարաբաղի միջավայրը և բոլոր հոգվածների մեջ ջանք են թափում ինքնագործունեութեան ընտելացնել դավառական հայ աշխատավորներին»<sup>22</sup>:

1920 թ. հուլիսին Շուշում հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով լույս է տեսնում «Գյուղացիական կոմունա» թերթի մեկ համարը: Սակայն, ցավոք, այդ միակ համարն էլ չի պահպանվել և դժվար է ընթերցողին ներկայացնել տպագրված նյութերի բովանդակութիւնը, էութիւնն ու նպատակը:

Հետաքրքիր երևույթ էր «Կավկասական կոմունա»<sup>23</sup> ռուսերեն թերթիկի լույս ընծայումը Շուշում: Այն հրատարակում էր Ադրբեջանի հեռագրական գործակալութեան («Ազգավորոստ») Շուշիի բաժանմունքը: Նրա յուրաքանչյուր համարի առաջին էջում ընթերցողը կարդում էր. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգը: Նա տպագրվում էր մեկ-երկու փոքրածավալ էջի վրա (երկրորդ էջը երբեմն մնում էր ազատ):

<sup>22</sup> «Մշակ», № 60, 1919 թ., մարտի 18:

<sup>23</sup> Թեև նրա ճակատին գրված էր «պատի թերթ», բայց իրականում տպագրող օրգան էր և լույս էր տեսնում բավականին մեծ տպաքանակով:

Մեր ձեռքի տակ եղած փաստերը վկայում են, որ թերթիկը լույս է տեսել 1920—1921 թթ. և ունեցել է 106 համար:

Այն թեև ծավալով փոքր էր, և նյութերը գրվում էին շատ սեղմ, բայց վերնագրերը շարվում էին խոշոր տառերով: Սասեղմ, բայց վերնագրերը շարվում էին խոշոր տառերով: Սասեղմ, բայց վերնագրերը շարվում էին խոշոր տառերով: Սասեղմ, բայց վերնագրերը շարվում էին խոշոր տառերով: Սասեղմ, բայց վերնագրերը շարվում էին խոշոր տառերով:

Ունեեր մի քանի հաստատուն բաժին՝ «Տեղական խորհրդակ», «Արտասահմանում», «Մեզ գրում են», «Կարմիր ռազմաճակատներում» և այլն:

Թերթիկը հանդես էր գալիս մեծ կրթոտություն, յուրաքանչյուր համարում տպագրում էր ոչ միայն զանազան հարգողներ երկրի տարբեր ծայրերից, այլև նյութեր, որոնց մեջ խարազանվում էր սովետական իշխանության թշնամիների անփառունակ գործունեությունը:

«Կավկասական կոմունա»-ի 1920 թ. 47-րդ համարում «Առաջին նախագրողացում» վերնագրի տակ գետեղված հոդվածում փաստեր են բերվում դաշնակների տիրահույսակ գործելակերպից, նշվում, որ Զանգեզուրում հակահեղափոխականների կողմից թուրքիկներ են տարածվում և ագիտացիա սղվում բոլշևիկների դեմ: Այդպիսիները պետք է ենթարկվեն ամենախիստ դատաստանի: Թող թշնամիները զգան բանվորագյուղացիական իշխանության հզոր ուժը, շեշտում է թերթիկը:

«Կավկասական կոմունա»-ն գրում է, որ հակահեղափոխության արագ լիկվիդացման համար անհրաժեշտ է զգոնություն, անհրաժեշտ է, որ հեղափոխական իշխանությունների ձեռքը հանձնվեն հակահեղափոխության հայտնի ղեկավարները: Ինչքան շուտ նրանք մերկացվեն, այնքան շուտ կվերջանա եղբայրասպան արյունահեղությունը:

Ռուսերեն թերթիկը ջերմությամբ էր խոսում ժողովուրդների բարեկամության և համագործակցության, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բնակչության հեղափոխական համախմբվածության և նրանց հերթական խնդիրների մասին:

Թերթիկի հիմնական նյութերը վերաբերում էին առօրյա կյանքին: Նա իր էջերում հակիրճ կերպով հարգողներ,

թղթակցություններ, ինֆորմացիաներ էր տպագրում տարբեր բնույթի ժողովների, միտինգների առթիվ, ուր մեծ կրթություն էր պաշտպանում սովետական իշխանության գաղափարը:

Ինֆորմացիաներից մեկում պատմվում է Գորիսի այն միտինգի մասին, ուր ջերմեռանդորեն ելույթ է ունեցել Արմենակ Ղարաբաղյանը, կոչ արել հայ և ադրբեջանցի աշխատավորներին՝ այսուհետև էլ ավելի ամրապնդելու եղբայրական բարեկամությունը:

1920 թվականի դեկտեմբերի 20-ի համարում («Մեզ գրում են» ընդհանուր վերնագրի տակ) գետեղված մի ինֆորմացիայում, օրինակ, հարգողվում է Հայաստանի գյուղերից մեկում տեղի ունեցած միտինգի մասին, որ ավարտվում է՝

«Կեցցե հերոսական կարմիր բանակը:

Կեցցե Սովետական Հայաստանը:

Կեցցե հեղափոխական արևելքը:

Կեցցե Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների միությունը» կոչերով:

Թերթիկի համար կարևոր էր նաև յուրաքանչյուր քաղաքական իրադարձության արձագանքումը: 1921 թ. փետրվարյան համարներում, երբ եղբայրական Վրաստանի աշխատավորները հաղթանակ են տանում հակահեղափոխական ուժերի դեմ, «Կավկասական կոմունա»-ն մեծ ցնծությամբ է նշում այդ քաղաքական կարևոր իրադարձությունը, արտահայտում իր ուրախությունն ու համակրությունը: Ամբողջ էջի վրա թերթիկը խոշոր տառերով հայտարարում է՝ «Հեղաշրջում Վրաստանում»:

Վրաստանի սովետականացման առթիվ թերթիկը հրապարակում է նաև Վրաստանի հեղկոմի կողմ՝ ուղղված աշխատավորներին: Հայտարարվում է, որ այսուհետև Վրաստանը սովետական հանրապետություն է՝ ինքնուրույն իրավունքներով և նոր ապրելակերպով:

«Կավկասական կոմունա»-ն հետևողականորեն պայքար է տանում Ղարաբաղը հակահեղափոխական տարրերից լիովին մաքրելու համար: Այս կապակցությամբ նրա էջերում տեղ

են գտնում կոչեր, լուղունգներ, ինֆորմացիաներ, հայտարարութիւններ:

1921 թ. փետրվարի 15-ի համարում թերթիկը ամբողջ էջի վրա հայտարարում է. «Կարմիր Ղարաբաղի աշխատավոր ժողովուրդ, մի՛ ընկեք դաշնակցական բանդաների արյունահեղ ավանտյուրաների ազդեցութեան տակ, մի՛ հրապուրվեք նրանց ստով. գնացե՛ք Կարմիր բանակի հետ ձեռք-ձեռքի տրված. մեռնող թշնամիներին համողե՛ք, որ Կարմիր Ղարաբաղի աշխատավոր ժողովուրդը ուժեղ է և պողպատի պես միաձուլ է կարմիր մարտիկների երկաթյա շարքերին»:

«Կարմիր Բաքվում» վերնագրի տակ նա դրվատում է նոր սոցիալիստական աշխատանքի ելած մարդկանց, նրանց, ովքեր իրենց ջանքերը շեն խնայում սովետական նորաստեղծ կարգերի ամրապնդման համար:

«Կավկազսկայա կոմունա»-ն օպերատիվ լուրեր է հաղորդում ռազմաճակատից: Այդ կարգի նյութերը մասնավորապես տպագրվում են «Կարմիր ռազմաճակատներում» ընդհանուր վերնագրի տակ:

Թերթիկի միջոցով ընթերցողը տեղեկանում է Ֆրանսիայում, Չինաստանում, Իտալիայում, Լեհաստանում, Իռլանդիայում և աշխարհի այլ երկրներում քաղաքական իրադարձութիւններին, համառոտակի գաղափար կազմում աշխատավորների քաղաքական պայքարի, հեղափոխական ընդվզումների և նրանց պահանջների մասին: Միայն 1921 թ. մարտի 9-ի համարում հրապարակվում են «Գերմանական պրոլետարիատի ճայնը», «Հեղափոխական շարժումը Իտալիայում», «Գործազուլային շարժումը Լեհաստանում» և այլ հաղորդումներ:

«Տեղական խորհիկա»-ի տակ «Կավկազսկայա կոմունա»-ն տվյալներ է հաղորդում Բաքվից, Գորիսից, Շուշիից, Խանքենդիից և այլ վայրերից, մեծ մասամբ շաբաթօրյակներ կազմակերպելու, կուլտուր-լուսավորական օջախներ ստեղծելու, կյանքը նոր հունով տանելու մասին:

«Կավկազսկայա կոմունա»-ն առանձին կարճ հոդվածներ է նվիրում հեղափոխութեան ականավոր գործիչների՝ Կ. Լիբկընիխտին, Ռ. Լյուքսեմբուրգին և այլոց՝ բնութագրելով նրանց

անգնահատելի դերը միջազգային բանվորական շարժման մեջ:

Ռուսերեն թերթիկը աչքի է ընկնում ոչ միայն բազմաթիվ հաղորդումներով, այլև իր օպերատիվութեամբ: Ռադիոհաղորդումներ էին ղեկավարում Մոսկվայից, ընթերցողներին մատուցվում էին թարմ լուրեր, որոնք ներկայացնում էին համընդհանուր հետաքրքրութիւն: Նա այն տպագիր օրգաններից մեկըն էր Անդրկովկասում, որը բոլշևիկյան սկզբունքայնութեամբ ու հետևողականութեամբ վեր էր հանում հակահեղափոխականների նպատակները, ընթերցողներին հարուստ նյութ մատակարարում հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներից:

Նրա բնորոշ կողմերից մեկն էլ հաղորդվող նյութերի հակիրճութիւնն ու սեղմութիւնն էր, հարուստ փաստերի առկայութիւնը և բազմազանութիւնը:

Հրապարակված նյութերի կարեորութեամբ «Կավկազսկայա կոմունա»-ն կարևոր էջ է կազմում ոչ միայն Ղարաբաղի, այլև Անդրկովկասի առաջադիմական մամուլի պատմութեան մեջ:

## ԲԱՐԵԿԱՄՈՒՅԱՆ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

Հարուստ է Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմութիւնը. նա աչքի է ընկնում ոչ միայն տպագրութեան վաղ կազմակերպմամբ, գիտա-մանկավարժական, դրական-գեղարվեստական, բարոյախոսական և այլ կարգի գրքերի լույս ընծայմամբ, տարբեր պարբերականների հրատարակմամբ, այլև կարևոր թեմաների ընդգրկմամբ:

Ժողովուրդների բարեկամութիւնը միշտ էլ ուշադրութեան կենտրոնում է եղել 1828 թվականից Շուշիում հրատարակվող գրքերում: Բազելցի միսիոներների, հայոց հոգևոր տեսութեան, Բաղդասար մետրոպոլիտի, Ղարաբաղի թեմական դրուրոցի, Տ. Նազարյանի, ինչպես նաև Մ. Հակոբյանի, Մ. Բաբաջանյանի, Բ. Տեր-Սահակյանի և այլոց տպարաններում

հրատարակած գրքերում հաճախ կարելի է հանդիպել ժողովուրդների բարեկամության, եղբայրության և համագործակցության մասին:

Ժողովուրդների բարեկամությունն ու համերաշխությունը հզոր գեներ է թշնամիների դեմ մղվող պայքարում: Այս միտքը հատկապես ընդգծվում է պարբերականներում: Նրանք օժտված լինելով օրվա հրատապ հարցերը գործարար կերպով տեղ հասցնելու կարողությամբ, իրենց խոսքն են ասում դարերով հարևանություն անող ժողովուրդների մասին:

«Հայկական աշխարհ», «Գործ», «Ազգագրական հանդես», «Ծիածան» և այլ մասագրեր ու հանդեսներ, որոնք թեև կանոնավոր պարբերականություն չունեն, կարողանում էին օգտակար մտքեր հաղորդել ընթերցողներին, նրանց մեջ սեր ու բարեկամություն պատվաստել ժողովուրդների՝ ազրբեջանցիների, ռուսների, վրացիների, քրդերի և մյուսների հանդեպ:

Հատկապես «Ղարաբաղ»-ը, «Շուշինսկայա ժիզն»-ը, «Փայլակ»-ը, «Նեցուկ»-ը ժողովուրդների բարեկամության թեման արտացոլում էին համակողմանիորեն, բացահայտում իրար նկատմամբ թշնամական վերաբերմունքի վնասակար հետևանքները, պայքարում մի քանի բախտախնդիրների պատճառով ազգերի միջև երբեմն ստեղծված անախորժությունները վերացնելու համար: Այս նկատի ունեն «Ղարաբաղ» թերթը, որ դեռևս 1911 թ. դեկտեմբերի 29-ին գրում էր. «Մեր երկիրը շատ արյուն, շատ խոռվություն է տեսել: Մեր խեղճ ժողովուրդը իր ամբոխային հոգեբանությամբ շատ բաներ է լսել: Եվ այդքանը բավական է: Թող երկու վիճակակից ազգերը վերջապես ապրեն իրենց կուլտուրական, քաղաքակրթական առաջխաղացման համար մեկ-մեկու կողքին, մեկ-մեկու գործակցությամբ:

Հեռու մեզանից թշնամական բոլոր հարաբերություններն ու ամենափոքրիկ կասկածները: Ապրենք եղբայրական կյանքով, որովհետև այդ կոչումն է դրված մեզ վրա, և դրա խոշորագույն պատասխանատվությունն ունենք ապագա սերունդների առաջ»:

Նույն հոգվածում թերթը նշում է, թե ինչի կարող է հաս-

ցրենել պրովոկացիան, և ինչպիսի անելիքներ ունեն աշխատավորական լայն մասսաները:

